ՊԱՐՈՒՅՐ ՍԻՐԵԿԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐՈՎ ԼԵՅՈՒՆ ԿՅԱՆՔԻՍ ՄԱՍԻՆ ՀՈՒՇԵՐ

Ի ՄԱՍ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՐՈՒՅՐ ՍԻՐԵԿԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐՈՎ ԼԵՅՈՒՆ ԿՅԱՆՔԻՍ ՄԱՍԻՆ

Հ Ո Ւ Շ Ե Ր

Ի ՄԱՍ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
229

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
229

ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 177

Հակոբյան Պարույր Սիրեկանի
Հ 177 Տառապանքներով լեցուն կյանքիս մասին: Հուշեր / Պ. Ս. Հակոբյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022. Մաս Ի.- 248 էջ:

Պարույր Հակոբյանի հուշագրության առաջին մասը պարունակում է ուշագրավ տեղեկություններ Արևելյան Հայաստանի 20-րդ դարի առաջին քառասնամյակի պատմության վերաբերյալ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես Առաջին աշխարհամարտի, Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.), ՀՍԽՀ կոլեկտիվացման, հայ գյուղական կենցաղի մասին էջերը:

Գիրքը կարևոր աղբյուրագիտական նյութ է պարունակում պատմաբանների, ազգագրագետների համար և կարող է օգտակար լինել նաև ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-892-21-4
© ՀՀԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022

ԱՆԱՉԱՌ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՋԱԿԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Բազմապիսի պատմական աղբյուրների մեջ իրենց ուրույն տեղն ունեն հուշագրությունները: Դրանք, որպես կանոն, հավելյալ նյութ են ծառայում առաջնային նշանակություն ունեցող արխիվային վավերագրերի կողքին: Վերջիններս, առավելապես լինելով պաշտոնական փաստաթղթեր, բավական դյուրին ձևով ջրի երես են հանում հուշագրությունների սուբյեկտիվ կողմերը, բացահայտում հեղինակի անձնական, հաճախ՝ այս կամ այն պատմական իրադարձության վերաբերյալ մտացածին մոտեցումները: Այնուամենայնիվ, հուշագրային աղբյուրները նաև առանձնանում են անաչառությամբ, երբ դրանց հաղորդումները համընկնում են այլ աղբյուրների տեղեկությունների հետ:

Վերջերս Հայաստանի 20-րդ դարի պատմության վերաբերյալ լույս տեսած այդօրինակ սկզնաղբյուրներից իր կարևորությամբ առանձնանում է Պարույր Սիրեկանի Հակոբյանի երկու մասից բաղկացած հուշագրությունը «Տառապանքներով լեցուն կյանքիս մասին» վերտառությամբ: «Ամենայն ազնվությամբ հավատացնում եմ,- գրում է այդ հուշագրության հեղինակը,- որ գրված դեպքերը չափազանցված չեն, իմ տեսած և ականատեսների պատմածներից է վերցված: Հակառակը, քանի որ գրի եմ առնում շուրջ 50 տարի անց...»:

Ամիսներ առաջ վերոհիշյալ հուշագրությունն ինձ փոխանցեց իմ վաղեմի ու պատվարժան բարեկամ, ճանաչված բժիշկ-դեղագործ, Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի երկարամյա ռեկտոր, ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանը՝ ասելով, որ հեղինակն իր հայրն է, և գուցե նյութը կարող է պատմաբանների համար օգտակար լինել: Անմիջա-

պես սկսկեցի ընթերցել: Պատմական մի շարք մութ ու այտակարգ էջեր պարունակող նյութն անմիջապես կլանեց ինձ:

20-րդ դարի առաջին կեսի հայոց պատմության հեղինակի խորը իմացությունը, պատմական իրադարձությունները ճշգրտորեն վեր հանելու կարողությունն ինձ ուղղակի հիացրեց: Գրքի գիտական հրատարակությանը ձեռնամուխ լինելու առաջարկությունս սիրով ընդունվեց մեծահարգ Վ. Հակոբյանի կողմից, ինչը և արվեց սույն տպագրությամբ:

Պարույր Հակոբյանը ծնվել է 20-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանի Թալինի տարածաշրջանում, արմատներով արևմտահայ ծագում ունի: Այդ իմաստով նրա բազմանդամ ընտանիքը յուրահատուկ ձևով մարմնավորում է և՛ արևմտահայի, և՛ արևելահայի տիպարը, հայրենազրկված հայորդու կերպարը: Պարույր Հակոբյանը, հիրավի, անցել է տառապանքներով լեցուն ճանապարհ, եղել ժամանակի շրջադարձային իրադարձությունների կիզակետում, բազմիցս հայտնվել դժոխային իրավիճակում, զգացել հարազատ մարդկանց կորստի ցավը, ճաշակել օրվա հացը վաստակելու դժվարության դառնությունը:

Պ. Հակոբյանն իր հուշագրության առաջին մասում (1903-1940 թթ.) հանգամանորեն անդրադառնում է հայկական գյուղի կենցաղի տարբեր կողմերին, մանրամասներ հաղորդում ազգային սովորույթների, բարքերի, ավանդույթների, տալուզի, դպրոցական կյանքի անմխիթար վիճակի, վաղ հասսակում ամուսնությունների, ընտանեկան հարաբերությունների, կնոջ՝ Ինտիզարի կերպարով՝ հայ կնոջ անեղծ նկարագրի և այլնի մասին:

Պատմաբանների, հատկապես, առօրեականության խնդիրներով զբաղվող մասնագետների համար առավել հե-

տաքրքրական են Առաջին աշխարհամարտի, 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության, խորհրդային իշխանության առաջին տասնամյակների պատմության էջերի ուրույն նկարագրությունները: Ի տարբերություն բազմաթիվ այլ հուշագրությունների, որոնց հեղինակները, եթե անգամ չեն իդեալականացրել իրենց գործունեության զանազան դրվագները, այնուամենայնիվ, որպես կանոն, փորձել են թաքցնել անձնական կյանքի ինչ-ինչ հանգամանքներ, ապա Պարույր Հակոբյանը չի խուսափել հանրայնացնել նաև իր իսկ գործած «զանցանքները», հանրության կողմից անընդունելի համարվող արարքները, մարտի դաշտում կատարած քաջագործությունների կողքին՝ հարկադիր նահանջի, վախի ու անգամ դասալքության դեպքերը: Նման մոտեցման շնորհիվ նրա հաղորդած տեղեկություններն ուսումնասիրողներին ներկայանում են առավել քան արժանահավատ: Չմոռանանք, որ պատմական դեպքերի նկատմամբ այդ անաչառ վերաբերմունքը Հակոբյանը հանդես է բերում խորհրդային տարիներին գրված հուշագրության պարագայում, ինչը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանում խրախուսելի չէր, այլև կարող էր հեղինակի համար ունենալ տխուր վախճան: Բայց խռովահույզ կյանքի ճանապարհ անցած հայորդին, իրեն բնորոշ համարձակությամբ, շարունակել է նախապատվությունը տալ ճշմարիտ պատմություն գրելու առաքելությանը՝ կանգ չառնելով սեփական կյանքը կրկին վտանգելու իրողության առջև:

Պ. Հակոբյանի հուշագրությունը նոր լույս է սփռում Առաջին հանրապետության պատմության մի շարք էջերի վրա, որոնք հնարավորություն են տալիս մասնագետներին ավելի խորությամբ հասկանալու նորաստեղծ անկախ պետականության **կործանման** պատճառները: Զինվորագրվելով հանրապե-

տության բանակին՝ 1918 թ. վերջին նա, իրերի բերումով, մասնակիցն ու ականատեսն է դառնում ժամանակի բախտորոշ մի շարք իրադարձությունների: 1919 թ. մայիսին Հակոբյանը մասնակցում է անգլիացիների հետ Կարսի բերդի և մարզի ազատագրմանը, անաչառ գնահատական է տալիս 1920 թ. մայիսին բոլշևիկների բարձրացրած հակակառավարական ապստամբությանը:

Բացառիկ հետաքրքրությամբ են ընթերցվում 1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին հանրապետության զինվորական Հակոբյանի և նրա զինակից ընկերների գործունեության դրվագները: Զարմանալի զուգադիպությամբ նրանց վիճակվում է պատերազմի օրերին լինել ռազմաճակատի գրեթե բոլոր հատվածներում՝ Կարսում, Սարիղամիշում, Բասենում, Մերդենեկում, Օլթիում, Արդահանի մերձակայքում՝ հայվրացական սահմանագլխին, Կաղզվանում, Մազրայում, Ալեքսանդրապուլում, Շիրակի դաշտի գյուղերում, Թալինի շրջակայքում և այլուր: Հատկանշական է, որ հեղինակը միաժամանակ և՛ մեծ ոգևորությամբ գրում է իր ծառայակից ընկերների հետ «Մեր հայրենիք» երգելու, բանակը բարեփոխելու հաջող քայլերի, թշնամու նկատմամբ քանիցս տարած հաղթանակների վերաբերյալ, և՛ չի երկնչում խոստովանել հայկական բանակում տիրող անառողջ մթնոլորտի, սպաների կամայականությունների, անբավարար զինվածության, մշտապես թերսնման, կանոնադրական կարգի հաճախակի խախտումների, կրած ամոթալի պարտությունների մասին:

Պարույր Հակոբյանի հուշագրությունը գալիս է հարստացնելու անկախ Հայաստանի բանակի նշանավոր սպաներից, հայ ժողովրդի արժանավոր զավակ, գնդապետ Հովհաննես Մազմանյանի կենսագրությունը, որին հայ հասարակությունն

առավելապես ծանոթ է Կարսի անկման նախօրյակին՝ մեր զինվորականության ամոթալի փախուստի պատճառով նրա ինքնասպան լինելու կապակցությամբ: Հակոբյանը, լինելով Մազմանյանի ղեկավարության ներքո կովող դասակի հրամանատար, առիթ է ունեցել նրա հետ մշտապես շփվելու, ներկայացնելու վերջինիս գործունեությանը վերաբերող մի շարք անհայտ դրվագներ:

Հովհաննես Մազմանյանին այսպես է ներկայացնում Պ. Հակոբյանը. «Մի քանի խոսք գնդապետ Մազմանյանի մասին: Նա մի հաղթանդամ, գեղեցիկ դիմագծերով, մոտ 100 կգ քաշով, 28–30 տարեկան երիտասարդ էր: Չնայած իր ծանրաքաշ մարմնին, բավական արագաշարժ էր, աշխույժ, ֆիզիկապես կոփված: Շատ հասարակ էր պահում իրեն, օրվա մեջ զինվորների հետ զանազան միջոցառումներ (խաղեր) էր անցկացնում (վազք, ինուշարաք, վանք - բոլորի թափ-յող–դաշի, գոտի և այլն): Բոլոր խաղերի ընթացքում հանում էր ուսադիրները՝ պահանջելով իրեն դիտել իբրև հավասարը հավասարին: Խաղերի ընթացքում միշտ հաղթանակով էր դուրս գալիս այն թիմը (խումբը), որի մասնակիցը Մազմանյանն էր: Զմռանը շատ էր սիրում ձնագնդի խաղալը: Նա մի քանի զինվորներով հաղթում էր մի ամբողջ վաշտի: Չնայած նրան հասած ձնագնդերը տասնապատիկ ավելի շատ էին, բայց նա երբեք չէր ընկճվում ու պայքարում էր մինչև հաղթանակ: Մազմանյանը դեռ ամուսնացած չէր, բարոյապես բյուրեղային մաքրության տեր անձնավորության էր»:

Մեծ դժվարություններով ու համառ մարտերից հետո, իր ջոկատը բարեհաջող Մերդենեկ հասցնելու համար, Պարույր Հակոբյանն արժանացել է Մազմանյանի դրվատանքին: Հեղինակը նկարագրում իրենց ջոկատի հանդիպումը հրամանատա-

րի հետ. «Բոլորս նստեցինք ֆուրգոնները և արագընթաց սլացանք: Մերդենեկի մատույցներում վայրէջք կատարեցինք, բացի վիրավոր զինվորից: Մարտական կարգը վերականգնեցինք ու շարքերով առաջ շարժվեցինք: Մինչև գյուղի կենտրոն հասնելը, հույների եկեղեցու հրապարակում, արդեն կազմ ու պատրաստ կանգնած է հայկական առաջին գնդի երկրորդ գումարտակը, որի կազմում և մեր 7-րդ վաշտը: Գնդապետ Մազմանյանը, շրջապատված ողջ սպայական կազմով, մեզ էր սպասում: Մոտենալով եկեղեցու բակ՝ մի 50 մետրի վրա կանգնեցրի դասակին և, հանդիսավոր կարգով մոտենալով, զեկուցեցի. «Պարոն գնդապետ, հայկական գնդի 7-րդ վաշտի 3-րդ դասակը 16–օրյա անջատումից հետո, տալով ինը սպանված, մի ծանր վիրավոր, վերադարձավ 35 զինվորով և մեկ պաշտոնազուրկ սպայով: Զեկույցս դեռ չավարտած գնդապետը գրկեց ինձ ու համբուրեց, այնուհետև նույնը արեց դասակի բոլոր տղաներին: Գնդապետը բավական հուզված էր ու երկար ժամանակ խոսելու կարողության չուներ... մեր դասակին տեղավորեցին հարմարավետ բնակարանում, լավ կերակրեցին, թույլատրեցին հանգստանալ»:

Կարսի մարզի տարածքում թուրքերի դեմ մղած մարտերից մեկի մասին Հակոբյանը պատմում է. «Մի ակնթարթ դադարեց կրակը, ասկյարները բարձրացան իրենց դիրքերից ու վայրի աղաղակներով բլրակից սկսեցին հորդել դեպի հարթավայրը: Մեր վաշտը, որ ընկած էր միջանկյալ տարածքի վրա և առաջինն էր իր վրա վերցնելու թուրքերի հարվածը, զգաց մոտեցող առաջավոր ասկյարների շունչը, այդ վայրկյանին էլ հնչեցին մեր գնդի նվագախմբի ոգևորիչ «Մեր հայրենիք» պետական հիմնի հնչյունները:

Սև ձիու վրա նստած, լսվեց գնդապետ Մազմանյանի մարտական կոչը՝ հանուն հայրենիքի ուռա գոչելով հարձակ-

ման անցնելու մասին: Վայրկյան անց թշնամական երկու բանակները մխրճվեցին իրար մեջ, և սկսվեց մի սարսափելի սվինամարտ: Գոռգոռոցը, ընկածների ճիչը, մեռնողների աղիողորմ լացը երկինք էր բարձրանում: Ինքնամոռաց զոտեմարտողներն այն աստիճան մոլեգնած էին, որ երբեմն չէին իմանում, թե ով ում է խոցոտում: Այս սահմռկեցուցիչ տեսարանը թե որքան տևեց, դժվար է ասել, սակայն ի վերջո թուրքերը տեղի տվեցին ու փախան: Ճիշտն ասած, ինքս այդ արյան բաղնիսը տեսնելով՝ քարացել և անէացել էի, գիտակցությունս, ինքնատիրապետումս զտա միայն թուրքերի փախուստից հետո: Մենք տվեցինք 150, իսկ թշնամին ավելի քան կրկնակի զոհեր: Թշնամու զոհերի շատության պատճառն, ըստ իս, նրանց շատությունն էր և համազգեստի միատեսակությունը, երբեմն իրար էին խոցոտում: Երկու կողմերն էլ կրում էին անգլիական համազգեստ ու զենքեր:» :

Նման խոսքերից հետո հասկանալի է, թե որքան ծանր ապրումներ պետք է ունենար հայոց բանակի զինվոր Հակոբյանը՝ Կարսի մերձակայքում ականատեսը դառնալով սիրելի հրամանատարի ինքնասպանության դրվագին: «Երբ գնդապետ Մազմանյանի ձեռնարկած բոլոր միջոցները՝ փախուստը կանգնեցնել, որևէ արդյունք չտվեցին,- հիշում է Հակոբյանը,- երբ հասել էինք Կարսի մատույցներին, այդ լեգենդար հերոսը, որ բազում ճակատամարտեր էր շահել, անպատվաբեր համարեց պարտված ներկայանալ բարձր հրամանատարությանը և, մահը գերադասելով, իր իսկ ատրճանակով՝ մեր աչքի առաջ, ինքնասպանություն գործեց: Գնդակը խոցել էր ուղիղ նրա սիրտը և հակառակ կողմից մեծ բացվածք բաց արել:

Նրա կորուստը մեծ վիշտ պատճառեց ներկաներին, արտասվալից աչքերով նրա դին դրինք սայլերից մեկի վրա և

շարժվեցինք Կարս, երեկոյան տեղ հասանք»:

Շատ ուշագրավ է, որ ժամանակի իրադարձությունները նկարագրվում են գեղարվեստական շնչով՝ էլ ավելի հետաքրքրական դարձնելով նյութը: Մեջբերենք մի հատված Կարսի անկման նախօրյակին ստեղծված աղետալի վիճակի մասին. «Օր-օրի կրկնապատկվում ու քառապատկվում են Կարսում հավաքված փախստականները, քաղաքի փողոցները, շենքերի բակերը, պատերը, այլևս չէին բավարարում մարդկանց կուտակումներից, մարդկային կուտակումները տարածվում էին քաղաքից դուրս՝ բաց դաշտում: Աշուն է, եղանակները վատացել են, ամեն օր տեղումներ են թափվում: Ցուրտը, խոնավությունը, սովը մասսայական համաճարակների բում են դարձել: Ամենուրեք թափված են անթաղ դիակներ: Անտանելի վիճակ է երկաթուղակայարանում, որտեղից օրական մեկ–երկու կիսատպռատ գնացք է ուղևորվում դեպի Ալեքսանդրապոլ, այն էլ ի՞նչ է տեղի ունենում, աստված գիտի: Ուժեղներն ու ճարպիկները, ճզմելով հարյուրավոր թույլերի ու հիվանդների, մի կերպ խցկվում են վագոններ, իսկ մյուսներին տիրություն անողներ չկան: Ամեն ինչ անտարբերության է մատնված»:

Անգամ ստեղծված այսպիսի ծանրագույն ռազմաքաղաքական պայմաններում իսկ, երբ հրամանատարական կազմի մի մասը զոհվել էր կամ գերի ընկել, ամենուր տիրում էին խուճապային տրամադրություններ, զինվոր Պ. Հակոբյանի վկայությամբ հայ զինվորականության մի մասը շարունակում էր արիաբար կռվել Կարսի մարզ ներխուժած թուրքական գերակշիռ ուժերի դեմ:

Վերոհիշյալը հաստատելու համար՝ վկայակոչենք Կարսի մերձակայքում թշնամու դեմ հայկական զրահազնացքի քաջարի մարտիկների տարած ևս մեկ հաղթական ճակատամարտի

դրվագ. «Զրահագնացքը երկար ու ուժեղ սուլոցով ազդարարեց երթի դուրս գալը դեպի սիմֆոր, որտեղ հազարավոր ասկյարներ գնացքի երկու կողմից կատաղի հրացանաձգություն սկսեցին գնացքի վրա: Ողորմելիներին թվում էր՝ գնդակներով կամ սվիներով կարող են խոցել զրահագնացքը և գերել այն: Լսվեց զրահագնացքի հրամանատարի հրամանը՝ կրակ բացել թշնամու վրա: Սկսեցին ճարճատել մեր գնդացիրները: Ասկյարներն այնքան բազմաքանակ էին, խառնիխուռն և զրահագնացքի մասին անտեղյակ, որ մոլախոտերի նման հնձվեցին մեր կրակոցների հուժկու հարվածներից: Պատահում էր, որ մի գնդակից խոցվում էր թշնամու 3, նույնիսկ, չորս ասկյար: Գնացքը շրջապատել ցանկացողները բոպեների ընթացքում գետին տապալվեցին, ոտքի վրա բացառապես ոչ ոք չմնաց: ...Զրահագնացքի այս չտեսնված սխրանքը հնարավորություն տվեց հարյուր հազարավոր հայրենակիցների կյանք փրկել»:

Անցած կյանքի դաժան ճանապարհը քաղաքականապես կուլել է Պարույր Հակոբյանին, որի շնորհիվ նա կարողացել է ճիշտ կողմնորոշվել բարդ քաղաքական իրավիճակներում: Խորհրդային տարիներին բուռն տնտեսական ու կուսակցական աշխատանք կատարած, Թալինի շրջանի տասնյակ գյուղերում ղեկավար պաշտոններ զբաղեցրած, Մեծ Հայրենականին մասնակցած ԽՍՀՄ քաղաքացին իր հուշերում համարձակորեն դրական կողմերով է ներկայացնում 1920-ականների սկզբին իրենց հետ նույն հարկի տակ ապրած նշանավոր ֆիդայի Մորուք Կարոյին (Կարապետ Ավոյան) և նրա տիկոջը՝ Մարթային: Հուշագրողի կարծիքով, Կարմիր բանակը 1920 թ. դեկտեմբերին ներխուժել է Հայաստան, ինչը սարսափի մթնոլորտ է ստեղծել հայ բնակչության շրջանում: Այդուհանդերձ, խորհրդայնացումով, ըստ Հակոբյանի՝ «...շուրջ երեք տարվա թափառումներից,

փախուստներից, սովից, մեծաթիվ կորուստներից, անսասելի դժվարություններից հետո, ի վերջո, խաղաղություն հաստատվեց: ... Հայաստանի Հանրապետության հռչակումը նույնպես հոկտեմբերյան հեղափոխության արդյունքն էր, չլիներ այդ հեղափոխությունը, Հայաստանը անկախանալու հնարավորություն չէր ունենա: Չհաստատվեր Հայաստանում խորհրդային իշխանություն, թուրքերը ամբողջապես կգրավեին նաև Արևելյան Հայաստանը...»:

Ուշագրավ տեղեկություններ կան կոլտնտեսային շարժման տարիներին բոլշևիկյան իշխանության նկատմամբ հայ գյուղացիների վերապահ պահվածքի, հակախորհրդային պայքարի, դրան իր և որոշ ընկերների մասնակցության, ապա նաև «դարձի» գալու, սկսված սովի և այլնի մասին: «Շրջագայությանս ընթացքում,- կարդում ենք հուշագրությունում,- հանդիպում եմ կոլխոզ կազմակերպող բրիգադաների, որոնք կառավարության ուժը ներկայացնելով, համատարած են հայտարարում, որոշ տեղերում էլ սև ցուցակներ կազմում կասկածելիների համար, որոնք պետք է ստուգման անցնեն պետ. անվտանգության մարմինների կողմից: Մասսայական հարձակում է սկսվել կուլակային, ուսնոր և մասամբ էլ միջակ տնտեսատերերի դեմ: Բարձր հարկերով հարկադրում են այդ տնտեսություններին, հաճախ բռնագրավում են ունեցվածքը, անասունները, տնային կահ-կարասին, հացահատիկը, բնակելի շենքերը, անասնագոմերը և այլն: Բռնագրավվածից որոշ մասը տրամադրված կոլխոզին, եթե այդպիսին կա, իսկ եթե չկա, բռնագրավվում է պետության կողմից: Ելնելով վերոհիշյալից՝ շատ գյուղերում հարկադրված հակակառավարական խմբակներ են կազմակերպվում, այդպիսի մի խմբակ էլ ստեղծվեց մեր գյուղում»:

Գրքի առաջին մասի շարադրանքն ամբողջապես վերա-

շարվել է, սրբագրվել և ծանոթագրվել: Նյութն ընթերցողին հստակ ու մատչելի դարձնելու նպատակով, կարևոր ենք համարել, թուրք-պարսկական տիրապետության պայմաններում Թալինի, Շիրակի և հարակից շրջանների օտարանուն դարձած բնակավայրերի ժամանակակից անվանումները նշել տողատակերում, իսկ բարբառային հնչողությամբ տեղանունները՝ ներկայացնել գրական տարբերակներով (օրինակ. Ղարս՝ Կարս, Օլտի՝ Օլթի, Մերդենիկ՝ Մերդենեկ և այլն): Ինչ վերաբերում է գրքի երկրորդ հատվածին, որը պատմում է Հայրենական մեծ պատերազմում ևս հեղինակի կրած անասելի տառապանքների մասին, անհամեմատ պատշաճ մակարդակով տպագրված լինելու պատճառով վերահրատարակության անհրաժեշտություն չենք տեսել:

Համոզված ենք, որ սույն հատորը կարժանանա ընթերցող լայն հասարակայնության ուշադրությանը և հետազոտական նյութ կծառայի 20-րդ դարի առաջին կեսի հիմնահարցերով զբաղվող պատմաբանների համար:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
ակադեմիկոս
21.07.2022 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայրս իր հուշերը սկսեց գրի առնել 1970-ական թթ. կեսերին, երբ հիվանդությունը քայքայել էր նրա առողջությունը, գրելիս դժվարանում էր (ձեռքերը դողում էին), որի հետևանքով ձեռագիրը դարձել էր դժվարընթեռնելի:

Ես այն ժամանակ գիտակցաբար չէի միջամտում նրա գրելուն, հոգեկան խռովք չպատճառելու, մտքի թելը չկտրելու նպատակով՝ աշխատելով հնարավորին չափ նորմալ պայմաններ ստեղծել, որպեսզի հայրս կարողանար վերջացնել իր հուշագրությունը: Հույս ունեի, որ ավարտելուց հետո, մենք երկուսով կընթերցենք այն, թերություններն ու բացթողումները կվերացնենք, կխմբագրենք, կսրբագրենք ու կհանձնենք տպագրության:

Դժբախտաբար, հորս հանկարծամահ լինելը մեզ զրկեց այդ հնարավորությունից: Նրա մահվանը հաջորդած առաջին երկու-երեք տարիներին, ես այդ հուշերը ընթերցելու ուժ ու կարողություն չունեցա: Մի կողմից՝ ծանր վիրահատության, մյուս կողմից՝ հոգեկան խոր ապրումներիս պատճառով: Տարիներ անց, երբ վիճակս որոշ չափով կայունացավ ու հորս հուշերը ընթերցելու կարողություն ունեցա, զգացի, որ հուշերում ինձ համար բավականին հարցեր կան պարզելու, վերաիմաստավորելու, ճշգրտելու և այլն: Սակայն ինչպե՞ս, ու՞մ օգնությամբ, երբ ավագ սերնդից ոչ ոք այլևս ողջ չէր:

Նման դեպքերում ես հարկադրված դիմում էի իմ հիշողություններին, մեր բանավոր զրույցներից մնացած տպավորություններին, կամ, երբեմն էլ տրամաբանորեն հանգում եզրակացությունների:

Երջանկահիշատակ հորս գրի առած հուշերն ունեն ա-

վելի քան 60-80 տարվա վաղեմություն, սակայն, իր արտակարգ և անհավատալի հիշողության շնորհիվ, դեպքերի և իրադարձությունների նկարագրությունը ներկայացնում է այնպես, կարծես այն տեղի է ունեցել երեկ, կամ շաբաթներ առաջ: Շարադրանքի մեջ հիշատակված են հարյուրավոր անուններ, բնակավայրեր, հանդամասեր, ընթերցելիս զարմանում ես, թե ինչպե՞ս կարող է մարդն, առանց որևէ գրավոր աղբյուրի (օրագրի), այդքան տեղեկություններ մտապահել:

Նրա հուշերը, իբրև ականատեսի և մասնակցի հայթուրքական կռիվների, նրանց հետևանքների վերաբերյալ, բավական նոր տեղեկություններ են պարունակում, որոնց մասին այլ աղբյուրներում չես հանդիպի: Չափազանց հավաստի տվյալներ, եզրահանգումներ կան Կարսի ճակատամարտի, Զրահազնացքի անձնակազմի հերոսական սխրանքի, թույլ տրված սխալների, զաղթականության ծանր վիճակի և հայկական բանակի պարտության պատճառների մասին:

Զգալի տեղեկություններ կան հետպատերազմյան դժվարությունների, կոլխոզային շարժման, բռնությունների, հալածանքների, այդ թվում նաև իր նկատմամբ կիրառած անարդարացի վճռի և այլն հարցերի մասին:

Հուշագրության 1-ին մասը, ըստ բովանդակության, կարելի է բաժանել չորս գլուխների:

Առաջին գլխում համառոտ տեղեկություններ է տալիս իր տոհմի՝ Դավթյանների մասին, հիմնականում հիշողությունների վրա հիմնված, քանի որ գրավոր հիմքեր չկան: Միակ գրավոր աղբյուրը կարող էր լինել իր հոր, հանգուցյալ Սիրեկան պապիս հիշատակարանը, որն ավաղ, հայրս շատ որոնեց, բայց գտնել չկարողացավ:

1912–1913 թթ. Սիրեկան պապս իր հուշատետրը հանձ-

նելիս է եղել իր մտերիմ, հանրահայտ ճարտարապետ Թորոս Թորամանյանին՝ տպագրության հանձնելու ակնկալությամբ: Սակայն, 1918–1920 թթ. հայ-թուրքական կռիվների ժամանակ, ճարտարապետը գերվում, կողոպտվում ու թալանվում է թուրք բարբարոսների կողմից, որի հետևանքով կորչում է և պապիս հիշատակարանը: Ինչպես ճարտարապետն է վկայում իր «Հայ ճարտարապետությունը» (1936 թ.) գրքում՝ «Պ. Սիրեկան Դավթյանի հիշատակարանը իր մեջ պարունակում է ոչ միայն իր տոհմի, այլև գյուղի և շրջապատի պատմական կարևոր իրադարձությունները»:

Հուշերի երկրորդ գլխում հայրս հիմնականում նկարագրում է դարասկզբի գյուղացիության սոցիալ-տնտեսական պայմանները, նրանց ծանր կացությունը, նիստ ու կացը, սովորույթները, ծեսերը, ազնվությունը, բարությունը, աշխատասիրությունը, ինչպես նաև իր դժբախտ մանկության, պատանեկության, ճակատագրական պատահարների, մոր կորուստի և այլ մանրամասնությունների մասին:

Մի գլուխ նվիրված է իր ամուսնական արարողություններին: Այս մասին հայրս առավել մանրամասն է կանգ առել, երկու առումով՝ մի կողմից փաստացի տեղեկություններ տալ դարասկզբի ամուսնական-հարսանեկան ծիսակատարությունների մասին (որի տևողությունը 7 օր էր)՝ համեմատելու ներկայի հետ, և երկրորդ՝ ցույց տալ իր անչափահաս և անօգնական վիճակը այդ արարողությունների ընթացքում:

Սիրեկան պապս, կռահելով առաջին աշխարհամարտի ողբերգական վախճանը հայ ժողովրդի համար և կանխազգալով մոտալուտ մահը,՝ որոշում է իր կենդանության օրոք որդուն, թեև անչափահաս, ամուսնացնել, քիչ թե շատ նրա ապագայի համար հիմքեր դնելու ակնկալությամբ:

Հայրս, թեև բացարձակ դժգոհություն չի հայտնում իր հորից, այդ անժամանակ ամուսնության համար, բայց երևում է նրա հոգեկան տառապանքն այդ ամուսնությունից, քանի որ նա իրեն համապատասխան ամուսին չի համարում իր հրեշտակային կնոջ համեմատ ու այդ պատճառով, էլ հոր մահից հետո, իրեն բոլորովին միայնակ զգալով, կամավոր մեկնում է ռազմաճակատ:

Հաջորդ բաժինը նվիրված է համաշխարհային առաջին պատերազմին ու նրա ծանր հետևանքներին: Նշում է նրա կործանիչ հետևանքները ինչպես գյուղի, ժողովրդի, այնպես էլ իր տոհմի՝ Դավթյանների համար, որի արդյունքում սովամահ եղավ բնակչության մեծ մասը:

Այնուհետև հայրս մասնակցում է Կարսի, Սարիղամիշի, Արդահանի, Մերդենիկի և այլ բնակավայրերի համար մղվող պաշտպանողական ճակատամարտերին, ծանր վիրավորվում, տեղափոխվում հիվանդանոց ու, դեռ լրիվ չապաքինված, երկրորդ անգամ՝ 1920 թ. նորից վերադառնում ռազմաճակատ, այս անգամ հիմնականում մասնակիցը դառնում Կարսի ռազմական գործողություններին, ականատես լինում նրա անկմանն ու հետևանքներին:

Մյուս բաժնում նկարագրում է քսանական թվականների տնտեսական ծանր կացությունը՝ սովը, համաճարակները, իր ապաքինումը, վերադարձը հայրենի օջախ, պատերազմի ավարտը, տնտեսության աստիճանաբար վերականգնումը, իր աշխատանքային գործունեությունը և այլն:

Հայրս իր հուշերի երկրորդ մասը նվիրել է Հայրենական պատերազմին, որին մասնակցել է պատերազմի առաջին օրերից և շուրջ մեկ տարի լինելով գործող բանակում՝ Սևաստոպոլի հերոսական պաշտպանությունում, քաղաքի անկումից հե-

Հ 30059

տո, վիրավոր վիճակում գերվում է և երեք տարի գերիների ճամբարներում ահավոր զրկանքների ենթարկվում ու միայն հավատարիմ ընկերների անձնուրաց օգնության և հոգատարության շնորհիվ ողջ է մնացել ու պատերազմից հետո ծանր վիճակում վերադարձել տուն (1946 թ.):

Ռազմաճակատում և գերության մեջ, թեև դժվարությամբ, հայրս օրագիր է պահել, որտեղ մանրամասն գրի է առել իրենց վիճակի, գերմանացիների բարբարոսական վերաբերմունքի մասին ու, ելնելով ստեղծված իրավիճակից, դեռ 1943 թ., երբ գերմանացիների հաղթանակը կասկած չէր հարուցում, երբ նրանք գրավել էին Խորհրդային Միության եվրոպական հատվածի մեծ մասը, հայրս մարգարեաբար գուշակում է, որ Գերմանիան, իր հակաժողովրդական քաղաքականության հետևանքով, այս պատերազմում անպայման կպարտվի և, եթե իրենք անգամ ողջ չմնան, հաղթանակի պտուղներից կօգտվեն իրենց զավակներն ու հարազատները: («Նամակ Բեռլինից» 1943 թ.).

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՒՅՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ՏՈՀՄԻ ՄԱՍԻՆ
(Դավթյանների մասին)

Մեր նախապապը՝ (պապիս պապը) Դավիթը, ծնվել ու մեծացել է Արևմտյան Հայաստանի Մուշ գավառի Բուլանղի շրջանի Յոնջալդ գյուղում: Ծննդյան թվական հայտնի չէ: Նա ունեցել է բազմանդամ ընտանիք ու զբաղվել հողագործությամբ: Նրա տղաներից մեծը՝ Խաչատուրը, ամուսնացած ու բազմանդամ ընտանիքի տեր դարձած անձնավորություն էր, միջնեկ տղան՝ Ասատուրը, և փոքրը՝ Գրիգորը, նույնպես հասունացած տղաներ էին և ամուսնացած: Ամենափոքրը Սալվին էր, որը դեռ ամուսնացած չէր:

1826–1828 թթ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով[1] հնարավոր է լինում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ու կնքված պայմանագրի հիման վրա թե՛ պարսիկները և թե՛ թուրքերը պարտավորվում են անարգել հնարավորություն տալ հայ բնակչությանը, ինքնակամ վերաբնակվելու Արևելյան Հայաստանում:

Հազարավոր գաղթականների հետ միասին, Դավիթ պապը, թողնելով իրենց պապենական տուն, տեղ, օթևան, վերջնականապես տեղափոխվում ու բնակություն է հաստատում Արևելյան Հայաստանում: Նրա ավագ որդին՝ Խաչատուրը, իր ծանրաբեռնված ընտանիքի պատճառով, ռիսկի չի դիմում ու մնում է հայրենական օջախում:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Խաչատուրի սերնդի հետ որոշակի կապ պահպանվել է, որից հետո նրանց հետքերը կորել են:

Դավիթ պապը Արևելյան Հայաստան գալուց հետո

---

[1] Պետք է լինի 1826–1829 թթ.:

սկզբում բնակություն է հաստատում Սարդարապատում: Սարդարապատը այն ժամանակ ավերված, քանդված, բնակչությունը տեղահանված մի վայր էր:

Գաղթվածներն էլ հիմնականում կենդանություն են տալիս բնակավայրին:

Մի քանի տարի այստեղ բնակվելուց հետո, չեն կարողանում հարմարվել բնա-կլիմայական պայմաններին և որոշում են տեղափոխվել Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղը: Մինչև տեղափոխվելը, Դավիթ պապն իր Սալվի աղջկան ամուսնացնում է համագյուղացիներից մեկի տղայի՝ Մուրադի հետ, որոնք մի կերպ հարմարվել էին ու դարձել տեղի բնակիչներ, իսկ ինքը՝ իր Գրիգոր և Ասատուր որդիների հետ միասին տեղափոխվում են ու մշտական բնակություն հաստատում Եղվարդում:

1840-ական թթ. նրանց ընտանիքը դառնում է Եղվարդի երևելի ընտանիքներից մեկը, բավական վարելահողեր են ձեռք բերում, մեծ թվով անասուններ, լծկան, հիմնադրում են ջրաղաց և այլն:

Քառասունական թվերի կեսերին, ամռան մի գիշեր, երբ Դավիթ պապն իր թոռնիկների հետ դեպի Աշտարակ տանող ճանապարհի հողակտորը հերկելիս է եղել, մի խումբ ավազակներ հարձակվում են նրանց վրա, Դավիթ պապիս սպանում և տաս-տասներկու զույգ եզներ տանում: (Այն բլրակը, որտեղ տեղի է ունեցել հիշյալ եղեռնը, առ այսօր կոչվում է Դավթի պատաշար):

Իրենց հոր սպանությունից հետո Ասատուր և Գրիգոր եղբայրները շուրջ երկու տարի որոնում են, ձեռնարկում բազում միջոցառումներ չարագործներին հայտնաբերելու, սակայն ապարդյուն:

Որպես անիծյալ բնակավայր, նրանք թողնում են Եղվարդը և հեռանում, այս անգամ բնակություն հաստատելով Սևանա լճի ավազանում, սկզբում Բայազետում, հետո էլ տեղափոխվում Բասարգեչար: Մի քանի տարի ապրելուց հետո, նրանք չեն հարմարվում տեղի պայմաններին, իսկ հիմնականում եղբայրներին հանգիստ չի տալիս իրենց հոր՝ Դավիթ պապի, արյան վրեժը լուծելու խնդիրը, որի պատճառով էլ նրանք նորից վերադառնում են ու դարձյալ բնակվում Եղվարդում:

Նորից որոնումներ, պրպտումներ, անհանգստություն, անքուն գիշերներ, հոգեկան տառապանքներ, սակայն նրանց այդպես էլ չի հաջողվում հանցագործների հետքերը գտնել: Անարդյունք որոնումներից հուսահատված, եղբայրները մի պահ որոշում են ընդմիշտ հեռանալ Եղվարդից: Սակայն, այդ հարցում նրանք ունենում են հակադիր կարծիքներ: Գրիգորը թողնում է Եղվարդը, իբրև չարագործների որջ, իսկ Ասատուրը հրաժարվում է Եղվարդից դուրս գալ, պատճառաբանելով, որ իր հոր՝ Դավթի գերեզմանը անտերության չի մատնի և, բացի այդ, հույսեր էր փայփայում չարագործներին գտնելու և վրեժխնդիր լինելու:

Այսպիսով, Գրիգորը վերցնում է իր ընտանիքը և իր համագյուղացի ընտանիքների հետ (Պապանի, Սիմոյի, Մանուկի, տերտերի, Միոյի, Բլբազի, Մոխսու, Թարփոշի, Սարգսի, Ավետիսի) միասին տեղափոխվում Թալինի շրջանի Ղուրդարվեշ (այժմ Ոսկեթաս) գյուղը: Մի երկու տարի բնակվում է Ոսկեթասում, որոշ չափով տուն ու տեղ դնում, սակայն նրանց անհանգստացնում է եկեղեցի չունենալը: Այդ ժամանակ իմանում են, որ մի յոթ-ութ կիլոմետր հեռավորության վրա կա մի լքված գյուղ, որտեղ կանգուն է եկեղեցին, բայց այդ գյուղում, իբրև հովվեկներ բնակություն են հաստատել մի խումբ քրդեր ու եկեղե-

ցին օգտագործում են իբրև ոչխարի փարախ: Այդ հանգամանքը նրանց հանգիստ չի տալիս: Նրանք չեն կարողանում հաշտվել այն մտքի հետ, երբ քրիստոնեական եկեղեցին վեր է ածվել ախոռի: Ուստի, ձեռնարկում են բոլոր միջոցները քրդերից խլելու և իր նպատակին ծառայեցնելու համար: Նրանք դիմում են Ղրմզլուի և Մաստարայի տեղական իշխանություններին (յուզբաշուն) օգնություն ցուցաբերելու և Ադիամանից քրդերին դուրս քշելու համար:

Այդ օգնությունը նորից տրվում է: Ոսկեթասում բնակվող ընտանիքները, որոնք գաղթվածներ էին, վերոհիշյալ գյուղերի օգնությամբ հարձակվում են Ադիամանի քրդերի վրա, նրանց դուրս քշում գյուղից ու վերջնականապես տեղափոխվում Ադիաման՝ մշտական բնակություն հաստատելով այնտեղ:

Նոր բնակավայրը, իր բնակլիմայական պայմաններով, բավական խստաբարո էր, բայց բնակիչները հարմարվեցին: Նրանք կարճ ժամանակում եկեղեցին մաքրեցին աղտեղություններից և այն գործի գցին: Ուրախ էին, որ տասնհինգ տարիներից հետո, ի վերջո 1850-ական թվականների սկզբին գտնվեց մի խաղաղ անկյուն, որտեղ 10–12 ընտանիքների համար բոլոր պայմանները կային: Ամենից շատ նրանց մեծ ուրախություն էր պատճառում մայր եկեղեցու առկայությունը:

Այսպիսով, Դավիթ պապի ընտանիքը վերջնականապես բաժանվեց երեք ճյուղի հանձինս իր երեք որդիների՝ Խաչատուրի, Ասատուրի և Գրիգորի: Ինչպես վերևում հիշատակվեց, Խաչատուրի սերնդի մասին Առաջին համաշխարհային պատերազմից հետո տեղեկություններ չկան:

Ասատուրի ճյուղն առ այսօր բնակվում է Եղվարդում, նրանք այնքան են բազմացել ու շատացել, որ նրանց թիվը վաղուց անցել է հարյուրներից: Նրանցից շատերը, ինչպես նաև

Գրիգորի սերնդակիցներից զգալի թվով մարդիկ, այժմ բնակվում են ոչ միայն հիշյալ գյուղում, այլև հանրապետության և միության տարբեր քաղաքներում և բնակավայրերում:

Քանի որ մենք Գրիգորի ճյուղի ներկայացուցիչներն ենք ու նրա սերնդի մասին մեր տեղեկություններն ավելին են, ուստի մեր շարադրանքի մեջ հիմնականում կանգ կառնենք այդ սերնդի պատմության մանրամասնությունների վրա:

Գրիգորը ունենում է չորս տղա՝ Հակոբը, Սուքիասը, Ղուկասը, Հարութը և երկու աղջիկ՝ Գյարանը և Անահիտը: Աղիամանում հաստատվելուց մի քանի տարի անց, Գրիգոր պապը մեծ տնտեսություն է ստեղծում, կառուցում է սեփական ջրաղաց, ձեռք է բերում ու բազմացնում զգալի քանակով մանր ու խոշոր եղջերավոր անասուններ, լծկան, գյուղատնտեսական գործիքներ, ինվենտար և այլն:

Ասատուրը Եղվարդում նույնպես մեծ տնտեսության տեր է դառնում: Ունենում է երեք որդի՝ Դանիել, Մարտիրոս, իսկ վերջինին, փոքրին, անվանակոչում են իր պապի՝ Դավթի անունով: Սրանցից յուրաքանչյուրը հետագայում դառնում են բազմազավակ ընտանիքի հայրեր, որոնք էլ բազմանալով նորանոր ճյուղեր են տալիս:

Գրիգոր պապն իր կենդանության օրով ամուսնացնում է իր դուստրերին. Գյարանին Սոգութլի՝ Դարբինենց Մելքոնի հետ, իսկ Անահիտին՝ Աղիաման՝ Սիմոյենց Մակարի հետ: Ամուսնացնում է նաև ավագ որդուն՝ Հակոբին, որի հարսնացուն չրպլեցի էր (Աղինի մոտերքում):

Գրիգոր պապը մահանում է 1870 թ. սկզբներին, որից հետո տնտեսության ղեկավարը, ավագության կարգով դառնում է Հակոբ պապս: Նա շարունակում է իր նախորդների նման զբաղվել հողագործությամբ, անասնապահությամբ ու տնտե-

սության կարիքները հոգալու համար՝ երբեմն էլ առնտրով: Մի օր, երբ Հակոբը վաճառելիս է լինում մոտ հարյուրի հասնող ոչխարներ ու տուն վերադառնում, չարագործները հետապնդում են, որպեսզի նրան կողոպտեն: Ցերեկով նրանց չի հաջողվում, սակայն, երբ երեկոյան կողմ նա դուրս է գալիս գյուղամեջ, այլևս տուն չի վերադառնում: Ավազակները նրան սպանում են կողոպտելու նպատակով, սակայն նրա մոտ ոչ մի կոպեկ դրամ չի լինում: Հակոբը դրամը հանձնած է լինում մորը: Նրա դիակը հայտնաբերվում է շուրջ մեկ շաբաթ անց: Այսպիսով, նա իր Դավիթ պապի նման չարագործների զոհ դարձավ, որոնց հետքերը նույնպես գտնել չհաջողվեց: Հակոբ պապս ունենում է երկու անչափահաս երեխա, տղան՝ հայրս, Սիրեկանը, լինում է 2–3 տարեկան, իսկ աղջիկը՝ Սուսիկը, 6–7 տարեկան:

Ամուսնու սպանությունից հետո տատս երեխաներին վերցնում, մեկնում է հերանց տուն՝ Չրպլու: Ամուսնու քառասունքը դեռ չլրացած, նրա եղբայրները նրան իրենց գյուղում ամուսնացնում են: Սիրեկան պապիս ու Սուսիկ հորաքրոջս, հորեղբայրներ Սուքիասը և Հարությունը վերցնում են իրենց խնամքի տակ, պահում-պահպանում են ամեն ինչ անում, որպեսզի երեխաները իրենց որբ չզգան: Առանձնակի ուշադրության են արժանանում տատի կողմից, որն իր երիտասարդ որդու եղեռնական մահից հետո, իր ողջ կարողությունը, ուժերն ու հնարավորությունները ներդնում է, որպեսզի երեխաները անհոգ մեծանան ու հնարավորին չափ չզգան ծնողների կարոտը: Քույր ու եղբայր դառնում են ողջ ստիմի ուշադրության ու հոգատարության առարկան: Չնայած այն ժամանակներում ուսումն ու կրթությունը այնքան էլ հարգի չէին, սակայն հորեղբայրները, իրենց եղբոր որդուն մասնավոր դպրոց են ուղարկում, որտեղ Սիրեկան հայրս տարրական կրթություն է ստանում: Այդ հենքի

վրա, նա չափազանց սեր է ունեցել դեպի ուսումը, զբաղվել է ինքնակրթությամբ ու կարճ ժամանակ անց դարձել գյուղի (ոչ միայն գյուղի) կրթված ու զարգացած անձնավորությունը:

Հորեղբայրները, տեսնելով նրա առաջադիմությունն ու բանիմացությունը, ի հավերժացումն իրենց եղբոր՝ Հակոբի հիշատակի, տոհմի տնտեսական ողջ գործունեությունը ամբողջությամբ հանձնում են երիտասարդ Սիրեկանին:

Սուսիկը մեծանում է, հասունանում ու հորեղբայրների կամքով ամուսնանում Սոգուտլի (Սառնաղբյուր)՝ Մուկուչ Նավոյանի հետ, որը հետագայում ունենում է չորս տղա, Մելքոնը, Պետրոսը, Խաչիկը, Արարատը և մի աղջիկ՝ Մագտաղը: Սուսիկը մահանում է բավականին երիտասարդ տարիքում: Տղաներից Մելքոնը մահացավ 1940 թ., Պետրոսն ու Արարտը զոհվեցին Հայրենական պատերազմում, Խաչիկին 1939 թ. աքսորեցին, որի հետևանքով նրա ընտանիքը ցիր ու ցան եղավ: Տղան 1950 թ. կեսերին մեկնեց Սիբիր՝ հորը տեսակցելու, այնտեղ էլ ամուսնացավ ու այլևս չվերադարձավ: Կինը՝ Սիրուշը, դառնություններն ու դժվարությունները հաղթահարել չկարողանալով վախճանվաց 1950 թ. սկզբին: Անժամանակ կյանքից հեռացան նաև նրանց երկու դուստրերը՝ Մեղան և Լենան:

Սուսիկի միակ աղջիկը՝ Մագտաղը, ամուսնանում է Մաստարա գյուղում՝ Առաքելյան Արամի հետ, ունենում է չորս տղա ու մի աղջիկ:

Տատս՝ Սիրեկանի մայրը, ինչպես վերևում ասվեց, ամուսնու (Հակոբ պապիս) մահից հետո, ամուսնանում է և ունենում է մի տղա՝ Գևորգ, և երկու աղջիկ: Գևորգը (հորեղբայրս) ունենում է երկու տղա՝ Բագրատը և Մուկուչը, Մուկուչը զոհվեց պատերազմում, և երեք աղջիկ՝ Հայաստանը, Մագտաղը և Բուրաստանը: Բագրատն ուներ երկու տղա՝ Վոլոդյան և Կոլ-

յան (մահացավ 1991 թ.), և երեք աղջիկ:

Հակոբ պապիս փոքր եղբայրը՝ Ղուկասը, նույնպես մահանում է երիտասարդ հասակում՝ թողնելով երկու անչափահաս աղջիկներ՝ Սոֆիան և Մարգարիտան: Մեծանալով, նրանք ամուսնանում են. Սոֆիան՝ ադիամանցի Ղամբարենց Անտոնի հետ, իսկ Մարգարիտը՝ գյոզլեցի Ասոյենց Միրեկանի հետ: Սրանք վաղ են անբախտանում, բայց իրենց երկուսն էլ ապրեցին մինչև իրենց զառամյալ հասակը՝ 1950 թ. սկզբները:

Հորաքույր Սոֆիան բազմազավակ մայր էր դարձել. Ունեցել էր 9-ը երեխա, որից հինգը տղա: Սակայն, 1918–1920 թթ. հայ-թուրքական կռիվների, սովի, գաղթի և հիվանդությունների հետևանքով, բոլորը մահացել էին, բացի մեկից՝ Սարգսից, որը տեղափոխվել ու բնակվում էր Հոկտեմբերյանի շրջանի Նաիրի սովխոզում, հետո՝ Մյասնիկյանում, որտեղ էլ 1970 թ. կեսերին մահացավ՝ թողնելով երեք տղա ու մի աղջիկ:

Իսկ հորաքույր Մարգարիտն ուներ երկու տղա, որոնցից փոքրը՝ Գառնիկը ատամնաբույժ էր, նա պատերազմում զոհվեց՝ թողնելով երեք երեխա (բնակվում են Երևանում), իսկ մեծը՝ Մովսեսը, առ այսօր կենդանի է ու բնակվում է գյուղում, ունի երկու որդի:

Հակոբ պապիս միջնակ եղբայրը՝ Սուքիասը, ունենում է հինգ տղա՝ Ալեքը, Երվանդը, Սիմակը, Սարգիսը, Պետրոսը և երեք աղջիկ՝ Տիրունը, Նոյեմը և Բախչագյուլը: Սիմակը, արտակարգ ունակությունների և ընթերցանության շնորհիվ, արժանանում է ծնողների ու տոհմի մեծերի ուշադրությանը, որի համար էլ ընտանեկան խորհուրդը որոշում է, ինչ գնով էլ լինի նրան ուսման տալ: Այսպես էլ անում են: Նա ընդունվում է Ալեքսանդրապոլի գիմնազիան ու փայլուն կերպով ավարտում այն ու նույն տարում էլ անցնում է աշխատանքի իբրև ուսուցիչ:

Դժբախտաբար, նրա կյանքի թելը կտրվեց դեռ 19-ը չլրացած, թոքախտ հիվանդությունից՝ 1912 թ.:

Սուքիաս ամու ավագ որդին՝ Ալեքը, ամուսնանում է սուգութլեցի Կնյազի աղջիկ Մարանի հետ, ունենում են երկու տղա՝ Գուրգենը, Վարդգեսը, և երեք աղջիկ՝ Վառոն, Շուշանը և Վարդուշը: Ալեքի ընտանիքը 1918–1920 թթ. մեծ ողբերգություն է ապրում: Սովամահ է լինում Ալեքը և իր երեք երեխաները: Կենդանի են մնում Շուշանը և Վարդգեսը, որոնց ահավոր դժվարությամբ պահեց, մեծացրեց և իրենց նպատակին հասցրեց բազմաչարչար մայրը՝ հանգուցյալ (մահացավ 1939 թ.) Մաթանը: Շուշանը ամուսնացավ գյուղում՝ Սվոյի Կիրակոսի տղա Աղասու հետ, սակայն Աղասին շատ վաղ մահացավ, և Շուշանը դժբախտացավ:

Վարդգեսն ամուսնացավ սոգյութլեցի Զինոֆնիկի հետ, ունեցավ մի տղա՝ Ալբերտը, որն այժմ բնակվում է Լենինականում, և երկու աղջիկ՝ Վարդուշը և Արուսը, որոնք նույնպես ամուսնացած են ու բնակվում են Չարենցավանում, իսկ սրանց հայրը՝ Վարդգեսը, զոհվեց պատերազմում:

Սուքիաս ամու մյուս որդիները՝ Երվանդը, Պետրոսի, Սարգսի ու նրանց ժառանգների, ինչպես նաև պապիս ամենափոքր եղբոր՝ Հարութ ամու, որդիների՝ Տիգրանի, Արշակի, Արամի ու նրանց ժառանգների մասին ես գիտակցաբար չեմ գրում, քանի որ նրանք որդուս՝ Հակոբի ժամանակակիցներն են, ու նա ավելի մանրամասն ու գեղարվեստական երանգներով տվել է նրանցից յուրաքանչյուրի համառոտ նկարագիրը:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ

Ծնվել եմ 1903 թ. հուլիսին Ալեքսանդրապոլիս գավառի Մոլլագյոկչայի[2] շրջանի Ադիաման[3] գյուղում: Մինչև 8 տարեկան դառնալս որևէ արժանահիշատակ դեպք չեմ հիշում: 1911 թ., երբ ութ տարիս լրացավ, սկսեցի դպրոց հաճախել, եթե կարելի է այն դպրոց անվանել: Մեր հարևան Սոգյութլի գյուղի[4] տերտեր տեր Սիմիկը հանձն էր առել մեր գյուղում վարժարան բացել՝ երեխաներին սովորեցնելու նպատակով, յուրաքանչյուրից երեք ռուբլի վարձավճարի պայմանով: Այդ գումարը այն ժամանակվա գյուղացիների ավելի քան 90 տոկոսը վճարելու հնարավորություն չուներ:

Առավոտյան վաղ ներկայանում էինք տեր հորը, թվով 17 աշակերտ, խոնարհվելով ողջունում նրան և, թույլտվություն ստանալուց հետո, նստում: Դպրոցը, այսօրվա պատկերացմամբ, գոյություն չուներ. Այն տեղավորված էր Տոնոյենց գոմի օդայում: Սեղան-նստարաններ գոյություն չունեին: Օդայի թմբերի երկու կողմերի վրա փռված էր կտավատի ծղոտ ու ծածկված էր ճլոպից պատրաստված խսիրներով, որոնց վրա էլ մենք ծնկաչոք դասեր էինք անցկացնում:

Դասերը սկսվում էին աղոթքով, սկզբում սերտում էին Հայր-մերը, հետո էլ տվյալ օրվան համապատասխան՝ աղոթք, արարողություն, ինչը տեր հայրը նպատակահարմար կհամարեր, ինքը երգի ձևով ասում էր, մենք էլ առանց հասկանալու, կրկնում էինք:

---

[2] Մոլլագյոկչան ներկայիս Շիրակի Մարալիկ քաղաքն է:

[3] Ադիամանը (նաև՝ Ադյաման) այսօրվա Գառնահովիտն է՝ Շիրակի մարզում:

[4] Սոգյութլին կամ Սոգյութլուն ներկայիս Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղն է:

Ամբողջ տարվա ընթացքում մի կերպ տառաճանաչ դարձանք և մի երկու աղոթք անգիր սովորեցինք:

Տառաճանաչությունը մեր վրա բավական ծանր նստեց: Օր չէր լինում, որ մեզանից մեկը կամ մի քանիսը խստագույն պատժի չենթարկվեր վարժապետի կողմից. Մերկ ծնկներով չոքել ավազի վրա, կանգնել ձեռքերը վեր բարձրացրած՝ որևէ ծանրություն բռնած, կամ ընկերներից որևէ մեկին շալակել ու ժամերով կանգնել անկյունում: Տարվա ընթացքում մեր այդ փոքրաթիվ խումբն էլ ավելի փոքրացավ: Համաձայն նախնական պայմանավորվածության՝ ուսման վարձը պետք է վճարեին երեք նվագով, բայց տեր Սիմիկը խախտեց պայմանը և միանգամից պահանջեց: Հետևանքը եղավ այն, որ մեր առանց այդ էլ փոքրաթիվ խումբը մինչև տարվա վերջ կորցրեց իր մեկերրորդից ավելիին. մի մասը վարժապետի կտտոցներին դիմանալ չկարողացավ, մյուսներն էլ՝ ուսման վարձը վճարել միանգամից չկարողանալու պատճառով: Ուսումնական տարվա վերջում մեր խմբից մնաց միայն ութ աշակերտ: Գարնանը, փառք տալով աստծուն, որ պրծանք վարժապետի պատիժներից և դպրոց կոչված հուդայի խեղդող օդից, մեր գառնուկների, հորթերի և անասունների հետ դուրս եկանք բնության գիրկը՝ վայելելու նրա գեղեցկությունը և ազատության մեջ անցկացնելու գարնան ու ամռան ամիսները: Տարվելով մանկության խաղերով ու բնության մեջ անհոգ թռչկոտելու՝ չիմացանք, թե որքա՞ն արագ անցան այդ ամիսները, ե՞րբ թնակոխեցինք աշուն, ինչպե՞ս մոտեցանք ձմռանը: Ե՞րբ հանձնվեցին ու կալսվեցին հացահատիկի արտերը, ամայացան դաշտերը, անասուններին տեղափոխեցին ձմեռային ռեժիմի: Վառվեցին օղաների օջախները, և գյուղի հասակավորները նորից հավաքվեցին այդ օղաներում, նորեն սկսվեց հեքիաթների շարանը: Կային բավական

լավ հեքիաթ ասողներ, որոնց պատմելաձևը, ոճը, ռիթմը զգալի ազդեցություն էին թողնում լսողների վրա: Այդ հեքիաթները հատկապես խոր ազդեցություն էին թողնում մեզ՝ երեխաներիս վրա: Հաճախ էինք մեզ պատկերացնում իբրև հեքիաթի հերոսի, պայքարում անարդարության, չարի դեմ, ձեռք բերում հարստություն, բաժանում ժողովրդին և այլն... Իսկ ոմանք էլ այդ ազդեցության տակ խիզախում էին ջարդել դժոխքի շղթաները, սրախողող անել ջրերի վրա նստած վիշապներին, ձեռք բերել հրեղեն ձի, կախարդական մատանի, խալի, ճիպոտ ու դրանցով հագեցնել իրենց ընչաքաղցությունը, կտրուկ ձևով փոխել ապրելու պայմանները: Դժբախտաբար, երկար չէր տևում այն, քանի որ գյուղացիության վիճակն անմիջապես իրեն զգացնել էր տալիս:

Այսպիսի ասացվածք էր տարածված՝ «Փառք աստծո՝ ձմեռվա ուտելիք չունենք, զարնանն էլ՝ ցանելիք»: Մեծ թվով չքավոր գյուղացիներ հարկադրված մեկնում էին արտագնա աշխատանքի, բախտ որոնելու՝ անօգնական թողնելով կին, անչափահաս երեխաներ, ծերացած ծնողներ: Գնացողների զգալի մասը մեկնում էր Վրաստան, ոմանք Բաքու և մի քանիսն էլ հեռավոր Ամերիկա: Վերջիններից հիշվում են Սիմոյենց Անտոնի Գարեգինը, Թումոյենց Սիրեկանը, Դանիելի տղա Արմենակը, Հակոյի տղա Վասիլը, Խալաթենց Հարությունը, Աղասին, Պապանենց Ադամը, որոնց մեծ մասը այլևս չվերադարձավ:

Գյուղացիության ծանր կացության մասին կարելի է երկար գրել, բայց ես այդ հնարավորությունը չունեմ: Միայն թուղթ մրոտելուս նպատակը այն է, որ երեխաներիս, թոռներիս ու ծոռներիս մոտավոր պատկերացումը տամ իմ ծննդավայրի, հայրերի ու պապերի ապրելակերպի, սովորույթների, սոցիալ-կենցաղային պայմանների ադաթների և այլնի մասին: Ման-

կության տարիներին ես կարծում էի, միայն մեր գյուղի վիճակն է այդպիսին, բայց երբ հասակ առա և շրջակա գյուղերին ծանոթացա, զգացի, որ նրանց վիճակն էլ բարվոք չէ:

Մեր գյուղը բաղկացած էր 120 ընտանիքից, որոնց վարելահողերի ընդհանուր տարածությունը կազմում էր 450–500 հեկտար: Որակով լավագույն հողատարածքները՝ 60–70 %, տիրում էին մի քանի ընտանիքներ՝ Պապանենք, Մեծ Տերտերանք, Դավիթենք (որի շառավիղն եմ), Մանուկենք, Տոնոյենք, Թարփոշենք, Ավետիսենք: Արոտավայրերի մեծ մասը նույնպես պատկանում էր վերոհիշյալ 7 տոհմերին, որոնց նախնիներն էլ եղել էին այդ գյուղի հիմնադիրները:

Հողահավասարում (ըստ շնչերի) գոյություն չուներ: Միայն մեր Դավուդենց տոհմն ուներ մոտ 50 հեկտար վարելահող: Այսպես, ըստ հանդամասերի՝ փոշտի մեծ արտը՝ 5 հա, Առվի վերևը՝ 3 հա, տակը՝ 2.5 հա, Մարգար աղի չայիրը՝ 4 հա, Չիչակլու՝ 3 հա, Ձորի բերանը՝ 3 հա, Դոլգեն՝ 1 հա, Տամշալալու՝ 3 հա... Մի խոսքով, գյուղի 90 տոկոսը կիսահողազուրկ էր և ապրում էր չափազանց աղքատիկ պայմաններում: Քաղցրավենիք (շաքար) օգտագործում էին հազվագյուտ դեպքում, միայն հիվանդանալիս: Թեյը՝ նույնպես: Թեև անասուններ, թռչուններ ունեին, սակայն միս օգտագործում էին անասունի վթարի ենթարկվելուց կամ սատկելուց հետո:

Հագուստը, մեծ մասամբ, տնայնագործական էր, բրդից կամ բամբակից: Տղամարդկանց չուխա, շալվար, արխալուղ, կանացի յուպկա և այլն: Տնտեսությունում օգտագործվող ամանեղենը հիմնականում կավից էր պատրաստված (կարաս, կճուճ, քերդան, դոդ և այլն): Յուրաքանչյուր տուն ուներ իր թոնիրը և ամեն օր թարմ հաց էին թխում (անկախ ընտանիքի անդամների թվի), քանի որ մեզանում գարի հաց էին թխում, ուս-

տի այն միայն թարմ պետք է լիներ: Մեր լեռնային գյուղերում ցորենը լավ բերք չէր տալիս, իսկ աշնանացանի մասին էլ զաղափար չունեինք:

Գյուղում լուսամուտ ունեցող տուն չկար, բացի մեր և տերտերանց Անտոնի: Բնակվում էին հացատներում կամ գոմերի օդաներում: Որքան հիշում եմ, գյուղացիները տարեկան մեկ կամ երկու անգամ մեկնում էին քաղաք (Ալեքսանդրապոլ), իրենց գյուղ մթերքները վաճառելու և տան համար որոշ (հագուստեղեն, գործիքներ) գնումներ կատարելու: Կոշիկ ասած բանը գոյություն չուներ: Մասսայաբար հագնում էին անասունների մորթուց պատրաստված տրեխներ: Մի իրական դեպք մնացել է հիշողությանս մեջ: Գյուղացի Մկոյենց Թորոսը իր 5 տարեկան արջառը վաճառում է 5 ռուբլով (մոտ 120 կգ քաշով), մի երկու օր անց, նույն մարդուց գնում է իր արջարի կաշին՝ վճարելով 5 ռուբլի: Ճիլոյ Հեթոն սակարկում է Մուքելի Գիքոյի հետ՝ մի զույգ տրեխացու գնելու համար, վերջինս այն գնահատում է 60 կոպեկ, իսկ Հերոն առաջարկում է 50 կոպեկ. չեն համաձայնվում:

Տասը կոպեկի համար Հերոն հաջորդ օրը ոտքով մեկնում է Ալեքսանդրապոլ՝ մոտ 35 կմ և, 50 կոպեկով տրեխացու գնելուց հետո, նույն օրն էլ հետ վերադառնում: Այս փաստերը բերեցի, որպեսզի թոռնիկներս պատկերացնեն, դարասկզբի գյուղացիության մեծ մասի ծանր վիճակը:

Քանի որ գրող չեմ, ուստի, ինձ կներեն ընթերցողները՝ շարադրելիս դեպքերի հաջորդականությունը խախտելուս և գեղարվեստորեն չմատուցելուս համար: Գուցե այդ պատճառով է, որ բավական հեռացա իմ մանկության և դպրոցական տարիների մասին գրելուց:

Հայրս, որ այն ժամանակ համարվում էր գյուղի ամենա-

հեղինակավոր, զարգացած ու գրագետ մարդը, նույնպես այբուբենը սովորել էր տեր Հուսիկի մոտ, բայց, ի տարբերություն ինձ, հայրս չափազանց ուսումնասեր է եղել ու տառաճանաչությունից հետո համառորեն զբաղվել է ընթերցանությամբ, ինքնակրթությամբ և վերջում, նույնիսկ, ուսուցչություն արել, քանի որ նա որբ է մեծացել և մինչև 16-17 տարեկանը եղել տավարած, այնուամենայնիվ, գիրքը ձեռքից վայր չի դրել: Եկեղեցում լավ շարական է ասել, նույնիսկ, վարձել են նրան տերտեր կարգելու:

Խեղճ հայրս, քաջածանոթ լինելով Սիմիկյան դպրոցի դրվածքին, նրա կարգ ու կանոնին, որոշում է ինչ գնով էլ լինի գյուղում օրինավոր դպրոց բաց անել, որ դպրոցը գործի լեգալ պայմաններում, քանի որ Սիմիկի դպրոցը պաշտոնական թույլտվություն չուներ և գաղտնի էր պահվում:

Բազում դռներ բախելով ու երկարատև չարչարանքներից հետո, վերջապես, գուբերնատորից (գավառապետ)[5] թույլտվություն է ստանում՝ գյուղում դպրոց բացելու պետության հաշվին, որով կլուծվեր և ուսուցչի վարձատրության հարցը, դպրոցական շենքը, իսկ կահավորումը պետք է կատարվեր համայնքի կողմից:

Գյուղացիության մեծ մասը դժկամությամբ ընդունեց այդ լուրը, քանի որ այն կարժենար 600-700 ռուբլի, որը վճարելու հնարավորություն չունեին: Խեղճ հայրս ընկել էր երկու քարի մեջտեղը, հրաժարվե՞լ իր տարիներով չարչարված ու ձեռք բերած դպրոցից, թե՞ իր տունը և նրանում եղած խղճուկ ունեցվածքը տրամադրել դպրոցին: Մեր ընտանիքը տեղափոխվեց հորեղբոր մառանը (մի մութ ու խոնավ անկյուն), իսկ բնակարանը՝ 3 սենյակից բաղկացած, հատկացվեց դպրոցին: Սեղան-

[5] Պետք է լինի նահանգապետ:

նստարանների համար գյուղի անվանի մարդկանց, հատկապես, Մնոյան Ալեքսանի օգնությամբ, որոշ գումար հատկացվեց (400 ռ.): Հանգուցյալ հայրս Ալեքսանդրապոլում պատվիրեց պատրաստելու սեղանները և որոշ պարագաներ:

1912 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցը մի կերպ պատրաստ էր: Մնում էր աշակերտների հարցը լուծել: Այդ տարում առաջին դասարանում ընդգրկվողների թիվը գյուղում կազմում էր ավելի քան 60 երեխա: Ծնողներից 20-ը հրաժարվեցին երեխաներին դպրոց տալուց, մնացածներից էլ ուսուցիչը՝ Գևորգ Գևորգյանը Թալինից, որը ավարտել էր Ալեքսանդրապոլի ռուսական միջնակարգ դպրոցը, համաձայնվեց ընդունելու 30 աշակերտի: Ի՞նչ անել այն 10–12-ի հետ, դարձյալ դժվարություններ ծառացան խեղճ հորս գլխին: Երկար ու բարակ մտորումներից հետո, որոշեցին վիճակահանությամբ լրացնել ուսուցչի պահանջած 30 երեխայի քանակը:

Վիճակահանությամբ ես զրկվեցի դպրոց հաճախելուց: Ոմանք ուրախացան ու ծաղրեցին հորս, որ այդքան տանջանքից հետո իր միակ որդին չընդունվեց դպրոց: Իսկ հայրս հակառակը, ուրախ էր, որ իր վաղեմի իղձը իրականացավ, գյուղն ունեցավ իր կրթօջախը, իսկ ես մասնավոր վարձով հաճախում էի նույն ուսուցչի մոտ՝ առանձին պարապելու երեկոյան ժամերին:

Ավարտվեց առաջին ուսումնական տարին: Նոր՝ 1913 թ. ուսումնական տարում, ինձ ևս ընդունեցին դպրոց, որտեղ սովորեցի և ավարտեցի 3-րդ դասարանը: Հայրս, ինչպես սկսել էր, այդպես էլ մինչև վերջ մնաց դպրոցի անփոխարինելի հոգաբարձուն: Թեև մենք ընտանիքով շարունակում էինք բնակվել հորեղբոր մառանում, ծանր պայմաններում, բայց և այնպես դպրոցի ծախսերի բեռը հիմնականում ընկած էր հորս ուսերին: Լավ էր, որ այդ տարիներին մեղուներից լավ բերք էր ստաց-

վում, որը հիմնականում գնում էր դպրոցի կարիքներին։ 1915–1916 թթ. ուսումնական տարվա ավարտից հետո վերացավ նաև դպրոցը։ Պետությունը ուսուցչին հետ վերցրեց (վերջին տարում մեր դպրոցում նոր ուսուցիչ էր նշանակվել՝ Աղինից Թադևոս վարժապետը), ու մեկընդմիշտ փակվեց գյուղի կրթօջախը։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1913 թ. աշնանը, երբ մենք բնակվում էինք հորեղբորս մառանում, մայրս ծանր հիվանդացավ, չկար բժիշկ, բուժօգնություն: Դեղ ու դարման անողները պառավ կանայք էին, որոնք մեծամասամբ ոչ թե օգնում, այլ մի բան էլ վնասում էին:

Մայրս հաճախակի հազում էր, բողոքում գլխացավից, սրտի թուլությունից և օրըստօրե հյուծվում: Մայրս ծնել է 5 աղջիկ ու մի տղա՝ ինձ: Ամենաավագը ես էի, աղջիկներից 3-ը մահացել էին, մնացել էին երեք երեխա:

1914 թ. գարնանը, երբ ձնհալքից որոշ ճանապարհներ բացվեցին, հայրս՝ մայրիկիս երկու անվավոր եզան սայլի վրա դնելով, տարավ Ալեքսանդրապոլ՝ բուժելու: Բազում դժվարություններ, քարքարոտ ճանապարհ, որոշ տեղեր սառցակույտեր հաղթահարելով, հյուծված մորս երկու օրում հազիվ հասցրել էին քաղաք ու տեղավորել քավոր Գևորգի տանը: Ապրիլից մինչ հունիսի կեսերը մայրս բուժվեց, որից հետո վիճակը բավական թեթևացավ և, բժիշկների խորհրդով, առաջարկեցին ընդմիջում տալ բուժումներին և տեղափոխել ամառանոցային օդ ու ջրի:

Մինչև մորս գյուղ բերելը, հայրս ինձ իր հետ քաղաք տարավ՝ մայրիկիս տեսնելու և որոշ չափով շրջապատին ծանոթացնելու համար:

Մի քանի օր քաղաքում մնալուց հետո, գյուղից մի քանի սայլեր եկան, որոնց հետ էր նաև մեր հորաքուրանց Անտոնի սայլը: Այդ սայլով էլ մայրիկս ու ես վերադարձանք գյուղ: Բավական պայծառ, արևոտ օր էր, ճանապարհի երկու կողմերն էլ գորգի նման փռված էին վառ կանաչի մեջ, որը պատել էր նույնիսկ քարաժայռերն ու սարալանջերը, երփներանգին էին տա-

լիս բազում ծաղիկներ, որոնց անուշահոտ բույրը մեծ բավականություն էր պատճառում մեզ, հատկապես մայրիկիս, որը երկարատև հիվանդությունից հետո լիաթոք շնչում էր այդ օդը և հոգեկան հրճվանք ապրում, ասում, խոսում, ծիծաղում, երբեմն-երբեմն սայլից իջնում, ծաղիկներ քաղում, ինձ հետ կատուկներ անում, փաղաքշում ...անվերջ համբույրներ դրոշմելով այտերիս, աչքերիս, ճակատիս, ձեռքերիս և այլն:

Խեղճ մայրս, կարծես, կարոտից չէր հագենում, երևի բնազդորեն զգում էր, որ մեկ - երկու ժամից հետո իրեն հետ պստահելու էր ամենասարսափելին:

Մորս բարձր տրամադրությունը ինձ մեծ ոգևորություն էր պատճառում, ես չափազանց ուրախ էի, որ մայրս անհուսալի վիճակից դուրս է եկել ու այժմ ապաքինված տուն է վերադառնում: Ճանապարհը թեև դանդաղ, բայց աստիճանաբար կրճատվում էր, մոտ երկու ժամից տանը կլինենք:

Մոտեցանք Սոգյութլի (Սառնաղբյուր) վանքի ձորին, ավեր մնար, ինչպիսին մնում է այն մինչև օրս: Վանքի դիմաց, սայլի անիվը կպավ քարին և, թե ի՞նչ տեղի ունեցավ, մինչև օրս էլ չեմ պատկերացնում: Միայն հիշում եմ, որ որպե առաջ վանքի դիմաց աղոթող ու խաչակնքող մայրս, ուշագնաց ու ջախջախված ընկած է անիվի տակ: Սայլապանը, որ իմ տարիքի երեխա էր, ինչպես և ես, շփոթվել էինք և բավական երկար ժամանակ չէինք կարողանում մայրիկին վեր բարձրացնեինք: Վերջապես սթափվեցինք ու մի կերպ բարձրացրինք սայլը, որը շուռ էր եկել, անիվը քարին կպչելիս ու մայրիկին դրինք վրան:

Մինչև գյուղ հասնելը մայրիկի փշրված ոտքից արյունը չդադարեց: Ինչ որ սնոչիներ եկան, մայրիկիս ոտքը իբր կապեցին, բայց թե կորցրած բավական արյունը ինչպե՞ս կարող էին վերականգնել:

ժամանակակից բժշկությունը անմիջապես կհեռացներ մորս ջախջախված ոտքը և, արյուն ներարկելով, գուցե և փրկեր նրան, բայց այն ժամանակ այդ հնարավոր չէր:

Նորեն սկսվեցին մորս ծանր մղձավանջային տանջանքները: Օրեցօրե հալ ու մաշ եղավ, դադարեց ուտելուց-խմելուց, խոսելուց, երբեմն-երբեմն մի բառ էր արտասանում՝ մեռնում եմ ...

Քաղաքից մեզ ճանապարհելուց հետո, հայրս ինչ որ գործով մնաց այնտեղ: Տուն վերադարձավ մորս դժբախտ դեպքից տաս օր անց, երբ բանը բանից անցել էր, երբ մահվան ուրվականը կանգնած էր նրա գլխավերևում, երբ նրա օրերն ու ժամերը հաշված էին:

Մայրիկիս հիվանդության օրերին, մեր տան տնտեսական գործերը կատարում էր Տիգրան եղբոր կինը՝ Եսթերը, մեր տոհմի մյուս կանայք, անասունների հետ միասին, մեկնել էին ամառանոց, որոնք շաբաթը մեկ գալիս էին մայրիկիս տեսության:

Օրերն անցնում էին դառն ու տանջալի, մայրիկի վիճակը ավելի վատթարանում էր: Մենք՝ երեխաներս (երկու քույրերս ու ես), տխուր ու տրտում պտտվում էինք մայրիկի անկողնու շուրջը, զգալով, որ, նա այսօր կամ վաղը չի լինելու, ու մենք մնալու ենք որբ ու անպաշտպան: Բավական ծանր հոգեվիճակում էր հայրս, ոչ մի կերպ մայրիկին այլևս փրկել չէր կարող: Բացի այդ, օրեցօր վատթարանում էր մեր տնտեսական կացությունը: Շուրջ երկու տարի է, ինչ մայրս զամված էր անկողնուն, տունը կառավարելը ու մեր երեխաների խնամքը մնացել էր խեղճ հորս վրա, բացի այդ, հայրս կորցնելով մայրիկին, կդժբախտանար երկրորդ անգամ: Առաջին կինը մահացել էր ծննդաբերելիս և լավ էր, որ երեխան էլ կենդանի չէր մնացել:

Մայրիկիս կենդանության վերջին օրերին մեզ սկսեց հաճախակի այցելել ու տնային գործերում աջակցել մեր հարևանի այրին՝ (Քշտուկենց Թովմանի կինը) Նվարդը, 35-40 տարեկան, միջահասակ, շրջապատի համեմատ բավական կուլտուրական: Մայրս իր այդ վիճակում, այդ կնոջը տեսնել անգամ չէր ուզում, ըստ երևույթին խանդում էր ու իր ներքին ինտուիցիայով զգում էր, որ շուտով նա է դառնալու այս տան տիրուհին: Հայրիկիս բացակայության ժամանակ ինձ սովորեցնում էր, որ այդ կնոջը վիրավորեմ և արգելեմ մեր տուն գալը: Ես, չհասկանալով մորս հոգեվիճակը, յուրովի զարմանում էի, թե մայրս փոխանակ շնորհակալ լինելու այդ կնոջից, որը մաքրում էր մեր բնակարանը, լվանում, սրբում ու երբեմն, էլ ճաշ եփում, պատրաստում, դժգոհում է և նրան տեսնել չի ուզում:

Վերջացավ 1914 թ. հուլիսը: Օգոստոսի 1-ին, վաղ առավոտյան, երբ արևը նոր էր սկսել շառագունել, լսվեցին եկեղեցու անժամանակ ու միալար զողանջները: Հասակավոր բնակիչները լսելով այն կանխագուշակեցին վատթարագույն գույժը: Կարճ ժամանակի ընթացքում եկեղեցու բակում հավաքված էին գյուղի ողջ աշխատավորությունը, կանայք, ծերերն ու երեխաները:

Ես այդ ամենից անտարբեր նստած էի մահամերձ մայրիկիս մահճակալին, շոյում էի, նրան, համբուրում ու խաղում (ըստ իմ մանկական սովորույթի) ինձ կյանք տվող նրա կրծքի պտուկի հետ: Մայրս, վատ կանխազգացում ունենալով, ինձ հանձնարարեց գնալ եկեղեցի և պարզել զանգերի զողանջելու պատճառը: Հասնելով եկեղեցի, տեսա գյուղացիների ողջ բազմությունը, նրանց ախ ու վախը, կանանց լաց ու կոծը և անեծքները թագավորի հասցեին: Դեռ ու դեն խցկվելով, մի քարի վրա բարձրացա և, ինչ տեսնեմ, հավաքատեղի կենտրոնում կանգ-

նած է մի ոստիկան Գլավնու, գրագրի հետ ու կարդում են գյուղացիների անունները, միաժամանակ կարգադրելով, որ մեկ ժամից հետո 5 օրվա հացով ներկայանան եկեղեցու բակ, բանակ զորակոչվելու համար:

Տեսնելով այս սրտաճմլիկ տեսարանը՝ երեխայական հետաքրքրասիրությունս մոռացնել տվեց մահամերձ վիճակում գտնվող մորս: Թե որքան ժամանակ էր անցել, ասել դժվար է, երբ թևիցս բռնեց մեր հարևանուհի Մկրտիչի Սալաթ ազին, որի չորս տղաների (Տիգրան, Գեղամ, Պետրոս, Կարո) անունները կարդացին, հանձնարարելով մեկ ժամ հետո ներկայանալ: Խեղճ պառավը չնայած այդքան ծանր հոգեվիճակին, չէր մոռացել մորս ու, տեսնելով ինձ, զգուշացրեց շտապ վերադառնալ տուն, մայրիկիս մոտ: Առիթից օգտվելով, Սալաթ ազուն հարցրի, թե ի՞նչ է կատարվում, ինչո՞ւ են լալիս ու ողբում: Ազին, անիծելով թագավորին և աղի արտասուք թափելով, ասեց, որ պատերազմ է սկսվել ու զապասը հավաքում են:

Այդ լուրը բավական էր, որ մորս հաղորդեի: Իսկույն վերադարձա տուն: Մայրս ուշակորույս վիճակում էր, իմ լացը, բղավոցը, ինչ-որ չափով զգաստացրեց նրան, աչքերը բաց արեց ու ջուր ուզեց, ջուրը տալուց հետո ես մոտավորապես հաղորդեցի այն, ինչ տեսել ու լսել էի: Կարծես մայրս ամեն ինչ հասկացավ և այդ ահավոր բոթին դիմանալու ուժ չունեցավ: Մի վերջին անգամ համբուրեց ինձ, կուրծքը մի կերպ բաց արեց, որ ես իմ փարվելով կարոտս առնեմ, սեղմեց կրծքին ու մի քանի րոպե անց հանձնարարեց քույրերիս (6 տարեկան և 2 տարեկան) ներս հրավիրեմ: Երբ քույրերիս հետ ներս մտանք, մայրս արդեն կնքել էր իր մահկանացուն ...

Օրը երեկոյանում էր, մթնում, բայց մեր լույսը վառող չկար: Մենք, երեք երեխաներով, սմքել, չորացել ու փարվել էինք

մայրիկի անշնչացած մարմնին՝ դառն արտասուք թափելով:

Եթե մայրս գոնե մի օր առաջ վախճանված լիներ, այսպիսի անելանելի վիճակ մեզ համար չէր ստեղծվի: Ոչ միայն մեր ազգակիցները, այլ ողջ գյուղը կայցելեր մեզ, իսկ այժմ, այժմ սուգ ու շիվանը պատել էր բոլորին, լաց ու կոծը, ողբը համընդհանուր բնույթ էր կրում: Գրեթե այնպիսի տուն չկար, որ 1, 2, 3, նույնիսկ չորս տղամարդ ճանապարհած չլինեին: Բոլորը՝ ծեր ծնողները, նորապսակ հարսները, քույրերը, եղբայրները, երեխաները մտահոգված են այն բանում, թե արդյո՞ք իրենց հարազատները կենդանի կվերադառնան այդ դաժան աշխարհամարտից:

Երեկոյից բավական անց հանկարծ մեր դուռը բացվեց ու ներս մտավ Տիգրան եղբայրի կինը՝ Եսթերը, որը ամուսնուն մինչև հարևան Սոգյուտլի գյուղը ճանապարհելուց հետո միայն նոր վերադարձել էր: Նրա մուտքը մեզ կարծես սթափեցրեց ու ավելի բորբոքեց մեր՝ երեխաներիս հուզմունքը և սկսեցինք բարձրաձայն ու աղիողորմ լացել: Եսթերը մեզ որոշ չափով հանգստացրեց, հետո ինձ հանձնարարեց գնալ ժամհարին զգուշացնելու եկեղեցու զանգերը քաշելու և տերտերին հայտնելու մայրիկիս մահվան մասին:

Վերադարձա տուն, թե գիշերը ինչպես և որտեղ ենք անցկացրել, չեմ հիշում: Միայն առավոտյան իմացա, որ մայրիկիս գիշերը լողացրել են, պատանել, տերտերը եկել է ու, մի քանի ծերունիների հետ, տեղափոխել եկեղեցի, որտեղ մնալու էր մինչև թաղումը:

Հաջորդ օրվա առավոտյան, երբ արևը բավական բարձրացել էր, քաղաքից վերադարձավ հայրս, նրա գալուց հետո որոշ թեթևություն զգացի: Հայրս, որ կանխազգացել էր մայրիկիս մահը և, ըստ երևույթին, հոգեպես նախապատրաստվել,

առանձնապես շատ չանհանգստացավ:

Երեկոյան կողմ մայրիկիս թաղեցին, հայրս նրան թաղեց իր առաջին կնոջ ու փոքր քրոջս՝ Զեպետի մեջտեղը: Մինչ օրս էլ հիշում եմ ու ճանաչում այդ գերեզմանաթումբը:

Թաղումից հետո, ըստ ավանդույթի, թաղմանը մասնակցող ողջ թափորը հրավիրվեց մեր տուն՝ ճաշկերույթի (պատարագի): Ճաշկերույթի ընթացքում սովորաբար բաժակաճառերի բովանդակությունը վերաբերվում էր հանգուցյալի լավագույն արժանիքներին՝ մխիթարելով հանգուցյալի մերձավորներին: Այդ օրը, կարծես, մոռացվել էր այդ սովորույթը, գյուղացիների խոսակցության նյութը հիմնականում պտտվում էր պատերազմի շուրջ, յուրաքանչյուրը մտովի իր հարազատի հետ էր: Կհաջողվի, արդյո՞ք, նրանց տեսնել իրենց մերձավորներին, ի՞նչ վախճան կունենա պատերազմը, ո՞վ կհաղթի, ի՞նչպիսին կլինի հայ ժողովրդի վիճակը, եթե հաղթի թուրքական բլոկը և այլն:

Այսպիսի դառը խոհերով, բավական երկար մտորումներից հետո, ի վերջո, տեր հայրը աղոթեց հանգուցյալի հոգու արքայության, ընտանիքի անդորրի վերականգնման, աստծուց խնդրեց անվնաս պահել զորակոչվածներին, ռուս թագավորի սուրը կտրուկ անի, խաղաղությունը վերականգնվի և առողջություն մաղթելով բոլորին, ավարտեց արարողությունը:

Հաջորդ օրը մեր տունը դարձյալ լեցուն էր համագյուղացիներով, այս անգամ հիմնականում կանայք, որոնք իրենց հետ տուն էին բերում սեղան (կապոց), որի մեջ դրված էր լինում զանազան կերակրատեսակներ (եփած հավ, ձվածեղ, կարագ, փլավ և այլն): Այդ օրը, իբրև եկնահողի օր, դարձյալ այցի եկավ տերտերը, օրհնեց մայրիկիս գերեզմանը: Կանայք, գրեթե առանց բացառության, բարձրաձայն արտասվում էին, որը մայրիկիս, որը իր որևէ կորստի և մեծ մասն էլ իրենց զորակոչված

հարազատների համար:

Վերադառնալով տուն՝ նորեն սկսվեց ճաշկերույթը, տեր հայրը օրհնեց սեղանը, մխիթարեց հարազատներին, առանձնապես հորս, միաժամանակ՝ խորհուրդ տալով, որ նորեն ամուսնանա, քանի որ անչափահաս երեխաներին մայր է հարկավոր:

Օրվա մնացած մասը, թե ինչպես է անցել, չեմ հիշում, երեկոյան վաղ քնեցինք քույրերիս՝ Սիրանուշի և Արփենիկի հետ: Գիշերվա վաղ մի ժամի ինչ-որ ձայներ ընկան ականջս և պատահաբար աչքերս բաց արի, ինչ տեսնեմ, մեր տանը շատ մարդիկ կային: Այստեղ էին հորեղբայր Սուքիասը, Հարութ ամին, Պողոսենց Ալեքսանը, Թարփոշենց Սերոբը և այլն: Ինձ առանձնապես զարմանալի թվաց Քշտուկենց Թովմասի կնոջ՝ Նվարդի ներկայությունը: Այս ուշ ժամին ի՞նչ գործ ուներ այս կինը մեր տանը, հիշեցի հանգուցյալ մայրիկիս խոժոռ դեմքը, նրա ատելությունը նրա հանդեպ, ինձ խրախուսելը, որ նրան տուն չթողնեմ և այլն: Այդ հիշողություններից ներքնապես զայրացած էի, դառնացած՝ կարծելով, որ այդ կինը եղավ մորս մահվան պատճառը: Հարութ ամին, որ իմ միակ ու անփոխարինելի հովանավորն էր, նստած էր անկողնուս կողքին ու լուռ արտասվում էր: Դեմքիս զայրալից արտահայտությունից Հարութ ամին երևի կռահեց, թե ինչ է կատարվում ներսումս. փաթաթվեց վզովս, երեսներս համբուրեց ու կամաց սկսեց խոսել, պատրաստել, ապա հայտնեց, որ հայրիկս արդեն ամուսնացել է Նվարդի հետ:

Ինչպիսի տանջալի հոգեվիճակով լուսացրի, չեմ կարող նկարագրել: Առավոտյան արդեն Նվարդն իրեն լիարժեք տան տիրուհի էր համարում: Հայրս իմ զարմանքն ու կաշկանդվածությունը տեսնելով, մոտեցավ ինձ, համբուրներով դրոշմեց

դեմքս ու սկսեց խրատել, որ այլ ելք չունենք, քան հաշտվել կատարվածի հետ և, այսուհետև, ես ու քույրիկներս Նվարդին մայրիկի տեղը ընդունենք ու մայրիկ անվանենք, մի բան, որ մեզ համար խիստ դժվար էր, քանի որ մենք մեր մայրիկին Անիկ անունով էինք կոչում:

Նոր մայրիկը իր հետ բերել էր երկու երեխա՝ մի տղա ու մի աղջիկ: Այսպես սկսվեց մեր՝ որբերիս, դառը ճակատագիրը: Ես չգիտեմ, արդյո՞ք բոլոր խորթ մայրերի ու երեխաների միջև է սկսվում փոխադարձ անվստահություն, ատելություն և, նույնիսկ, թշնամություն, թե միայն մեզ հետ տեղի ունեցավ:

Հայրիկիս հետ մայրիկը բավական սիրալիր էր ու նրա ներկայությամբ ցուցադրում էր, որ իբր բավական ուշադիր է և հոգատար մեզ՝ երեխաներիս հանդեպ: Բայց, երբ հայրս տունը չէր լինում (գործի բերումով հաճախ էր տանից բացակայում), պատկերը լրիվ փոխվում էր: Նման դեպքերում ես ամբողջ օրը տուն չէի մտնում, գնում էի խնամակալիս՝ Հարութ ամու մոտ, որը կոահելով վիճակս, կերակրում էր, փաղաքշում և հանգստացնում: Քույրիկներս ամբողջ օրը լաց ու կոծի մեջ էին լինում, միայն Եսթերն էր, որ մեկ-մեկ տանում էր իրենց տուն ու նրանց պահանջները հոգում:

Անցավ ամառը: Աշնանը սկսվեցին մեր դպրոցական պարապմունքները:

Պատերազմն օր-օրի ավելի էր բորբոքվում, ռազմաճակատներից տագնապալի լուրեր էին ստացվում: Գյուղացիներից շատերը «սև թղթեր» էին ստանում իրենց զոհված հարազատների մասին, մեծ թիվ էր կազմում վիրավորները: Լաց ու կոծը, ողբը մասսայական բնույթ էր կրում: Ապրանքը ժամ առ ժամ թանկանում էր կրկնակի, եռակի անգամ:

Մի անգամ, հիշում եմ, երբ գրագիրը զոհվածների ըն-

տանիքներին թոշակ էր բաժանում, Երվանդ եղբայրի կին Մանյան ու Եսթերն ինձ կանչեցին, որ իրենց ստանալիք թոշակի դիմաց ստորագրեմ՝ յուրաքանչյուրի՝ 14-ական ռուբլի ու, երբ գումարը ստացան, խիստ սրտնեղվեցին, ասելով, թե լավ չէր լինի, եթե այդ փողի դիմաց մի երկու մետր չիթ տայիք, ում է պետք այդ անարժեք փողը: Գրագիրը բավական զայրացավ, վիրավորեց նրանց ու հեռացավ:

1915 թ. սկզբներին գյուղում լայն տարածում գտան վարակիչ՝ քութեշ, կարմրուկ և այլն հիվանդություններ: Օրական մի քանի երեխա էր մահանում: Հիվանդացանք նաև մենք՝ ես, երկու քույրերս ու Նվարդ մայրիկի երկու երեխաները: Սկզբում մեռավ մայրիկի Ռուբեն տղան, հետո քույրս՝ Սիրանուշը: Հայրս, տեսնելով ինձ սպառնացող վտանգը, քրոջս դին թողնելով տանը, վերցրեց ինձ և, չնայած փետրվարյան ահավոր բուքին, փոխադրեց Քավթառլու (այժմ Փանիկ), որտեղ աշխատում էր բժիշկ Բաբախանյանը:

Բժիշկը ձեռնարկեց ամեն միջոց ու մի կերպ փրկեց կյանքս՝ ասելով, որ եթե հայրս ուշացներ, ապա երկու օրից ես կմահանայի: Մի քանի օր անց, երբ վիճակս լավացավ, ինձ փոխադրեց Արթիկ՝ մայրիկիս ծնողների մոտ՝ Չթեյենց Սահակի տունը: Հայրս ինձ թողեց պապիս ու տատիս խնամքի տակ ու ինքը վերադարձավ գյուղ: Մեր բացակայության ժամանակ մահացել էր նաև Նվարդ մայրիկի երկրորդ երեխան՝ Եպրաքսիան:

Պապիս տանը մնացի մինչև եղանակները լավացան: Մայրիկիս մահից հետո, ինչպես պապս ու տատս, այնպես էլ քեռիներս՝ Արարատը, Նազարեթն ու քեռակին Արեգնազանը, իմ նկատմամբ արտակարգ ուշադիր էին ու հոգատար: Երբ հայրս եկավ ինձ տանելու, բաժանվելուց երկուստեք արտասվեցինք:

Գյուղ վերադառնալուց հետո սկսեցի հաճախել դասերի, բայց զարունն արդեն մտել էր իր իրավունքների մեջ, ու շուտով դասերը դադարեցին, ուսումնական տարին վերջացավ:

Մեր դասընկերներն իրենց ծնողներին օգնելու նպատակով մասնակցում էին դաշտային աշխատանքներին, իսկ ես օժանդակում էի հայրիկիս մեղվապահության մեջ, շրջանակներ էինք պատրաստում, ձագ վերցնում, նախապատրաստվում հիմնական բերքահավաքին: Մեղուների համար այդ տարին բավական բերքառատ եղավ, զգալի չափով աճեցին մեղուները, ահագին ձագեր վերցրինք: Մի մասը հայրս ծախեց, այնպես որ, եթե խաղաղություն լիներ, վիճակներս բավական կբարվոքվեր:

Գյուղացիները գրեթե միշտ այցելում էին մեր տուն, հորից (միակ թերթ ստացողից) միջազգային անցուդարձի մասին լուրեր ստանալու կամ իրենց զինվոր որդիների նամակներն ընթերցելու, պատասխան ուղարկելու, քանի որ գյուղում, բացի տերտերից, ուրիշ գրագետ մարդ չկար:

Ամառը մոտեցավ իր ավարտին, ու ես նորեն սկսեցի դպրոց հաճախել, արդեն 3-րդ դասարան: Սովորում էի ոչ այնքան լավ, քանի որ հայրս հաճախ էր բացակայում, իսկ մայրիկիս էլ չտեսնելու համար գրեթե ամբողջ օրը թափառում էի աննպատակ, ժամանակ մեռցնելու նպատակով: Այդ ընթացքում իմ մեջ աստիճանաբար փողոցի ազդեցությունը մեծացավ, սկսեցի ծխել ընկերներիս պահանջով, տանից մթերք, ուտելիքներ գողանալ, անկարգություններ անել և այլն: Այս արարքներիս հիմնական պատճառը այն էր, որ Նվարդը հորս բացակայության ժամանակ ամեն ինչ ինձ վրա փակում էր: Աստված մարդուն խորթ մայր չտա: Հորս վերադարձի ժամանակ, իմ արարքներս մեկը տասն անելով, գանգատվում էր նրան՝ հույս ունենալով դրանով վրեժխնդիր լինել ինձանից: Սակայն հայրս

զգում էր նրա թշնամանքը իմ հանդեպ և միշտ ներողամտությամբ էր վերաբերվում: Միայն իմ թուլակազմ կառուցվածքից ելնելով՝ հանդիմանում էր ծխելուս համար և խրատում, որ սուտ չխոսեմ, ճշտությամբ խոստովանեմ արարքներս, և նա ինձ կնեռի ու ներում էր: Խորթ մայրս, երբ իր զանգատների բեռը թափելուց հետո տեսնում էր, որ հայրս ինձ չի պատժում, սկսում էր հոնգուր-հոնգուր լաց լինել, որ ես իրեն իբր հայհոյել եմ, ուրիշների ներկայությամբ անպատվել, ներվայնացրել և այլն ու, երբ նպատակին չէր հասնում, խռովում, տանից դուրս էր գալիս, հույս ունենալով զոնե այդ կերպ նպատակին հասնելու – զուր հույսեր, հայրս՝ միայն ձևի համար, մի երկու խոսք էր ասում, որ եթե մյուս անգամ կրկնվի, ականջներս կկտրի:

Հայրս լավ էր հասկանում տիկնոջ մտադրությունը: Գիտեր նաև այն, որ ես իրենից ոչինչ չէի թաքցնում, կատարած զանցանքներս խոստովանում էի: Խեղճ հայրս մնում էր երկու քարի արանքը, հրաժարվել կնոջի՞ց, թե՞ երեխաներից: Հորս երեք կնոջից ունեցած 12 երեխաներից մնացել էինք ես ու փոքրիկ քույրս՝ Արփենիկը, որին խնամում էր Եսթերը, չէ՞ որ ես էի լինելու նրա ապագան, նրա շառավիղը: Կնոջից նույնպես հրաժարվել չէր կարող, քանի որ թվով այն երրորդն էր ու, բացի այդ՝ բավական սիրում էր նրան:

Երբ մայրիկի բոլոր միջոցառումների շարանը սպառվեց և զգաց, որ հայրս ինձանից ձեռք քաշող չէ, իր տակտիկան փոխեց, անցավ խորամանկության մեթոդներին՝ սպասելով ավելի պատեհ ժամանակների, նամանավանդ, որ նա 1916 թ. գարնանը ծնեց մի արու զավակ, որին կոչեցին Վազգեն:

Հարուր ամին, զգալով իմ հոգեվիճակը, վերջերս ինձ ավելի էր սիրում, գուրգուրում, փայփայում, դժգոհում հորիցս, թե ինչո՞ւ ամուսնացավ այդ Խոխեյի (Նվարդի) հետ, որ նա վաղ թե

ուշ հորս գլուխը կուտի, նամանավանդ, որ տղա երեխա ունեցավ:

Օրերն անցնում էին ծանր ու միապաղաղ: Պատերազմի մասին եղած լուրերը, զոհվածների մասին ստացված սև թղթերը, արևմտահայերի ողբերգական իրավիճակը ցնցող ազդեցություն էր գործում ողջ գյուղի վրա: Չտեսնված չափերի էր հասել գաղթականների թիվը, որոնք մի կերպ պատսպարվել էին մարագներում, կիսակառույց, ավեր շենքերում, իսկ ոմանք էլ՝ բաց երկնքի տակ: Նրանց ապրելու հույսը մնացել էր համազյուղացիների ողորմածության վրա, թեև նրանք էլ մի լավ օրի չէին և ստիպված վաճառում էին իրենց վերջին ունեցվածքը:

Այդ ծանր վիճակի հետ տարածվել էին նաև վարակիչ հիվանդություններ, օրը մի քանի մարդ էր մահանում, իսկ երեխաները մասսայաբար կոտորվում էին:

Տարին մոտենում էր աշնանը, հայրս որոշել էր ինձ փոխադրել քաղաք՝ ուսումս շարունակելու: Խոսք էր լինում նաև այն մասին, որ ընտանիքով տեղափոխվելն ավելի հարմար կլինի: Գյուղում, մեղուներից բացի, ուրիշ սեփականություն (անասուններ, թռչուններ, ցանքատեղեր և այլն) չունեինք, որ խանգարեր մեզ:

Հայրս սկզբում ինձ քաղաք տարավ ռուսական միջնակարգ դպրոցում ընդունվելու նպատակով, սակայն քննությունից (ռուսաց լեզու) կտրվեցի: Ուսուցիչներ Արթուր Գևորգյանը և Նատաշա Ռոստումյանը համաձայնվեցին ինձ հետ օրական 3-ական ժամ պարապել՝ պայմանով, որ հունվարյան արձակուրդներից հետո ընդունել տան դպրոց:

Հայրս տուն վարձեց, ընտանիքը փոխադրեց քաղաք ու ինքն էլ գաղթականներին նպաստավորող կոմիտեում քարտուղարի պաշտոնով աշխատանքի անցավ:

Մեր ընտանիքի հետ քաղաք տեղափոխվեց նաև քեռակին Շալոն (հայրիկիս առաջին կնոջ եղբոր կինը) իր երկու երեխաների՝ Օվսաննայի և Թորգոմի հետ միասին: Օսանը կարուձև էր սովորելու, իսկ Թորգոմը՝ տարրական դպրոց էր հաճախելու: Մենք բոլորով բնակվում էինք մի տան մեջ, որը բաղկացած էր երկու սենյակից:

Իմ պարապմունքները հաջողությամբ պսակվեցին: Առաջին կիսամյակից հետո ես քննություն տվեցի և փոխադրվեցի դպրոց՝ առաջին դասարան: Սկսեցի հաճախել դպրոց, որն ավա՛ղ, բավական, կարճ տևեց: Հիվանդությունը՝ այս անգամ տիֆ, դարձյալ ինձ գամեց անկողնին: Շուրջ երկու և կես ամիս պառկեցի, հայրս թողեց աշխատանքը, գոր ու գիշեր զբաղվելով իմ խնամքով, ոչ ոքի չէր վստահում, որ անգամ մի բաժակ ջուր տան ինձ: Աստիճանաբար լավի գնացի, առողջացա, ոտքի կանգնեցի, արդեն գարուն էր: Երբ հնարավորություն ունեցա դպրոց հաճախելու, այլևս թույլ չտվեցին՝ պատաճառաբանելով, որ տարին արդեն վերջանում է և նոր ուսումնական տարում կընդունեն:

Գարնանը մեր ընտանիքը վերադարձավ գյուղ: Ձմեռանոցից դուրս բերինք մեղուները և սկսեցինք մեր սովորական աշխատանքը մեղուների հետ:

1917 թ. օգոստոսի վերջին տասնօրյակին հայրիկս նորից ինձ քաղաք տարավ, դպրոց հաճախելու ակնկալությամբ: Ավա՛ղ ամեն ինչ շուտ էր եկել, փոխվել էին ուսուցիչները, տեսուչը, չկար մի ծանոթ դեմք: Ինձ չընդունեցին դպրոց: Խեղճ հորս դառը տանջանքն ու չարչարանքը իր սիրելի որդուն ուսումի տալու՝ չհաջողվեց: Տխուր-տրտում, անհույս վերադարձանք գյուղ:

Իր վաղեմի իդձերի ձախողելու հետևանքով հայրս

խիստ տխուր էր, անտրամադիր, վերջին օրերին մեկուսի, քչախոս և այլն: Սկսել էր բողոքել առողջական վիճակից, երբեմն ակնարկում էր մահվան մասին և այլն:

Նրա հասակակիցները և հատկապես Սուքիաս, Հարութ ամիները, տեսներով նրա մելամաղձոտ վիճակը, հանդիմանում էին նրան, խորհուրդներ տալիս այդ վիճակից դուրս գալու՝ ավելացնելով թե, որ մենք ուսում չենք առել, չենք ապրում, ի՞նչ է: Դու արդեն տարիքով մարդ ես, փոխանակ տղայիդ ուսումի մասին մտածելու, այլ աշխատիր նրան ամուսնացնել, տուն ու տեղի տեր դարձրու, որ եթե մի դեպք էլ պատահելու լինի, ապահով լինես, որ որդուդ հարցերը լուծել ես:

Շրջապատի այդ խոսակցությունները մի կողմից, աշխարհի ծանր դրությունը մյուս կողմից, նրան խորհելու տեղիք էին տալիս, լսելու իր ներքին ձայնին, կանխազգացումին, որ իր ապրելուն խիստ կարճ ժամանակ է մնացել ու որդու ամուսնության հարցը պետք է լուծվի իր կենդանության օրով: Այդ պատճառով էլ հայրս, առանց ինձ հետ խորհրդակցելու, իմ կարծիքը քիչ թե շատ հաշվի առնելու (այսինքն, այդ ժամանակ ոչ մի ծնող էլ, նույնիսկ հասունացած երեխաների կարծիքը հաշվի չէր առնում), որոշում է ինձ՝ 14 տարեկան երեխայիս, ամուսնացնել: Այն էլ այն ժամանակվա երեխաները, որոնց մակարդակը բնության ու շրջապատի նկատմամբ տասնյակ սանգամ ավելի ցածր էր, քան այսօրվա նույն տարիքի երեխաներինը:

ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔ

1917 թ. սեպտեմբերի 10-ի առավոտյան ինձ սովորականից վաղ արթնացրին, լավագույն ձևով հագցրին, զուգին-զարդարին: Մեր տուն հրավիրեցին Պողոսենց Ալեքին, փեսա Սիրեկին, բանակից մի քանի օրով տուն եկած Տիգրան եղբորը: Խմեցի՛ն, կերան, հետո հայրս ինձ ասաց, որ պատրաստվեմ Արթիկ գնալու համար: Ներքուստ ուրախացա, քանի որ պապիս ու տատիս վաղուց չէի տեսել:

Մենք չորսով (Ալեքը, Սիրեկը, Տիգրանը և ես) ճամփա ընկանք, հայրս ինչ որ պատճառաբանությամբ, մեզ հետ չեկավ: Սեսրի կարճ , ճանապարհով, մի քանի ժամից հասանք Մահմջո՛ղ: Հորեղբայր Ալեքը ինձ ասաց, որ այստեղ գործ ունենք, վերջացնենք, նոր կշարունակենք ճանապարհը: Ձիերից իջանք ու մտանք նրա աներոջ տուն: Մի 15–20 րոպե մնալուց հետո այստեղից դուրս եկանք և այցելեցինք մի ուրիշ տուն, որտեղ երկար մնացինք, խոսում են զանազան բաների մասին, որը ինձ չի էլ հետաքրքրում, ես մտովի իմ անելիքների մասին եմ մտածում:

Որքան ժամանակ էր անցել, դժվարանում եմ ասել, երբ ներս մտան մի կին ու աղջիկ: Ողջունելուց հետո, մի երկու րոպե անց, հորեղբայր Ալեքը ջուր ուզեց, աղջիկը ջուր բերեց, հերթով բոլորին մատուցեց, երբ ես ևս ջուր խնդրեցի, աղջիկը շուռ եկավ և այլևս չվերադարձավ: Տիգրան եղբայրը միմիկայով ինձ սաստեց, թե ինչու ես նման պահանջ արեցի: Ես զարմանքից քարացել էի, թե ո՞րն է իմ սխալը: Տանտերը, որ մի պատկառելի ծերուկ էր, սկսեց ինձ հարցաքննել՝ ի՞նչ կրթության ունեմ, ինչո՞վ եմ զբաղվում, հետո էլ թե քանի՞ տարեկան եմ: Հարցերին պատասխանեցի, վերջում էլ ասացի ծննդյան թիվս՝ 1903 թ.: Փե-

սա Սիրեկը ինձ կշտամբեց, որ տարիքս ասելու փոխարեն ծննդյան թիվն եմ ասում, չէ՞ որ հարցնողը անզրազետ ծերունի է ու դրանից զլուխ չի հանի:

Այս խոսքի վրա տանտերը խիստ զայրացավ, ասելով՝ հիմարը դու ես, խոտը իմ առջև ես դնում: Վեճը կարող էր երկարել ու բարդանալ, եթե հաշտության դերում հանդես չգար հորեղբայր Ալեքը:

Մի երկու խոսք հյուրերին ջուր տվող աղջկա մասին, . կլիներ նա 16–17 տարեկան, փարթամ, սպիտակամորթ, կլոր դեմքով արտակարգ գեղեցկուհի, թեև հագնված էր բավական համեստ, ոտքերին կրում էր փայտե նալիկներ: Տունը, որտեղ տեղի էր ունենում վերոհիշյալ խոսակցությունը, ներկա էին մի տարիքով կին ու մի երիտասարդ 30–35 տարեկան:

Ջուր խմելուց հետո, մերոնք ինձ թողեցին տեղում, և իրենք, տան տերերի հետ դուրս եկան խորհրդակցելու, ինչի մասին և որքան տնեց այն, չեմ կարող ասել, մեկ էլ՝ լուսամուտը ծեծեցին ու ինձ դուրս հրավիրեցին՝ մեկնելու նպատակով: Երբ դուրս էի գալիս, տեսա, որ բավական բազմություն է հավաքվել ու բոլորի ուշադրության կենտրոնը ես եմ: Ես մի տեսակ զարմացա ու շփոթվեցի, թե ի՞նչ է կատարվում, ինչու՞ են հավաքվել, ինչու՞ բոլորը մատով, ձեռքով ինձ են մատնացույց անում (մանավանդ աղջիկները), որն է իմ հանցանքը:

Թեև ես այդ ժամանակ՝ 14 տարեկանում բոյով էի, բայց շատ նիհար, անգույն, սև ու դեղին, թույլ, այնպես որ արտաքնապես շատ անհրապույր էի, վանող: Դրսում մերոնք դեռ երկար խոսում էին հյուրընկալների հետ, իսկ ես, շրջապատի վերաբերմունքից ընկճված, ուզում էի վայրկյան առաջ չքանալ: Ուստի, մոտեցա Տիգրան եղբայրին ու խնդրեցի այստեղից շուտափույթ հեռանալ: Նա չմերժեց, ու մենք հեռացանք: Բավա-

կան հեռացել էինք, երբ Տիգրան եղբայրը բացատրեց, որ մենք եկել ենք աղջիկ տեսնելու, հայրս որոշել է ինձ ամուսնացնել ու այդ ջուր տվող աղջիկը լինելու է իմ հարսնացուն:

Այնուհետև Տիգրան եղբայրն ասաց, որ տան տերը աղջկա հայրն էր, տարիքով կինը՝ մայրը, երիտասարդը՝ եղբայրը, իսկ դրսում հավաքվածները՝ նրանց ազգականները: Այն ժամ ես դժգոհությամբ ասացի՝ ինչու՞ վաղօրոք ինձ չեք նախազգուշացրել: Տիգրան եղբայրը ասաց, թե՝ եթե սկզբից էլ ասելու լինեինք, մեկ է, դրանից ոչինչ չէր փոխվելու, քանի որ հայրդ որոշել է քեզ անպատճառ ամուսնացնել, իսկ այստեղ բերելուդ պատճառը այն էր, որ աղջկա ծնողները ցանկացել են քեզ տեսնել:

Այս լուրերը լսելիս հոգեկան աշխարհս ալեկոծվեց, բայց թե ինչ կարող էի անել... Ուզում էի միայն վայրկյան առաջ այս դժոխային տեսարանից չքվել: Հակառակ իմ մտատանջություններին, տան տերերը մեզ նորեն ներս հրավիրեցին՝ հյուրասիրության նպատակով, ես բոլորովին սեղանին չմոտեցա և ոչինչ չկերա: Հացկերույթից հետո աղջկա եղբայրը՝ Հարութը, հորեղբայր Ալեքին դուրս կանչեց և ի՞նչ խոսեցին՝ հայտնի չէ, միայն ասել էր, որ առայժմ խոսք տալ չեմ կարող, քանի որ լուրեր են ստացել, թե տղայի մայրը խորթ է և ընչազուրկ ընտանիք են: Վերջում էլ, թե կստուգեն և գործը գլուխ կբերեն: Պատրաստվեցինք մեկնելու, ես իմ ձին նախապատրաստեցի զոմում, երբ դուրս եկա, դրսում հավաքվել էին գյուղի ողջ աղջիկներն ու հարսները, նրանց հայացքները հիմնականում գամված էին ինձ վրա. Մի պահ շփոթվեցի, սակայն ինձ չկորցրի, բավական վարժ նստեցի ձիուն ու բոլորից շուտ շարժվեցի:

Ես ապշած էի ու երկար ժամանակ չէի կարողանում հասկանալ, թե ի՞նչն էր այս կանանց ու աղջիկների հավաքի

պատճառը. սե՞ռը, հարգա՞նքը, նախա՞նձը, խա՞նդը: Ամբոխը, նկատելով իմ ակնթարթային ձի նստելը, ապագա զոքանչիս լուր էին հասցրել, որ ես ոչ թե երեխա եմ, անչափահաս, այլ հասունացած: Ձի նստելս ու քառատրոփ տուն հասնելս չափազանց կարճ տևեց: Հայրս ինձ միայնակ տեսնելով՝ զայրացավ վրաս, թե ինչու՞ եմ այդքան արագ եկել, չսպասելով թափորին. ես լուռ հեռացա: Հետո իմացա, որ ընկերներս եկել են և, թե ի՞նչ խոսակցություն է եղել նրանց ու հորս միջև, չիմացա: Երեկոյան, երբ պառկել էի քնելու, սակայն այդ օրվա ազդեցության տակ մտորումների մեջ, չէի կարողանում քնել, հայրս, ինձ քնած կարծելով, մայրիկին համոզում էր ու բացատրում իմ ամուսնության անհրաժեշտությունը, հատկապես, այդ աղջկա հետ:

Հաջորդ, ինչպես և մյուս օրերին, որևէ խոսակցություն չէր գնում իմ ամուսնության մասին: Ես ժամանակ առ ժամանակ ուրախանում էի, որ տանը ընկերուհի եմ ունենալու, երբեմն էլ տխրում, թե կինը իմ ինչ խելքի բանն է, մանավանդ, որ տարիքավորներն ասում էին., կինը գլխիդ կբամփի, ուտելեղեն, հագուստ, կոշիկ կպահանջի, ինչպե՞ս կարող ես բավարարել և այլն: Այսպես անցավ մոտ 10 օր:

Սեպտեմբերի 20-ին, մի արևոտ տաք օր, երբ կալում Հարութ ամու հետ կալսում էինք հերթական քյուլաղը,՝ եզների կամի միջոցով, հայրս եկավ, եզները արձակեց, Հարութ ամուն ինչ որ բան ասաց, ինձ վերցնելով, տուն գնացինք: ճանապարհին հայրս զգուշացրեց, որ մեր տեսած աղջկա եղբայրը՝ Հարութը, եկել է տնտես (ըստ այն ժամանակվա սովորության), սկսեց ինձ խրատել, թե ինչպես տեսնեմ, բարևեմ նրան: Օղու բաժակաճառ ասելիս՝ ասեմ, որ եթե հայրս նպատակահարմար է համարում իմ ամուսնությունը, թող իր ասածով լինի, վերջում էլ բաժակը հանձնեմ Հարութին (աներոջս տղային): Մինչ հայրի-

կիս ինձ մոտ գալը, մոտ 2 ժամ առաջ մեր տուն էր եկել հարսնացուի եղբայրը՝ Հարութը, որի հետ էր համագյուղացի Սիրեկանը և նրա քրոջ ամուսինը, մեր գյուղացի հորեղբայր Ալեքը:

Մինչև իմ տուն մտնելը գործը հիմնականում ավարտել են: Հայրս մեր ազգականների հետ և հյուրերն արդեն խմել են աչքալուսանքը՝ «Ծաղիկների» կենացը և այլն: Իմ ներկայանալը միայն ուրախություն պատճառեց արդեն զինովցած ներկաներին: Ներս մտնելով՝ անթերի կատարեցի հայրիկիս հանձնարարությունը. նախ բարևեցի բոլորին, ապա, երբ բաժակ առաջարկեցին, վերցրի այն, շնորհակալություն հայտնեցի հյուրասիրության բաժակի համար, համաձայնություն տվեցի հորս ձեռնարկած գործին ու բաժակը հանձնեցի հորս եղբորը, որից հետո կայծակի արագությամբ դուրս թռա տանից, որը բավական ծիծաղի առիթ էր եղել:

Կալ հասնելով ցանկանում էի գլխիս եղածի մասին պատմել Հարութ ամուն, երբ նրան ևս կանչեցին, տարան. մնացել եմ միայնակ և չեմ իմանում անելիքս: Մինչև երեկո ոչ ոք չեկավ կալ: Սովորականից ավելի վաղ արձակեցի եզներն ու տուն եկա:

Հյուրերից բացի, տունը լեցուն էր համագյուղացիներով, ըստ սովորության, նրանք բոլորն էլ եկել էին աչքալուսանքի: Հունանի, Երվանդի պարկապզուկի երաժշտության տակ ուրախանում էին, երգում, պարում, զվարճանում:

Երբ օրը մոտենում էր երեկոյին, հորեղբայր Հարութը, ներողություն խնդրեց, որ ուշ է և ինքը պետք է մեկնի գյուղ: Հանդիսականների սրտով չէր նրա հեռացումը, բայց հայրս համաձայնեց ու նրա հետ մեկնեցին: Նրանց գնալուց հետո էլ, մինչև կեսգիշեր ուրախությունը շարունակվեց:

Աչքալույսի եկողներն արդեն վերջացրել էին իրենց

խնջույքը ու գնացել, երբ մայրս ինձ արթնացրեց (շորերով պառկել էի թախտին ու քնել), փնթփնթալով, անիծելով ու մեղադրելով ինձ, որ այն աստիճան անշնորհք եմ, որ օտարները մեր տանը քեֆ են անում, ուրախանում իմ ամուսնության առթիվ, իսկ ես մտել եմ մի անկյուն ու հանգիստ քուն մտել, որ ես լավ հոր անարժան զավակ եմ և այլ բաներ:

Այնպես որ, ես կարծես ընտելացել էի նրա զանգատների ու լուտանքների շարանին, բանի տեղ չէի դնում, թողնում էի անպատասխան, որը նրան ավելի էր զայրացնում, հասցնում կատաղության աստիճանի, ու եթե ճար ունենար, իսկույն կհոշոտեր ինձ, կյանքից կզրկեր: Ով ինձ նման, մորից որբ է եղել, միայն նա կհասկանա մեր վիճակը: Թեպետ հայրս նրան սիրում էր, համակրում, բայց տասնապատիկ ավելին ինձ էր սիրում, դրա համար էլ նա ճաքում էր, բայց այլ ճար չուներ:

Մի քանի խոսք հարսնացուիս ու նրանց ընտանեկան կազմի մասին: Հարսնացուս, ինչպես վերևում նշել եմ, 17 տարեկան (ինձանից 3 տարով մեծ), բավական փարթամ, բարետես գեղեցկուհի էր: Ժամանակակից երիտասարդներից և ոչ մեկը, նրա մոտից անտարբեր անցնել չէր կարող: Իր չքնաղ գեղեցկությունը, բարետես իրանը, սպիտակամորթ դեմքը շատերի ուշադրությունն էր իր վրա հրավիրում, շատերն էին փափագում նրան տիրելու, ամուսնանալու նրա հետ: Հարսնացուս յուրովի նույնպես փնտրել է իրեն արժանի ամուսին, սակայն արտահայտվել, որևէ մեկի հետ կիսվելու համարձակություն չի ունեցել: Ինչպես ժամանակի բոլոր աղջիկները, նույնպես և նա, բացարձակապես եղել է ծնողների իրավասության ներքո: Էլ չասենք առանձին դեպքերի մասին, երբ ծնողները աղջկան բացարձակապես ծախում էին, ինչպես եղավ մեզ հետ: Անհրաժեշտ, հավանելով հորս, այդ չքնաղ աղջկան տվել են ինձ, իսկ ես

տվյալ պահին, բոլորովին չէի համապատասխանում նրան։

Հարսնացուիս՝ Ինտիզարի հայրը, որը հետագայում փոխարինեց իմ հորը, կոչում էին Սարիբեկ, մորը՝ Վառո, եղբորը՝ Հարութ։ Նա ուներ երեք քույր. մեծը՝ Սոնա, ամուսնացած էր Թալինում՝ Կարապետ Հակոբյանի հետ, միջնակը՝ Արաքսյան, գյուղում՝ Սիրեկան Գևորգյանի հետ, իսկ փոքրը՝ Վարիկոն, 7–8 տարեկան էր։ Հորեղբայրները՝ Ոսկանը, Ավետիքն իրենց կանանցով ու երեխաներով մոտ 23 շունչ, ապրում էին միատեղ։ Ունեին մի քանի զույգ լծկան, մի քանի մատակ, կով, բավական շատ ոչխարներ, ձիեր և այլն։

Աչքալույսի օրը հայրս, հարսնեղբայր Հարութի հետ, հասնելով Մահմջուդ, մեկեն աշխատում էր իր տպավորությունները պատմել փեսացուի տնտեսական վիճակի, իսկ հայրս ձգտում է դրպե առաջ տեսնել իր սիրելի հարսին, համբյուրել նրան, ուրախանալ նրանով, բայց այնքան էլ շուտ չի կատարվում հայրիկիս ցանկությունը։

Պարզվում է, որ այս ձեռնարկած ու գլուխ բերած գործից դժգոհ է զոքանչս, փոշմանել է, անիծում է իր որդուն՝ պահանջելով վճարել մեզ պատճառած ծախսերի դիմաց ու դրանով ամեն ինչ վերջացնել։ Պակաս ողբերգության մեջ չի լինում և Ինտիզարը։ Մոր կրծքից կպած, խնդրում, աղաչում է իրեն թույն տալ, սպանել, քան թե ինձ՝ անարժանիս հետ ամուսնացնել։ Թե որքա՞ն է տևում այս պրոցեսը, հայտնի չէ։ Ի վերջո, Սարո պապը զայրանում է կնոջ ու աղջկա արարքների վրա, ժամանակի սովորության համաձայն, իբրև միանձնյա տնօրեն, պահանջում է դադարեցնել լաց ու կոծը, մոր գրկից դուրս է քաշում աղջկան ու ներկայացնում հորս տեսությանը։ Հայրս, որ այդ տեսարանից խորապես ազդվել էր, ընկել երկմտանքի մեջ, հրաժարվե՞լ այս ձեռնարկումից, թե՞ համբերել ... Իմ փոխարեն, եթե մի

ուրիշ, կատարելության հասած տղա ունենար, անշուշտ, կվերադառնար, այլ հարսնացու գտնելը նրա համար դժվար չէր լինի, բայց, քանի որ դեմինը եւ էի, դժվարանում էր մի այսպիսի գեղեցիկ, լավ ծնողներ ունեցող ու գրագետ աղջիկ ճարել: Խիստ ընկճված վիճակում վերջապես ընդունում է հարսին՝ արտասուքից ուռած աչքերով և արտասվելիս:

Սկսում է գուրգուրել, համոզել, խրատել, որ ապագան լավ կլինի, որ ձեզ հասած լուրերը տղայիս մասին, սուտ են, որ նա իրոք անչափահաս է, կաճի, կմեծանա և այլն: Ինտիզարը մի կերպ հանգստանամ է՝ հույսը աստծո վրա դնելով: Թեև մտովի պատկերացնում է իր ապագայի անհուսալի, անորոշ վիճակը: Երբ բոլորը խաղաղվում են, ու հայրս հասնում է իր նպատակին, խնամիների հետ սեղան են նստում, նորից աչքալուսանք խմում: Աներս բաժակաճառում հորս ասում է. որ աղջկաս տանից դուրս գալու երկու ճանապարհ կա, կամ ձեր տուն, կամ գերեզմանոց: Այնուհետև, շարունակելով ավելացնում է, որ եթե քու տղան (այսինքն ես) անդամալուծ լինի, հոգեկան հիվանդ, աչքերից զրկված, միևնույն է, նա իմ փեսան է և, եթե հեռի իրենից, կյանքից էլ զրկվի, նա ձեր տանից դուրս չպետք է գա, մինչև մահ գերեզման: Աներոջս այդքան վճռական դիրքորոշումից հետո, հայրս հանգստանում է ու հաջորդ օրը վերադառնում գյուղ:

Այդ օրերին բավական ծանր էր իմ վիճակը, տանից դուրս գալիս հասակակիցներս, իբրև ամուսնացածի, ձեռք էին առնում, ծաղրում, ոմանք կին հայհոյում, ես՝ տակ չմնալու համար, իրենց էի հայհոյում, տուրուդմփոց սարքում, իսկ դրանցից խուսափելու համար գերադասում էի տանից դուրս չգալ: Այստեղ էլ արժանանում էի խորթ մայրիկի ծաղր ու ծանակին: Լավ էր, որ նրա ամեն արարքի մեջ չէի խորանում, թե չէ փողոցի տղաների նման նրա մոռթը ևս կջարդեի:

Հայրիկիս վերադարձից հետո մեր տանը նորից սկսվում է քեֆը, ուրախությունը, աչքալուսանքը: Գյուղացիների մեծ մասը, ըստ սովորույթի, մեկական շիշ օղի վերցրած գալիս էին աչքալուսանքի, ուտել, խմել, ուրախանալու: Որից հետո սկսվեց նշան դնելու նախապատրաստությունը: Հայրս մեկնեց Ալեքսանդրապոլ, հարսի համար նվերներ և սեղան պատրաստելու, մթերքներ, մրգեր, քաղցրավենիք գնելու համար: Հոկտեմբերի առաջին տասնօրյակին նշան տանելու բոլոր պարագաներն արդեն պատրաստ էին: Հրավիրեցին բարեկամներին, հարևաններին, հորս մոտիկ ընկերներին, նվագախմբի ուղեկցությամբ շարժվեցինք դեպի Մահմջուղ:

Բացի հարսից, նվերներ էինք պատրաստել ծնողներին, քույրերին, հորեղբորը, կանանց և այլն: Մեզ հետ տանում էինք չորս խորովի արած ոչխար, մի քանի խուրջին քաղցրավենիք, չոր մրգեր, գաթա, փախլավա, շաքարլոխումի, մի քանի տիկ գինի, օղի և այլն: Բացի այդ, այս արարողության բոլոր մասնակիցներն իրենց կապոցներով նույնպես զանազան նվերներ էին բերել, որոնք պետք է բացվեին խնամոնց տանը:

Նշանդրեքի գնացողներից 25-ը ձիավորներ էին և 3 սայլ, որոնց վրա կանայք էին նստած: Մեկնումից առաջ, երբ նախապատրաստական եռուզեռ էր, ամենքն, ինչ որ գործով զբաղված էր, կարծես, ինձ մոռացել էին, ու ես ուրախ էի, և մտքովս անգամ չէր անցնում, որ կարող է ինձ էլ հետները տանեին: Վերջին րոպեին հայրս մոտեցավ, գրկեց ինձ, համբուրեց, ասելով՝ պատրաստվեմ գնալու, այդ վայրկյանին, կարծես, արևը մայր մտավ, երկինքը փուլ եկավ գլխիս, լեզուս պապանձվեց, խոսք անգամ ասելու կարողություն չունեցա: Անմիջապես աչքերիս առջև ծառացավ այն տեսարանը, երբ խնամիների բակում հավաքված հարս ու աղջիկները ծաղրում են ինձ: Քարացած

կանգնած էի, երբ հայրս երկրորդ անգամ մոտեցավ, նորից համբուրեց, գուրգուրեց ու տեղավորեց սայլերից մեկի վրա: Ճանապարհին, մինչև Սոգյութլու հասնելը, ինձանով հետաքրքրվող չեղավ: Սոգյութլիում իջևանեցինք քավոր Գևորգի տանը: Բակում սեղաններ էին դրված, թափորը մոտեցավ այդ սեղաններին, կերան, խմեցին, պարեցին, ուրախացան ու նորեն շարունակեցին ճանապարհը: Բավական անցել էինք, երբ հայրս իջավ ձիուց, ինձ իջեցրեց սայլից, ձիուց իջեցրեց նաև մեր Պետրոսին, նրա ձին տվեց ինձ, նրան առաջարկեց սայլին նստել: Բավական երկար հայրս զրուցեց ինձ հետ, բազում խորհուրդներ ու խրատներ տվեց, սովորեցրեց, թե ինչպե՞ս պահեմ ինձ, ի՞նչ բաժակաճառ ասեմ և այլն: Խեղճ հայրս ամեն ինչ անում էր ինձ կատարելության հասցնելու, բայց ես դարձյալ նույն երեխան էի, մի կողմից լսում էի, մյուս կողմից՝ մոռանում, այստեղ է, որ առածն ասում է. «Խնին խրատն ինչ կանի, սնին սապոնը»... Այդ ընթացքում հայրս ինձ չորս հատ 25 ռուբլիանոց տվեց, որը իբրև կաշառք (ըստ այն ժամանակվա սովորույթի) պետք է նվիրեի հարսին, որպեսզի նրա լեզուն բացվեր (առանձնանալիս ինձ հետ խոսեր): Այն ժամանակ այդ բավական մեծ գումար էր, մեկ ոչխարն արժեր 3–5 ռուբլի: Խեղճ հորս մտքով չէր անցնում, որ այդ օրը ես հարսի երեսը չեմ տեսնելու, փողն էլ գրպանիցս դուրս չի գալու:

Այսպես, հետիոտն քայլերով մոտեցանք խնամոնց գյուղին: Այստեղ նախապատրաստվեցինք, նստեցինք ձիերը, նվագախումբը սկսեց նվագը: Ձիավորներից երկուսն արագ սլացան գյուղ ու իսկույն վերադարձան՝ բերելով խնամիների նվերը, որը նշան էր խնամիների պատրաստակամությանը մեզ ընդունելու: Գյուղ մտնելուց մենք դասավորվեցինք շարքերով: Ես, հայրիկս և քավոր Գևորգը գնում էինք առաջին շարքում, հետո մյուս

ձիավորները և վերջում մյուս սայլերը: Ինչպես վաղորոք կանխագուշակում էի, այդպես էլ եղավ: Գյուղի մուտքից սկսած, մինչև խնամոնց տուն, ճանապարհի երկու կողմերում, կտուրների վրա հավաքված էին ողջ գյուղի երիտասարդները, հարսներն ու աղջիկները, բոլորի ուշադրությունը իմ վրա էր բևեռված, ինչ որ քչփչում էին, ծաղրում և այլն: Ես ինձ գրեթե կորցրել էի, չէի տիրապետում ինքս ինձ ու չգիտեի անելիքս: Երբ հասանք խնամոնց բակ, բոլորն իջան ձիերից: Տեղացիներից ամեն մեկը մոտեցավ մեր ձիավորներին, ձիերը տարան, ինձ մոտեցող չեղավ: Սեղանների շուրջը սկսվեց կեր ու խումը, պարը, իսկ ես պապանձված մնացել եմ կանգնած: Թե որքան տևեց, այս ժամանակը չգիտեմ, երբ Մարան ազին (Սուքիաս ամու հարսը) մոտեցավ, վիրավորեց խնամիներին, չարացավ անուշադրության համար, վերցրեց ձին ձեռիցս և հանձնեց ինչ որ մեկին: Ազատվելով ձիուց՝ թռղեցի ամեն ինչ ու, բազեի ճանկից ազատված թռչունի նման, ինձ զցեցի շենքի ներսը, մի անկյունում, որտեղ ոչ ոք չկար, մի կերպ պատսպարվեցի մինչև մերոնք ներս հրավիրվեցին, ամենքն իր տեղը գրավեց, սկսվեց ճաշկերույթը, նվագը, քեֆը, ուրախությունը:

Արևն արդեն մայր էր մտել, երբ ինձ մոտեցավ մի երիտասարդ կին ու դուրս հրավիրեց: Անմիջապես հիշեցի հայրիկիս խրատները. Կարծելով, որ պետք է հարսի մոտ գնամ, շոշափեցի գրպաններիս դրամը, որոնց օգնությամբ պետք է հարսի հետ խոսելու թույլտվություն ստանամ: Հարսի հետ հանդիպելու միտքն ուղղակի ինձ սարսափեցնում էր, ամոթից կոկորդս չորացել էր, քրտինքը տվեց վրաս: Մերոնցից ոչ ոքի ոչինչ չասեցի՝ կարծելով, որ կարգը այդպես է և հետևեցի տիկնոջը: Այդ վայրկյանին ես նման էի կառափնարանին մոտեցող մահապարտի, երբ ուղեկցող կինը բաց արեց մի դուռ ու մենք

ներս մտանք: Այնտեղ կային մի քանի կանայք, աղջիկներ, որոնք ինձ առաջարկեցին նստել:

Մի պահ կաշկանդվեցին բոլորը, ոչ ոք չէր խոսում: Լռությունն առաջինը խախտեց մի կին, որի խոսակցության գրական ոճը ցույց էր տալիս, որ նա տեղացի չէ և բավականին կրթված է (հետագայում Ինտիզարից իմացա, որ նա իր քեռակինն է, բնակվում են քաղաքում): Նա բազմաթիվ հարցեր առաջադրեց (քանի՞ տարեկան եմ, ի՞նչ կրթություն ունեմ, ե՞րբ է մահացել մայրս, ի՞նչ հարաբերություն ունեմ խորթ մոր հետ, ապրուստի ի՞նչ միջոցներ և այլն և այլն): Որոշ հարցեր էլ ինձ համար անհասկանալի էին: Ամոթից սմքել էի, քրտինքը տվել էր վրաս, երանի էի տալիս՝ գայլերի բաժին դառնայի, քան թե ընկնեի այս երկոտանի հրեշի ձեռքը: Այս վիճակից դուրս գալն անհնար կլիներ, եթե չլիներ սուրբ Մարան ազին: Իմ բացակայությունը նրան անհանգստություն է պատճառում ու սկսում է հարց ու փորձ անել, փնտրել՝ ինձ գտնելու նպատակով: Ի վերջո, գտավ ինձ ու տեսնելով վիճակս, քիչ մնաց, որ չպատառոտեր քեռակնոջը, անպատվելով, վիրավորելով ներկաներին, թևիցս բռնած դուրս եկանք այդ դժոխային որջից: Կարծեցի, որ նոր եմ ծնվել ու փրկվել դևերի ձեռքից: Մարան ազուն խնդրեցի, որ այլևս ինձանից չբաժանվի:

Հարսանքավորների քեֆը գագաթնակետին էր հասել, բոլոր երգում էին, պարում, ուրախանում: Ըստ սովորույթի, ժամանակն էր, որ նշանն օրհնվի: Ինձ տարան այն սենյակը, որտեղ պետք է տեղի ունենար այդ արարողությունը: Այստեղ էր նաև գյուղի քահանան՝ տեր Հմայակը, որն էլ սկսեց նշանդրեքի արարողությունը: Հագավ իր հագուստը, հանեց Սուրբ գիրքը, հրավիրեց հարսնացուին, մեզ երկուսիս կանգնեցրեց միասին, հավաքվածների ծափերի ներքո: Տեր հայրը սկսեց իր կարգը՝

օրհներգը, խաչակնքելը, որից հետո հայրիկից պահանջեց նշանի մատանին, որ խաչակնքելուց հետո հանձնեց ինձ, որպեսզի անցկացնեմ հարսնացուի մատը: Վերցնելով մատանին, երբ փորձեցի անցկացնել հարսնացուիս մատը, նա ձեռքը բռունցք արեց, թույլ չտվեց մատանին հագցնել, դրանով ցույց տալով իր դժգոհությունն ու չկամությունը: Ես այն խցկեցի բռի մեջ ու մի կերպ ազատվեցի այդ չարաբաստիկ ծանրությունից նս: Հարսնացուիս այս արարքը նկատելի դարձավ բոլորին և բոպե առաջ ուրախ, բարձր տրամադրությունները միանգամից չքացան, բոլորը լռեցան ու երկյուղը պատեց բոլորին, քանի որ հարսի սրտովը չէր, ուրեմն, գործը տապալվելու վրա է: Վիճակից դուրս գալու ելքը արտակարգ միջոցառումներն են, որի նախաձեռնողը Մարան ազին էր:

Մի քանի խոսք Մարան ազու մասին: Նա մեծ հորեղբորս՝ Սուքիաս ամու ավագ որդու՝ Ալեքի կինն էր, մայրիկիցս 4–5 տարով մեծ: Նրա երկրորդ ծննդաբերությունից հետո, գրեթե նույն օրերին, ծնվում եմ և ես: Նա ունենում է աղջիկ՝ Շուշան անունով: Մեր օրորոցները դրված են լինում կողք-կողքի, մի տան մեջ: Ազին եղեխային կերակրելիս, առաջնությունը միշտ ինձ է տվել, ասելով, որ իրենը աղջիկ է, որ նա յոլա կգնա: Այսպիսով, Մարան ազին մանկուց մինչև օրս ինձ համար հարազատ մայր է եղել, իսկ ես իբրև հարազատ որդի:

Ուտել-խմելն ավարտվեց կեսգիշերին, ըստ ավանդույթի, հյուրընկալի հարազատները մերոնց հրավիրեցին իրենց մոտ գիշերելու, որոնց թվում և հորս:

Մարան ազին ինչ որ նախապատրաստական աշխատանքներ տարավ և ինձ հանձնարարեց մնալ տեղում, որպեսզի տեսնվեմ հարսնացուիս հետ: Աստիճանաբար բոլորը տեղավորվեցին, շարժումը դադարեց: Գիշերը կեսից անցել էր, բայց

ինձնով ոչ ոք չէր հետաքրքրվում, կարծես թե գոյություն էլ չունեմ: Մոտենում էր լուսաբացը, այլևս դիմանալ չեմ կարող, քնել եմ ուզում, բայց որտե՞ղ, ինչպե՞ս: Մի քանի անգամ ներս ու դուրս անելուց հետո, պատահաբար բաց արի այն դուռը, որտեղ տեղի էր ունեցել հարսանիքը, այնտեղ դրված էին մի քանի փայտե թախտեր, որոնց վրա քնել էին մեկ- երկու մարդ: Զգուշությամբ մոտեցա թախտերից մեկին ու պառկեցի քնելու: Իմ շարժումից արթնացավ Սուքիաս ամին, ինձ տեսնելով զարմացավ, սկսեց չարանալ, հայհոյել, թե ինչու ինձ տիրություն անող չի եղել, ինչու՞ հարսի մոտ չեն տարել և այլն: Զգալով, որ վիճակը գնալով ավելի վատ հետևանք կունենա, սկսեցի աղաչել, պաղատել Սուքիաս ամուն, նույնիսկ, լաց եղա, որ ինձ չխայտառակելու համար լռի և ոչ ոքի ոչինչ չասի: Ամին, դրությանս մեջ մտնելով, հարգեց խնդրանքս, ինքը նստեց ծխելու, իսկ ես իր անկողնում քնեցի: Իմ, որտեղ գիշերելու մասին Սուքիաս ամուց ոչ ոք չիմացավ:

Առավոտյան վաղ հարսանքավորները հյուրընկալների հետ հավաքվեցին: Նորեն սկսվեց ճաշկերույթը, կերուխումը, ուրախությունը, սակայն նրան անմասն մնացին հայրս, քավորը և Մարան ազին, որն ամեն ինչ կռահելով, նրանց խրախուսում էր, որ աներոջս համոզեն մեզ հետ հարսին տուն տանելու համար. Մի բան, որը հակասում էր ադաթին: Թե որքան տևեց խոսակցությունը և ինչպիսի համաձայնության եկան, իմացա վերջին պահին, երբ մերոնք, կազմ ու պատրաստ մեկնելու, վերջին մնաս բարովն ասացին և ուրախ, զոռում-զոչյունով, բարձրացան ձիերի վրա: Հայրս մոտեցավ ինձ, համբուրեց և ասաց, որ խնամին համաձայնել է հարսին մեզ հետ տանելու, մի պայմանով, որ ես մնամ նրանց տանը, մինչև հարսին հետ բերեն: Այդ լուրը շանթահարեց ինձ, ես ինձ կորցրի, բոպե առաջ

հույս ունեի այս դժոխքից ազատվելու, իսկ այժմ միայնակ պետք է մնամ: Պատկերացրեք իմ հոգեվիճակը: Հայրս, տեսնելով աչքերիցս հոսող արտասուքը, հուսադրեց ու զնաց աներոջս վերջին մնաս բարևն ասելու: Եվ թե ի՞նչ էր խոսել, չգիտեմ, կրկին մոտեցավ ինձ աներոջս հետ միասին, ու տեսան իմ լացն ու կոծը, և աներս համաձայնվեց, որ ես ևս մեկնեմ:

Հարսանքավորները գյուղից դուրս էին եկել և ուրիշ փոխադրամիջոց չկար, հայրս ինձ վերցրեց իր ձիու թամբին ու, երբ շարժվեցինք, շրջապատի կանգնածները քարացան, չէ՞ որ համաձայն պայմանի ես, իբրև պատանդ, պիտի մնայի: Հարսանքավորներին հասանք ջրաղացների մոտ: Տեսնելով իմ վերադարձը՝ բոլորը միաձայն գոռոցացին, ուռա բղավելով, ռեպլիկներ թողնելով, խնամիներին խաբելու, հարս ու փեսային միասին տանելու: Հայրիկը ինձ ձիուց իջեցրեց և առաջարկեց նստել այն սայլին, որտեղ հարսնացուն է: Խնդրեցի նստել մյուս սայլերից մեկի վրա, որ ճնշված չզգայի և որոշ չափով լիցքաթափվեի, սակայն թույլ չտվին: Նույն սայլին նստած էին մի քանի կանայք, որոնց հետ և Մարան ազին, որն իմ տեղավորվելուց հետո, սկսեց պատմել իր տեսածն ու լսածը խնամոնց տուն մտնելուց հետո: «Ներս մտնելով,- պատմում է ազին,– անմիջապես զգացի նրանց անտրամադիր վերաբերմունքը, եղա հարսի մոտ, որ տեսնել անգամ չկամեցավ, մայրը ևս բավական ընկճված տեսք ուներ: Երբ մի երկուսի հետ զրույց ունեցա, թե ինչն է այս ամենի պատճառը, ինձ հասկացրին, որ բացի հարսի հորից ու եղբորից, մնացած տանտերերից ոչ ոք գոհ չէ այս ամուսնությունից: Նշանն օրինելու ժամանակ երևաց հարսի կամակորությունը ու չկամությունը, որը մերժեց մատանին մատը դնելը: Մեզանից գաղտնի երեխայիս (այսինքն ինձ) տարել զցել էին մի վիշապուհու ձեռք, որն ուզում էր նրան հոշոտել, իհարկե, եթե ես չհաս-

նեի: Գիշերը, հակառակ գոյություն ունեցող կարգի, երեխայիս ոչ ոչ տիրություն չի արել: Ահա, այս ամենը նկատի ունենալով, որոշեցի, որ հարսին այսօր անպայման մեզ հետ պետք է տանենք, հակառակ դեպքում վաղը ուշ կլինի և նրան ուրիշի հետ կճանապարհեն»:

Այս ամենը Մարան ազին բարձրաձայն ու գունազարդված պատմում էր Ինտիզարի ներկայությամբ, որն այդ պահին գլխիկոր, անշնչացած էակի էր նման ու, թե ինչ էր մտածում, աստված գիտի: Այսպես մոտեցանք Սերվանջուղ գյուղին[6]. Ճանապարհը քարքարոտ էր ու վերելքով, սայլերը հազիվ շարժվում էին: Օգտվելով առիթից, մոտեցա փեսա Սիրեկին, խնդրեցի ձին մի քանի րոպեով տրամադրել ինձ, ինչը նա չմերժեց: Ձին նստելը, նրան խթանելը ու սլացքով գյուղ հասնելը մեկ եղավ: Ամեն պատշաճություն մոռացած, ուտելեղեն խնդրեցի, քանի որ շուրջ երկու օր քաղցած էի. կերա ու քաշվելով մի հարմար անկյուն, քնեցի: Արթնացա դհոլ զուռնայի ձայնից, որոնք նոր էին տուն հասել:

Արդեն երեկո էր, արևը մայր էր մտել: Հայրս կարգադրեց նվագը դադարեցնել, քանի որ Վոիկի Խաչոյի Սրապի սև գիրն էր ստացվել: Անտրամադիր ճաշկերույթն ավարտվեց, ամենքը վերադարձան իրենց օջախներ, մտքում աղոթք մրմնջալով, աղերսելով աստծուն, իրենց որդիներին պաշտպանելու թշնամու սրից ու գնդակից:

Պատերազմի սկզբից մինչև այդ օրը գյուղացիներից զոհվել էին 14-ը, վիրավորվել 21-ը: Պատերազմը գնալով ավելի էր բորբոքվում, որքան նորանոր մարդիկ էին զորակոչվում: Լուրեր էին տարածվել, թե Նիկոլայ թագավորը թախտից ընկել է,

---

[6] Սերվանջուղը Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղն է:

ռուս զինվորները թուրքական ռազմաճակատից վերադառնում են: Ի՞նչ է լինելու հայ ժողովրդի վիճակը, երբ թուրքերն առանց դիմադրության հանդուրժելու շարժվում են դեպի Արևելյան Հայաստան, ոչ ոք ասել չէր կարող:

Ի վերջո բոլորը գնացին, մեր տանը մնացին քավոր Գևորգի ընտանիքը, հարսնախպերը (Ինտիզարի հորեղբոր տղան)՝ Սմբատը, որին հանձնարարված էր հարսին միայնակ չթողնել և մենք: Երբ պատրաստվում էինք քնելու, քավորկինը մեզ առանձին սենյակ տրամադրեց գիշերը միասին անցկացնելու, բայց Ինտիզարը չկամեցավ՝ լացելով դուրս եկավ, ու ես ստիպված տեղափոխվեցի ուրիշ սենյակ: Շուրջ մեկ շաբաթ նրանք մնացին մեր տանը: Հայրս բավական զուրգուրեց, խրատեց Ինտիզարին, որ ամեն ինչ լավ կլինի, անհանգստանալու կարիք չկա: Բացի այդ, տեսնելով մեր ապրելակերպը, պայմանները, կարծես օր օրի մեղմացավ նա և շաբաթվա վերջում, երբ մոտեցավ բաժանման պահը, զգացվում էր, որ Ինտիզարը բավական բարյացակամ է դարձել իմ հանդեպ, չքացել էր նախկին ատելությունն ու թշնամությունը: Հայրս, հարսնեղբայրը և Ինտիզարը ձիեր նստելով, վերադարձան իրենց տուն: Այնտեղ հորս այնքան էլ լավ չէին ընդունել: Գյուղում տարածել էին, որ մերոնք խաբեությամբ հարսին տարել են, արդեն պսակել են ու այլևս չեն բերելու: Այնինչ, ինչպես վերևում ասվեց, մեր տանելու նպատակը բոլորովին այլ է եղել:

Ինտիզարի հարազատները, տեսնելով իրեն՝ անմիջապես հավաքվում են ու սկսում հարցերի շարանը, ճի՞շտ է, որ պսակել են, որ իբր ինքն այլևս աղջիկ չէ, ինչպիսի՞ տուն ու տեղ, պայմաններ ունեն և այլն ... Ինտիզարն առաջին ու երկրորդ հարցերին ժխտական պատասխան է տալիս, իսկ տուն ու տեղի, ապրելակերպի, շրջապատի, հյուրասիրության մասին

բարձր գնահատական է տալիս: Այդ տեղեկությունները բավական լավ ներգործություն է ունենում ամբոխի և, հատկապես, մոր վրա: Նա փոխում է իր կարծիքը մեր (իմ) հանդեպ: Բայց շատերին վշտացնում են այդ լուրերը: Նրանք սպասում էին բացասական լուրերի, որի դեպքում Ինտիզարին հետ կտանեին և իրենց բաժին կդառնար: Նույնիսկ ինչ որ երիտասարդներ այդքանից հետո, որոշել են Ինտիզարին փախցնել:

Ասեկոսները և խլրտոցները անտեսանելի չեն մնում հորս հեռատես աչքից: Այդ պատճառով էլ հաջորդ օրը, խնամոնց տանից վերադառնալուց հետո, սկսում է հարսանիքի նախապատրաստություն: Մի քանի մարդ ուղարկում է էջմիածին գինի, օղի բերելու: Մսացուի համար գնում է մեկ արջառ, երկու կով և 10 ոչխար: Ալեքսանդրապոլից բերել տվեց զգալի քանակով մրգեր, չիր ու չամիչ, քաղցրավենիք, ճաշի սպասք (10 օր ժամանակով), հրավիրեց նաև երկու խոհարար, որոնք հարսանիքից մեկ շաբաթ առաջ արդեն եկել էին:

Հարսանիքը սկսվեց 1917 թ. հոկտեմբերի վերջերին: Առաջին օրը մորթեցին մսացուն.: Սկսած երեկոյից մինչև կես գիշեր քեֆ արեցին, պարեցին, ուրախացան: Հաջորդ առավոտյան ավելի մեծ թվով հյուրեր ընդունելու պատրաստություն տեսանք: Խոհարարները օգնականներ վերցրին՝ զանազան ճաշատեսակներ պատրաստելու համար:

Ըստ տեղի սովորության՝ նորապսակ փեսան նվազախմբի հետ պետք է շրջեր գյուղացիների տները և իր հետ վերցրած օղուց առաջարկեր տան տերերին խմելու: Նրանք, ովքեր օղին (այսինքն հրավերքը) խմում էին, ուրեմն, համարվում էին հարսանյաց հրավիրյալներ, իսկ ովքեր մերժում էին՝ ոչ: Այս արարողությունը թեև ես պետք է կատարեի, բայց այստեղ ես ինձ խնայեցին ու այդ ծանրությունը ընկավ մեր Պետրոսի վրա, որն

ինձանից 5-6 տարով մեծ էր: Երբ Պետրոսի շրջազայությունն ավարտվեց, մեր տանն արդեն մեծ թվով կանայք էին հավաքվել (բարեկամներից ու հրավիրվածներից): Սկսվել էր մի ծես, որը մեզանում անվանում էին տաշտադրոնք: Բոլորը կանայք էին և իրենց հետ սեղան (կապոց) էին բերում, նվերներ, քաղցրավենիք, մրգեր և այլն ...

Ճաշկերույթն ավարտելուց հետո, որ ղեկավարում էր քավորկինը, առաջարկվեց մեջտեղ բերել նվերները: Ինքը, որպես քավորկին, նվիրեց 50 ռուբլի և նորապսակներին հագուստեղեն՝ մեկիկ-մեկիկ ցուցադրելով բոլորին: Այնուհետև, նույնը արեց և մյուս կանանց բերած նվերների հետ՝ անվանելով նրանց ով և ինչ լինելը: Լինում էին կանայք, որոնք ոչխար էին նվիրում: Վերջում, երբ ամփոփեցին արդյունքները, ստացվեց 550 ռուբլի, 17 ոչխար և տարբեր տեսակի հագուստեղեն: Քավորկինը հայրիկիս հրավիրում է, հանձնում դրամը, հագուստեղենը և տալիս ոչխար տվողների ցուցակը: Հայրս շնորհակալությամբ ընդունում է նվերները և խնդրում ուտել, խմել, ուրախանալ, ինչպես իրենց հարազատ տանը:

Տաշտադրոնքի օրը ևս շարունակվեց հարսանիքը: Մեղանները լիքն էին բոլոր բարիքներով, քավորի և քավորկնոջ ղեկավարությամբ կենացներ էին առաջարկվում, խմում, ուտում, երգում, պարում, ուրախանում: Հաջորդ օրը, վաղ առավոտյան բոլոր հրավիրվածները հավաքվեցին և նորից սկսվեց ճաշկերույթը, կերուխումը, վերջում, քավորի առաջարկով, խմեցին մեկնողներին բարի ճանապարհ մաղթելու, իսկ մնացողներին խաղաղության կենացը: Հարսնար մեկնողների թիվն անցնում էր քառասուն ձիավորից, կար նաև երկու սայլ, որոնցից մեկը 3 տարի առաջ մայրիկիս տակով անցել էր: Մի պահ հիշեցի մայրիկիս տխուր վախճանը, վատ կանխազգացում

ունեցա, սակայն հանգիստ էի և ուրախ, որ այդ օրը, նշանդրեքի օրվա նման, ինձ չեն տանելու և ծանր փորձությունների չեմ ենթարկվելու:

Հարսնարի գնալուց հետո երգը, նվագը (Հունանի Երվանդի պարկապզուկը) չդադարեց մինչև երեկո:

Երեկոյան ես իմ շքախմբով՝ ազաբբաշիներ և ընկերներով, ըստ սովորույթի, պետք է հաճախեինք քավորանց տուն, ուտել -խմելու և այնտեղ էլ գիշերելու, բայց քանի որ իմ քավորը տեղացի չէր, լիազորեց մեզ այցելել Սուքիաս ամու օդան: Այնտեղ մի շարք արարողություններ կատարվեց. ինձ, որպես թագավորի, լողացրին, հետո գիշերեցինք այնտեղ: Թագավորի սուրը պահելու համար շքախմբից մի երկուսը պետք է պահակություն անեին, բայց թե ինչպես էր եղել, նրանք քնել էին ու իմ սուրը գողացել էին: Չխայտառակվելու համար բավական կաշառք տալուց հետո մի կերպ սուրը հետ ստացանք:

Առավոտյան քավորկինը բարձր մակարդակով մեզ հյուրասիրեց: Նախաճաշից հետո սկսվեց թագավորին գովելու արարողությունը, պսակի հագուստը հագցրին, վերջում էլ կապեցին կոսպանդները (մետաքսյա, թաշկինականման մեծ փուշի): Որից հետո դուրս եկանք, դրսում շուրջպարը, պարկապզուկի հնչյունների տակ, բոլորել էր: Երբ մոտեցա մեր տանը, սեղանները լրիվ դասավորված, սառը ուտեստները դրված, կազմ ու պատրաստ սպասում են հարսնավորների վերադարձին: Ըստ սովորույթի՝ քավորի տանից թագավորի վերադարձը մեծ շուքով դիմավորում է մայրը, օրհնելով ու համբույրներով, բայց իմ խորթ մայրը աչքով աչք չուներ ինձ նույնիսկ նայելու, ուստի ես, անիծելով իմ բախտը, համարյա արտասվալից աչքերով դուրս եկա տանից:

Երեկոյան կողմ հարսնարը վերադարձավ: Ուրախութ-

յունը, գոռուն-գոչյունը, երգը ու պարը էլ ավելի թեժացան: Հարսանքավորները դրսում դրած սեղաններից բավական ճաշակելուց հետո ինձ, իմ ազաբբաշիների հետ, կտուրից վայր իջեցրին և ուղղություն վերցրին դեպի եկեղեցի: Ես, որպես փեսա, բռնել էի հարսի ձեռքը ու միասին մտանք եկեղեցի, հարսանքավորները եկեղեցու բակում շարունակում էին նվագը, պարը:

Պսակի արարողությունը բավական երկարեց, տերտերը զանազան գրքերից աղոթքներ էր մրմնջում: Ավետարանը խաչի հետ մի քանի անգամ դրեց գլխներիս, օրհնեց, երբեմն-երբեմն դիմում էր մեզ, որ եթե համատեղ կյանքի ընթացքում դժվարություններ պատահեն (հիվանդանալ-կուրանալ, համրանալ և այլն) համաձա՞յն եք (տեր եք) միմյանց ապավինելու, ես ասում էի՝ այո, իսկ Ինտիզարը գլխով խոնարհվում էր, այսինքն, համաձայն էր: Պսակի արարողությունը վերջանալուց հետո դուրս եկանք եկեղեցուց: Դրսում սպասողները ուռա գոչելով դիմավորեցին մեզ, որից հետո նվագով վերադարձանք տուն: Տանը մեզ դիմավորեց Մարան ազին, լավաշները ձեռքին, պարելով մոտեցավ մեզ, (մորս փոխարեն) համբուրեց, ապա լավաշները զցեց մեր ուսերին: Երբ շեմից ներս էինք մտնում, դրված էր մի ափսե, որ կոտրվեց Ինտիզարի հարվածից, այդ նշան էր նրան, որ հարսի մուտքից հետո տան չարիքները կչքանան:

Հարսանքավորները հրավիրվեցին ներս, զբաղեցրին վաղօրոք պատրաստված տեղերը: Սկսվեց ճաշկերույթը, կեր ու խումը: Չափազանց բարձր էր հորս տրամադրությունը: Ի վերջո կատարվել էր նրա ցանկությունը, ամուսնացրել էր իր միակ որդուն և տուն բերել իր հավանությանն արժանացած լավագույն հարսին: Ողջ երեկոյի ընթացքում նրա երգն ու պարը չընդհատվեց, նույնիսկ, բաժակաճառերին երգելով էր պատասխանում: Իմ միսիան ավարտած համարելով, գրեթե թրև էի գա-

լիս, երբ մեկը մոտեցավ ու հրավիրեց ճաշկերույթի սենյակ: Իմ մուտքից հետո քավորն առաջարկեց խմել ծաղիկների կենացը: Ըստ սովորույթի, հարսը այդտեղ չէր լինում, նրա երաշխավորյալը հարսնաղբերն էր՝ Հարութը: Ես շնորհակալություն հայտնեցի մեր կենացի համար, իմ փոխարեն ու հորս և, վաղօրոք արած ցուցումի համաձայն, այն տվեցի հարսնեղբորը, որը հարսի կողմից շնորհակալություն հայտնեց: Հացկերույթի ավարտից հետո, կես գիշերին մոտ սկսվեց համընդհանուր պարը, որին մասնակցում էին ոչ միայն հրավիրյալները, այլև ամբողջ գյուղը: Պարահանդեսը կատարվեց Հարութ ամու թոնրատանը, որը վաղօրոք նախապատրաստված էր:

Պարելու հրավիրեցին նաև մեզ՝ նորապսակներիս, երբ սկսվեց կլոր պարը, թեև ես պարել էլ չգիտեի ու իմ անռիթմիկ շարժումներով խանգարում էի Ինտիզարին, որի ձեռքը բռնել էի, բայց ես ավելի շատ ամաչում էի, որ իմ բոյով Ինտիզարից մեկ գլուխ ցածր եմ: Հարկադրված, պատրվակ բռնելով գլխացավը, թողեցի Ինտիզարի ձեռքը, դուրս եկա պարատնից, գնացի տուն ու հագուստով ընկա տեղաշորի վրա ու քնեցի: Երբ նվագախմբի ձայնից արթնացա, արևն արդեն բավական բարձրացել էր: Նորեն սկսվեց կեր ու խումը, որը տևեց մինչև ճաշ: Հետո հարսանքավորները դուրս եկան: Սկսվեց մի ծես, որը կոչվում է հավթոռնք, որի ժամանակ ազաբբաշիները ու երիտասարդները մրցման մեջ են մտնում, թե ով ավելի հաջող (մի հարվածով) կկտրի հավի գլուխը: Ծեսի մասնակիցները կտրեցին շուրջ 150 հավի գլուխ: Որից հետո սկսվեց կոխը. ինչպես Թումանյանը կասեր. «Ահել ու ջահել իրարով անցան»: Հարութ ամին, որ յոթանասունն անց պատկառելի այր էր, կոխ բռնեց իր քրոջորդի սոգյութլեցի Մարուքի հետ: Այս արարողությունը, երգը, նվագը, պարը այնքան շարունակվեց, մինչև եփեցին

գլխատված բոլոր հավերը: Օրը մոտենում էր երեկոյին և հանդեսի բոլոր մասնակիցները ներս հրավիրվեցին, նորից սկսվեց ճաշկերույթը, քեֆն ու ուրախությունը: Կեսգիշերին նորից սկսվեց պարահանդես, նորեց ինձ ու Ինտիզարին մասնակից դարձրին հայկական ծանր պարերին: Թե որքան պարեցին՝ չգիտեմ, քանի որ քավորկինը մեզ հրավիրեց տուն հանգստանալու, որից հետո գնացինք քնելու: Հաջորդ առավոտյան դարձյալ ողջ հարսանքավորները մեր տանն էին: Այդ օրը խաշ մատուցվեց, որից հետո, մինչև երեկո շարունակվեց ուրախությունը, երգը, պարը, նվագը:

Շուրջ մեկ շաբաթ տևած հարսանյաց հանդեսը այդ երեկո ավարտվեց: Հյուրերը հաջորդ մեկ-երկու օրում վերադարձան իրենց տները: Սկսվեց առօրյա խաղաղ ապրելակերպը: Առաջին շաբաթները տանից գրեթե դուրս չէի գալիս: Ինտիզարը, կարծես, հաշտվել էր իր բախտի հետ: Բայց այստեղ էլ նրան, ինչպես և ինձ, խոցոտում էր Նվարդ մայրիկը: Ամենաչնչին բաների համար ինձ այնպես էր վիրավորում Ինտիզարի ներկայությամբ, որ քիչ էր մնում գետինը մտնեի: Հաճախ էր կրկնում, ափսոս, որ այս մարալ աղջիկը քեզ են տվել, դու նույնիսկ մի ճանճ չարժես և այլն: Նման դեպքերում Ինտիզարը քաշվում էր մի անկյուն ու ժամերով լաց լինում: Նվարդի անմարդկային վարվելաձևի մասին բազմիցս փորձում էի հայրիկիս տեղյակ պահել (հիմնականում նա լուտանքները թափում էր հորս բացակայության ժամանակ), սակայն վիճակը չշիկացնելու համար՝ Ինտիզարը չէր համաձայնում:

Մոտեցավ ձմեռը: Տագնապալի լուրեր էին լսվում ռազմաճակատներից, որից հորս տրամադրությունն ընկնում էր: Հաճախակի թերթերը վայր չէր գցում, ինչ որ վատ կանխազգացումներ ուներ: Հորս տրամադրության վրա բացասաբար էին

ազդում և Նվարդի բողոքները, և բամբասանքներն իմ հասցեին, որ ես ծխում եմ, տանից մթերքներ եմ գողանում, իրեն չեմ ենթարկվում և այլն: Խեղճ հայրս հանգիստ լսում էր նրա բողոքները, բայց վրաս չէր բարկանում, թեև, իրոք, ծխում էի և Նվարդի ջիգրու տանից որոշ բաներ (մեղր, քաղցրավենիքներ և այլն) գողանում էի: Միայն մի դիտողության էր անում՝ չծխել առողջական վիճակիցս ելնելով: Երեկոները իմ ու Ինտիզարի հետ բավական զբաղվում էր. հանձնարարում էր բարձրաձայն ընթերցել և ով-սխալվի՝ մյուսը նրան պետք է ապտակի, քանի որ Ինտիզարն ավելի լավ ու վարժ էր ընթերցում, նա էլ հայրիկի հրամանով երբեմն ապտակում էր ինձ:

Գարնանը՝ ապրիլի կեսերին, Ինտիզարին հորանց տուն դարձ տարան, որոշ ժամանակ անց նախապատրաստվեցինք հարսին բաժինք տանելու: Ըստ սովորության, բաժինք պետք է փեսան տանի ... Ելնելով անցյալի դառը փորձից, ինձ համար ահավոր դժվար էր նորից Մայմջուղ մտնելը, բայց դե օրենքին հակառակվել չէի կարող: Ձի նստեցի, բարիքներով ու նվերներով մի մեծ խուրջին վերցրի և ուղևորվեցի դեպի Մայմջուղ[7]: Հակառակ իմ մտորումների ու վախի, այս անգամ ինձ բավական լավ ընդունեցին, զոքանչս, որ մինչ այդ աչքով աչք չուներ ինձ տեսնելու, նույնիսկ, համբուրեց, ազգականները բարձր տրամադրությամբ ողջունեցին, հալ ու քեֆս, մերոնց առողջական վիճակի մասին բավական հարց ու փորձ արին: Ես էլ բաց արի իմ նվերների տոպրակը, հյուրասիրեցի և նվերներ բաժանեցի: Որոշ ժամանակ անց եկան և Ինտիզարի ընկերուհիները, ոմանք ուրախանալու, ոմանք էլ ծաղրելու նպատակով: Ինտիզարը արտաքուստ ուրախ էր և ընկերուհիներին ներկայացնում

---

[7] Մայմջուղը կամ Մահմադջուղը ներկայիս Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղն է:

էր մեր տունը, ապրելակերպի առավելությունները, օրը մի քանի անգամ սամովար գցելը, քաղաքակիրթ ձևով ապրելը, բազմատեսակ ուտեստների, ճաշակի մասին և այլն։ Ներկաներից ոմանք ապշած էին ու չէին պատկերացնում լսածների բովանդակությունը։

Հաջորդ օրը մենակ ու տխուր վերադարձա տուն։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԸ 1918–1920 ԹԹ.
Ժողովրդի ծանր վիճակը

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո ռազմաճակատներում իրադրությունը բավական վատթարացել էր: Իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսաստանն իր զորքերը կովկասյան ռազմաճակատից հետ կանչեց, Հայաստանը մնաց միայնակ թուրք ենիչերիների դեմ: Ռուսական զորքի նահանջից հետո թուրքերը վերագրավեցին Էրզրումը, Երզնկան, Մուշը, Բիթլիսը, Վանը, Բասենը, մոտեցան Սարիղամիշին, Կարսին, Արդահանին: Հայ փոքրաթիվ և անկազմակերպ զինվորները թուրքերին լուրջ դիմադրություն ցուցաբերելու կարողություն չունեին:

Գյուղում բավական թվով դասալիք զինվորներ կային: Ահ ու սարսափը տարածվել է ամենուր, մանավանդ, Արևմտյան Հայաստանից փախածների պատմածները թուրքերի դաժանությունների և գազանությունների մասին խիստ անհանգստություն էր պատճառում սրևելահայերին:

1918 թ. գարնանը թուրքական բանակը Ալեքսանդրապոլից ընդամենը 3 կմ վրա էր, Արփաչայը[8] դարձել էր հայ-թուրքական սահման: Արևմտյան Հայաստանից գաղթվածները, ինչպես նաև տեղացիներից շատերը, սկսեցին փախչել, հեռանալ դեպի Վրաստան, Ռուսաստան, ոմանք դեպի Երևան և այլն:

Մեր գյուղացիները, ահ ու դողով, մի կերպ սկսեցին գարնանային վար ու ցանքը, թեև հույս չունեին, թե այն կհնձեն: Հայրս ձմեռանոցից դուրս բերեց մեղուները՝ մոտ 150 ընտանիք: Նրա մոտ ևս հուսահատության նշաններ էին երևում, տխուր էր, մտախոհ, օր-օրի կարծես ծերանում էր, դեմքի կնճիռներն

[8] Խոսքը Ախուրյան գետի մասին է:

ավելանում էին: Հաճախ էր ինձ հետ նստում զրույցի, խրատներ էր տալիս: Մի ժամանակ, որ ծխելուս համար հանդիմանում էր, այժմ իր ձեռքով վառում ու ծխախոտն ինձ էր մատուցում:

Չանցած մեկ-երկու շաբաթ, թուրքական բանակն անցավ Արփաչայը, գրավեց Ալեքսանդրապոլը և Շիրակի ողջ հարթավայրը, Արթիկի, Աղինի, Ախուրյանի տարածքները լրիվ ընկան նրանց տիրապետության տակ: Ազգաբնակչության կարող ուժերը փախուստի դիմեցին, բայց մեծամասնությամբ մնացին իրենց բնակարաններում՝ նախ հնարավորություն չունենալու և, հետո էլ, հայրենի օջախում մահն ավելի գերադասելու նպատակով:

Թուրքական բանակը ճյուղավորվեց երկու մասի: Մի մասը՝ դեպի Փամբակ-Ղարաքիլիսա (Կիրովական), իսկ մյուսը՝ դեպի Սարդարապատ-Երևան:

Թուրքական տիրապետության տակ մնացած բնակիչներից ոմանք կարողացան իրենց կայքն ու հացահատիկը թաքցնել խորը հորերում, իսկ երիտասարդ կանանց ու աղջիկներին կամ մրում, սևացնում, պառավի տեսք էին տալիս, որպեսզի մի կերպ պահպանեին նրանց անաղարտությունը կամ էլ պահում էին մարագներում, քարայրներում, ձորերում և այլն:

Մեր գյուղում, թեև մշտական զորք չկար, թուրքական զորակայանը հարևան Սոգյութլիում էր, սակայն ամեն օր նրանց ներկայացուցիչներն այցելում էին գյուղ և զանազան (ուտելիք, խմելիք, գեղեցիկ աղջիկներ, հարսներ և այլն) պահանջներ առաջադրում:

Ծանր ապրումների մեջ էր հայրս. առաջարկում էր գյուղին Արագածի վրայով փախչել Ապարան, մյուս կողմից էլ չափազանց անհանգիստ էր հարսի՝ Ինտիզարի համար, քանի որ նրանց գյուղը լրիվ գրավված էր թուրքերի կողմից: Հարսի

գերությունը նրան հանգիստ չէր տալիս ու մի գիշեր Խալաթենց Սաքոյի հետ որոշում է մեկնել Մայմջուղ և, ինչ գնով էլ լինի, հանդիպել, տեսնել հարսին: Սարերով, գիշերը մի կերպ հասնում են գյուղ, սակայն մտնել չեն կարողանում, գյուղը լրիվ պաշարված է լինում թուրքերի կողմից: Որոշում են գնալ Արթիկ, միգուցե առավոտյան որևէ ելք լինի այնտեղից Մայմջուղ գալու: Արթիկում գնում են պապիս տուն: Դեռ նոր էին ողջագուրվել, երբ Արթիկ խուժեցին թուրքական ասկյարները: Գրեթե տուն չմնաց, այդ թվում և պապիս տունը, որ ասկյարները ներս չխուժեին, ուտելեղեն և գեղեցիկ աղջիկներ չպահանջեին: Լավ էր, որ քեռակնոջս վաղորոք թաքցրել էին, այնուամենայնիվ, հորս, Սաքոյին, պապիս և ընտանիքի մյուս անդամներին ջարդ ու փշուր անելուց և իրենց անհրաժեշտ ուտեստները վերցնելուց հետո, երբ վերադառնալու վրա էին, իմանում են, որ հայրս և Սաքոն տեղացի չեն, նրանց տանում ու ներկայացնում են փաշային: Փաշան, որի զորամասը հաջորդ օրը պետք է ուղղություն վերցներ դեպի Ադիամանի կողմերը, որոշում է պապիս և Սաքոյին օգտագործել որպես վալադ (տեղանքի գիտակ)՝ ճանապարհները ցույց տալու, մյուս կողմից էլ՝ Շիրակի գյուղերից թալանված անասունների հոտը հանձնարարել սրանց խնամքին՝ 3-4 զինվորի ուղեկցությամբ:

Հայրս Սաքոյի հետ անասունները քշելով հասնում են Մայմջուղ՝ մտածելով մի կերպ տեսնել հարսին և մի ճար գտնել նրան այդտեղից փախցնելու համար: Մտնելով գյուղ զինվորներին խնդրում է մի 5 րոպեով թույլատրել ծանոթի տուն մտնելու, մի քիչ ուտելեղեն բերելու նպատակով: Զինվորները թույլատրում են: Հասնելով խնամոնց տուն, որոնք լացով են դիմավորում իրեն, պատմելով այն անելանելի

վիճակի մասին, որի մեջ հայտնվել են: Մի երկու բոպեով տեսնում է հարսին, համբուրում, մի քանի խորհուրդներ տալիս թուրքերից պաշտպանվելու համար ու երկուստեք լացով իրարից բաժանվում: Ավաղ, այդ վերջին տեսությունը եղավ հորս համար:

Մի պահ հայրս որոշում է չվերադառնալ, մնալ հարսի մոտ, սակայն զգալով թուրքերի վրեժխնդրությունը, որ հետամուտ կլինեն ու ծանր հետևանք կունենա թե գյուղի և թե հարսի ճակատագրի վրա, մյուս կողմից էլ՝ սրի կքաշեն ընկերոջը՝ Սաքոյին: Ուստի, մի քիչ ուտելեղեն վերցրած, վերադառնում է անասունների մոտ:

Ուտելեղենի առյուծի բաժինը ասկյարները վերցնում ու նստում են հաց ուտելու, իսկ մնացածը տալիս են հորս ու Սաքոյին: Հորս վերադարձը որոշակի վստահություն է ներշնչում զինվորներին, որոնք ուտելով տարված, երբեմն տեսադաշտից բաց են թողնում տավարածներին:

Օգտվելով տեղանքի (քարաժայռեր, բարձրավանդակ ձորեր) ընձեռած հնարավորությունից՝ Սաքոյի հետ որոշում են՝ ինչ գնով էլ լինի, փախչել: Երբ ասկյարները կեր ու խումի մեջ էին, նրանք ծլկում են: Այդ պահին էլ վերևից՝ Սերվանջուղի կողմից, սկսվում է հրացանաձգություն: Թուրքերը մի պահ շփոթվում են, բայց շուտով զգաստանում և կազմակերպված սկսում հակահարվածը: Մերոնց հետևից նույնպես սկսում են կրակել, բայց նրանք բավական հեռանում են և քարքարուտների մեջ պատսպարվում:

Մինչև վերոհիշյալ դեպքի մանրամասնություններին անցնելը, մի քանի խոսքով նկարագրեմ երկրի տվյալ պահի իրավիճակը: Ռուսաց ցարին գահընկեց անելուց, այնուհետև **խորհրդային** կարգեր հաստատելուց, ռուսական զորքը թուր-

քական ճակատից հետ կանչելուց հետո, 1918 թ. Հայաստանը, Դաշնակցական կառավարության գլխավորությամբ, անկախություն հռչակեց: Նոր կառավարությունը չուներ օրինավոր բանակ, կադրային սպայության և այն կամավորական խմբերը, որոնք ծառայում էին ռուսական զորամասերում, ռուսական բանակի հետ քաշվելուց հետո չկարողացան միավորվել, մի բռունցք կազմել, ցաք ու ցրիվ կռվելով, մեծ մասամբ, առանց կռվի, առանց դիմադրության թողեցին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի մեծ մասը: Մեծ թիվ էին կազմում դասալիքները: Խմբապետներից ու մաուզերիստներից էլ շատերը, փոխանակ դասալիքներին հավաքագրելու, թուրքերին դիմադրելու, հարձակվում էին թիկունքի հայկական գյուղերի վրա, հափշտակում նրանց ունեցվածքը և հաճախ էլ առևանգում գեղեցիկ հարսներին ու աղջիկներին: Երկրի իշխանավորները սրանց սանձահարելու որևէ միջոց չէին ձեռնարկում: Այդ ավազակախմբերը, երբեմն ավելի վտանգավոր ու վայրագ էին, քան թուրքական ենիչերիները: Հայրս, որ բավական համակրում էր դաշնակներին, ժողովրդի այս ծանր վիճակը տեսնելուց հետո, խիստ հիսաթափվեց նրանցից, հեռացավ քաղաքական ասպարեզից, գերադասելով մնալ գյուղում և նրանց հետ էլ կնքել իր մահկանացուն:

Թուրքական զորքը այդ օրերին 2 մասի բաժանված շարժվում էր մեկը՝ դեպի Ղարաքիլիսայի, մյուսը՝ Երևանի ուղղությամբ, Հայաստանը վերջնականապես գրավելու մտադրությամբ: Դեպի Երևան արշավող թուրքական զորամասն Արաքս կայարանի մոտ հանդիպում է Իգդիրից անկանոն ձևով նահանջող հայկական մի գնդի, որտեղ եղել են բավական թվով ռուս զինվորներ և սպաներ: Հայկական գունդը միավորվում է ու սկսում դիմադրել: Թուրքերը, թեև դժվարությամբ, բայց առաջ

են շարժվում՝ հասնելով Սարդարապատի մատույցներին: Այստեղ է, որ աշխարհազորը հոգևորականների հետ միասին օգնության են հասնում և հակահարված տալիս թուրքերին: Երբ թուրքերը ջախջախված նահանջում են, նրանց օգնության է շտապում Թալինում եղած թուրքական մի գումարտակ, որ նույնպես պարտվում է:

Հայկական գնդում այդ կռիվներին մասնակցում է նաև մեր Սարգիսը, որ մինչ այդ ռուս թագավորի կողմից 3 անգամ պարգևատրվել էր խաչով: Այս ճակատամարտում Սարգիսը ծանր վիրավորվում է: Արկի բեկորը ջարդում է զանգռսկրը, մոտ 5 սմ մտնում ուղեղի մեջ, ջարդվում է աջ թևի թիակը և ազդռսկրը, մարմնի տարբեր տեղերից 3-4 վերք է ստանում: Երեկոյան, դիակները հավաքելիս, զգում են, որ Սարգիսը կենդանի է: Նրան մի կերպ տեղափոխում են Երևան, որտեղ բուժվում է մինչև 1925 թ.: Թեև մի կերպ կենդանի է մնում, բայց զրկվում է խոսելու ունակությունից և մի կողմն էլ թուլանում է:

Թուրքական հրամանատարությունը, լսելով Սարդարապատի պարտության մասին, Ղարաքիլիսայի և Ապարանի իր զորամասերից Արագածի լանջերով օգնություն է ուղարկում դեպի Սարդարապատ:

Այն օրը, երբ հայրս Սարգսի հետ եղել էր Արթիկում և հետո դարձել նրանց տավարածը, հենց դա էլ եղել էր օգնության շտապող զորամասը:

Այդ ժամանակ կազմակերպվում է մի հայկական կամավորական պարտիզան ջոկատ՝ մոտ 200 ձիավորներով, որոնք, լսելով թուրքերին օգնության եկող զորքերի մասին, շարժվում են դեպի Թալինի գյուղերը՝ դասալիքներին ու կամավորական ջոկատներին հավաքագրելով, թշնամու առաջը կտրելու նկատառումով: Թալինից այս պարտիզանական

խումբը շարժվում է Մաստարա, մի քանի ձիավոր՝ Ադյաման, որոնք նույնպես բավական թվով զինվորներ են հավաքագրում ու շարժվում են դեպի Արթիկ: Մեր գյուղացի կամավորնեբին միացա նաև ես: Գյուղացիները հագնված էին խայտաբղետ և կրում էին տարբեր երկրների արտադրության զենքեր, ով ինչ ճարել էր: Զորակայանների թիվը (եթե կարելի է այդպես անվանել) հասնում էր մոտ երկու հազարի:

Գնալիս ես ներքուստ ուրախություն էի ապրում, որ շուտով կմտնենք Մայմջուղ և Ինտիզարին կտեսնեմ, մտածում էի, որ գուցե այնտեղ էլ մնամ: Երբ մեր անկազմակերպ զորախումբը սարի ճանապարհով հասավ Սերվանջուղ, հենց այդ պահին էլ Սարվանջուղի բարձունքներին էր հասել թուրքական զորաբանակը, որոնք գերել էին հորս ու Սաքոյին և շարժվում էին դեպի Սոգյութլի, Ադյաման, Մաստարա, Թալին և այլն: Մերոնք, որ չունեին ընդհանուր հրամանատարություն, վերին աստիճանի անկազմակերպ, ցաքուցրիվ էին, թուրքական զորքեր տեսնելով սկսեցին անկանոն կրակոցները, շատերը ուղղակի օդի մեջ: Մեզ թվում էր, որ մեր հաղթանակն ապահովված է: Մի քանի բոպեից լսվեցին թշնամու հրանոթների համազարկերը, որոնք գնալով ավելի սաստկացան: Մենք հանկարծակիի եկանք, խուճապի մատնվեցինք և, արկերի բեկորների տարափի տակ, գլուխներս վեր բարձրացնել չէինք կարողանում: Մեզանից շատերը բանակում չէին ծառայել, սպատերազմ չէին տեսել ու, բացի այդ, մեր ունեցած փամփուշտների պաշարն էլ գրեթե սպառվել էր: Սպասում էինք, թե ինչ որոշում են կայացնելու պարտիզանները: Սակայն, ոչ մի լուր: Բավական ծանր վիճակի մեջ եմ նաև ես, լեզուս բերանումս չդրացել է, աչքերիս առաջ մթնել, չկա մեկը, որ գոնե մի օգնություն կամ խորհուրդ տար: Հիշեցի, որ այստեղ է նաև մեր Պետրոսը,

գուցե նրանից օգնություն հայցեմ, սակայն նա էլ ինձ նման քարերի մեջ մի կերպ կուչ է եկել և իրար չի գալիս ... Այս ծանր վիճակում էի, երբ լուր տարածվեց, որ պարտիզան խմբապետերը ձիեր նստած փախչում են, այս տեսնելով համատարած խուճապ սկսվեց և ով ինչպես, կամ որտեղ կարող էր, սկսեց փախչել: Թե ինչպե՞ս, ի՞նչ հրաշքով փրկվեցի, չեմ հիշում. Երեկոյան կողմ հասա գյուղ, գյուղում ոչ ոք չկար, բոլորը լքել էին ու հեռացել:

Ի՞նչ հետևանք ունեցավ այս ճակատամարտը: Մեր անմիտ, անկազմակերպ, բաշիբոզուկ խմբապետ պարտիզան կոչեցյալները, առանց հաշվի առնելու ուժերի հարաբերակցությունը, առանց լուրջ նախապատրաստությունների նախ մեր խմբում եղած շատ անմեղների զոհեցին, բայց այդ թշնամին ավելի կատաղեց, գազազեց և սկսեց հոշոտել գյուղերի և ավանների խաղաղ բնակչությանը: Բացարձակապես հողին էին հավասարեցնում ավանները, թալանում, արական սեռին ոչնչացնում, կանանց ու աղջիկներին բռնաբարում:

Ճակատամարտից փախչելուց հետո ինձանից մի ժամ անց եկավ նաև Պետրոսը: Միասին դուրս եկանք գյուղամեջ, որպեսզի իմանանք թե ուր են փախել գյուղացիները, մերոնք, որ որուշենք մեր անելիքը... Ոչինչ հաստատ չիմանալով ու չվճռելով, պառկեցի հանգստանալու, սակայն քնել չեմ կարողանում, զանազան մտքեր տանջում են ինձ, հորս համարում եմ կորած, Ինտիզարին գտնելու հույսեր չունեմ, մտածում եմ, թե հնարավոր կլինի՞, արդյոք, Նվարդ մայրիկի հետ այս պայմաններում ապրել ու դառնագին ողբում եմ վիճակս: Գիշերից բավական անցել էր, երևի օրվա հոգնածությունն իրենն արել էր, փոքր ինչ նիրհել էի, երբ մեկը ջերմագին համբույրներ էր դրոշմում երեսներիս: Սկզբում չհասկացա, թե ինչ է կատարվում, սակայն երբ

զգաստացա ու տեսա սուրբ հորս, ուրախության արցունքները հոսեցին աչքերիցս ու երկար ժամանակ փաթաթված նրան լուռ արտասվում էի:

Հայրս պատմեց իր գլխին եկածը, իր փախուստը և այն համազարկերի մասին, որի ականատեսն ու վկան էի նաև ես: Հայրս գյուղ էր հասել այն պահին, երբ պարտիզան հեծյալները գյուղ էին հասել, մի քանի ոչխար մորթել ու քեֆ էին անում: Հայրս հարազատներին ուղեկցել էր մինչև Ղրմզլու, Եղվարդ ուղարկելու մտադրությամբ, իսկ ինքը վերադարձել էր ինձ վերցնելու նպատակով: Առավոտյան լուր եկավ, որ թուրքերը մոտենում են գյուղին, մենք շտապ կարգով հեծնեցինք մեր միակ ձին և մինչև հասանք Դարի գլուխ, թուրքերն արդեն մտան գյուղ: Ես հեռվից նկատում էի, թե ինչպես են գնդակոծում մեր մեղվաընտանիքները:

Հեծյալ պարտիզան խմբապետերը, գիշերը գյուղում խրախճանքն ավարտելուց հետո, առավոտյան վաղ հեռացան՝ իրենց հետ տանելով մի գեղեցիկ հարս ու մի աղջիկ, որոնք փախստականներ էին ու պատսպարվել էին մեր գյուղում: Երբ հասանք Ղրմզլու, համատարած խուճապը համակել էր բոլորին: Բոլորի հետ մենք էլ շարժվեցինք դեպի Թալին: Իբր այնտեղ հայկական զորամասեր կան, որոնք կկասեցնեն թշնամու առաջընթացը և մեզ հնարավորություն կտան փախուստը շարունակելու:

Գնում էին, ով ինչպես կարող էր, շատերը զցում էին իրենց ապրուստի վերջին միջոցը, մի մասը սայլով, մյուսները՝ ոտքով, երեխաներին շալակած, ոմանք իրենց ինչքը անասունների վրա բարձած, տկարներին ու հիվանդներին օգնող չկար, ամենն աշխատում էր իր գլուխն ազատել: Գոռգոռոը, լաց ու կոծը, կռիվն ու աղմուկը երկինք էր

բաղձրանում, երբեմն զորեղներն ապօրինաբար խլում էին դիմացինի ունեցվածքը, անասունը, ոչխարը և այլն:

Չնայած Ղրմզլուից Թալին 1–2 ժամվա ճանապարհ է, բայց, ճանապարհի անբարեկարգ լինելու պատճառով, առավոտից մինչև երեկո հազիվ հասանք Թալին: Սայլերը հաճախ շուռ էին գալիս, բավական ժամանակ էր պահանջում մինչև սայլերը կարգի էին գցվում: Ժողովուրդն իր այս ծանր կացության մեղքը գցում էր պարտիզան խմբապետի վրա, իբր, եթե նրանք չգազազեցնեին թուրքերին, նրանք այդ աստիճանի չէին գազազի ու իրենք լավով, վատով կմնային իրենց օջախներում և, թեկուզ մեռնեին էլ, ավելի գերադասելի էր, քան այս անհուսալի վիճակը:

Երեկոյան մոտ հասանք Թալին: Այդտեղ ոչ մի ազատ տուն կամ շինություն չկար, ամենուր լցված էր Մաստարայից, Ձիթհանքովից[9], Զարինջայից[10], Սոգյութլից և այլ վայրերից փախած գաղթականներով: Բավական թվով զինված տղամարդիկ կային: Դժբախտաբար չկար մեկը, որ կազմակերպեր, ոտքի հաներ, պաշտպանական զումարտակներ ստեղծեր: Եթե բոլորը միավորվեին ու միասին հանդես գային, երևի գերազանցեին թուրքական զորքին: Թալինում, ինչպես մեզ ասել էին, հայկական զորամասեր չկային: Կարճ ժամանակ անց, այստեղ հայտնվեցին պարտիզան հրոսակները, որոնք ժողովրդին խուճապի մատնեցին, հայտարարելով, որ թշնամին մոտեցել է Մաստարային և որ անհրաժեշտ է այստեղից շուտափույթ հեռանալ: Անմիջապես սկսվեց իրարանցումը: Ինչպես բոլորը,

---

[9] Ձիթհանքովը ներկայիս Շիրակի մարզի համանուն գյուղն է: Գտնվում է Արտագած լեռան արևմտյան ստորոտին:

[10] Զարինջան ներկայիս Արագածոտնի մարզի համանուն գյուղն է:

այդպես էլ մենք, շարժվեցինք դեպի Ղարաբուրուն[11]: Լուսաբացին մեր քոչերը հասել էին Ղարաբուրունի հարթավայրը: Վտանգից որոշ չափով ապահովված զգալով, արձակեցին եզներն արածելու, մի քիչ հանգստանալու և մի փոքր էլ նախաճաշելու: Մտերիմներն ու հարազատները նախաճաշից հետո սկսեցին մտածել իրենց ներկայի և հետագա անելիքների մասին:

Այդ պահին էլ երևացին թուրքական զորաշարքերը՝ Ն. Թալինի բարձունքներից իջնելիս: Հանգիստը ընդհատվեց, իրարով անցան, սկսվեց արագությամբ պատրաստվել փախուստի: Ես գնում էի հայրիկիս հետ ոտքով, ձիուն նստած էր Նվարդ մայրիկը, կրծքին ծծկեր աղջիկը, մեջքից կապած Վազգեն տղան: Կեսգիշերն անց հասանք Սարդարապատ: Երեկոյան կողմ եկան նաև օրվա ընթացքում հետ մնացածները, որոնք սարսափելի լուրեր հաղորդեցին:

Սերվանջուղի տակ՝ մեր ձախողված ճակատամարտից հետո, ինչպես վերևում ասվեց, թուքերը գազազել էին և տակն ու վրա արել ամեն ինչ: Երբ մեր խառնիխուռն ջոկատները փախուստի մատնվեցին, թուրքական զորքերը շրջապատում են Սերվանջուղը, իսկ նրանց վերջապահ զինվորները՝ Մայմջուղը: Անխնայաբար կոտորում են բոլորին, ովքեր պատսպարվելու հնարավորություն չեն ունեցել՝ չխնայելով ո՛չ ծերերին, ո՛չ էլ երեխաներին, իսկ կանանց բռնաբարել ու տանջամահ էին արել: Այս երկու գյուղերի կոտորածից հետո նրանց զորամասը բաժանվում է երկու մասի, մի խումբը շարժվում է դեպի մեր գյուղը, մյուսը՝ Մոլլագյոկչայով դեպի Ձիթհանքով, Մաստարա, Թալին և այլն: Մեր գյուղ մեկնողները

---

[11] Ղարաբուրունը (նաև՝ Ղարաբուռուն) այժմ ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտ բնակավայրն է:

տեսնելով, որ գյուղը դատարկվել է, ուղղություն են վերցնում դեպի Ղրմզլու, Մաստարա: Մաստարայից քչերն էին փախել, բայց շրջակա գյուղերից Մազարջուղ, Փիթիկան, Մուսլուղ, Սոգյութլի և այլն, մեծ թվով գաղթականներ էին հավաքվել այդտեղ: Այստեղ, ինչպես նաև Ձիթհանքով գյուղերում ենիչերիների կատաղությունը հասնում է իր գագաթնակետին: Չհագենալով կողոպուտով, սրով ու գնդակով կոտորելուց, որոշում են գերյալներին կենդանի-կենդանի այրել: Մարդկանց մեծ խմբերով լցնում են մարագները, եկեղեցիները, դռներն ու լուսամուտները փակում և հրդեհում շինությունները: Այրվող մարդկանց ճիչերը, գոռուն-գոչյունը, լացն ու աղերսանքը երկինք է բարձրանում, բայց ենիչերներն անդրդվելի են, նույնիսկ դիվային հրճվանք ու բավականության են ստանում:

Թալինից մեր հեռանալուց հետո փախստականների որոշ խմբեր հետ էին մնացել, ընկնելով մոտեցող թուրքերի ձեռքը, անասելի տանջանքների էին ենթարկվել: Իսկ գեղեցիկ հարս ու աղջիկներին հրապարակայնորեն բռնաբարել էին, այն էլ խմբերով:

Մեր գյուղացի Հարութենց Գրիգորի հարսին, Մուքոյի կնոջը հրապարակային բռնաբարության ժամանակ նրա եղբայրը, սայլի վրա իր ունեցած հրացանով, փոխանակ բռնաբարողներին ուղղելու, ինքնասպան է լինում: Այս առիթը կատաղեցնում է ասկյարներին և դաժանորեն ջարդ ու փշուր են անում ում պատահի: Կոտորվածների մեծ մասը, զինված է լինում, բայց ոչ մեկը ինքնապաշտպանության չի դիմում և ոչխարների նման մորթվում են:

Ամենայն ազնվությամբ հավատացնում եմ, որ գրված դեպքերը չափազանցված չեն, իմ տեսած և ականատեսների պատմածներից է վերցված: Հակառակը, քանի որ գրի եմ

առնում շուրջ 50 տարի անց, շատ դեպքերի մասին էլ, նույնիսկ, մոռացել եմ:

Մոտավորապես հունիսի կեսերին դուրս եկանք Սարդարապատից և ուղղություն վերցրինք դեպի Երևան: Առաջին օրը հասանք Այոր լիճ, իսկ հաջորդ օրը՝ Սամադար[12]: Այստեղ թաղեցինք Նվարդ մայրիկի վեց ամսեկան աղջկան, որը մահացել էր ճանապարհին: Որից հետո ուղղություն վերցրինք դեպի Աշտարակ՝ այնտեղից Եղվարդ գնալու նպատակով: Հայրս, մեզ թողնելով ճանապարհին, ինքը ձիով մեկնեց Եղվարդ՝ մեր ազգականների մոտ, մեզ համար հարմարավետ բնակարան ճարելու ակնկալությամբ: Դժբախտաբար, ճանապարհին ինչ-որ մի ավազակ խմբապետ, հորիցս խլում է ձին, ու խեղճ հայրս ստիպված ոտքով հասնում է Եղվարդ: Մեր ազգականները սիրով ընդունում են հորս և ստիպում շուտափույթ ընտանիքն իրենց մոտ փոխադրելու: Հաջորդ օրը Եղվարդում էինք: Մեր ընտանիքը հյուրընկալեց Գևո բիձան, Սուքիաս ամու ընտանիքը՝ Ասատուր բիձան, Հարութ ամունը՝ Հունան բիձան (3-ը եղբայրներ են): Մեր ընտանիքը՝ երկու ձեռք անկողնուց բացի ուրիշ ոչինչ չուներ: Ամբողջապես ապրում էինք Գևո բիձու հաշվին: Իսկ Հարութ ու Սուքիաս եղբայրներն ունեին բավականին անասուններ (կովեր, ոչխարներ), հացամթերքներ (գյուղից բերել էին 2 սայլաբեռ) և այլն:

Անցավ մոտ երեք ամիս, թուրքերը մոտենալով էջմիածնին, գրավեցին Կոշ գյուղն և կանգ առան Արագած լեռան հյուսիսային մասում, Ապարանի տարածքում, որտեղ թուրքերին չհաջողվեց գրավել: Այնտեղ մեծ թվով գաղթականներ էին հավաքվել ամբողջ Շիրակի հարթավայրից: Սովը համընդհանուր

---

[12] Սամադարը ներկայիս Արմավիրի մարզի Գեղակերտ գյուղն է՝ Էջմիածնից ոչ հեռու:

բնույթ էր ստացել, օրական սովամահ էին լինում տասնյակ, հարյուրավոր մարդիկ: Սկսվել էր նաև համաճարակ, հիվանդություն տարածվել: Շիրակից գաղթած ազգաբնակչության մեծամասնությունը ձգտում էր վերադառնալ տուն, թեկուզ, թուրքին հպատակ դառնալու կամ իր օջախում մեռնելու պայմանով: Լուրեր էին տարածվել, որ Արագածի վրայով հնարավոր է անցնել դեպի Շիրակ, որ այդ ժամանակ իբր թուքերը հայերին թույլատրում են վերադառնալ իրենց տները, իհարկե՝ փրկագին (կաշառք) վերցնելուց հետո: Գնացողներ եղան, բայց ամեն ոք այդ հնարավորությունը չուներ ու, բացի այդ էլ, որքանով կարելի էր վստահել թուրքերի բարեհոգությանը:

Այդ օրերին (օգոստոսի կեսերին) Եղվարդում մեզ այցի եկավ Ինտիզարի եղբայր Հարութը: Մի օր մնալուց հետո հաջորդ օրը հայտնեց, որ Արագածի վրայով գաղտնի ճանապարհով վերադառնալու է գյուղ: Հայրս համաձայնեց, որ ես էլ Հարութին ընկերակցեմ, սակայն մեր ազգականները թույլ չտվին: Երբ Հարութը մեկնում էր, հայրս խնդրեց, որ եթե մինչև այժմ Ինտիզարը ողջ է և անփորձանք, լավ նայեն մինչև տեսնենք, թե ինչով է վերջանալու այս աշխարհակործան պատերազմը:

Եղվարդում պատսպարված մեր համագյուղացիներից շատերը որոշում են փոխադրվել Ապարան, որտեղից Արագածի վրայով 3-4 կիլոմետր կտրելով կհասնեն գյուղ: Նրանց աճապարելու հիմնական պատճառը հասունացած բերքի հավաքելն էր: Մեր Հարութ ամին, մերոնցից որևէ մեկին ոչինչ չասելով, մի գիշեր իր սայլը թողնում է, ունեցածը բարձում եզների վրա և ուղղություն վերցնում դեպի Ապարան: Մեկ-երկու օրից նրան հաջողվում է հասնել մեր հարևան Սոգյութլի գյուղը:

Մի քանի օր հետո մեր համագյուղացիները, որոնց

թվում և մենք, թողեցինք Եղվարդը և ուղղություն վերցրինք դեպի Ապարան: Մեր դուրս եկած օրը լուրեր էին պտտվում, որ իբր թուրքական զորքը հետ է քաշվելու: Հասնելով Հաջիխալու՝ տեղավորվեցինք կալերում, պատերի տակ, այն էլ բավական դժվարությամբ, քանի որ մինչև մեր գնալը գյուղում կուտակվել էին մեծ թվով գաղթականներ տարբեր վայրերից: Թուրքերի հետ քաշվելը ստվեց: Շատերը հիսաթափվեցին, բացառությամբ որոշ ունևորների, որոնք թուրք ասկյարներին կաշառելով՝ անցնելու թույլտվություն էին ստանում, մյուսները, ովքեր այդ հնարավորությունը չունեին, անկարող էին տեղից շարժվելու:

Հայրս, որ իր սիրասուն հարսին մտքից երբեք չէր հանում, որոշում է օգտվել այդ հնարավորությունից, իր գոյության վերջին միջոցը, մեկ ոսկե 10 ռուբլիանոց ու մատանի հանձնեց ինձ, թուրքերից թույլատվություն ստանալու Մայմջուղ՝ Ինտիզարի մոտ մեկնելու հնարավորություն ստանալու նպատակով: Մեկնող ցանկացողների հավաքատեղին Աղուլա[13] գյուղն էր: Վերջին մնաս բարովն ասելով, երկուստեք արտասվելով, բաժանվեցի հորից: Երեկոյան, ինձ նման բախտակիցներով, սպասում ենք, որ սահմանապահները թույլատրություն տան անցնելու: Այդ պահին էլ լսվեց ուժեղ հրաձգություն, ու մեր խումբը խելակորույս ով, որտեղ կարող էր, ճողոպրեց: Որոշ ժամանակ անց կրակը դադարեց, բայց շրջապատում այլևս ոչ ոք չէր երևում, ամենը մի տեղ գլուխը պահ էր տվել: Ես էլ մի գարու բարդոցի տակ պատսպարվեցի, մինչև լույսը բացվեց:

Առավոտյան վաղ ուղղվեցի դեպի Հաջիղալու: Հայրս ողջ գիշեր լացով էր անցկացրել: Ինձ տեսնելով անսահման ուրախություն ապրեց, երկար ժամանակ փարվել էր ինձ,

[13] Աղուլան այժմյան Արագածոտնի մարզի Բերքառատ գյուղն է:

կարծես տարիներով չէր տեսել ու փառք էր տալիս աստծուն, որ կորստից փրկեց իր միակ որդուն, ու ինքը նորեն արժանացավ նրա տեսությանը:

Սահմանն անցնելու մեր անհաջող փորձից հետո, մի չորս-հինգ օր անց, մեր ու հարևան գյուղերից հավաքված փախստականները համոզվեցին, որ թուրքերը հետ չեն քաշվել ու անհրաժեշտ է փախչել ու այլ ուղիներ որոնել, որոնցից ամենահավանականը Ապարան վերադառնալն է ու այնտեղից Արագածի վրայով մի կերպ անցում կատարելը: Բոլորն այդ անցման մանրամասներն էին քննարկում: Թե ի՞նչ էր մտածում, կամ ի՞նչ ծրագրեր էր մտածում, կամ ի՞նչ ծրագրեր ուներ հայրս, միայն աստծուն է հայտնի, վիճակներս օր-օրի վատթարանում էր, ուրիշների նման չունեինք անասուններ, հորս միակ ձին խլեցին, չունեինք մթերք, հացահատիկ, դրամ: Չունեինք որևէ օգնող ձեռք: Հարութ ամին արդեն գնացել էր, որդին՝ Տիգրանը, մնացել էր Եղվարդում ու զբաղվում էր վարուսվիրությամբ: Սուքիաս ամին էլ մեզ հետ էր ու բավական ապրուստի միջոցներ ունեին, բայց վաղվա օրվա անհուսալի վիճակը նրան և բոլոր ունևորներին ստիպում էին մտածել միայն իրենց ընտանիքի մասին, և ոչ մի մերձավոր աչքներին չէր գալիս: Ժամանակներն այնպիսին էին, որ եղբայրը՝ եղբորը, քրոջը, ծնողը՝ զավակին, զավակը՝ ծնողի մասին մտածել չէր կարող: Փախուստի ճանապարհին հաճախ մայրերը փոքր երեխաներին չկարողանալով տանել, զցում էին ու հեռանում: Այդպես են վարվել նաև Ինտիզարի եղբոր որդու՝ Մերուժանի հետ, որին հրաշքով փրկել են քոչերից հետ մնացած հորաքույրը և իմ քույր Արփենիկը: Ապարան գնալու և այնուհետև ճանապարհը շարունակելու համար մեզ անհրաժեշտ էր առնվազն մեկ-երկու շաբաթվա պաշար

ունենալ: Այդ նպատակով, նեղ օրվան պահած մեկ ոսկին ու մատանին փոխանակեցինք երեք փութ գարու հետ: Այդ գարին հայրս տարավ մոտակա գյուղի ջրաղացը՝ աղալու: Մի օր անց, երբ վերադարձավ, նրա տրամադրությանը խիստ ընկած էր, բավական ընկճված: Պատճառը ջրաղացում տեսած երազն էր, որի բովանդակությունը այսպիսին էր. իբր հայրս համագյուղացիների հետ նստած է լինում մի ինչ-որ երկաթուղային կայարանում: Երբ գնացքը մոտենում է կառամատույցին, բոլորը, այդ թվում և մենք, բարձրանում էինք վագոններ, իսկ ինքը՝ փոքրիկ եղբորս՝ Վազգենի հետ նստում է ամենավերջին վագոնը: Երբ գնացքը շարժվում է, վերջին վագոնը կտրվում է էշելոնից և մնում տեղում, ուստի, եզրակացնում է, մուրազս՝ հայրենի օջախ վերադառնալ, ինձ չի հաջողվի...: Անբախտ մա՛րդ, ինչպես կանխագուշակել էր, այդպես էլ եղավ...:

Մի երկու օրից հետո պատրաստվեցինք համագյուղացիների հետ վերադառնալ Ապարան: Մեր ունեցած մեկ-երկու ձեռք անկողինը և որոշ իրեր դրեցինք Տիտոյի Թաթոյի սայլին, որտեղ տեղավորվեց նաև Նվարդ մայրիկը: Հաջորդ օրը հասանք Ղազնաֆար-Թաքարլու[14] գյուղերի սահմանին, որտեղից հարմար է բարձրանալ Արագած, իսկ այնտեղից իջնել մեր գրուղը: Տեղում կանգ առանք, անասուններին հանգիստ տալու և որոշ նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար: Այստեղ Նվարդ մայրիկը հիվանդ ձևացավ, ասելով, որ ինքն ոտքով սար բարձրանալ ու թուրքերի ձեռքն ընկնել չի կամենում: Նրա տրտնջոցը հայրս հալած յուղի տեղ ընդունեց, որոշեցին ինձ ու քրոջս՝ Արփենիկին ուղարկել, իսկ իրենք մնան

---

[14] Ղազնաֆարը ներկայիս Արագածոտնի մարզի Արագած գյուղն է, իսկ Թաքարլուն՝ Ծաղկաշենը:

տեղում, հետո, մայրիկի լավանալուց հետո, մի բան կմտածեն: Գյուղացիների հետ ճանապարհվեցիք նաև մենք՝ երկու որբերս: Հասնելով Ղազնաֆար գյուղին, հանկարծ հիշեցի, որ հորս դրամապանակը, որի մեջ կա 3 ոսկյա մատանի, մեկ ոսկե դրամ և մոտ 20 հատ 25-դրամանոց փող, մնացել է ինձ մոտ ու, եթե չվերադարձնեմ, վաղվանից նրանք ապրուստի միջոց չեն ունենա: Որոշեցի անմիջապես վերադառնալ, քանի դեռ շատ չենք հեռացել (մոտ երկու կիլոմետր): Դրամը տամ ու վազքով հետ գամ, քոչերին հասնեմ:

Երբ վերադարձա, ի՜նչ տեսնեմ. մեկ ժամ առաջ հիվանդ ձևացող մայրիկը առողջացել ու վեր է կացել, փոխարենը պառկած է հայրս: Բավական հեռվից Նվարդը, ինձ տեսնելով, զարմացած մոտեցավ, հարցրեց վերադարձիս նպատակը: Երբ պատմեցի, թե ինչու եմ եկել, նա զոհ մնաց, ասելով, որ արագացնեմ դրամապանակի վերադարձը և արագ վերադառնամ, քանի դեռ քոչերը չեն հեռացել: Արյունս գլխովս տվեց ու, եթե չլիներ իմ սերը հորս հանդեպ, երևի գլուխը ջախջախեի ... Ի՞նչ արած, առակն ասում է «անճարն է կերել բանջար»...

Լռելյայն մոտեցա հորս անկողնուն, նա անշարժ պառկած էր, խոնարհվեցի, համբուրելիս աչքերը բաց արեց, ինձ տեսնելով փարվեց ու երկար ժամանակ բաց չէր թողնում: Նվարդը մի քանի անգամ ներս ու դուրս արեց, հիշեցրեց, որ արագացնեմ վերադարձս, քանի դեռ քոչերը շատ չեն հեռացել, հակառակ դեպքում՝ կդժվարանամ: Նրա հիշողությունները մնացին անպատասխան: Վերջում հայրս ասաց, որ մնամ իր մոտ և ոչ մի տեղ չգնամ: Մեր ունեցած աղքատիկ պաշարով շուրջ չորս օր մնացինք Ղազնաֆարի դաշտում, հնձված արտերի մեջ: Մոտեցել էր աշնան վերջը, գյուղացիները, նույնիսկ, դուրս չեն

գալիս գյուղատնտեսական աշխատանքների: Հայրս պառկած էր բաց երկնքի տակ, բացի ջրից ոչինչ չէր ուզում, չէր ուտում, բարձր ջերմության մեջ զառանցում էր: Ես ինձ կորցրել էի, չկար մի օգնող ձեռք, մի խորհրդատու, ես անելիքս չէի իմանում... Հինգերորդ օրը հայրս կաթ ուզեց: Ղազնաֆար գյուղը մտնել հնարավոր չէր, քանի որ մեր գյուղացիներից մեկը տեղացիներից մեկին սպանել էր, ու հիմա բոլոր ադիամանցիները սրանց համար դիտվում էին իբրև թշնամիներ: Որոշեցի գնալ Թաքարլու, պատահած առաջին տանից մի բաժակ կաթ խնդրեցի՝ չմերժեցին, մեկի փոխարեն երկուսը տվին: Տեսնելով բարի կնոջ մարդկային վերաբերմունքը՝ պատմեցի մեր, հատկապես, հորս, ծանր վիճակը ու խնդրեցի հնարավորության սահմաններում մի անկյուն տրամադրել հիվանդ հորս փոխադրելու համար: Գթասիրտ պառավը մի պահ վարանեց, ապա ցուցադրելով իրենց սրահը, առաջարկեց տեղափոխվել այդտեղ, մինչև մի ելք կճարվի: Վերադառնալով հայրիկիս մոտ՝ ասացի փոխադրվելու մասին, համաձայնվեց, իսկույն գործի անցանք: Սկզբում տարա Նվարդին երեխայի հետ, հետո վերադարձա, որոշ իրեր և տեղաշորը տեղափոխեցի, իսկ երրորդ անգամ հորս հետ մեծ դժվարությամբ (շատ էր թուլացել և ուժասպառվել) հասանք վերոհիշյալ տան սրահը և մի կերպ պատսպարվեցինք: Հայրիկիս վիճակը օր օրի ծանրանում էր: Չկար դեղ ու դարման, ծանոթ-բարեկամ, որ գոնե հորս որոշ չափով օգներ կամ զբաղեցներ: Դրա համար էլ ես ստիպված էի ամբողջ օրը նստել հայրիկի անկողնու մոտ, որպեսզի նրան ջուր տայի, բացվելիս ծածկեի, ճանճերը քշեի և այլն:

Ապրում էինք հորս դրամապանակում մնացած փողերով: Մեկ բաժակ կաթը մեկ ռուբլի արժեր: Լավ էր, որ մեր

գաթի այլուրը դեռ չէր վերջացել, հայրիկի համար օրական երկու ռուբ. մի լավաշ էի գնում: Երկու-երեք օրը մեկ Աշտարակից այստեղ բերած վաճառքի խաղողից, մեկական ֆոնդ գնում էի, այն էլ հայրս գրեթե չէր ուտում:

Մեր Թաքարլու փոխադրված 4-րդ թե 5-րդ օրը մեզ մոտ այցի եկավ հայրիկի հորաքրոջ տղան՝ սոցյուելեցի Մարալովը: Մի կես ժամի չափ մնալով՝ մեծ խոստումներ տվեց, որ իրենք Ղազնաֆար են մեկնում և այնտեղից հորս համար անպայման մթերքներ (բրինձ, կաթ, մածուն, կարագ և այլ) կբերի: Հայրիկը նրան հավատ ընծայելով՝ ինձանից պահանջեց դրամապանակը, որ գոնե թված մթերքների մի մասի արժեքը վաղօրոք վճարի: Մարալովն իրեն վիրավորված ցուցադրեց, վերցրեց դրամապանակում եղած իմ պսակի ոսկյա մատանին, դրեց իր մատին՝ ասելով, որ ամեն անգամ նայելով այս մատանուն խոստումս չեմ մոռանա ու բերելուց հետո մատանին կվերադարձնեմ:

Մարալովի հայտնվելն ու նրա խոստումները հայրիկիս որոշ հույս ներշնչեցին, կարծես, նրա վիճակը թեթևացավ: Զուր հույսեր: Ըստ նրա խոստումների, նույն օրվա երեկոյան գալու՝ չերևաց, չեկավ հաջորդ և հետագա օրերին: Այդ մատանին պատճառ դարձավ մոռանալու արյունակցական կապը, քեռու մահամերձ վիճակը, քեռի, որին պարտական էին ամբողջ տոհմով, քանի որ նրանց համար մեծ լավության էր արել աշխատանքով ու բնակարանով ապահովելու հարցերում: Վերջնականապես համոզվելով Մարալովի անմարդկային վերաբերմունքի մեջ՝ հայրս անեծքի նման մի բան շշնջաց, որ մատանին արժանի չլինի, չվայելեն ոչ ինքը, ոչ էլ իր սերունդը: Մասամբ հիասթափությունից, մասամբ էլ հիվանդության սաստկացումից հորս վիճակը խիստ ծանրացավ: Նույնիսկ,

հրաժարվեց ջրից, օրվա ընթացքում ես էի գդալով մի քանի կաթիլ ջուր կաթեցնում շրթունքներին:

Մայրիկ Նվարդը բոլորովին հորս անուշադրության էր մատնել: Այդ օրերին նա զբաղված էր իր Վազգեն որդու, որը վառվել էր եփած ջրի մեջ ընկնելիս, բուժման գործով: Հայրս մինչև վերջ էլ չիմացավ նրա այրվելու մասին: Վերջին երկու օրում հայրս անընդհատ զառանցում էր, որոնց բովանդակությունը ինձ համար անհասկանալի էր, միայն երբեմն-երբեմն հիշատակում էր անուններ, որոնցից հաճախակի էր լսվում Ինտիզար անունը: Երբեմն էլ, կարծես, ուզում էր երգել, բայց չէր ստացվում, խոխոնացնում էր:

Հայրիկիս այս վիճակի մասին որևէ մեկին հաղորդելու հնարավորություն չունեի: Միակ մարդը, որին կարելի էր պատմել նրա օրհասական վիճակի մասին, Նվարդն էր, սակայն վերջին օրերին նրա հետ ոչ միայն խոսել չէի ցանկանում, այլև տեսնել... Ինձ թվում էր, որ հորս այս վիճակի պատճառը հիմնականում նա է: Ինչո՞վ բացատրել, որ մի շաբաթ հիվանդ ձևացող կինը մի ժամում առողջացել էր, իսկ առողջ հայրս ծանր վիճակի մեջ ընկել, որը օր-օրի ավելի վատթարանում էր: Քանի, քանի անգամ աչքիս առաջ եկավ մայրս՝ իր զայրալից դիմագծերով այդ կնոջը մեր տունը տեսնելիս: Ես հիշեցի, թե ինչու՞ նա ինձ խրատում էր, որ այդ կնոջը մեր տուն չթողնեի: Ես հիշեցի նաև Հարութ ամու խոսքերը լացով արտասանելիս, որ այդ խոխեն ամուսնանալով հորդ հետ, նրա գլուխը կուտի: Նրա անտարբեր վերաբերմունքը տեսնելով և անցածը հիշելով, եզրակացրի, որ հորս դժբախտության միակ պատճառը Նվարդն է: Երբեմն-երբեմն ներքին ցասումս այն աստիճանի էր հասնում, որ ուզում էի հարձակվել ու պատառոտել այդ կնոջը, բայց դեմը մահամերձ

հայրս էր, որի առողջանալու հույսը դեռ չէի կորցրել, մանավանդ, որ վերջին օրերին մեր սուղ միջոցներից տալիս, մոմ էի գնում ու վառում տեղի խաչքար կիսավեր սրբավայրերում՝ աղոթելով հորս շուտափույթ ապաքինման համար:

Վերջապես մոտեցավ վերջին ողբերգական օրը: Վաղ առավոտյան, երբ արեգակը նոր էր տարածել իր ոսկեզօծ ճառագայթները, հայրս աչքերը բաց արեց ու ցանկություն հայտնեց նստելու: Ես օգնեցի նրան նստելու, ծածկեցի վրան, հետո կաթ ու հաց ուզեց: Երբ տվեցի, բաժակը ձեռքն առավ ու փոխանակ խմելու, ինչ-որ պատճառ բռնեց, առաջարկելով, որ ես խմեմ կաթը և ուտեմ հացը: Թեև ես կիսաքաղց էի ու մեծ ախորժակով կուտեի, բայց հրաժարվեցի, խնդրելով, որ ինքը ուտի և խմի: Նա մնաց անդրդվելի և ստիպեց, որ ես ուտեմ ու խմեմ կաթը: Ստիպված կատարեցի հորս կամքը: Հետո հարցրեց Նվարդի ուր լինելը: Պատասխանեցի, որ գնացել է ջուր բերելու:

Հայրս բավական երկար նստեց, սկսեց խրատել ու խորհուրդներ տալ: Հիշատակեց այն բարեկամներին ու ծանոթներին, որոնք կարող են ինձ ապավինել, թվեց նաև նրանց անունները, որոնցից պետք է հեռու մնալ, խուսափել, ինչպիսին Մարալովն է:

Առանձնապես կանգ առավ Ինտիզարի հոր՝ Սարիբեկի վրա, որ իմ կյանքի ընթացքում սերտ կապերի մեջ լինեմ նրանց ընտանիքի հետ: Հանուն Ինտիզարի նա ամեն տեսակի աջակցություն ցույց կտա, դժվարությունները կհաղթահարվեն ու տուն ու տեղի տեր կդառնանք: Ուր կյանքում պետք է լինել մաքուր, ազնիվ, հալալ քրտինքով վաստակել օրվա հացը և այլն: Ապուշ կտրած լսում էի հորս խրատները ու զարմանում,

որ եթե ինքը կա և առողջանալու հույսեր կան, ինչ կարիք կա ինձ դիմելու կամ չդիմելու այս կամ այն բարեկամին կամ ծանոթին: Նրա խորհուրդներն ու խրատները ինձ կյանքում որպես փարոս հանդիսացան: Բայց այն պահին, երբ հայրս կյանքի զանազան հարցերի մասին իր կարծիքն էր հայտնում, ինձ թվում էր, որ իմ սրբավայրում վառած մոմերի ուժով հայրս արդեն առողջացել է ու մտովի ուրախ էի նրա շրթունքներից լսելու այն ամենը, ինչը վերաբերվում էր մեր ապագային: Թե որքան ժամանակ տևեց հորս հորդորներն ու խորհուրդները, չգիտեմ, ինձ թվաց կարճ, քանի որ ես կլանված լսում էի ու, եթե ժամերով խոսեր, մեծ հաճույքով կունկնդրեի: Մի պահ ընդհատեց, մի քիչ ջուր ուզեց, տվեցի: Հետո անհանգստության նշաններ ցուցաբերեց, օգնեցի պառկելու: Պառկելուց հետո հանձնարարեց Նվարդին կանչելու: Կանչելուց հետո, երբ վերադարձա, հայրս վերմակով փակել էր դեմքը: Երբ մոտեցա, վերմակը բարձրացրի, հայրս արդեն հոգին ավանդել էր...

Սուգ ու շիվանը պատեց ինձ, վերածվեցի կենդանի դիակի, չէի կողմնորոշվում, չգիտեի անելիքս, քարացած կանգնած էի, երբ ներս մտավ Նվարդը, մի պահ ինձ թվաց, որ տեսնելով մեռած ամուսնուն մահվան մահիճում՝ խելակորույս վրա կպրծնի, ուշագնաց կլինի, գլուխը քարով կտա, կփորձի ինքնասպան լինել՝ սիրելի ամուսնուն կորցնելու համար, բայց ենթադրությունս սխալ դուրս եկավ: Նվարդը, նույնիսկ, դիակին չմոտեցավ՝ պատճառաբանելով, թե մեռելից վախենում է: Գնաց, կանչեց տանտիրոջը, որը եկավ, անկեղծորեն ցավակցեց ու, տեզերկնոջ հետ, մի քանի հարևանների հրավիրեցին հայրիկին լողացնելու և պատանելու նպատակով: Պատանի համար անհրաժեշտ էր մի 3 մետրի չափ բիազ, բայց Նվարդը փոխարենը մատնացույց է անում մի հին, մաշված ու կեղտոտ

սավան, որին համաձայն չէին տանտերերը՝ պահանջելով մսաքուր, չօգտագործված սավանը: Նվարդի առարկությունը, թե հողի տակ ի՞նչ իմաստ ունի նոր սավանով թաղելը: Ես չհամբերելով դուրս քաշեցի չօգտագործված սավանը և հանձնեցի հարևաններին, որոնք լողացրին, պատանեցին հորս, տեղը փորել տվին, մնում էր տերտերի հարցը լուծելը: Այս գյուղում տերտեր չկար, պետք էր գնալ Ղազնաֆարից բերել, ստիպված գնացի:

Տերտերը երկար ու բարակ սկսեց հարցաքննել թե ո՞վ ենք, որտեղացի՞, ի՞նչ միջոցների տեր ենք, մեռնողը քանի՞ տարեկան է, ի՞նչ հագուստ ունի, ճաշկերույթ տալո՞ւ ենք, թե ոչ, վերջում էլ, որպես թաղման վարձ, պահանջեց հանգուցյալի ամբողջ հագուստեղենը, իսկ եթե պիտանի չլինեն՝ դրամական փոխհատուցում: Ճար չունեի, բոլոր պահանջներին ստիպված համաձայնվեցի:

Տերտերի հետ Թաքարլու հասանք երեկոյան մոտ, ամեն ինչ արդեն ավարտված էր: Հարևանները հայրիկի դին վերցրին և թաղեցին տանտիրուհու ցուցումով այն փոսի մոտ, որտեղ թաղված էր և իր ամուսինը: Քանի որ հորս դիակը վերցված է նույն տանից, համարում էին իրենց ամուսնու եղբայրը:

Թաղման արարողության ծեսը բավական կարճ տևեց, տեր հայրը շտապում էր քելեխ ուտել ու ննջեցյալի հագուստին տիրանալ: Վերադարձանք տուն, տանտիրուհին ճաշ էր պատրաստել, թաղման մասնակիցները ճաշեցին, տերտերը հայպճեպ արտասանեց իր օրհնանքը և, առանց ամաչելու, պահանջեց վարձը: Տանտիրուհին, վաղօրոք իմանալով իրենց տերտերի ագահությունը, պատրաստել էր նրա բաժինքը: Հայրիկիս հագուստեղենը ամբողջովին տրվեց նրան, բացի այդ՝ հաց, ճաշ և այլ մթերքներ: Տերտերը փնթփնթաց,

չբավարարվելով դրանցով, պահանջեց և հորս վերարկուն, բայց տանտիրուհին մերժեց, ասելով, որ հետագայում մի բան կտա։

Թաղման ողջ ծախսը տանտիրուհին կատարեց։ Այնուհանդերձ, որոշեցի պարտքի տակ չմնալ, և որոշեցի նրան հանձնել հորս վերջին հիշատակությունը՝ ոսկե դրամը։ Երբ բաց արի դրամապանակը, այն դժբախտաբար չքացել էր, նրա հետ և երկու 25-ռուբլիանոցը։ Այս ողբերգական իրավիճակում ես վերջնականապես համոզվեցի, որ Նվարդը մի դաժան կին է եղել ու անընդհատ ծծել հորս արյունը, որը և եղավ նրա անժամանակ մահվան պատճառը։ Հաջորդ առավոտ մահացավ և Նվարդի Վազգեն որդին, նրան միայնակ թաղեցի, մի քիչ փորեցի հորս հողաթումբը և երեխային դրի մեջը։ Նվարդը նույնիսկ չբարեհաճեց մասնակցել երեխայի թաղմանը։

Սիրելի հորս երազը իրոք իրականություն դարձավ՝ գնացքից կտրված վագոնը առհավետ մնաց Ապարանի խուլ գյուղերից մեկում։

Երեխային թաղելուց հետո չոքեցի հորս գերեզմանին, մի կուշտ լացեցի, մտովի երդվեցի՝ նրա բոլոր հանձնարարությունները սրբությամբ կատարել։ Մի վերջին համբույր տալով, բաժանվեցի գերեզմանաթմբից։ Տուն հասնելով, առանց Նվարդի հետ խոսելու, տանտիրուհուս հայտնեցի մտադրությունս, որ մեկնելու եմ Եղվարդ՝ մեր ազգականների մոտ, նրանցից օգնություն հայցելու ակնկալությամբ, և հիմնականում Նվարդի երեսը չտեսնելու համար։

Թաքարլույից դուրս եկա և նույն օրն էլ հասա Եղվարդ, հյուրընկալվեցի Տիգրան եղբայրի մոտ։ Մեծ զարմանք պատճառեց ինձ, երբ այդտեղ հանդիպեցի քրոջս՝ Արփենիկին, որին Սուքիաս ամու հետ ուղարկել էինք մեր ծննդավայրը։ Տեսնելով նրա ողորմելի ու կիսամերկ վիճակը, աչքերս

սնացան, հայրիկիս վշտի հետ, որի մասին դեռ ոչ ոքի չէի ասել, մի անգամից փլվեցի ու երկար ժամանակ չէի հանգստանում: Ըստ երևույթին, լացելիս հայրիկիս եմ կանչել ու ասել նրա մահվան մասին: Ալդուզը՝ Տիգրան եղբայրի երկրորդ կինը, (Եսթերը մահացել էր) լսելով իմ խոսքերը, հայտնում է՝ ամուսնուն, որը մոտենալով ինձ հանգստացնում է՝ պահանջելով պատմել, թե ինչ է կատարվել: Ես մանրամասն պատմեցի մեր վիճակի, հորս մահվան մասին, որից հետո հարցրի, թե ինչու՞ է Արփենիկը հայտնվել այստեղ, չէ՞ որ նա քոչի հետ գյուղ էր մեկնել: Ինչ պարզվեց: Երբ մեր քոչերը հասնում են Արագածին, անմիջապես ընկնում են թուրք ավազակախմբերի ձեռքը, որոնք մասսայաբար, մինչև վերջին ինչքը, թալանում են, մի երեք գեղեցիկ հարս ու աղջիկ վերցնում, մյուսներին ստիպում բռնել Բյուրական տանող ճանապարհը: Ահա, այդպես քոչերը մի կերպ հասել են Եղվարդ: Գիշերեցի Տիգրան եղբայրենց տանը: Առավոտյան Տիգրան եղբայրը պարանը դրեց իր միակ կովի վիզը ու ճանապարհվեցինք դեպի Թաքարլու՝ Նվարդին բերելու: Իմ թախանձանքը, թե Նվարդին բերելու անհրաժեշտություն չկա, չլսեցի՝ հասարակական կարծիքից անհարմար զգալու համար, ճանապարհին, որքան էլ համոզեցի, որ հորս նկատմամբ Նվարդը ոչ մի մարդկային վերաբերմունք չի ցուցաբերել, որ նա միայն շահադիտական նպատակներ է հետապնդել և այլն, Տիգրանը մնաց անդրդվելի:

Հասնելով Թաքարլու, մեր ունեցած փալաս-փուլուսը բարձեցինք կովին, Նվարդին վերցրինք ու, վերջին անգամ այցելելով հորս գերեզման, համբուրեցինք ու վերադարձանք:

Մի քանի օր գրեթե տանից դուրս չէի գալիս, տխուր մտորումների մեջ էի, մտածում էի, թե ի՞նչ է լինելու մեր վերջը:

Երրորդ օրվանից նկատելի դարձավ, որ Նվարդը արտակարգ հոգեվիճակի մեջ է, անհանգիստ դուրս ու ներս է անում, զուգվում-զարդարվում, անհետացել է դեմքի տխրությանը, ժպտում է, ուրախանում... Այս նկատելի փոփոխությունների պատճառի մասին ուզեցի Ալդուզից իմանալ, սակայն նա ոչինչ չգիտեր:

Երեկոյան բավական վաղ պառկեցի քնելու, որոշ ժամանակ անց Տիգրան եղբայրը ինձ արթնացրեց, հարցնելով՝ թե չգիտե՞մ, արդյոք, Նվարդի ուր լինելը: Լսելով նրա անհայտանալու լուրը, ասացի վերջին մեր երկու օրվա իմ դիտարկումների մասին: Միաժամանակ, սկսեցի ստուգել մեր աղքատիկ ունեցվածքը: Պարզվեց, որ այդ անարժան ավազակը տանից տարել է մեր քիչ թե շատ եղած-չեղածը: Առավոտյան իմացանք, որ Նվարդը ամուսնացել է ղարագորանցի մի Բալիկ սնունով մարդու հետ, որին ծանոթ է եղել դեռ հորս կենդանության ժամանակ: Ինձ համար անսպասելի չէր նրա այդ ստոր վարքագիծը, բայց ամուսնու և որդու մահվան դեռ 7-ը չլրացած, նման քայլի դիմելը նման է անասնական վերաբերմունքի:

Մի քանի օր մնալուց հետո Ալդուզին խնդրեցի լվանալ, մաքրել հագուստեղենս, վաճառեցի հայրիկիս վերջին հիշատակը՝ վերարկուն, երեք փութ ալյուր գնեցի Արփենիկի համար, որ պետք է մնար Տիգրան եղբայրենց տանը ու հեռացա Եղվարդից: Ընկերակցեցի մեր գյուղացի Մնոյան Կարապետին, որը դասալիք էր, ու գնում էր հարազատներին գտնելու:

Մեր ճանապարհորդությունը սկսվեց նոյեմբեր ամսի կեսերից (1918 թ.), նպատակադրվել էինք Բյուրականից անցնել Արագած և նրա վրայով իջնել գյուղ: Բյուրականում Կարապետն իմացավ, որ իր հայրն էլ է մահացել ու թաղված է

այս գյուղում: Գիշերեցինք այստեղ՝ առավոտյան դեպի Արագած ուղղվելու նպատակով: Գիշերը բավական ձյուն էր եկել և Արագած բարձրանալն անհնարին դարձել: Ստիպված որոշեցինք մեկնել Ապարան, որտեղից լուրեր էին գալիս, թե իբր թուրքերը շուտով հեռանալու են: Թեև ես այդ սուտ լուրերին բավական վաղուց ծանոթ էի, սակայն ի՞նչ կարող էի անել: Ինձ համար միևնույն է, թե որտեղ կլինեմ: Չէ՞ որ ես այժմ տուն ու տեղ չունեմ, հայրս չկա, միջոցներից զուրկ եմ, բարեկամներին ապավինելը հնարավոր չէ, լավ է, որ ընկերս ավելի տարիքով է, փորձված և, գլխավորը, խոստանում է ինձ չլքել մինչև մի հարմարություն չստեղծվի հետագա գոյատևման համար: Երբ երեկոյան հասանք Ապարանի Ալիքուլակ գյուղին, մեր հացի պաշարը վերջացել էր: Ստիպված մի քանի տներից ուտելեղեն խնդրեցինք, ոմանք մերժեցին, քանի որ մեր նման խնդրողները հարյուրների էին հասնում, ոմանք էլ փոքր ինչ բավարարեցին մեր խնդրանքը: Գիշերը քնեցինք մի անասնագոմում, հաջորդ օրը՝ հաց մուրալով, հասանք Մուլքե գյուղը, որի ջրաղացում հայրս տեսել էր ճակատագրական երազը: Այստեղ տեղավորված էր մի հայկական զորամաս, որտեղ ծառայության մեջ էր մեր գյուղացի Եղսոյենց Երանոսը որպես վաշտի ավագ և Սիմոյենց Սիմոնը, որպես ջոկի հրամանատար: Հանդիպելով, մեզ հրավիրեցին իրենց մոտ, հյուրասիրեցին, կերակրեցին և տեղ հատկացրին քնելու, հանգստանալու համար: Այստեղ իմացանք, որ զորամասին հրամայված է պատրաստ լինել, երբ թուրքերը հեռանալիս լինեն, առաջանալ մինչև Ալեքսանդրապոլ: Մի քանի օր ուրախ տրամադրությամբ սպասում ենք թուրքերի հեռանալուն, բայց նրանք տեղերից չեն շարժվում, համբերություններս հատնում էր. ձյունը արդեն համատարած ծածկել էր շրջակայքը, ի՞նչ էր

լինելու մեր վիճակը: Մի անգամ մտախոհ մոտեցա Երանոսին և խնդրեցի, որ հաջողեցնի ինձ կամավոր բանակ վերցնելու: Նա համաձայնեց, բայց առաջարկեց որոշ ժամանակ սպասել: Նոյեմբերի վերջին օրերին, մի գիշեր զինվորական տագնապի ազդանշան հնչեց: Տեղի զորամասին հրամայվեց կազմ ու պատրաստ շարժվել դեպի սահմանը: Մեր ծանոթ զինվորներին բարի ճանապարհ մաղթելով՝ հրաժեշտ տվեցինք: Մի օր անց սկսվեց նաև այստեղ պատսպարված գաղթականների շարժը: Հայտնի դարձավ, որ թուրքերը հեռացել են և վտանգը վերացել. ուստի, յուրաքանչյուր ոք շտապում էր ժամ առաջ հասնել իր բնակավայրը, իր օջախը: Գնացողներին միացանք նաև ես ու Կարապետը: Առաջին օրը հասանք Արթիկ, հանգրվանեցինք պապիս տանը: Երբ ես հայտնեցի մեր վիճակի և հայրիկիս մահվան մասին, նրանք երկար ու դառն արտասվեցին: Մի օր մնալուց հետո պատրաստվեցինք մեկնել մեր գյուղը, բայց պապս ու տատս ինձ թույլ չտվին գնալ: Ճիշտն ասած, գյուղում էլ ոչինչ չունեի ապրելու համար, հավանական է, որ թուրքերը տունն էլ ավերած ու քանդած լինեին: Կարապետին ճանապարհելուց հետո ես մի շաբաթի չափ մնացի պապիս տանը: Նրանք պատմեցին հայրիկիս վերջին տեսիլքի և այն մասին, թե թուրքերը, ինչպես զազազելով, սրի էին քաշել Մայմջուղը, Ինտիզարին մի կերպ փախցրել, բերել են Արթիկ՝ պապիս տուն, որտեղ իր հարսի՝ Արեգնազի հետ պահվել է գետնափոր մառանում մինչև վտանգն անցել է:

Լսելով Ինտիզարի մասին եղած այդ պատմությունը՝ իմ մեջ ցանկություն առաջացավ գնալ Մայմջուղ, տեսնել նրանց վիճակը, միաժամանակ, կատարել նաև հանգուցյալ հորս պատվիրանը՝ ապավինել ամենամարդկային գծերով օժտված աներոջս: Իմ մտադրության մասին ուզեցի իմանալ պապիս ու

տատիս խորհուրդը։ Նրանք հաստաձայնեցին։ Թեև մեր ամուսնության օրերի ահը սրտումս էր, բայց և այնպես, որոշեցի, և հաջորդ առավոտյան մեկնեցի Մայմջուղ։ Երբ մտա աներանցս տուն և հայտնեցի հորս մահվան մասին, այստեղ ևս սկսվեց լացուկոծը։ Երկար ժամանակ չէր հանգստանում Ինտիզարը, երեսները, հագուստներն էր պատառոտում։ Նա պատկերացնում էր իր վաղվա սև օրը՝ իմ վրա այն ժամ հույս դնել չէր կարող, բացի այդ էլ, տուն ու տեղը լրիվ թալանված էր ու ավերված։ Այս բոթը տանեցիներին ստիպեց կասկածել իմ կարողությունների վրա և սկսեցին սառն ու անտարբեր վերաբերմունք ցուցաբերել հանդեպ ինձ։ Ինտիզարի անընդմեջ լացը, տանեցիների սառնությունը ինձ ստիպում էին անհապաղ հեռանալ։ Գնալուս մասին, երբ հայտնեցի աներոջս, նա զարմացավ, թե ի՞նչն է պատճառը, սովա՞ծ եմ, կամ որևէ մեկը քեզ չի՞ վիրավորել։ Ես սուտ պատճառաբանություններ բերեցի, իբր՝ գնամ, տեսնեմ տան, մեղուների վիճակը և այլն, հրաժեշտ տվի, նույնիսկ, Ինտիզարին մեկնելուս մասին չասելով, քանի որ նկատել էի նաև Ինտիզարի սառնությունը։

Բավական դժվարությամբ երեկոյան կողմ գյուղ հասա։ Բացի քարե պատերից, տանից ոչինչ չէր մնացել, ամենքն ավերված էր, քանդված ու թալանված։

Հարութ ամին վախճանվել էր Սոգյութլիում եղած ժամանակ, իսկ որդին՝ Արամը կնոջ՝ Հայկանուշի հետ արդեն փոխադրվել ու բնակվում էին գյուղում, ինձ բավական լավ ընդունեցին։ Հնձել էին Դոլգա կոչվող սառնայի արտը, կալսել, ունեին նաև մեկ զույգ լծկան անասուն։ Մի 10 օր անց եկավ նաև նրա եղբայր Տիգրանը, որի հետ և քույրիկս՝ Արփենիկը։ Գյուղ հասավ նաև Սուքիաս ամու թալանված ու կողոպտված ընտանիքը։ Գյուղի բնակչությունը կամաց-կամաց ավելացավ,

բայց նրանց 90 %-ից ավելին ապրուստի որևէ միջոց չուներ: Սկսվեց համատարած սովը, որից օրական մեռնում էին մի քանիսը: Զգալով, որ այս պայմաններում ազգակիցների վրա երկար ժամանակ բեռ դառնալ հնարավոր չէ, ուղիներ էի փնտրում մի կողմի վրա գնալ, մի ելք գտնել:

Մի կերպ համոզելով Սուքիաս ամու Պետրոս որդուն՝ հաջորդ առավոտյան դուրս եկանք գյուղից՝ բախտ որոնելու: Առաջին օրը եղանք Սոցյութլիում, որտեղ հույս ունեի տեսնել Մարալովին ու պահանջել նշանիս մատանին: Իսկ այնուհետև, հորս ցուցումով , պետք է շրջագայեի Շիրակի գյուղերը՝ նրա ծանոթ բարեկամներից օգնություն խնդրեի, իսկ հետո էլ, այդ օգնության միջոցներով, մեր տնտեսությունը վերականգնեի: Զուր հույսեր...

Երբ մտանք Մարալովի բնակարանը, որը հորս մահվան լուրն իմացել էր, նույնիսկ, մեզ չբարևեց: Երբ պահանջեցի մատանին, նա ցինիկաբար պատասխանեց, որ մատանու արժեքը վճարված է: Իմ այն հարցին, թե ու՞մ է վճարվել, պատասխանեց, «գնա հորդ մոտ, նա կասի»: Այժմ, հարգելի ընթերցողներ, մտեք իմ հոգեվիճակի մեջ ու գնահատեք այս մարդկային կերպարանքը կորցրած մարդու ազահությունը: Արտասվալից աչքերով հեռացա, աստվածային հաջողության դեպքում վրեժխնդիր լինելու առումով: Պետրոսի պահանջով, գնացինք հորաքրոջս՝ Սուսիկի տուն, թեև ես չէի ուզում հորաքրոջս վշտացնել եղբոր մահվան լուրը հաղորդելու համար: Սակայն, երբ հասանք նրանց տուն, պարզվեց, որ հորաքույրս ավելի վաղ է վախճանվել, քան հայրս: Գիշերելով հորաքրոջս տանը՝ հաջորդ օրը մեկնեցինք Մոլլազյոկչա՝ սանահեր Գևորգին հյուրընկալվելու: Մեզ տեսնելուց և հորս մահվան մասին իմանալուց հետո նա բոլորովին անծանոթ

մարդու դիրք ընդունեց, նույնիսկ, ներս չհրավիրեց մի կտոր հաց տալու, գլուխը թեքեց, հեռացավ: Ի՞նչ անենք. սովածությունից և հոգնածությունից ուժասպառ ենք եղել, այս գյուղում ուրիշ ծանոթներ չունենք, ստիպված մեկնեցինք հաջորդ՝ Բողազգյասան գյուղ, որտեղ բնակվում էր հայրիկիս ամենամոտիկ ընկերներից մեկը՝ Մարկոսը: Արևամուտին հասանք այդ գյուղը, մտանք Մարկոսի օդան, որտեղ բավական մարդիկ կային, գոմը լիքն էր անասուններով: Տան տերը նստած էր օջախի կողին և իր տեր օղրմին էր քաշում: Ինձ տեսնելով, իսկույն ճանաչեց ու, առանց տեղից բարձրանալու, առանց բարևելու՝ հարցրեց, թե ե՞րբ է մահացել հայրս, ըստ երևույթին, վաղօրոք էր իմացել ... Տան տիրոջ այս սառը վերաբերմունքին հանդիպելով՝ մի պահ վիրավորվեցի, և ուզում էի դուրս գալ, բայց արդեն ուշ էր, եղանակն էլ ցուրտ: Ինչ արած, ընչազուրկ մարդու վիճակն այսպիսին է, պետք է համբերատար լինել, հակառակ դեպքում, դուրսը կմնայինք ու կսառչեինք կամ գայլերի բաժին կդառնայինք:

Մի կերպ տեղավորվեցինք օդայի թմբերի վերջում: Գյուղացիները կես գիշերին մոտ ցրվեցին: Տան տերը կանչեց իր մշակներին, անասուններին (մի գոմ անասուն ուներ) թիմարել տվեց, հետո գնաց: Մշակներից մեկը մեզ մի երկու լավաշ բերեց, մի ուրիշ անգամ այդ խիստ վիրավորական կթվար ու բերածը կշպրտեի, բայց քանի որ ողջ օրը սոված էինք և հոգնած, ստիպված կերանք, և երկուսով էլ, մի կարպետի տակ, մի կերպ քնեցինք: Բավական վաղ արթնացա, աչքերիս առաջ պատկերվում էին այն օրերը, երբ հայրս, այս տան տիրոջը և մյուս ընկեր-ծանոթներին ինչպիսի ընդունելություն, բարձր մակարդակով հյուրասիրություն էր կազմակերպում: Երբեմն օրերով և, նույնիսկ, շաբաթներով նրանք մեր տանից չէին

հեռանում, իսկ այժմ ...

Հետագա մի քանի օրերում Պետրոսի հետ շրջագայեցինք նաև. հորս մյուս ծանոթների (Սոնգարալում, Արմթլոյում, Հոռոմում), բոլոր տեղերում էլ նույն վերաբերմունքին արժանացանք, բացի Սարիբաշ գյուղից, որտեղ գիշերեցինք մեր պապի քրոջ տղայի՝ դերձակ Համոյի տանը, մեզ հաց տվող անգամ չեղավ:

Վերջապես գնացինք Այթիկ՝ պապիս տուն: Մի քանի օր մնալուց հետո, հակառակ նրանց թախանձանքին, որ մնամ իրենց մոտ, դուրս եկանք և ուղևորվեցինք Մայմջուղ: Այստեղ էլ, աներոջիցս բացի (նույնիսկ, Ինտիզարը), սառնությամբ ընդունեցին: Ես համոզվեցի, որ զոքանչս, որ էն գլխից էլ ինձ չէր սիրում, այժմ ինձ տեսնել չի կամենում ու, երևի, ուզում էր աղջկան մի ուրիշին կնության տալ: Այդ մտքերը ինձ հանգիստ չէին տալիս ու, մի օր մնալուց հետո, որոշեցի հեռանալ: Աներս շատ համոզեց մնալ իրենց մոտ մինչև գարուն: Ինքը կօգներ տնտեսություն կազմակերպելու և այլն, բայց հոգիս խռովյալ էր ու, առանց որևէ մեկին մի բան ասելու, առանց մնաս բարով ասելու, բռնեցի մեր գյուղի ճանապարհը: Արևամուտին մոտ գյուղ հասանք: Երբ Տիգրան եղբայրը իմացավ իմ շրջագայության մանրամասների մասին, բավական զայրացավ, ամոթանք տվեց, թե ինչու եմ այդպիսի քայլի դիմել, մի՞թե կարելի է մի փոր հացի համար դիմել այդ անմարդկային հատկություններով օժտված երեսպաշտներին, որոնք հանգուցյալ հորդ ժամանակ բազմիցս արժանացել են նրա առատաձեռնությանը:

Դրա փոխարեն, պետք է բարեկարգ տուն ու տեղ ունենալ ու, երբ առիթ լինի այդ քծնողներին տեսնելու, հիշեցնել ստոր վերաբերմունքը այն ծանր ժամանակների:

Գյուղացիների դրությունը գնալով վատթարանում էր:

Սովից մեռնողների թիվը տասնյակների էր հասնում: Այն չոքեց նաև մերոնց դռանը: Մեռավ նաև Սուքիաս ամին, վտանգը կախվեց ընտանիքի մյուս անդամների գլխին: Ամենաանճարները, ստիպված, հարևաններից, ովքեր քիչ թե շատ միջոցներ ունեին, գողություն էին անում: Այդպիսի հարկադրական քայլի դիմեց և Ալեքը: Նրա առաջարկով ես պետք է մեր հարևան Գիքոյի մառանից, որտեղ իբր ալյուր ու այլ մթերքներ կային, մտնեի ու գողանայի: Կես գիշերին Ալեքի, Մանասենց Եզորի և գլխավոր տեղեկատու կուզիկ Համոյի հետ մոտեցանք վերոհիշյալ մառանին: Պատից մի փոքր անցք բաց արինք, որտեղ ինձանից բացի (իբրև ամենափոքր) ուրիշը չէր կարող մտնել: Պայմանավորվածության համաձայն, ես պետք է ներսից դուռը բացեի և դուրս գայի, մնացածը իրենց գործն էր: Մտնելիս ինձ հետ վերցրի աթարի կրակ, ծծումբի ֆիտիլ և մազութի ճրագ: Երբ լուսը վառեցի, նկատելի դարձավ, որ ինչի համար եկել ենք, այն չկա: Բացի մի 2-3 անասունի մորթուց և գյուղգործիքներից, ոչինչ չնկատվեց: Իրողության մասին լսելով՝ դրսում եղածները թույլ չտվին դուռը բացել, պահանջեցին անասունի կաշին և մի երկու իր-միր: Մեր խումբը տեսնելով, որ պիտանի բան չկա, առանց ինձ նախազգուշացնելու, հեռացավ: Այդ ընթացքում մառանի անկյունները մի վերջին անգամ ստուգեցի և պատահաբար հանդիպեցի մի կավից պատրաստված կճուճի, որի մեջ մոտ մեկ փթի չափ ձեթ կլիներ: Ուժերս լարեցի մի կերպ, կճուճը բարձրացրի, մոտեցրի անցքին, որ փոխանցեմ ընկերներիս: Չայն տվի, արձագանք չեղավ: Սարսափը պատեց ինձ, ենթադրեցի, որ երևի որևէ մեկը նրանց տեսել է, ու նրանք փախուստի են դիմել: Շտապելուց, ինձ կորցնելուց, մթան մեջ վայր ընկա, ձեթը ամբողջապես լցվեց վրաս, գլխիցս սկսած ոտքերով վերջացրած: Անցքից մի կերպ դուրս եկա, շրջապատում ոչ ոք

չկար: Ես սկսեցի փախչել: Լուսընկա գիշեր էր, մի հարյուր մետր անցնելուց հետո հանկարծ հետ նայի՝ ի՞նչ տեսնեմ, ձեթը վրայիցս ճիրվում է ձյան վրա և ուր էլ գնալու լինեմ, այդ հետքերով վաղը ինձ բռնելու են: Ի՞նչ անել: Մի քանի րոպե մտածելուց հետո միակ ելքը, որ կար՝ առվի ջրով լողանալն էր: Զմռան այդ սառնամանիքին ջուրը լրիվ սառած էր և նրա մեջ մտնելը՝ անհնարին: Միայն մի բաց տեղ կար, որտեղից գյուղացիները ջուր էին վերցնում, այն կոչում կին Չոիկ: Ստիպված ուղղվեցի դեպի Չոիկը և հազուստով մտա նրա տակ: Թե քանի րոպե դիմացա, չգիտեմ, միայն սարսափելի դաղալով մի կերպ ինձ գցեցի տուն: Ալդուզին պատմեցի գլխիս եկածը: Լավ էր, որ Տիգրան եղբայրը տանը չէր, որսի էր գնացել: Խեղճ Ալդուզը գիշերով թոնիրը վառեց, ջուրը տաքացրեց, ես լողացա, իսկ ինքը շորերս լվաց, մինչև լույսը բացվեց՝ չորացրեց, հազա և որոշեցի, որ այս խայտառակությունից փրկվելու միակ ելքը գյուղից հեռանալն է ...

Առավոտյան վաղ Տիգրան եղբայրը որսից վերադարձավ, խփել էր երկու նապաստակ: Մաքրեցին, եփեցին, նախաճաշեցի և, առանց ուր գնալու մասին (թեև ես էլ չգիտեի) որևէ բան ասելու, դուրս եկա տանից ու, մտքերով տարված, ինքնաբերաբար ուղղվեցի դեպի Բողասքյասան[15]: Օրը մթնում էր, սոված էի ու հոգնած, այստեղ դիմել որևէ ծանոթի, գիշերելու տեղ և ուտելիք խնդրելը ինձ համար հավասար էր մահվան: Ես արդեն այդ կեղծավորների անմարդկային վերաբերմունքը տեսել էի ... Այդպես մտախոհ, թե ինչպես եմ թեքվել դեպի Մայմջուղ տանող ճանապարհը, չգիտեմ, զգացի միայն այն ժամանակ, երբ հասել էի գյուղի առաջին տներին: Զգաստացա, ամփոփեցի մտքերս, որոշեցի, որ ամենագերադասելին այստեղ մնալն է: Ճիշտ է, տանեցիներից շատերին դուր չեմ գալիս, բայց աներս

---

[15] Բողասքյասանը այժմյան Շիրակի մարզի Չորակապ գյուղն է:

շատ բարի և հոգատար վերաբերմունք էր ցուցադրում իմ նկատմամբ, բացի այդ, արդեն գիշեր էր, ինձ գիշերելու տեղ և ուտել էր պետք: Տուն հասնելով՝ աներոջիցս բացի ոչ ոք ինձանով չհետաքրքրվեց: Միայն նա հանդիմանեց ինձ, որ առանց իրեն տեղյակ պահելու գնացել էի և պատվիրեց, որ այսուհետև, առանց իր գիտության, որևէ տեղ չգնամ: Այդ բարի մարդը, որի առջև ողջ ընտանիքը խոնարհվում էր, կարծում էր, որ բոլորի վերաբերմունքը իմ հանդեպ հարգալից է, քանի որ նրա ներկայությամբ ոչ ոք իմ խաթրին չէր կպչում, բայց աշխատանքի բերումով, ծերունին, օրվա մեծ մասը տանը չէր լինում: Ահա, այդ ժամանակ էր, որ հոգեկան աշխարհս տակն ու վրա էր լինում, այդտեղ մնալն անտանելի դառնում: Երեխաները, նույնիսկ, ձեռք էին առնում, ծաղր ու ծանակի ենթարկում, իսկ չափահասները՝ չլսելու, չտեսնելու տեղ էին դնում: Անախորժություններից խուսափելու համար ես աներոջս այդ մասին ոչինչ չէի ասում: Նույնիսկ, Ինտիզարին հանդիպել չէի կարողանում, որ մի երկու խոսք ասեմ ու հեռանամ: Մի քանի օր մտատանջվելուց հետո, թե ուր, որտեղ և ում մոտ գնալ, հանկարծ հիշեցի Ապարանում մեր պայմանավորվածությունը Երանոսի հետ, նրա վաշտում ծառայության մտնելու նպատակով: Առանց ժամանակ կորցնելու, աներոջս հայտնեցի, որ Ալեքսանդրապոլում ապրող մեր քավոր Գևորգն ինձ կանչել է, պետք է գնամ: Սկզբում երկմտեց, զգալով, որ ստում եմ, հետո էլ համաձայնեց՝ ասելով՝ գնա, բայց մի 3-4 օրից անպայման վերադառնաս՝ խոստացա:

Նախաճաշից հետո ճանապարհվեցի: Երեկոյան հասա Ղարաքիլիսա (Ազատան)[16] ու գիշերեցի Սուքիաս ամու աղջկա՝

---

[16] Տվյալ դեպքում խոսքը Շիրակի երբեմնի Փոքր Ղարաքիլիսա, այժմ՝ Ազատան գյուղի մասին է:

Տիրունի տանը: Առավոտյան մեկնեցի քաղաք: Բավական չարչարվելուց հետո գտա Երանոսենց զորամասի շտաբը, որտեղ արդեն տեղավորվել ու աշխատանքի էր անցել իմ Եղվարդի ընկերը՝ Կարապետ Մնոյանը, որի հանդիպումը ինձ մեծ ուրախություն պատճառեց: Նա հանձն առավ հաջողացնել ինձ զինվոր վերցնելու գործում:

Գիշերեցի քավոր Գևորգի տանը, որը վիճակս տեսնելով խոստացավ ինձ մի աշխատանքի տեղավորել: Հաջորդ առավոտյան ժամի 10-ի մոտերքը եղա Կարապետի մոտ, նա ամեն ինչ ձեռնարկել էր, և ինձ ձևակերպեցին իբրև զինվոր, հետո՝ մի հրաման տալով, ուղարկեցին Կազաչի պոստ կոչվող զորանոցը: Ճանապարհին, երբ կարդացի հրամանը, պարզվեց, որ ինձ ուղարկում են զնդի վարժական վաշտը, որտեղ սովորելու եմ սերժանտ դառնալ: Այս բանը ինձ հնարավորություն ընձեռնեց անորոշ վիճակից դուրս գալու, ոչ մեկին հոգս չպատճառելու և, ամենագլխավորը, գաղտնի մնալու, ոչ ոքի ոչինչ չասելու իմ որտեղ և ուր լինելու կամ անելու մասին: Վարժական վաշտի հրամանատարը պարուչիկ էր (ավագ լեյտենանտ), մի համակրելի երիտասարդ՝ մոտ 30 տարեկան, որն ինձ սիրով ընդունեց:

1919 Թ. ԳԱՐՈՒՆ

Պարուչիկի (Նահապետյան ազգանունով) հրամանով, ես համազգեստ ստացա, քնելու պարագաներ ու այդ օրվա սննդի նորման... Ուրախությանս չափ չկար: Մինչև այդ, ես վաղ մանկությունից սիրում էի զինվորական կյանքն ու երազում զինվոր դառնալ: Վերջապես, երազս իրականություն դարձավ: Սակայն իմ ֆիզիկական տկարությունը վաշտի ինտենսիվ վարժություններին չէր դիմանում՝ հոգնում էի, հատկապես, առաջին շաբաթները շատ ծանր տարա ու, եթե մի ապրելու հնարավորության հույս ունենայի, երևի ես էլ, շատերի նման, կդասալքեի...

Օրերին հաջորդեցին շաբաթները, ամիսները, թնակոխեցինք 1919 թ. գարունը: Քաղաքում բավական անգլիական զորամասեր էին լցվել, որոնց հրամանատարական կազմը անգլիացիներ էին, իսկ զինվորները՝ հնդիկներ:

Լուրեր էին տարածվել, որ թուրքական զորքերը հետ են քաշվել, Արփաչայից անցել, և հայկական բնակավայրերը՝ Կարսը, Սարիղամիշը, Կաղզվանը, Օլթին, Սուրմալին, մի խոսքով, մինչև 1914 թ. սահմանները վերադարձվել են Հայաստանին: Լուրերը ընդունվում էին մեծ ոգևորությամբ: Գաղթվածների մոտ հույս է ներշնչվում՝ վերադառնալ իրենց հայրենի օջախները: Շատերն էլ կային, որ ուզում էին բնակություն հաստատել այդ ազատագրված բնակավայրերում: Համատարած ուրախությունը համակել էր բոլորին:

Եղանակները բավականին տաք էին, առատ կանաչ էր աճել, որով սնվում էր սովյալների մեծ մասը: Օր-օրի շատանում էր սովամահների թիվը, նրանք այնքան շատ էին, որ թափված էին ուղղակի փողոցներում, շատերը

հնարավորություն չունեին մերձավորին հողին հանձնելու, իսկ հետևանքը վարակիչ հիվանդությունների տարածվելն էր: Նախանձելի չէր նաև զինվորների վիճակը, որոնք կիսասոված, պակասը լրացնում էին կանաչի ուտելով: Մայիսի սկզբներին մեր գունդը մարտական պատրաստության բերվեց: Փոխեցին զինվորների հնամաշ հագուստները, կոշիկները, ուսապարկերը և, երրորդ օրը լուսաբացին, շարժվեցինք դեպի սահման, մեր վարժական վաշտը գնում էր առջևից իբրև ավանգարդ: Հասնելով սահմանին, երևաց, որ մեզանից առաջ ընկած է անգլիական մի զորամաս, որը պետք է սահմանի վրա կանգնի իբրև միջնորդ մեր ու թուրքերի միջև, միջադեպեր թույլ չտալու նպատակով, բացի այդ, նրանք էին կարգավորում մեր առաջընթացը, կամ կանգառները: Նրանց սերժանտների հրամանները պարտադիր էին մեր կապիտանների համար: Երկու օրում հասանք Կարս, մեր գունդը (հայկական I հետևակայինը) տեղավորվեց Ֆիլիգերներ կոչվող զորանոցում, որոնցից շատերը թուրքերը քանդել էին ու ավերել: Կարսը հյուսիս և արևմտյան կողմերից շրջապատված էր Ղարադաղ և Չախմախ բլրակներով, իսկ հարավային և արևելյան կողմերը հարթ էին, 10–40 մետր լայնությամբ, քաղաքից 34 կմ վրա, խրամատներ էին փորված մինչև բերդերին հասնելը: Խրամատները յոթ շարքով էին, ու բոլորը ստորգետնյա անցքերով կապված էին միմյանց հետ: Քաղաքում հայ բնակչություն գրեթե չկար, կային փոքր թվով թուրքեր: Շրջակայքի գյուղերը նույնպես դատարկ էին, բացի մալականների գյուղից, որոնք իրենց ունեցվածքով ապրում էին ու վայելում թուրքերի համակրանքը:

Մեր տեղ հասնելուց 2–3 օր անց քաղաքի բնակչության զգալի մասը վերադարձավ: Շուտով վերականգնվեց

երկաթուղագիծը, և զնացքները սկսեցին նորմալ երթևեկել։ Քաղաքում եղած զորամասերի մի մասը մեկնեց Սարիղամիշ, մյուսը՝ Կաղզվան, Մերդենիկ։ Վերադարձած բնակչությունը սնվելու ոչինչ չուներ, հարկադրաբար թալանում էին Կարսում բնակվող թուրքերի բնակարանները։ Թալանին մասնակցում էինք նաև մենք՝ զինվորներս, քանի որ մենք էլ մի լավ օրի չէինք։ Մեր զորանոցից մի կես կիլոմետր հեռավորության վրա կանգնած էր անգլիական մի ստորաբաժանում, որոնք ունեին 50–60 ջորի։ Մեր տղաները նկատել էին, որ հնդիկները ջորիներին կերակրում էին սիսեռով։ Մերոնց խմբին, որոնք արդեն գիտեին ջորիների կերակրելու ժամը, միացա և ես, ու երբ հնդիկները կերը բաժանելուց հետո հեռացան, մենք սիսեռը լցրինք մեր ուսապարկերն ու հեռացանք, այդ պրոցեսը կրկնվեց այնքան ժամանակ, մինչև անգլիացիք հեռացան։

Մեր զորամասը այդ օրերին հիմնականում զբաղվում էր շարային ու տակտիկական վարժություններով։ Ինքս անձամբ երեք անգամ պահակ եմ կանգնել գեներալ Բեկ-Փիրումովի դռանը, որը բնակվում էր Չախմախի ձորում, մի երկու անգամ՝ գեներալ Օսիպովի դռանը, զնդի շտաբի դրամարկղի վրա, որտեղ տեղի ունեցած դեպքը ողջ կյանքումս չեմ մոռացել։ Երեկոյան ժամը 10-ին փոխարինեցի ժամապահին, այնուհետև, թե որքա՞ն եմ արթուն մնացել, չգիտեմ, մեկ էլ երեսիս հասցված ապտակից աչքերս բացի, որ ի՞նչ տեսնեմ, հրացանս չկա, և հերթապահ օֆիցերը կատաղի ծեծի է ենթարկում ինձ՝ պոստում քնելու պատճառով։ Ինձ փոխարինող հերթափոխը եկել էր, բայց այս կատաղածը չի հանգստանում, տալիս է, հա՛ տալիս։ Ձեռքերը հոգնելուց հետո զցում է քացու տակ... Երևի **կսպաներ, եթե պատահականորեն դեպքի վայր չգար իմ վաղեմի ընկեր Կարապետը**, որի ներկայությունից կաշկանդվեց

չարագործը և դադարեց տանջամահ անելուց։ Դեպքից 10–12 օր անց մարմնիս տարբեր մասերում, գլխիս վրա դեռ երևում էին կապտած արյունազեղված տեղերը։ Վերքերս դեռ չապաքինված՝ ենթարկվեցի մի ավելի վատթար պատժի։ Գարնիզոնի պահեստի վրա ինձ պահակ նշանակած օրը հաջողվեց այնտեղից բավական արժեքավոր իրեր (օճառ, հագուստեղեն, ճարպ, պահածոներ) դուրս բերել ու, կես արժեքով, վաճառել մոտակա զորձակատարին։ Բավական գումար կազմեց։ Հաջորդ օրը, թույլտվությամբ, մեկնեցի քաղաք։ Շուկայում որևէ ուտելեղեն չճարելով՝ հարկադրված մտա ճաշարան, ճաշ խնդրեցի, երբ սկսել էի ուտել, պատահաբար ներս մտավ իմ դասակի հրամանատար Եփրեմ Սարգսյանը և ֆելդֆեբել Մուշեղ Նարիգյոզյանը։ Տեսնելով նրանց՝ սարսափեցի, աշխատելով աննկատ մնալ, բայց իզուր, նրանք արդեն ինձ տեսել էին, մի կերպ ճաշս կերա և ուզում էի դուրս գալ, հրամանատարս կանչեց իր մոտ և պատվիրեց դրսում սպասել մինչև իրենց դուրս գալը։ Անհանգիստ դուրս եկա, մտածում էի ի՞նչ անել, փախչել, միևնույն է սրանցից չեմ պրծնի, մնամ, մոտս եղած արյան գնով ձեռք բերած դրամից կզրկվեմ։ Որոշեցի դրամը փրկել, որ դեռ ինձ պետք է գալու։ Մի քանի քայլի վրա պատահական հանդիպեցի մայրիկիս հորեղբոր տղայի կնոջը՝ արթիկցի Զինային։ Ինձ թվաց երկնքից լույս ճառագեց։ Մի երկու խոսքով ասացի, թե ինչը ինչոց է ու գումարս հանձնեցի նրան, խնդրեցի հեռու չգնալ ու հետևել ինձ։ Վերադարձա ու ճաշարանի մուտքի մոտ սպասեցի, մինչև հրամանատարներս դուրս եկան և սկսեցին հարցաքննել, թե որտեղի՞ց ինձ գումարը, ո՞վ է տվել և այլն։ Իմ բոլոր փաստարկներին բանի տեղ չէին դնում, ըստ երևույթին, ենթադրելով, որ ինչ ճանապարհով կարող է փող ձեռք բերած

լինեմ: Սկսեցին խուզարկել, ոչինչ չգտան: Մի երկու ապտակ հասցրին՝ պահանջելով խոստովանվեմ, դարձյալ, ոչինչ չխոստացա: Եվ այսպես տանջանքները երկար պետք է շարունակվեին, եթե քեռակին Զինան չմոտենար: Անմիջապես ինձ խլեց այդ բորենիների ձեռքից ու բռնեց նրանց օձիքներից, որոնք նրա հաղթանդամ ձեռքերի մեջ մնացել էին ապշած, թե այս ինչ է կատարվում, իսկ քեռակնոջ բղավոցների վրա բազմություն հավաքվեց, որոնց պատմեց այս օֆիցեր կոչեցյալների վայրագության մասին, որոնք անխնա ծեծի են ենթարկում իր հարազատին: Այս դեպքը խիստ անհարմար վիճակի մեջ դրեց հրամանատարներին ու ստիպված գլխիկոր հեռացան:

Քեռակին Զինան այդ օրերին ամուսնու և երեխաների հետ փոխադրվել էր Կարսում մշտապես բնակվելու պայմանով:

Այս դեպքից անմիջապես հետո վերադարձա զորանոց: Մտախոհ սպասում եմ, թե ինչ դատաստան է սպասում ինձ, գիտեմ, որ նրանից խուսափելն անհնարին է: Երեկոյան ստուգումից հետո, ինձ կանչեցին վաշտի գրասենյակ, որտեղ բացի վերը հիշատակված գայլերից, ներկա էր և վաշտի հրամանատար Նահապետյանը: Երկար ու բարակ հարցաքննությունից հետո զգացի, որ պարոն պարուչիկը այնքան էլ զայրացած չէ իմ հանդեպ, նրա մեղադրանքը հիմնականում այն էր, որ ես, իբրև զինվոր, ճաշարան մտնելու իրավունք չունեի: Դրա համար էլ իբրև պատիժ նշանակեց երկու անհերթ պահակության, որից առաջինն անմիջապես իրագործվեց՝ ընդունեցի վաշտի հերթապահությունը: Պարուչիկը գնաց, բոլորը քնեցին: Կես գիշեր էր, բայց ֆելդֆեբելը և դասակապետը գրասենյակում էին: Միջանցքում նստած տեղս մեկ-մեկ ննջում էի, հանկարծ մի ձայն լսեցի,:

Շուրջ բոլորս խաղաղ էր, մտա զորանոց, երբ մոտեցա լուսամուտին, տեսնեմ՝ գրասենյակի պատուհանի տակ կանգնած են երեք մարդ, որոնցից մեկին ճանաչեցի, ֆելդֆեբելի փեսան էր, II հարկից ինչ-որ ծանրոց էին իջեցնում: Ներքևում կանգնածները իջեցրած պարկը կտրեցին, յուրաքանչյուրը երկուական հրացան վերցրեց ու հեռացավ: Ես լռեցի և ոչ ոքի չհայտնեցի, քանի որ ես վաշտի պահեստի համար պատասխանատու չէի ու, բացի այդ, զողացողները ֆելդֆեբելի և դասակապետի համախոհներ էին: Առավոտյան ավազակների եռյակը տուգնապ աղաղակ բարձրացրին, թե գիշերը պահեստը կտրել են, գողացել են վեց հրացան և հագուստեղեն, մթերք և այլն: Մինչև հրամանատարիս գալը, ինձ ազատեցին հերթապահությունից, կալանքի վերցրին: Ամբողջ մարմնով դողում եմ: Այնպես եմ ահաբեկվել, որ քիչ է մնում ես էլ հավատամ ավազակների անմեղությանը, ինչպես ձևանում են: Մինչև հրամանատարի գալը ինձ մի լավ մշակեցին, քիթ ու բերանս արյունլվա արին: Ստիպում էին, որ ես հանձն առնեմ գողությունը: Այս օրհասական պահին էր, որ ներս մտավ Նահապետյանը: Տեսնելով արյունաշաղաղ վիճակս՝ հայհոյեց չարագործներին, դեմքս մաքրել տվեց, այս ընթացքում ստարշինան, հարմար մոմենտ գտնելով, ինձ մոտեցավ, զգուշացրեց, որ բերանբացություն չանեմ ու ավելորդ բաներ չասեմ, հակառակ դեպքում՝ կսպանեն ինձ: Հրամանատարը սկսեց հարցաքննել, նրա բոլոր հարցերին բացասական պատասխան տվի, տեսնելով, որ ես ոչինչ չեմ ասում, ստիպված հրաման գրեց ու ինձ ուղարկեց գնդի բանտը: Երկու օր բանտում մնալուց հետո ազատեցին և վերադարձա վաշտ: Գողացած զենքերը 2 օր հետո հայտնաբերվեցին: Պարզվեց, որ այդ զենքերը վաճառել էին տեղացի թուրքերին,

որոնցից մեկի բնակարանը խուզարկելիս գտել էին զենքերից մեկը և թուրքին ստիպել բացատրել, թե որտեղից և ինչպես է այն ձեռք բերել: Թուրքը ամեն ինչ ասել էր և մատնացույց արել վաճառողին: Ողջ հանցանքն, ի վերջո, բարդվեց պահեստապետի վրա, որին էլ դատեցին, իսկ ֆելդֆեբելը և դասակի հրամանատարը չոր դուրս եկան:

Ունեցածս դրամը բավական արագ ծախսեցի, բացի ուտելեղենից ուրիշ բան չէի գնում, իսկ մթերքների գները ավելանում էին ժամառժամ: Ի վերջո, միջոցներս սպառվեցին, ու նորեն սկսվեց կիսաքաղց զինվորական կյանքը: Օրերից մի օր պատահականորեն հանդիպեցի մեր գյուղացի Մալխասենց Բարեղամին, որը նույնպես ծառայում էր իբրև զինվոր: Հարց ու զրույցից հետո հայտնեց, որ այդ օրը խոհանոցում հերթապահելու են ու ինձ հրավիրեց ճաշ ուտելու: Խոհանոցի պատի տակ սպասում եմ, թե երբ Բարեղամը կգա, պատահաբար աչքս ընկավ խոհանոցի լուսամուտին, որտեղ դրված էր երկու ման ճարպ, յուրաքանչյուրը մոտ 10 կիլոգրամի չափ: Շրջապատում որևէ մարդ չերևաց. վայրկենաբար միտք ծագեց՝ օգտվել հարմար պահից և ճարպը թոցնել: Այդպես էլ արեցի: Վերցնելով, այն տարա ու թաքցրի քանդված զորանոցներից մեկում, ու վերադարձա համացուղացուս խոստացած ճաշը վայելելու: Եվ ի՞նչ տեսա: Խոհանոցի դռանը հավաքվել է այդ զորամասի զինվորների մեծ մասը, կալմեջ են արել Բարեղամին ու ջարդում են, որը՝ ոտքով, որը՝ ձեռքով, որը՝ փայտով: Խեղճ անմեղն արդեն ուշակորույս է, ոչ ոք չգիտեր ծեծի պատճառը: Հերթապահ սպայի գալուց հետո, նոր միայն հայտնի դարձավ, որ խոհանոցի յուղի անհայտացումը կապում են Բարեղամի հետ: Խեղճ մարդն, իմ հանցանքի հետևանքով, խստագույն պատժի ենթարկվեց: Խիղճս տանջում էր ինձ այդ տեսարանին

նայելիս, բայց տվյալ պահին ոչինչ անել հնարավոր չէր։ Վերջապես գիտակցությունը կորցրած մարդուն դադարեցին ծեծելուց։ Այժմ անհրաժեշտ էր նրան շտապ օգնություն՝ ուշքի բերելու համար, սակայն որևէ բուժ. միջոց չկար, բացի ոկանջները քաշելուց և երեսին ջուր շփելուց։ Ի վերջո, այդ միջոցով Բարեղամը զգաստացավ։ Առաջին բառը, որ արտասանեց, այն էր. «Երանի իմանայի, թե ով է ճարպը տարել ու մեռնեի»։ Ես չափազանց ազդվեցի, խիղճս ինձ տանջում էր, ուզում էի խոստովանվել, բայց վախենալով, որ նա իսկությունը կասի և ինձ էլ նրա օրը կգցեն, հարկադրված լռեցի՝ մի որոշ ժամանակ անց ասելու նպատակով։ Բարեղամին տարանք ու պառկեցրինք իրենց զորամասում։ Տանելիս ինձ օգնեց Խալաթենց Սեթիկը, որը նույնպես ծառայում էր մեր մոտ։ Հաջորդ և մյուս երկու-երեք օրերում այցելում էի Բարեղամին։ Նա աստիճանաբար լավի էր գնում՝ արդեն կամաց-կամաց սկսել էր քայլել։ Նրա մտահոգության առարկան մնում էր ճարպ տանողի ով լինելը իմանալը։ Տեսնելով նրա հոգեկան վիճակը՝ որոշեցի հայտնել գաղտնիքը, միայն խնդրեցի, որ ոչ ոքի չասի։ Նա խոստացավ, ու ես ամենայն մանրամասնությամբ պատմեցի, հետո էլ տարա ցույց տվեցի, թե որտեղ է պահված։ Նա երկար ժամանակ լուռ էր, երկմտանքի մեջ։ Վերջում նորից կրկնեց, որ ոչ ոքի չի ասի ու պայմանավորվեցինք վաճառել ու կիսել։ Իրոք, վաճառքից ստացված գումարի մեծ մասը տվեցի Բարեղամին։

1919 թ. օգոստոսի կեսերին մեր վարժական վաշտը կարգի բերվեց, ստուգվեց, լրացվեց փամփուշտների պակասը, ու մի երեկո ուղղություն վերցրեց երկաթուղային կայարան։ Տեղավորեցին վագոններում, բայց ուր են տանելու՝ չհայտնեցին։ Գիշերով դուրս եկանք Կարսից, հաջորդ օրվա

ճաշին արդեն Սարիղամիշում էինք։ Մի երկու օր անց՝ միանալով հայկական չորրորդ գնդի մի գումարտակին և գնդացրային վաշտի հետ, ուղևորվեցինք դեպի հարավ։ Կաղզվանի շրջակայքով մոտեցանք Բասենի գավառին, որի մի կեսը թուրքերի ձեռքին էր։ Քանի որ շրջապատում կային թուրքական բնակավայրեր, դրա համար էլ մեր առաջընթացը կատարվում էր հիմնականում գիշերային մթության պայմաններում։ Մթությունը՝ մի կողմից, տեղանքին անծանոթ լինելը՝ մյուս կողմից, դժվարացնում էին մեր երթը։ Այն զինվորները, որոնք ինչ-ինչ պատճառներով (մեծ մասամբ տրեխների թելերը կապելու, 90 %-ը տրեխներով էին) շարքերից հետ էին ընկնում, իսկույն պատժվում էին զորագնդի հետևից եկող փոխգնդապետ Ազիզյանի կողմից։ Լուսաբացին մոտեցանք մի թուրքական գյուղի, որի պահակ հետախույզներն, ըստ երևույթին, մեզ նկատել էին, ողջ գյուղին ոտքի էին հանել, որոնք էլ բավական հեռվից սկսեցին կրակոցները։ Առաջին կրակոցները մեր հրամանատարությանը զգաստացրեցին։ Վերակազմավորվեցին, յուրաքանչյուր վաշտի առանձին խնդիրներ առաջադրեցին. շարժվելով տարբեր ուղղություններով՝ շրջապատել գյուղը։ Մեր վաշտը պետք է շարժվեր ուղիղ ճանապարհով, ունենալով երկու գնդացիր, դանդաղ պետք է առաջանայինք՝ թշնամու ուշադրությունը մեր վրա կենտրոնացնելու, որպեսզի մյուս երկու վաշտերին հնարավորություն ընձեռնվեր, անաղմուկ ու գաղտնի շրջապատելու գյուղը։ Լույսը բացվելու հետ նկատելի դարձան գյուղի մոտակա շինությունները։ Մեզ հրաման տրվեց գնդացիրները գործի դնել։ Հակառակ կողմից ավելի կատաղի կրակ տեղաց։ Մերոնցից մի քանիսը վիրավորվեցին, առաջանալը դժվարացավ, քանի որ թուրքերը քողարկված էին, իսկ մենք՝ բաց դաշտում։

Արևը ծագելուն պես գյուղի հակառակ ծայրերից միանգամից լսվեցին մեր դարանակալ վաշտերի հրացանային համազարկերը: Մենք ևս ուժեղացրինք կրակը: Գյուղի պաշտպանները, զգալով, որ ընկած են շրջապատման մեջ, մի պահ շփոթվեցին և կրակը դադարեցրին: Օգտվելով կարճատև դադարից, մեր վաշտը խուժեց մոտակա շենքերը, մարագների պատերի տակ դիրքավորվեց՝ սպասելով հետագա ընթացքին: Գյուղը, որ մինչ այդ լուռ էր, միանգամից տագնապահար եղավ, գոռում–գոչյունը, լացն ու կոծը, աղաղակը, երկինք բարձրացավ: Այդ պահը մեր վրա ճնշող ազդեցություն թողեց, սակայն, երբ հիշեցինք մեր ժողովրդի անցած օրերը, երբ թուրք բարբարոսները սրի էին քաշում, կողոպտում, թալանում ու բռնաբարում, սթափվեցինք և, ակն ընդ ական-ի սկզբունքով, անցանք վրեժխնդրության: Գյուղի պաշտպանների մի մասը զոհվել էին, իսկ մյուսները փախուստի դիմեցին: Մեր զորամասը բոլոր կողմերից խուժեց գյուղ: Պատահած ասկյարներին ջնջում էինք ու մուտք գործում բնակարանները՝, սնունդ և թանկարժեք իրեր ձեռք բերելու նպատակով: Երբ մեր վաշտը զբաղված էր թալանով, գյուղի հակառակ կողմից ուժեղ կրակոցներ լսվեցին: Բանից պարզվեց, որ հակառակորդն, իր ուժերը համալրելով գյուղի զինված ջոկատներով, կարողացել է միջանցք բացել ու այնտեղից փախչել: Մինչև մենք շտապեցինք օգնության, թշնամին բավական հեռացել էր: Գյուղը վերջնականապես գրավելուց հետո 2 դասակ թողնվեց իբրև կայազոր, իսկ մնացածով սկսեցինք հետապնդել թշնամուն:

Մեր վաշտը հրաման ստացավ անցնել Արաքսը և մյուս ափում թուրքական մի գյուղի լռեցնել ու սպասել նոր հրամանի: Մինչև Արաքսին հասնելը նախ պետք է հաղթահարել Զառիթափ ձորի ժայռերն ու ոլորապտույտ անցումները, որը

բավական ժամանակ խլեց: Գետի հունի մոտ երկու կողմից բավական ընդարձակ հարթություն կար, որտեղ կանաչին էին տալիս մրգատու ծառերը, խաղողի այգիները, բանջարանոցները: Մեզանից շատերը, ինչպես և ես, այդ բույսերի և ծառատեսակների մասին գաղափար չունեինք: Այնպիսի ձմերուկներ կային, որ կարծես տոննանոց լինեին: Հնարավոր չէր, որ մի հոգին կարողանար բարձրացնել: Ինչքան հնարավորություն ունեինք, կերանք: Ուսապարկերում էլ բավական մրգեր լցրինք ու, մայրամուտին մոտ, անցանք Արաքսը: Մեծ դժվարությամբ հաղթահարեցինք ձորի վերելքը: Լուսադեմին հասանք մեր նպատակակետին՝ գյուղին: Հետախույզները հաղորդեցին, որ գյուղում բնակիչներ չկան: Նախորդ օրվա փախստականները սրանց նախազգուշացրած են եղել մեր հարձակման մասին, որի պատճառով էլ սրանք լքել, փախել են:

Երբ մտանք գյուղ, բացի մի քանի հիվանդ զառամյալներից, ոչ ոք չկար: Տարել էին նաև անասունները: Մեզ բաժին հասան մի քանի ջարդոտված ոչխարներ և մեծ քանակի հավեր: Բացի այդ, ամբարները լի էին ցորենով, ալյուրով, յուղով, պանրով և այլ մթերքներով, հարյուրավոր մեղուներ կային: Այնպես որ, եթե ամիսներով մնալու լինեինք այստեղ, ուտելիքի պրոբլեմ չէինք ունենալու: Աստված ենք կանչում, որ մեր մնալը այստեղ երկարի և պատահարներ չլինեն: Մեր գյուղ մտնելու երրորդ օրը, լուսաբացին մոտ, հանկարծակի լսվեց հրացանային հսմազարկ: Խուճապահար ոտքի կանգնեցինք և սկսեցինք դիմադրել: Պարզվեց, որ գյուղում մնացած հիվանդների և զառամյալների հարազատները, հավաքագրելով ուրիշ փախածների և օգտվելով մեր անզգուշությունից, գիշերով թափանցել են գյուղ ու լուսադեմին հարձակվել մեր վրա: Բավական կատաղի մարտ սկսվեց: Տալով մեկ սպանված և մի քանի վիրավոր, մենք

սթափվեցինք և անցանք հակահարձակման: Խուժանը, չդիմանալով մեր հուժկու կրակոցներին, փախուստի դիմեց՝ թողնելով ավելի քան 25 սպանված (վիրավորներին փախցրին, տարան): Այս միջադեպից հետո մեզ ոչինչ չէր մնում անել, քան գյուղի բոլոր ողջերին բնաջնջել, որոնց խաթրին մինչ այդ օրը չէինք կպել:

Երեկոյան ստացվեց գլխավոր հրամանատարի հրամանը՝ հաջորդ առավոտյան միանալու հիմնական զորախմբերին: Ժամանակը խիստ կարճ էր, ամենը ձգտում էր որքան հնարավոր է շատ մթերք վերցնել: Ոմանք, նույնիսկ, չհասցրին իրենց հավերը մորթել, մաքրել: Գնդացրային ջոկի ջորիների ու էշերի վրա հիմնական բեռից բացի 20-30 կենդանի հավեր էին բարձել:

Հաջորդ օրը դուրս եկանք Սարիղամիշից Բասեն տանող ճանապարհը, որտեղ մեզ սպասում էին մի ջոկատ զինվորներ, մեր գնալիք ճանապարհի ուղղությունը ցույց տալու համար: Երրորդ օրվա վերջում հասանք Բասենի բուն կենտրոն՝ Բաշգյուղը: Բնակիչներ բոլորովին չկային: Նրանք հեռացել էին 1918 թ. գարնանը: Շրջակայքը թուրք գյուղացիները քանդելու, ավերակների էին վերածել ողջ գյուղը, կանգուն էր մնացել միայն հայկական եկեղեցին: Նրա էլ դռներն էին պոկել տարել: Եկեղեցում տեղավորված էր հայկական սահմանապահ ջոկատը, որոնց թիվը հարյուրից չէր անցնում: Թուրքերը այդ գյուղից հեռու էին մի 5-6 կիլոմետրի չափ:

Բաշգյուղում մնացինք մոտ մեկ ամիս: Սնվելու գործը նորից վատացել էր՝ օրեկան ստանում էինք մեկուկես ֆունտ (600 գր) հաց ու մի անգամ էլ՝ տաք կերակուր: Հրամանատարական կազմի թույլտվությամբ՝ երբեմն մտնում էինք թուրքական գյուղեր և այնտեղից ուտելիք բերում:

Մեր համագյուղացի Նազարի Սահակը, որի հետ կող կողի էինք քնում, մի առավոտ ֆելդֆեբելին բողոքեց, որ իր

սպիտակեղենը գողացել են: Վերջինս, որ հին հաշիվներ ուներ ինձ հետ, գողությունը վերագրեց ինձ և արջավարի հարձակվեց վրաս: Թե որքան խփեց, չգիտեմ (ուշակորույս էի եղել)... Երբ աչքերս բաց արի, կողիս նստած էր իմ բախտակից ընկերը՝ Ղարամայմուտ[17] (Ալեքսանդրապոլի մոտ) գյուղից Նիկոլ Ստեփանյանը:

Հաջորդ օրը մեր վաշտի տղաներին հաջողվում է շուկայում բռնել Սահակի սպիտակեղենը վաճառող ճճղլարցի Գրիգորին, որին, քարշ տալով, գորանոց բերին: Ճիշտ է, ֆելդֆեբելը սրան էլ պակաս չտեսավ, բայց թե դրանից ինձ ի՞նչ օգուտ: Սահակը մի շարք փորձեր արեց ինձ հետ հաշտվելու, վերականգնելու մեր նախկին հարաբերությունները, բայց ես անդրդվելի մնացի:

1919 թ. հոկտեմբերի երրորդ կեսին մեր գորամասը վերադարձավ Կարս:

Նոյեմբեր ամսին վերջացավ մեր ուսուցումը: Գերազանց քննություն տվի և ավագ ունտեր օֆիցերի (ավագ սերժանտ) կոչում ստացա: Շատերը նախանձով էին նայում ուսադիրներիս: Ինձ հետ սովորող Նազարի Սահակին եֆրեյտորի կոչում տվին: Քննությունից հետո ինձ նշանակեցին 7-րդ վաշտում դասակապետ, որի ֆելդֆեբելը Եղսոյենց Երանոսն էր: Վաշտը տեղավորված էր Կաղզվանամ: Նոյեմբերի վերջերին, մի խումբ զինվորներով, մալականների ֆուրգոններով երեք օրյա ճանապարհորդությունից հետո հասանք Կաղզվան: Ինչպես ճանապարհը, այնպես էլ քաղաքը, բավական գեղատեսիլ էին: Վաշտում, բացի Երանոսից, համագյուղացիներից այնտեղ էր Սիմոյենց Սիմոնը, նրա եղբայր Սեդրակը, Մուղսոնց Ներսեսը: Հաջորդ առավոտ

---

[17] Ղարամայմուտը (Ղարամահմադ) ներկայումս Գյումրիից հյուսիս-արևմուտք ընկած Մեղրաշատն է:

ներկայացա վաշտի հրամանատար Աշոտ Օդաբաշյանին ու նշանակվեցի երկրորդ դասակի հրամանատար: Սիմոնը առաջին դասակի հրամանատարն էր:

Քաղաքի բնակչության կեսից ավելին թուրքեր էին, այդ պատճառով՝ միշտ զգոն վիճակում էինք, նույնիսկ զիշերները քնելիս՝ հագուստներս չէինք հանում, հնարավոր անակնկալներին պատրաստ լինելու համար: Մեծ մասամբ պարեկության էինք գնում: Թուրքական սահմանը քաղաքից 5 կիլոմետրի վրա էր: Կայազորի պետը գնդապետ Շակորուտովն էր: Մեր գնդից մի գումարտակի ու գնդացրային վաշտի հրամանատարը ալեքսանդրապոլցի գնդապետ Մազմանյանն էր: Այդ օրերին թուրքական սահմանից հաճախակի լսվում էին հրաձգային զարկեր: Տեղական թուրքերը բավական անհանգիստ էին, երբեմն գաղտագողի հափշտակում էին մեր զինվորներին, խոշտանգում ու դիակները նետում փողոց: Մեկի փոխարեն թեև տասից էինք վրեժ լուծում, բայց դրանով վիճակը չէր կայունանում:

1920 թ. հունվարի կեսերին մեր գումարտակը հրաման ստացավ մեկնել Սարիղամիշ: Այդ ժամանակ զինվորների մի զգալի մասը վատ էր հագնված, կոշիկներ չունեին, երթի ընթացքում բոլորին տրեխ բաժանեցին, ցուրտ էր, ձյուն, բուք: Լավ չէր նաև սննդի վիճակը: Երկու օրվա նորման միանգամից ստացանք, շատերը այն իսկույն խժռեցին ու սոված շարունակեցին երթը: Ոմանց հույսը գյուղերից մի բան թոցնելն էր, բայց գյուղերը դեռ 18 թվականից ավերված էին ու թալանված, նրանք էլ բացարձակապես անօգնական էին ու սովի մատնված:

Ըստ կարգադրության՝ երթը պետք է տևեր 5 օր, բայց մենք տեղ հասանք միայն 7-րդ օրը: Բարեբախտաբար, ճանապարհին հանդիպեցինք երկու շեն գյուղերի, որոնք

պստկանում էին թուրքերին, որտեղից սննդամթերք ճարեցինք, մի գիշեր էլ կարողացանք հանգրվանել, նոր ապա ճանապարհը շարունակել: Երբ դուրս եկանք վերջին գյուղից, զինվորների մեծ մասի ուսապարկերում բավական սննդամթերք էր լցված: Առանձին ճարպիկներ էլ պարծենում էին, որ գիշերը անց են կացրել թրքուհիների հետ: Երթի ընթացքում խիստ հոգնածության էի զգում ու, եթե չլինեին դասակի տղաները, երևի անկարող լինեի ճանապարհը շարունակելու: Նրանք ինձ նայում էին ոչ թե իբրև հրամանատարի, այլ իբրև երեխայի: Սարիղամիշում մնացինք մինչև 1920 թ. փետրվարի կեսերը: Այստեղ բնակչության վիճակն ավելի անտանելի էր: Համատարած սովից տուսնյակներով մեռնում էին, տարածվել էին համաճարակային հիվանդություններ: Բնակչությունը, ինչպես նաև զինվորներն, ահաբեկված էին թափառաշրջիկ մաուզերիստներից, որոնք ոչ ոքի չէին ենթարկվում, զբաղվում էին թալանով, որսում գեղեցիկ կանանց և, ամենաչնչին պատճառներով, առանց հարցաքննության գնդկահարում մարդկանց: Սրանք գրեթե ոչնչով չէինն տարբերվում թուրք բարբարոսներից, սրանց համար ոչ օրենք կար և ոչ էլ իշխանություն:

Փետրվարի երրորդ կեսերից մեր զորամասը կրկին վերադարձավ Կարս: Դեռ ամիսը չլրացած՝ բոլոր զինվորներին տվեցին նոր անգլիական հագուստեղեն, փոխվեց նաև սպառազինությունը:

Մարտի կեսերին, երբ քաղաքի փողոցով քայլում էի, քիչ հեռու նկատեցի մի երիտասարդ տղամարդու ու մի գեղեցիկ կնոջ: Կարծելով, որ Ինտիզարն է եղբոր հետ, շփոթվեցի, երեսս շուռ տվի հակառակ կողմը և հեռացա, աշխատելով աննկատ մնալ նրանցից: Ամբողջ մարմնով դողում էի: Նրանցից

բաժանվելուց հետո Ինտիզարին երբեք չեմ մոռացել, բայց նկատի ունենալով նրանց վերաբերմունքը և իմ անհուսալի վիճակը և այն, որ իմ պատճառով այդ գեղեցկուհին կյանքում դժբախտ կլինի, որոշել էի բոլորովին ի հայտ չգալ, մնալ անհայտության մեջ, որպեսզի նա ցանկացած ձևով տնօրինի իր կյանքը:

Հասնելով զորամաս՝ պատմեցի ավագ ընկերոջս ու բարեկամիս՝ Սիմոնին, տեսիլքիս մասին: Բավական երկար զրուցեցինք: Համոզեց ինձ, հանգստացրեց, թե վերջը լավ կլինի: Շնորհակալություն հայտնելով բարեկամիս խորհրդի համար՝ դուրս եկա: Գարնան բացվելու հետ մեր վաշտը համալրվեց նոր զորակոչիկներով (մոտ 50 զինվորով): Միաժամանակ, օր-օրի ավելանում էր դասալիք զինվորների քանակը: Հաճախ դասալիքներն իրենց հետ տանում էին նաև զենքեր: Մեր ֆելտֆեբել Երանոսը չափազանց անհանգիստ էր: Օրական երկու անգամ ստուգում էր անցկացնում և զորամասից ոչ մեկին չէր թույլատրում քաղաք մեկնելու: Մեր դասակում ծառայում էր սերվանջուղցի Դավոն, եղբայրը՝ Համոն և Ալեք Թադևոսյանը: Մի քանի օր անընդմեջ Դավոն ինձանից թույլտվություն էր խնդրում քաղաք մեկնելու համար: Հակառակ ավագի կարգադրության, ի վերջո, ես ընդառաջեցի և թույլատրեցի նրան քաղաք մեկնել: Վերադարձին նա ինձ զաղտնի ասաց, որ մասնակցել է ինչ-որ հեղափոխական ընդհատակյա ժողովի:

Ապրիլի վերջին մեր հինգերորդ գունդը, որ տեղավորված էր բերդի «Չախմախ» կոչված զորանոցում, ապստամբության դրոշ բարձրացրեց: Մի երեք օր անց ամբողջ գունդը դրոշներով, լոզունգներով, շքերթ կազմակերպեց քաղաքի փողոցներով: Մեր գունդը փակված էր զորամասում: Հետո, վերադասի

հրամանով, ինչպես մեր գունդը, այնպես էլ մյուս զորամասերը զինված, պետք է դուրս գային փողոց և զինաթափեին հինգերորդ գնդին: Մեր վաշտը, զենքերը վերցրած, դուրս գալու վրա էր, երբ պայթեց Դավոյի նոնակը: 25-30 մարդ վիրավորվեցին: Վաշտի մնացած զինվորները զբաղվեցին վիրավորներին օգնության ցույց տալով և այդպես էլ զինաթափմանը չմասնակցեցին:

Ապստամբությունը ճնշվեց, հինգերորդ գնդին զինաթափ անելուց հետո մեծ թվով զինվորներ կալանավորվեցին, շատերն էլ փախուստի դիմեցին: Անհրաժեշտություն առաջացավ նոր համալրման: Համալրումը կատարվեց հիմնականում տարիքավոր գյուղացիներից և թույլ, անառողջ երիտասարդներից:

Մայիսի վերջերին մեր գնդի 3 գումարտակները երթի դուրս եկան դեպի Մերդնինիկ, Կարսից մոտ հարյուր կիլոմետրի վրա: Երկու օրում հասանք Լիճք կոչվող բնակավայրը: Գիշերը բավական տագնապալի էր, ցաք ու ցրիվ կրակոցներ էին լսվում, որի հետևանքով քնել չկարողացանք: Լուրեր էին պտտվում, թե շրջապատի թուրք գյուղերից փորձեր են արվում մեզ շրջապատել ու կոտորել: Որքան հավաստի էին լուրերը, հայտնի չէր: Միայն առավոտյան մենք, խմբերի բաժանված, գրոհեցինք թուրքական գյուղերի վրա և, ինչպես պետք էր, լավ դաս տվինք: Մոտ տասը գյուղեր լավ ջարդ ուտելուց հետո, հանգստացան: Մենք էլ, մեր ուսապարկերը մթերքով լցնելուց հետո, նորից վերադարձանք Լիճք: Զինվորները գիշերը խարույկ էր, որ վառել էին, ամենը իր բերածը եփել, թխելով էր զբաղված: Արևածագին երթի ազդանշանը հնչեց: Գունդը շարվեց, գնդապետ Մազմանյանը ողջունելուց հետո հայտնեց, թե ուր և ինչու ենք գնում, ու հրամայեց շարժվել:

Ճաշի մոտերքը մեր շարասյունը մոտեցավ մի խորը ձորի,

որի անունը չգիտեմ, երբ դուրս եկանք ձորի հակառակ ափ ու մոտեցանք Գյոլա կոչվող հարթավայրին, զարմանքից քարացանք՝ ողջ դաշտը լցված էր գոմեշներով: Ասում էին, որ այդտեղի ամեն մի գոմեշից տարեկան 10-15 փուտ յուղ է ստացվում: Այդ մեզ հետաքրքիր չէր, այլ այն, թե քանի մատակ կարող ենք մորթել ու խորովել: Այդ զիշեր էլ զբաղվեցինք դրանով:

Առավոտյան վաղ արթնացրին ու նախազգուշացրին, որ հրաման է ստացվել, որ այսօր անպատճառ մենք պետք է մտնենք Մերդենեկ: Բոլորը դժգոհեցին, նախ ճանապարհները բավական երկար էին և, հետո էլ, գոմեշների հարցը լրիվ լուծված չէր: Ի՞նչ կարող էինք անել՝ "приказ есть приказ»»: Երեկոյան կռվում հոգնած, բեզարած, թուլացած մտանք Մերդենեկ: Լավ էր, որ չտեղավորվեցինք շենքերում, թե չէ այս վիճակներիս հետ ցրտին (թեև հունիս ամիսն էր) չէինք դիմանա:

Մեկ շաբաթյա հանգստից հետո ստուգվեց մեր ողջ ունեցվածքը՝ հագուստեղենը, կոշիկները, զենքերն ու զինամթերքը, և մարտական պատրաստակամության բերվեց: Յուրաքանչյուր զինվորի տրվեց 100-ի չափ փամփուշտ, երկուական նռնակ և հունիսի կեսերին, մի քանի խմբերի բաժանված, դուրս եկանք Մերդենեկից: Գնդապետ Մազմանյանը ուղեկցվեց դեպի Օլթի՝ իր հետ վերցնելով մեր գնդից երկու գումարտակ, Մերդենեկի կայազորից էլ մեկ գումարտակ, մեկ հրանոթային մարտկոց և երեք էսկադրոն հեծելազոր: Մերդենեկի կայազորի մեր գումարտակը շարժվեց Մազմանյանի աջ կողմից: Մեկ էսկադրոնը, երկու գնդացրային դասակները, մեր վաշտի հետ, շարժվեցին դեպի Արդահան տանող ճանապարհը:

Մեր մեկնարկի առաջին երկու օրերը անցան առանց որևէ միջադեպերի: Ճանապարհին հանդիպած գյուղերը դատարկ էին, բնակչությունը փախուստի էր մատնված, թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը: Մեր սննդի պակասը լրացնում էինք տներում եղած ամեն տեսակի մթերքներով: Երրորդ օրը թողեցինք Արդահան տանող ճանապարհը և թեքվեցինք դեպի ձախ: Զորամասը բացվեց և սկսեց առաջանալ շղթայաձև: Հետախույզները նախազգուշացրին, որ մոտակայքում նկատվում են թուրք ասկյարներ: Հրամայվեց ստեղծել պաշտպանական գիծ: Իմ դասակին հրամայվեց շարժվել առաջ, որպես ավանգարդի: Շարժվում էինք բավական դանդաղ, զգույշ, ստուգում շրջակայքի կասկածելի հատվածները: Աստիճանաբար մոտեցանք և մտանք անտառ, որն ավելի վտանգավոր էր, քան հարթ ճանապարհը: Շարժվում ենք քողարկված, խոսում շշուկներով, երբեմն էլ իրար հասկացնում շարժ ու ձևով, միմիկայով: Ճաշվա մոտերքը կանգ առանք, հանգստացանք, ճաշեցինք ու սրոատրոփ սպասում էինք, թէ ինչով է վերջանալու վերահաս ճակատամարտը: Բավական լարված վիճակում էի ես, որ առաջին անգամ էի ճակատամարտելու որպես դասակի հրամանատար, արդյո՞ք արդարացնելու եմ ինձ: Դասակում զինվորներ կային, որոնք եղել էին կռիվներում (գերմանական, թուրքական ռազմաճակատում): Անհրաժեշտության դեպքում, դիմում եմ նրանց օգնությանը: Կարճատև հանգստից հետո սկսեցինք առաջանալ: Կես ժամ չանցած հետախույզները հաղորդեցին թշնամու մոտալուտ լինելը: Մեր ուժերը վերադասավորվեցին, համալրվեց առաջապահ դասակը, Սիմոնի դասակը ևս հավասարվեց մեզ: Դանդաղ առաջանալով, նկատեցինք թշնամու մի հեծյալ ջոկատի, որոնք մեր վրա կրակ բաց արին,

մեր առաջապահ զինվորներն սկսեցին համազարկ տալ: Գնալով հրաձգությունը ուժգնացավ: Վաշտի հրամանատարը հրամայեց կանգ չառնել և կռվելով առաջ շարժվել: Սողալով դուրս եկանք բացատի վերջի մի բլրակի մոտ, որտեղ մեր հետախույզները հայտնաբերել էին թշեամու պաշտպանական գիծը: Երբ Սիմոնի դասակի զինվորները փորձեցին բարձրանալ բլրակը, թուրքերը գործի դրին իրենց գնդացիրները, մենք անմիջապես գամվեցինք գետին: Թշնամին բլրի գագաթին էր, կրակակետերից կատաղի գնդակոծում էր, որից ավելի շատ իմ դասակն էր տուժում: Մի քանիսն արդեն վիրավորվել էին: Սիմոնի դասակը, որ բլրակի կես ճանապարհին էր, գնդակներն իրենց վրայից թռչում էին ու իրենք ավելի անվտանգ էին: Սիմոնն իր կապավորի միջոցով հաղորդեց, որ մենք, չդադարեցենելով կրակը, ուստիճանաբար դուրս գանք անտառ, գաղտնի շրջանցենք բլուրը և թշնամուն խփենք թիկունքից: Սիմոնի այս պլանին հավանություն տվին իմ դասակի փորձված զինվորները: Իմ դասակն աստիճանաբար խորացավ անտառի մեջ, թեքվեց աջ, ուժերի վերադասավորություն կատարեցի, բաժանելով 2 խմբի, անաղմուկ մոտեցանք բլրակի հակառակ կողմին: Թշնամին, թիկունքի պաշտպանության մասին չանհանգստանալով, ողջ կարողությամբ կռվում էր ճակատային գծում մեր գնդացրորդների դեմ: Ընդհուպ մոտենալով բլրակին, կապավորին ուղարկեցի Սիմոնի և մյուս զորամասերի հրամանատարներին զգուշացնելու, որ մեր զրոհի համազարկի հետ իրենք ևս սկսեն միաժամանակյա հարձակումը, հակառակ դեպքում, հակառակորդի գերազանց ուժերը կարող են մեզ ճզմել: Մինչ կապավորների տեղ հասնելը, բլրակից երկու ձիավոր իջան: Մեր կողմից անցնելիս փորձեցինք բռնել, փախան, ստիպված կրակեցինք, երկուսն էլ

ընկան: Հակառակորդը զգաց, որ վտանգ է սպառնում իրեն, ուրեմն, հապաղել չենք կարող և, «ուռա» գոռալով, կրակոցներով սկսեցինք բարձրանալ բլրակը: Մեր աղմուկը, ուռան, կրակոցները Սիմոնը լսելով (կապավորը հասած չի լինում), իրենք էլ են սկսում գրոհը... Այս տեսնելով՝ հակառակորդը խուճապի մատնվեց ու խելակորույս փախուստի դիմեց: Փախչողները թողել էին 2 գնդացիր, 25-30 անգլիական հրացան, մեծ քանակությամբ փամփուշտ, հինգ սպանված, տասը ծանր վիրավոր: Բավական սպասելուց հետո մեզ հասան նաև մեր վերջնամասի զորախմբերը: Արևն արդեն մայր մտավ: Մենք, մտնելով դիրքեր, խրամատավորվեցինք ու, հոգնացությունից, խորը քնի մեջ մտանք: Առավոտյան վեր կացա ազդանշանից, մի կես ժամ անց՝ հրաման ստացվեց առաջ շարժվելու մասին: Այսօր իմ և Սիմոնի դասակներն անցան երկրորդ էշալոն, որպես՝ պահեստայիններ: Համատարած անտառներ են, երբեմն էլ հանդիպում ենք յայլաղների, որոնց բնակիչները, անցյալ օրվա պարտված ասկյարներից լսելով մեր արշավանքի լուրը, լքել էին ու փախուստի դիմել՝ թողնելով ամեն ինչ: Երեկոյան ստացվեց Մուզմանովի հրամանը, որ մենք պետք է գրոհենք ու գրավենք Զամբ կոչվող սարը, Արդահանից մոտ 60 կիլոմետրի վրա: Հրամանում նաև ասված էր, որ մեզ համալրում է ուղարկված հրետանային մեկ մարտկոց:

Հաջորդ օրերին գրավեցինք թուրքական մի քանի գյուղեր, որոնց բնակիչները չէին փախել ու մեզ դիմավորում էին աղ ու հացով, ի նշան համերաշխության: Վերջին գյուղը, որտեղ մտանք ու մնացինք շուրջ 15-20 օր, կոչվում էր Փերթնան[18]: Այս

---

[18] Փերթնան – Արևմտյան Հայաստանի Նարիմանի գավառի Բերդավան հայկական գյուղն է:

գյուղերում հիմնական ցանքատեսակը եգիպտացորենն էր, ցանում էին նաև գարի և կարտոֆիլ: Մեծ տարածում էր գտել մեղվապահությունը, տուն չկար, որ մեղու չունենար: Փեթակները պատրաստված էին հաստ գերաններից, բաժանել էին 3 մասի, մեջը փորել ու տեղադրել մեղվաընտանիքը: Մեղրը քամում էին փեթակի ողջ պարունակությունը դուրս բերելով, այնուհետև հալում էին, երեսի մոմը վերցնում, տակի մեղրը օգտագործում:

Իմ դասակը համալրելիս, համագյուղացիներից երկու նորեկների ընդունեցի՝ Խալաթենց Սրապին, Եղսոյենց Հակոբին (Երանոսի եղբոր տղային): Վերջինս բավական ճարպիկ էր, օր չէր լինում, որ լրիվ բեռնավորված գորանոց չմտներ (մեղր, կարագ, հավեր և այլն): Երանոսը, թեև նրան հանդիմանում էի գողության համար, երբեմն էլ ապտակում, բայց նա դաղձյալ իրենն անում էր: Մի քանի օր անց գյուղացիներից Օզման անունով մեկը մոտեցավ ինձ ու հայտնեց, որ գիշերը գյուղ է վերադարձել իրենց համագյուղացիներից մեկը, որը ասկյար է, ու գտնվում է ոչ թե իրենց, այլ աներոջ տանը: Տեղեկություն ստանալուս գիշերը, վերցնելով հինգ զինվոր, գնացի ցույց տված տունը: Դուռը ծեծեցինք, բաց չարին: Հարկադրված զինվորներից մեկին պարանով կտուրից իջեցրինք, դուռը ներսից բաց արեց: Զինվորներից երկուսին թողնելով դրսում՝ մյուսներս ներս մտանք: Տան տերը կնոջ հետ պառկած էր մի թախտի վրա, մյուսի վրա՝ նրա 3 երեխաները, երրորդի վրա մի կարպետի մեջ պառկած էր երեսները մրոտած մի աղջիկ: Խուզարկեցինք բոլոր անկյունները, սրահի հարդի մեջ թաքնված էր ասկյարը, որը մոտ 25 տարեկան, բարձրահասակ, հաղթանդամ, հագնված էր նույն անգլիական համազգեստը, իեչպիսին մերն էր: Զինաթափեցինք, ուզում էինք շարժվել, տան

տերերը սկսեցին աղերսել, որ նրան չտանենք, չսպանենք: Անկողնուց դուրս չեկավ միայն ցեխոտված ու մրոտված աղջիկը: Դա շարժեց մեր հետաքրքրությունը և ստիպեցինք վեր կենալ անկողնուց, դեմքը մաքրել: Ի՞նչ պարզվեց, որ նա մի գեղեցկուհի է և ասկյարի հարսնացուն է: Տղաների կրքերը բորբոքվեց, ուզում էին մոտենալ, համբուրել, կենակցել և այլն, բայց աղջիկը քարացել ու աղերսագին նայում էր մեզ, հազիվ ոտքերի վրա նրան պահում էին ծնողները, պահը բավական...

Վայրկենաբար աչքիս առաջ պատկերվեցին, այն սարսափելի տեսարանները, երբ բարբարոս ասկյարները բռնաբարել, սպանել, այրել ու թալանել էին մեր խաղաղ ժողովրդին, հիշեցի, թե ինչպես Ինտիզարին, այսպես մրոտոտված ու ցեխոտված, ամիսներով պահել էին ցախատներում և նկուղներում, ինչպես էին նրա հորեղբոր աղջկան բռնաբարել, հետո սպանել: Այժմ, կարծես, ժամն էր հատուցման, բայց լսելով այս մարդկանց աղերսագին ողբը, զգաստացա, խղճիս խայթը ստիպեց տղաներին սաստել: Եվ , որպեսզի նրանք փորձ չանեն այս աղջկան անարգել, ասացի, որ ես նրան կնության եմ առնելու: Երբ աղջկան հասկացրի, թե ի՞նչ է իմ պահանջը, նա հայտարարեց, որ հենց այս վայրկյանին սպանեք ինձ, ես գյավուրին կնություն չեմ անի: Թրքուհին, իհարկե, չհասկացավ, որ իմ նպատակը ոչ թե իր հետ ամուսնանալն էր, այլ իր անպատիվ չանելը:

Տանեցոնց խաթրին չկպանք, բայց ասկյարին, որպես կենդանի լեզու, բերեցինք ու հանձնեցինք հրամանատարին: Հարցաքննությամբ պարզվեց, որ Օլթիում է տեղավորված թուրքական չորրորդ դիվիզիան, որից հետո գերուն ուղարկեցինք գեներալ Մազմանովի շտաբը: Ստացված տեղեկությունների համաձայն՝ թշնամին ուժեր էր

կենտրոնացնում մեզանից աջ գտնվող բարձունքներում: Ուստի, հրաման ստացվեց՝ գիշերը անաղմուկ բարձրանալ Զամբի սարը, դիրքավորվել, որտեղից ավելի ապահով էր թե պաշտպանվելու և թե հարձակվելու համար: Այդպես էլ արեցինք՝ գիշերով թողեցինք Փերթնան գյուղը ու բարձրացանք սարը:

Զամբի սարը բավականին զոգահովիտներ ուներ, որոնք առատ մարգագետիններ էին: Շրջակա գյուղերից շատերն այստեղ հիմնել էին իրենց յայլաղները, բայց բնակիչներն իրենց անասունների հետ հեռացել էին 10-15 օր առաջ: Սարի արևմտյան լանջերում՝ մեր տիրապետությունից դուրս բավական գյուղեր կային, որոնց բնակչությունը տեղում էր: Հետախուզական տվյալներով իմացանք, որ այդ գյուղերում թշնամու զորամիավորներ չկան: Այդ հանգամանքից օգտվելով, մեր զինվորներից ճարպիկները երբեմն իջնում էին դաշտավայր, որտեղ լեցուն էին զանազան մրգերի ու բանջարեղենի տեսակներ, ու բեռնավորված, վերադառնում: Երբեմն էլ մուտք էին գործում գյուղերը և անհրաժեշտ չափի սննդամթերքով ապահովում մեզ:

Օրերից մեկում, վաշտի հրամանատարի կարգադրությամբ, իմ դասակի գլուխ անցած ինձ ևս բախտ վիճակվեց լինել գյուղերից մեկում, սննդամթերք ձեռք բերել և թշնամու մասին հետախուզական տվյալներ հավաքել: Դասակիս փորձված զինվորների առաջարկով, մինչև գյուղ մտնելը, տարբեր կողմերում պահակախումբ կարգեցինք: Երբ մտանք գյուղ, մեր առջև փակվեցին բոլոր դռները: Այս բանը մեզ զայրացրեց: Գյուղի կենտրոնում մի տուն, մեր սպառնալիքին տեղի տալով, դուռը բաց արեց: Պահանջեցինք գյուղի տանուտերին, որին դժվարությամբ գտանք, և պահանջեցինք մի

քանի ոչխար մորթել կամ մի խոշոր եղջերավոր անասուն, այնուհետև պահանջեցինք ալյուր, յուղ, պանիր, մրգեր: Երբ վերջինս խոժոռվեց և չկամության նշան ցուցաբերեց, մենք կատաղեցինք ու այս անգամ ավելացրինք դրա հետ միասին 15-20 գեղեցիկ կին ու աղջիկ նս: Վերջին պահանջը բոլորին սարսափեցրեց, վախից քար կտրեցին ու իրար երեսի նայեցին: Իմ թարգմանիչը, որը Աղբաբայի գյուղերից էր, նրանց հասկացրեց, որ վերջին պահանջի փոխարեն կարող են մեծ գումար վճարել, բոլոր մյուս պահանջները պետք է կատարել:

Տանտերը և նրա հետ եղած մի քանի գյուղացիներ, այս լսելով, պայծառացան, համաձայնվեցին ու գործի անցան: Մեզ լավ հյուրասիրեցին ու, երբ մենք ճաշկերույթը ավարտեցինք, մեզ հանձնեցին հավաքած ոսկին ու զարդը: Բերեցին նաև 20 ոչխար ու սննդամթերքի տարբեր տեսակներ:

Տեղացիներին հարցաքննելիս իմացանք նաև, որ գյուղից 4-5 կմ-ի վրա գտնվում են թուրքական բանակի առաջապահ զորամասերը: Մինչև մթնշաղը մեր ավարը բաժանեցինք դասակի զինվորների վրա: Ամենքին մի բան հասավ: Ինձ ամենից շատ բաժին հասավ՝ մոտ հարյուր թուրքական ոսկի, թեև ես չէի վերցնում՝ ինչի՞ս էր պետք ոսկին, երբ թոչունի կյանքով եմ ապրում, չունեմ տուն ու տեղ և վաղվա ապրելու հույս, բայց ի՞նչ արած, զոռեցին, ստիպված վերցրի:

Կեսգիշերին վերադարձանք մեր խրամատները: Հոգնածությունից անմիջապես քուն մտանք: Առավոտյան տեսածիս, բերածիս (բացի ոսկեղենի հավաքելը, ինչպես պայմանավորվել էինք մեր տղաների հետ), լսածիս մասին մանրամասն զեկուցեցի կապիտան Օդաբաշյանին:

Հաջորդ մի քանի օրը խաղաղ էր, ու մենք վայելում էինք մեր ավարի պտուղները: Այդ օրերին մեր զորամասը

համալրվեց երկու վաշտ հետնակով ու մեկ հրետանային մարտկոցով: Մենք տեղեկություն ստացանք, որ Օլթի քաղաքի ուղղությամբ եղած մեր զորամասերի զինվորներից շատերը մալարիայով հիվանդացել են ու մահանում են: Հետախուզության տվյալներով՝ մեր շրջակայքում կուտակվել էին զգալի թվով թուրքական զորքեր:

Հրամայված էր ամրացնել դիրքերը, բարձրացնել զգոնությանը, կրկնապատկել պահակային խմբերի թիվը: Արգելվեց գյուղեր մեկնելը: Մեր ձեռք բերված ավարը սպառվեց, նորից կիսաքաղց վիճակում ենք: Ունեցածս ոսկին, ինչպես եկել էր, այնպես էլ գնաց՝ մի երեկո կարտ խաղալու ընթացքում տանուլ տվեցի:

Սեպտեմբեր ամսի կեսերին իմ դասակը մեր դասավորության առաջնամասում պահակության ուղարկվեց մոտ 3 կմ հեռավորության վրա գտնվող ձորի միակ ճանապարհի վրա, որտեղից կարելի էր սար բարձրանալ: Դասակը մի քանի խմբերի բաժանելով, ասացի, թե ինչի վրա են ուշադրություն դարձնելու: Որոշ ժամանակ անց աջ կողմի պահակախմբի կողմից ազդանշան տրվեց ինչ-որ մարդկանց շարժման վերաբերյալ: Պարզեցինք, որ շարժվող խումբը մեր կայազորի սպա, պոդպորուչիկ Մաթևոսյանի ջոկն է: Մոտենալով ինձ, Մաթևոսյանը գաղտնի ասաց, որ Օլթիի ուղղությամբ սկսվել է հրետանային գնդակոծումը: Պոդպորուչիկը մի երկու ժամի չափ հանգստացավ մեզ մոտ: Արթնանալով՝ կարգադրեց մի երկու զինվոր ուղարկել ճամբար՝ իրավիճակի մասին տեղեկություններ բերելու համար: Ուղարկեցի իմ փորձված մտերիմ Ավագին ու կաղզվանցի Գևորգին: Մինչև լուսաբաց նրանք չվերադարձան: Կասկածում էինք, թե ի՞նչ է պատահել: Գնդի օրապահ Մաթևոսյանն ասաց,

որ դասակը հավաքվի ու վերադառնա ճամբար: Մինչև մեր կայազորի վրանին հասնելը պարզվեց, որ մերոնցից ոչ ոք չկա: Ճամբարը շրջապատված էր թուրքական զորքերով: Նրանք մոտ կես կիլոմետրի վրա էին, լսելի էին նրանց խոսակցությունները, տեսանելի՝ շարժումները: Ըստ երևույթին, մեզ յուրայինների տեղ դնելով, չգնդակոծեցին ու, տեղ հասնելով, փաստորեն, մենք ևս ընկանք շրջապատման օղակի մեջ: Ի՞նչ անել, ոչ ես, ոչ էլ կայազորի սպան վիճակից դուրս գալու ելք չէինք տեսնում: Այս անգամ ես դարձյալ դիմեցի դասակիս փորձված ու քաջարի զինվորներիս:

Դավոն, որ ջոկի պետն էր, առաջարկեց դասակը բաժանել 3 խմբի՝ առաջին երկուսը իր գլխավորությամբ: Իր համազյուղացի (Սերվանջուղ) Ալեքը աջից, մեր գյուղացի Սիմոնինը՝ ձախից, պետք է անաղմուկ մոտենային թշնամուն այնպիսի տարածությամբ, որ հնարավոր լիներ նռնակ նետել, հետո հինգ-վեց հրացանային գնդակոծում տալ և միանգամից ուռա գոռալով, գրոհել, որով թշնամին հանկարծակիի կգար, միջանցք կբացվեր, ու մենք հնարավորություն կունենայինք շրջապատումից դուրս գալ: Իրոք, թուրքերը մեզ յուրայինների տեղ դնելով, հնարավորություն տվեցին ընդհուպ մոտենալ նրանց դասավորությանը: Այստեղ, մթության մեջ որոտաց Դավոյի հուժկու ձայնը, որին հաջորդեցին նռնակների պայթյունները, հրացանային համազարկը և ուռան: Թուրքերը խուճապի մատնվեցին և մինչև գլխի ընկան, մենք արդեն ճեղքել ու դուրս էինք եկել շրջապատումից: Լուսաբացին մոտեցանք Զամբիի արևելյան կողմերին, մի քիչ հանգստացանք, մինչև մեզ հասան դասակի վիրավորված 4 զինվորները, իսկ երեքն այդպես էլ չվերադարձան: Թե վիրավորներին և թե ընկածներին հարվածել էին իրենց իսկ

նետած նռնակների բեկորները, քանի որ թշնամին այդ պահին խուճապահար էր, գլուխը կորցրած ու կրակելու անկարող:

Արևածագից հետո հարթության վրա 3–4 կմ հեռավորությամբ նկատվեցին զինվորական խմբեր: Շարայինների տեղ դնելով՝ երկու կապավորի ուղարկեցինք ճշգրտելու: Միաժամանակ, կապավորներ ուղարկվեցին հակառակ կողմի զորախումբը: Քանի որ թե հայկական և թե թուրքական զինվորների համազգեստը նույն անգլիականն էր, միմյանց չկասկածելով, երկու կողմի կապավորներն ընդհուպ մոտեցան և փորձեցին խոսակցել: Նույն վայրկյանին լսվեց մեր կապավոր Դավոյի կրակոցը, որով գետին տապալեց հակառակորդ կապավորներից մեկին, մյուսին փախուստի մատնեց: Նրան էլ հետևից սպանեցին (Հակոբի գնդակով): Հակառակ կողմում իսկույն իրարանցում սկսվեց: Մենք էլ հասկացանք, որ դիմացինը ոչ թե յուրայիններ են, այլ թուրքեր, և որ մենք դարձյալ շրջափակման օղակում ենք: Անհրաժեշտ է սրագորեն ելք որոնել դրությունից դուրս գալու համար: Տվյալ պահին միակ փրկությունն արագությամբ անտառ մտնելն էր՝ ուղղություն վերցնելով դեպի ձախ, հյուսիսային կողմից դիմադրելով թշնամուն, հասնել անտառին և խորանալ նրա մեջ: Մինչ մենք կհասնեինք անտառին, հակառակորդը, կռահելով մեր մտադրությունը, մի 50 ձիավորներով շարժվեց դեպի անտառ՝ մեր մուտքը արգելակելու: Մենք արագացրինք մեր փախուստը և, մինչև թշնամին կհասներ սարահարթ, մենք մոտեցանք անտառին: Սկսվեցին անկանոն կրակահերթեր, մենք չէինք կրակում, քանի որ ժամանակ չունենք և, գլխավորը, փամփուշտները չէին հասնի, տարածությանը հեռու էր: Թշնամու հետևակն էլ, հույսը դնելով հեծելազորի վրա, մեր հետևից դանդաղ առաջանում էր, դասակի առաջավոր

տղաները, որոնք արդեն հասել էին անտառին, դիրքավորվեցին և սկսեցին համազարկը, մինչև մեր դասակի հետնամասը կարողացավ տեղ հասնել: Թշնամու հեծելազորը հանկարծակիի եկավ, անմիջապես ձիերից վայր իջան և դիրքավորվեցին: Իսկ մեր հետնամասի զինվորները, արագացնելով քայլերը, տեղ հասան և ուժեղացրին կրակը: Հակառակորդի հետևակը, գլխի ընկնելով, թե ինչ կատարվեց, սկսեց արագացնել, ուղղակի վազքով առաջանալ: Ամենավերջում մի կերպ քայլում էի ես, հոգնածությունից, վախից ուժասպառ էի եղել: Ամբողջ սպառազինությունը վրաս էր, զցել չեմ կարող, տանելն էլ անտանելի է, տղաներից յուրաքանչյուրն իր գլխի մասին էր մտածում, օգնող չունեմ: Թշնամու գնդակոծումը մոտ 2 ժամ թափվում է վրաս: Սպանվեց երեկվա վիրավորներից մեկը: Փորձեցի տանել՝ չկարողացա, միայն հրացանը վերցրի: Երբ այս տեսան անտառի դիրքավորված տղաներից մի քանիսը, մեզ օգնության եկան: Հասանք անտառի մուտքին, դիրքավորվեցինք և սկսեցինք կրակել թշնամու վրա: Կրակելով սկսեցինք սողալ դեպի անտառ, նահանջել: Մի 10-15 քայլ դեռ չէինք խորացել, երբ Սեղրակը՝ Սիմոնի եղբայրը, բղավեց ու թավալվեց գետնին: Ի՞նչ անեի, թողնել չէի կարող, նախ բարեկամս է, հետո էլ Սիմոնի եղբայրը: Չնայած, ինձ համար ծանր էր ու վտանգավոր, ստիպված սկսեցի մի կերպ քարշ տալ նրան, առանց իմանալու, թե ինչ է կատարվել: Հասցնելով ծառերի խտության մեջ, որտեղ թշնամու գնդակն այլևս խոցելի չէր, Սեղրակը միանգամից պոկ եկավ ինձանից ու փախավ ավելի խորքը: Ես շշմեցի ու չհասկացա, թե ինչ կատարվեց, իսկ երբ կոահեցի, արդեն ուշ էր:

Անտառում կանգ առանք, մի փոքր հանգստացանք,

պարզվեց, որ տվել ենք երեք սպանված և 5 վիրավոր: Վերջիններից մեկը ոտքից էր, որի համար ճյուղերից պատգարակ պատրաստեցինք և դրանով էլ փոխադրեցինք: Թշնամին չհամարձակվեց անտառում մեզ հետապնդել: Մեր փրկությունը դեպի արևելք գնալն էր, սակայն խորանալով անտառի մեջ, գիշերը վրա հասավ, ամպեց, անձրև տեղաց ու կողմնորոշումը դժվարացավ: Անձրևը այնպիսի ուժգնությամբ էր տեղում, որ պատսպարվելու ոչ մի հնարավորություն չունեինք: Ժամանակ առ ժամանակ մեր հույսը մնացել էր ծառերի մամռակալած կողմը, այն էլ՝ կայծակի փայլատակելու ժամանակ նայել ու մոտավորապես կողմնորոշվել, որը այնքան էլ հուսալի չէր: Ավանգարդում Դավոյի ջոկն էր, այս էլ քանիերորդ անգամ ապավինում ենք այդ խիզախ, անվախ ու իրադրության մեջ արագ կողմնորոշվող մեր կյանքի փրկիչին: Հիմա էլ, թեև վտանգը հեռու չէ, բայց քանի որ Դավոն առաջնորդում է, հույսով ենք, որ կազատվենք: Մեզ հետ եղած սպան՝ Մաթևոսյանը, իրեն կորցրել էր և որևէ կոնկրետ քայլ չէր ձեռնարկում:

Ավանգարդում եղած Դավոյի ջոկի տղաներից երկուսը ինչ-որ ճանապարհի էին հանդիպել ու նկատել եզան սայլի թարմ հետքեր: Բոլորս դուրս եկանք ճանապարհ, անհրաժեշտ էր կողմնորոշվել, առաջընթացը շարունակելու մի քանի տարբերակներ եղան, սակայն գերադասեցինք Դավոյի առաջարկը՝ շարժվել դեպի աջ: Դասակը բաժանեցին երկու մասի՝ ճանապարհի աջ և ձախ մասերով շարժվելու, ավանգարդում դարձյալ մնաց Դավոյի ջոկը: Մի 5-6 կմ անցնելով, Դավոյի ջոկը հայտնաբերեց 3 սայլ, որոնք մթության, թե հանգստանալու նպատակով արձակել էին եզներին, կապել սայլերին ու իրենք քնել էին: Դավոն իր տղաներից մի քանիսին

ուղարկեց առաջ՝ ստուգելու, թե ճանապարհին այլ սայլեր կամ շարժում չկա: Վերադառնալով նրանք հայտնեցին, թե ոչինչ չի նկատվել: Այդ լուրը մեզ հանգստացրեց, շրջապատեցինք սայլավորներին, չիմանալով նրանց ով կամ ինչ լինելը և միանգամից, 30-ից ավելի սվիններ բարձրացնելով քնածների վրա, պահանջեցինք արթնանալ ու հանձնվել: Գերիները արթնանալով ու տեսնելով պարզած սվինները որևէ շարժում չարին: Պարզվեց, որ սայլատերերը թուրքեր էին, իսկ պահապանները՝ երեք ասկյարներ: Գերիներին կապոտելուց հետո, ստուգեցինք բեռները, պարզվեց, որ սայլերից մեկում ալյուր է, մյուսում՝ յուղ ու պանիր, իսկ երրորդում՝ փամփուշտ, որի կարիքը խիստ զգում էինք:

Երեք օրվա սոված երթից հետո զինվորները հնարավորություն ստացան ուտելու բան ճարել: Սկսեցին ալյուրը շաղախել յուղի մեջ, մյուսները՝ պանրով ուտել, որքան կարող էին, որից հետո ուսապարկերը լցրին՝ ով որքան կարող էր: Մորթեցինք բոլոր եզներին, ասկյարներին ուղարկեցինք գրողի ծոցը, նրանց հետ և 2 սայլապաններին, մնաց միայն մեկը, որը պետք է մեզ ուղեցույց լիներ:

Մեր անհույս թափառումների չորրորդ օրը, այդ դեպքն ապրելու, զոյատևելու հույս ներշնչեց: Կապեցինք գերուն, ճանապարհից դուրս եկանք, նորից մտանք անտառ՝ կրակ վառելու, մեր ձեռք բերած ավարից ճաշ պատրաստելու և հանգստանալու համար: Ըստ գերու տեղեկությունների, բնակավայրերը հեռու էին, ու մենք, ապահովված լինելով, կուշտ ուտելուց հետո քնեցինք: Արթնացանք լուսաբացին, կարճ նախապատրաստությունից հետո շարժվեցինք խիտ անտառով: Տղաներից մի քանիսը լուրջ հիվանդ էին՝ փորլուծ էին կպել ալյուրն ու յուղը հում վիճակում ուտելու պատճառով:

Առաջանում ենք բավական դանդաղ՝ մի կերպ տանելով հիվանդ ու վիրավոր զինվորներին: Զամբից դուրս գալու 6-րդ օրն է, սակայն որևէ բնակավայրի չենք հասել և ու՞ր լինելներս չենք կարող կռահել: Այս հանգամանքը շատերիս հուսահատության է հասցրել, կասկածում ենք, որ մեր գերի ուղեկցողը մեզ դեպի կործանում է տանում, որ շուտով ասկյարների ձեռքը կընկնենք: Զինվորներից ոմանք պահանջում են նրա հետ հաշվեհարդար տեսնել, որ նա մեզ կործանման է տանում՝ գերին միշտ լուռ էր, երբեմն-երբեմն հուսադրում էր հաջող տեղ հասցնելու: Ի վերջո, մեր համբերության բաժակը լցվեց և ուղեկցին հայտնեցինք, որ նա մեզ սխալ ուղղությամբ է տանում ու դրա համար նրան գնդակահարելու ենք: Նա հայտնեց, որ մենք գտնվում ենք վրացական սահմանից 3 կմ հեռավորության վրա, Արդահան քաղաքին մոտ, Ճորա գետի հովտում: Մենք զարմացած մնացինք, թե ինչպե՞ս կարող է պատահել, որ այս մի շաբաթվա ընթացքում հետ ու առաջ ենք արել ու, փոխանակ դեպի արևելք գնալու, հյուսիս ենք գնացել: Ճարներս ինչ: Գերադասեցինք Վրաստանի սահմանով անցնելը, քան նորից հետ վերադառնալը: Մի փոքր կանգ առանք, որոշեցինք անելիքներս, գերուն ուղարկեցինք «ջանդամը», անտառից դուրս գալով՝ ուղղվեցինք դեպի վրացական սահման: Վրացիք, մեզ թուրքերի տեղ դնելով, չթույլատրեցին սահմանին մոտենալ, իսկ երբ մեր տղաներից Գրիգորը և Մարկոսը, որոնք տիրապետում էին վրացերենին ու բացատրեցին, թե ինչը-ինչոց է, վրաց սահմանապահը կանչեց իրենց սպային, որը մի զոռոզ, ինքնավստահ անձնավորություն էր, իմանալով մեր վիճակը, փոխանակ ընդառաջելու, կարգադրեց զինաթափվել, հետո նոր միայն սահմանն անցնելու մասին խոսել, հակառակ դեպքում՝

հեռանալ սահմանից, քանի դեռ ուժ չեն գործադրել: Վրաստանը Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ ուներ, ու ձեր մի դասակի պատճառով մենք մեր լավ հարևանի հետ հարաբերությունները չենք փչացնի: Լսելով մեր դարավոր հարևան քրիստոնյա ժողովրդի ներկայացուցչի վերջնագիրը՝ որոշեցինք հեռանալ սահմանից, չբաժանվել այսքան ծանր կացություններում եղած ժամանակ մեզ փրկող զենքերից ու, բացի այդ, հավանական է՝ այդ կարճամիտ դավաճանը զինաթափվելուց հետո մեզ հանձներ թուրքական իշխանություններին...

Հեռանալով անհյուրընկալ հարևանի սահմանից՝ սկսեցինք մտնել անտառ, առաջանալով Ճորա գետի հոսանքով, որը հոսում է դեպի Արդահանի գավառ ու թափվում Քուռը: Քանի որ գիշեր էր, տեղանքը անծանոթ, ու մենք էլ հոգնած, որոշեցինք մինչև լուսաբաց կանգ առնել, հանգստանալ և հետո նոր ճանապարհը շարունակել: Հաջորդ օրը շարունակեցինք դանդաղ առաջանալ: Վերջալույսից հետո տղաներից մի քանիսը լույսի կետեր էին նշմարել... Այս լուրը մեզ թեև հույս էր ներշնչում մոտակա բնակավայրի հանդիպելու և թե սարսափեցնում, չլինի թե թուրքական զորամիավորումներ լինեն, ոմանք էլ կասկածում էին վրաց սահմանապահների ոճիրի մասին, որոնք հնարավոր է՝ իրենց առաջավոր ուղեկալներին կարգադրած լինեն մեզ զինաթափել...

Այս կասկածներն ու հուսահատությունը փարատելու համար մի չորս զինվորի, Դավոյի գլխավորությամբ, ուղարկեցինք հետախուզելու, պարզելու, թե ինչ կրակներ են և ովքեր են բնակիչները: Որոշ ժամանակ անց հետախույզները բարձր տրամադրությամբ վերադարձան: Պարզվեց, որ լույսի աղբյուրը, որ մեզ այդքան շփոթել ու սարսափեցրել էր,

անտառում եղած գիշերային միջատների թռիչքն էր, որոնց մասին մենք զաղափար չունեինք: Չարաբաստիկ զաղտնիքը իմանալուց հետո մենք այլևս առաջանալու ուժ չունեինք՝ թափվեցինք կանաչիների վրա և խորը քուն մտանք: Առավոտյան, երբ արթնացանք, արևը բավական բարձրացել էր, եղանակը տաք էր, օդը պայծառ, ամենուրեք լսվում էր թռչունների ուրախ ծլվլոցը, օրը խաղաղ էր, չկային կրակոցներ և մարդկային հետքեր: Սենդամթերքի պաշարը վերջացել էր, սառողջացել էին փորհարինքով հիվանդները: Ծանր էր մեկ ոտքից վիրավոր կաղզվանցի Խաչոյի վիճակը՝ ոտքը ուռել էր, ոսկորը ջարդված էր, անընդհատ լալիս էր և աղերսում՝ վերջ տալ իրեն՝ ցավերից ազատվելու համար: Բայց այդ քայլին դիմել անկարող էինք: Ճորա գետը թողնելով ձախ, մինչև արևամուտ շարժվեցինք դեպի աջ ու մայրամուտին հասանք անտառի եզրին, մեր առջև բացվեց մի ընդարձակ հարթավայր, այն էլ ճահճույտներով պատված: Այդ հարթավայրի երկու կողմերում (հյուսիս և արևելք) ընկած էին բարձրաբերձ սարեր, իսկ հարավ-արևմուտքն ամբողջապես անտառապատ էր: Կանգնել ենք ու քննարկում, ո՞ր ուղղությամբ շարունակել ճամփորդությունը: Եղան տարբեր կարծիքներ, բայց ես ու ինձ նման մի քանիսը հարմար համարեցինք շարժվել դեպի հարավ-արևելք, նկատի ունենալով, որ այն տանում է դեպի Մերդենեկ, որտեղ հավանականություն կա մեր զորքերի այնտեղ լինելը, իսկ հակառակ դեպքում (եթե թուրքերը լինեն)՝ ծանոթ ճանապարհով կշարժվենք դեպի Կարս:

Արևամուտին թողեցինք անտառի ուղղությունը և շարժվեցինք դեպի ճահճուտները, լուսաբացին դուրս եկանք լեռնալանջերի գագաթները, որտեղից գիշերային խավարում նշմարելի էին դառնում հեռվում վառվող ճրագներ: Այս

հանգամանքը ստիպեց մեզ փոխել մեր շարժման ուղղությունը դեպի ձախ, նորից մտանք անտառ: Հոգնած, սոված, անքուն նորից թափվեցինք խոտերի վրա՝ հանգստանալու, քնելու: Արթնացանք մեր խմբի ամենափրկիչի՝ Դավոյի ուրախ ճիչերից: Պարզվեց, որ երբ մենք զիշերը քնած ենք եղել, Դավոն մի 3-4 զինվորի հետ ուսումնասիրելիս է լինում տեղանքը: Մեզանից 7-8 կմ հեռանալով՝ շների հաչոց են լսում: Պարզելու համար, թե որտեղից է լսվում շների ձայնը, բարձրանում են մի բլրակի վրա, հեռվից երևում է մի փոքրիկ գյուղ, այն էլ եկեղեցիով, որի վրա փայլատակում է խաչը: Դավոն իր խմբով զգուշությամբ իջնում է գյուղ, հանդիպելով մի հովիվի, պարզվում է, որ գյուղը հունական է, թուրքերը այդտեղ ոտք չեն դրել, հայերի նահանջի մասին լսել են, բայց իրենց գյուղով չեն անցել, իրենց գյուղը Մերդենեկի շրջանի մեջ է մտնում և կոչվում է Դորտ-Քիլիսա (4 եկեղեցի):

Այս ծանոթությունից հետո Դավոն մտնում է գյուղ, ներկայանում քյոխվային, պատմում մեր վիճակի մասին և ուտելիք խնդրում: Նախ, իրենք մի կուշտ ուտում են և բեռնավորված վերադառնում՝ ամենքիս մի բան հասցնելով:

Մայրամուտին, թողնելով մեր վերջին հանգրվանը, ուղղվեցինք դեպի Դորտ-Քիլիսա՝ հունական գյուղը՝ նախ, սննդի գործը ապահովելու, և ապա, որոշելու մեր հետագա անելիքը: Քյոխվեն մեզ ընդառաջ եկավ, նկատի ունենալով մեր քանակը, ուզած-չուզած մեր պահանջը պետք է բավարարեր, հակառակ պարագայում թալանի փորձեր կարվեին: Մի բան, որ տվյալ ժամանակահատվածում տարածված էր ոչ միայն օտարների, այլև յուրայինների շրջանում: Տանտերերից ստանալով մեկ ոչխար, հաց, պանիր և այլ սննդամթերք՝ զբաղված էինք եփել-թափելով, ուտելով, իսկ ես հրավիրել էի

մի հեքիմի՝ վիրավորի ոտքը դարմանելու համար։ Միաժամանակ, պարզում ենք, թե ո՞ր ճանապարհով, ի՞նչ գյուղերով կարելի է հասնել Մերդենեկ, որ ճանապարհին մեզ մի ուղեկից տան։ Ուղեկիցը դժկամությամբ համաձայնեց, սակայն խոստացանք նրան տալ մեկ անգլիական հրացան, 300 փամփուշտ։ Մայրամուտին մոտ թողեցինք Դորտ-Քիլիսան, այս անգամ շարժվելով ոչ թե անտառներով, այլ ճանապարհով։ Կես գիշերին հասանք մի ուրիշ հունական գյուղ՝ Կզլ-Քիլիսա (կարմիր եկեղեցի)։ Ողջ գյուղը ոտքի վրա էր. հանկարծակիի չգալու համար նրանք պետք է ստուգեին մոտեցողների ով լինելը։ Եթե պարզվեր, որ թշնամիներ են, ապա անմիջապես գյուղը կթողնեին ու կմտնեին անտառ, իսկ բարեկամներին կդիմավորեին աղ ու հացով։ Բավական տեղեկություններ ստացանք Մերդենեկի մասին։ Պարզվեց, որ այնտեղ լրիվ հայկական զորքեր են՝ գեներալ Մազմանյանի գլխավորությամբ, իսկ թուրքերից տեղեկություն չունեինք։

Մեզ հարկավոր էր մեկ օր ճանապարհորդել, որպեսզի հասնեինք Մերդենեկ, այն էլ առանց դադարի։ Մինչև այժմ սոված, հյուծված, վախը սրտներումս, թե ուր-որ է կընկնենք թշնամու ձեռքը, այժմ պատկերը փոխվեց։ Բոլորիս մեջ հույսը վերականգնվեց, բոպեներն ենք հաշվում, թե երբ կհանդիպենք յուրայիններին։ Ոմանք սկսեցին երազել իրենց ապագայի մասին, տունդարձի, տուն ու տեղ դնելու և այլի մասին։

Վաղ առավոտյան, արևածագից առաջ, Կզլ-Քիլիսայից համալրելով մեր սննդի պակասը, դուրս եկանք և ճանապարհով ուղղվեցինք դեպի Մերդենեկ։ Ամբողջ օրը երթի մեջ ենք, ճանապարհին հանդիպում ենք գյուղերի, որոնցից մեկ-երկուսը՝ հունական, մյուսները՝ թուրքական, որոնք լքված էին ու դատարկ (մեր գարնանային հարձակման ժամանակ

հեռացել էին)։ Որոշեցինք մինչև կես գիշեր հանգստանալ, ապա նոր ճանապարհը շարունակել։ Մեծ դժվարությամբ բարձրացանք (շատ էինք հոգնած) ու շարունակեցինք, հաջորդ օրվա երեկոյան մոտ հասանք մի հունական գյուղի։ Մեր առաջնորդ հույնը բավական սննդամթերք բերել տվեց մեզ համար, լավ կերանք, խմեցինք ու պառկեցինք խոտերի վրա քնելու՝ չմոռանալով զինվորական կարգ ու կանոնը՝ հերթապահներ կարգելու։

Դորտ-Քիլիսայից դուրս գալուց հետո քայլել ենք մեկ գիշեր ու երկու ցերեկ, այժմ մեր ուղեկիցը ասում է, որ եթե քայլերս մի քիչ արագացնենք, ապա կեսգիշերին կհասնենք Մերդենեկ։ Քայլեցինք ամբողջ ցերեկը, ապա գիշերը, այն հաշվով, որ առավոտյան մտնենք Մերդենեկ։ Լուսաբացին մոտ մեր հետախույզները ինչ-որ մարդկանց հետ խոսակցության բռնվեցին։ Մենք անհամբերությամբ սպասում էինք, թե ովքե՞ր կլինեն մերոնց հանդիպողները։ Կես ժամ անց հետախույզները վերադարձան, հայտնելով, որ իրենք հանդիպել են մեր զորամասի առաջապահ հետախույզներին։ Ուրախություններիս չափ ու սահման չկար, տղաներից շատերը երգում են, պարում, թռչկոտում, անհուսությունից, անտեղյակությունից հետո, կարծես, լույս ճառագեց , ու այժմ ամենքը որպե՞ս առաջ ուզում էն վազքով տեղ հասնել, իմանալ յուրայինների վիճակը, թե ի՞նչ հանգամանքով մենք կտրվեցինք մեր մայր զորամասից և այլ հարցեր, որոնք պետք է պարզաբանվեին։

Մոտ կեսամսյա լռությունից հետո պարուչիկ Մաթևոսյանի լեզուն բացվեց։ Սկսեց գործի անցնել, շարքերը կարգի բերել, զոռզոռալ, զինվորական պատշաճ կարգ հաստատել և այլն, որը արժանացավ ներկաների ծաղր ու ծանակին։ Եղան տղաներ, որ ցանկացան հարձակվել այդ

վախկոտ, գլուխ պահող սպա կոչեցյալի վրա, որի դեմքը 15-16 օրում բոլորովին չէր երևում, իսկ երբ մոտ է մայր զորամասին միանալը, սկսել է աքլորանալ: Վերցրինք Մաթևոսյանը զենքը, զինաթափեցինք և որոշեցինք, որպես բանտարկյալ, ներկայացնել զորամասի շտաբ և զեկուցել նրա կեցվածքի մասին, որի համար, հավանական է, նրան դատեն: Երբ զբաղված էինք այս հարցերով, մեզ մոտեցան Մերդենևկի կայազորի 3-րդ գումարտակից մի դասակ, առանց իմանալու նրանց ով լինելը, գրկախառնվեցինք, համբուրվեցինք ու երկար ժամանակ չէինք բաժանվում: Երբ հանգստացանք, սկսվեց հարցերի տարափ տեղալ անցած երկու շաբաթում կատարված գործողությունների, դեպքերի մասին: Հարազատ մոլից զրկված մանկան պես, որպե առաջ ցանկանում ենք հասնել մեր զորամասին: Մոտ 3 կմ հեռավորության վրա մեզ դիմավորեցին երկու հեծյալ դասակ, երեք ձիաֆուրգոն: Պարզվեց, որ գիշերը մեր հետախույզներին հանդիպող դասակի հրամանատարը կապավորի միջոցով մեր զորամասին հայտնել է մեր մասին, իսկ մեր գնդի հրամանատարը, որ վաղուց գիտցած է եղել մեր կորելու դժբախտության մասին, այժմ, որպես կորածի ու վերստին գտածի, ցանկանում է հարգանքի տուրք մատուցել՝ պատվով տեղ հասնելու համար: Մեզ դիմավորողները մեր գնդից են, որոնց հետ շուրջ երկու տարի ծառայել ենք, սկսած Ալեքսանդրապոլից, այնուհետև Կարսում, Կաղզվանում: Բորոս իրար գիտեինք, բոլոր մանրամասնություններով՝ և հանդիպելիս բավական հուզումնալի իրավիճակ սկսվեց:

Յուրայիններին պատմելու, ինչպես նրանցից լսելու շատ ու շատ բաներ կային, բայց այն թողեցինք հետագային, քանի որ հեծյալների հրամանատար, պարուշիկ Խուդգարյանը

շտապեցնում էր, որովհետև գնդապետ Մազմանյանն անհամբեր մեզ էր սպասում: Բոլորս նստեցինք ֆուրգոնները և արագընթաց սլացանք: Մերդենեկի մատույցներում վայրէջք կատարեցինք, բացի վիրավոր զինվորից: Մարտական կարգը վերականգնեցինք ու շարքերով առաջ շարժվեցինք: Մինչև գյուղի կենտրոն հասնելը, հույների եկեղեցու հրապարակում, արդեն կազմ ու պատրաստ կանգնած է հայկական առաջին գնդի երկրորդ գումարտակը, որի կազմում և մեր 7-րդ վաշտը: Գնդապետ Մազմանյանը, շրջապատված ողջ սպայական կազմով, մեզ էր սպասում: Մոտենալով եկեղեցու բակ՝ մի 50 մետրի վրա կանգնեցրի դասակին և հանդիսավոր կարգով մոտենալով, զեկուցեցի. «Պարոն գնդապետ, հայկական գնդի 7-րդ վաշտի 3-րդ դասակը 16–օրյա անջատումից հետո, տալով ինը սպանված, մի ծանր վիրավոր, վերադարձավ 35 զինվորով և մեկ պաշտոնազուրկ սպայով»: Զեկույցս դեռ չավարտած, գնդապետը գրկեց ինձ ու համբուրեց, այնուհետև նույնը արեց դասակի բոլոր տղաներին: Գնդապետը բավական հուզված էր ու երկար ժամանակ խոսելու կարողության չուներ, որոշ պաուզայից հետո, առանց բարևելու, զինաթափված պստրուչիկից բացատրություն պահանջեց, թե բանն ինչո՞ւմն է: Լսելով հրամանատարի իներտ և անգործունյա լինելու մասին, կարգադրեց նրան բանտ տանել, իսկ մեր դասակին տեղավորեցին հարմարավետ բնակարանում, լավ կերակրեցին, թույլատրեցին հանգստանալ: Մի քանի խոսք գնդապետ Մազմանյանի մասին: Նա մի հաղթանդամ, գեղեցիկ դիմագծերով, մոտ 100 կգ քաշով 28–30 տարեկան երիտասարդ էր: Չնայած իր ծանրաքաշ մարմնին, բավական արագաշարժ էր, աշխույժ, ֆիզիկապես կոփված: Շատ հասարակ էր պահում իրեն, օրվա մեջ զինվորների հետ զանազան միջոցառումներ

(խաղեր) էր անցկացնում (վազք, իծուշարաք, վանք - բոլորի թափ-յոր– դաշի, գոտի և այլն)։ Բոլոր խաղերի ընթացքում հանում էր ուսադիրները՝ պահանջելով իրեն դիտել իբրև հավասարը հավասարին։ Խաղերի ընթացքում միշտ հաղթանակով էր դուրս գալիս այն թիմը (խումբը), որի մասնակիցը Մազմանյանն էր։ Զմռանը շատ էր սիրում ձնագնդի խաղալը։ Նա մի քանի զինվորներով հաղթում էր մի ամբողջ վաշտի։ Չնայած նրան հասած ձնագնդերը տասնապատիկ ավելի շատ էին, բայց նա երբեք չէր ընկճվում ու պայքարում էր մինչև հաղթանակ։ Մազմանյանը դեռ ամուսնացած չէր, բարոյապես բյուրեղային մաքրության տեր անձնավորության էր։

Մեր դասակը, օգտվելով հոգատար վերաբերմունքից, անմիջապես պառկեց հանգստանալու։ Միայն մի քանիսը, որոնք գնդում հարազատներ ունեին, ներս ու դուրս էին անում նրանցից որևէ լուր ստանալու ակնկալությամբ։ Հաջորդ առավոտ մեզ անհանգստացնող չեղավ, մեր կամքով վեր կացանք, լվացվեցինք, մաքրվեցինք, նախաճաշեցինք, որից հետո մեզ ուղարկեցին բաղնիս։ Բաղնիս ասածը մեր այսօրվա սովորականի նման չէր։ Մի չուգունե պղնձի մեջ դասավորված էին քարեր, որ շիկացման աստիճանի տաքացնում էին, իսկ երկրորդ պղինձը՝ ջրով լիքը։ Շիկացած քարերը դուրս էին բերվում, գցվում ջրի մեջ, առաջացած գոլորշու օգնությամբ մեր վրայի կեղտը փափկանում, դուրս էր գալիս, վերջում մի երկու կլուժկա ջրով մաքրաջրվում էինք ու դուրս գալիս։ Փոխեցին մեր սպիտակեղենը, սափրվեցինք։ Վերջացնելուց հետո մեզ մարտական շարքով տարան գնդի շտաբ, որը տեղավորված էր մի հարուստ հույնի երկհարկանի տանը։ Հետո ներս հրավիրեցին մի ընդարձակ սենյակ (ըստ երևույթին,

տանտիրոջ ճաշասենյակն էր)։ Այստեղ էին գնդի բոլոր սպաները՝ գնդապետ Մազմանյանի գլխավորությամբ։ Մեզ նստեցրին ինչ-որ իշատոնուկների վրա և սկսեցին հարցաքննել (այստեղ էր նաև պարուչիկ Մաթևոսյանը)։ Հարց ու պատասխանը բավական երկար տևեց, բոլոր հարցաքննվողներս ամենայն մանրամասնությամբ պատմեցինք մեր բաժանման օրից մինչև Մերդենեկ հասնելու ողջ անցուդարձը։

Այստեղ պարզվեցին մեր դասակի հետ մնալու, հիմնական ուժերից կտրվելու պատճառները։

Ջամբի սարից մեր կայազորի հեռանալու գիշերը երկու զինվորների (կապավորի) ուղարկում են, որ մեր դասակին հետ կանչեն, սակայն այդ զինվորները մեզ չեն հասնում, ու մինչև հիմա էլ անհայտ են, ըստ երևույթին, ընկել են թշնամու ձեռքը։ Իսկ մեր կողմից ուղարկված Ավագն ու Գևորգը հասնում են կայազոր այն պահին, երբ նրանք ամեն ինչ վերցրած հեռանում են։ Մեր կապավորները մոտենում են վաշտի ավագին (Երանոսին), ասում իրենց գալու նպատակը, սակայն Ավագը նրանց կարգադրում է՝ միանալ վաշտին ու շարժվել, քանի որ ինքը կապավորներ է ուղարկել դասակի (մեր) հետևից, որ շուտով մենք կճանապարհվենք ու կմիանանք իրենց։

Երբ իմացան վրաց սահմանապահների անմարդկային վերաբերմունքի մասին, գեներալ Մազմանյանն ասաց. «Մեր ազգը քանի-քանի անգամ Վրաստան արշավող բարբարոսների առաջին հարվածն իր վրա է վերցրել, ավերածությունների ենթարկել մեր բնակավայրերը, իսկ այսօր այդ մարդկային խիղճը կորցրածները, այդ երախտամոռ ճիվաղները փորձել են զինաթափել մի փոքրիկ զորաջոկատը»։

Անարգանքի խոսքեր ասվեց նաև պորուչիկ Մաթևոսյանի

հասցեին՝ պահանջելով նրան զին. տրիբունալին հանձնել:

Հաջորդ երկու օրերում մեր դասակը դարձյալ վայելում էր ընձեռնված հանգիստը և վայելում համեղ ճաշատեսակներ: Իսկ մնացած զորամասերը, Մերդենեկից 7 կիլոմետրի վրա, անցել էին դիրքեր փոխելուն, որպեսզի կասեցնեին թուրքերի առաջընթացը:

Մի օր անց ինձ կանչեցին գնդի շտաբ: Երբ ներկայացա, իմ դասակին հրամայվեց պատրաստ լինել ուղեկցելու 30 ձիու ու եզան սայլերը դեպի Կարս: Սայլերի վրա մեծ մասամբ բարձված էին փաստաթղթեր և վիրավոր զինվորներ: Բացի այդ, մեզ հետ պետք է տանեինք մոտ 4000 գլուխ ոչխար:

1920 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին իմ դասակը դուրս եկավ Մերդենեկից՝ ուղղություն վերցնելով դեպի Կարս: Ճանապարհին հանդիպում էինք հունական գյուղեր, լինում էին նաև թուրքական բնակավայրեր, բայց առանց բնակիչների և մեծի մասամբ ավերված: Մեր ճանապարհորդությունը տևեց հինգ օր: Բավական զգույշ էինք անցնում թուրքական գյուղերից՝ գիշերները ուժեղացնելով պահակությունը: Առանց պատահարների տեղ հասանք: Ոչխարը թողեցինք Չախմսխ ձորի մուտքի մոտ, իսկ ես, մի քանի զինվորով, ուղեկցեցի սայլերը: Սայլերում եղած վիրավոր զինվորների հետ կային մեկ բժիշկ և երկու սանիտար, որոնք էլ մեզ տարան զինվորական հիվանդանոց: Վիրավորներին իջեցրինք, տեղավորեցինք, որից հետո սայլերն ուղղեցինք մեզանից մի քանի օր առաջ մեկնած կվարտմիստր սպայի կացարան: Նրա ցուցումով սայլերը դատարկվեցին, բեռը տեղափոխեցին, որից հետո մեր դասակի համար առանձնացրին ապրելու և գիշերելու մշտական կացարան: Մնաց ոչխարի հարցը, այն պետք էր փոխադրել Կարսի արևելյան կողմը: Առավոտյան, երբ սկսեցինք ոչխարի

փոխադրումը, պարզվեց, որ պակասել էր մոտ 150 գլուխ, ըստ երևույթին մի մասը կորել (կամ գողացվել) ու մի մասն էլ մորթել, կերել էինք:

Կարսի շրջապատում եղած փարթամ բուսականությունը լավ արոտավայր էր ոչխարների համար: Չնայած հովիվները մեր զինվորներն էին, ու մենք էլ նրանց հսկիչները, բայց և այնպես, օրեկան 50-60-ից ավելի ոչխարներ անհետանում էին: Ոչխարներին վերադասության կարգով տիրություն անող չկար, ոչ ոք նրանցով չէր հետաքրքրվում ու մերոնք էլ, օգտվելով առիթից, վաճառում էին, նվիրում, կամ զվարճանում իրենց մարմինը վաճառող կանանց հետ, որոնք այդ օրերին բավական շատացել էին, քանի որ նրանք զրկված էին ապրուստի միջոցներից և կանգնած էին սովի դեմ: Մի անգամ, նույնիսկ, ինձ մոտեցավ մի տարեց կին, որը ինձ տատի տեղ կգար, առաջարկեց իր մարմինը, փոխարենը ոչխար ստանալու ակնկալությամբ: Ի՞նչ ասել, լեզուս պապանձվեց, ինձանից անկախ հոսեցին արտասուքներս, ես հիշեցի իմ հարազատներին, որոնցից մի մասը սովամահ էր եղել, իսկ մյուսներից էլ լուր չունեի:

Տղաներից երկուսին կարգադրի երեք ոչխար տալ պառավին և օգնել մինչև տեղ հասնելը: Հաջորդ օրը, ով զարմանք, պառավը նորից եկավ, իր 11-12 տարեկան թոռնուհու հետ, նրան մեզ հանձնելու՝ մեր երեկվա կատարած լավության փոխարեն: Այս անգամ զայրույթից ատրճանակս դուրս քաշեցի պառավին վերջ տալու համար, սակայն երեխան լացով ոտքերս ընկավ ու խնդրեց չխփել: Պատմեց նաև իրենց վիճակի մասին, մոտավորապես, այսպես. «Ջոջոն իմ բաբու մամն է (հոր մայրը), զըմ բաբ գացել է սալդաթ, զըմ մամ խիվանդ մեռավ, մկա մնացիլ ինք մի պզտիկ ախպերիկ, երկու

քուրիկ, հանե թաղթի պատի տակ կմնանք: Մըր գեղացի շատ կան, հմենն էլ անոթի են: Ջոջոյի բերած ոչխարները մորթեցին, հմնով կերանք: Ջոջոն ըսավ երթանք իդա ոչխար տվողի ձեռք ու ոտք պազնենք, էլի ոչխար տան»: Խեղճ երեխա, ի՞նչ հուսով է եկել, բոլորովին տատի մտադրությունից անտեղյակ: Այս ծանր կացությունից դուրս գալու համար տղաներին ասի մի երկու ոչխար ևս տան ու պառավին խստորեն նախազգուշացնի, որ եթե փորձի ևս այս կողմերում երևալ, այլևս կենդանի չի մնա:

Թեև մեր դասակը հիմնականում զբաղված էր ոչխարապահությամբ (երբեմն էլ առ ու ծախով), բայց և այնպես, ամեն օր լինում էինք գնդի շտաբում, տեղյակ էինք տեղի ունեցող անց ու դարձին: Լսել էինք, որ գունդը, առանց կռվի, թողել էր Մերդենեկը և շարժվել դեպի Սարիղամիշ, Կաղզվանին նույնպես տիրել էին թուրքերը: Այժմ մարտեր են գնում Սարիղամիշի ուղղությամբ: Օր-օրի կրկնապատկվում ու քառապատկվում են Կարսում հավաքված փախստականները, քաղաքի փողոցները, շենքերի բակերը, պատերը, այլևս չէին բավարարում մարդկանց կուտակումներից, մարդկային կուտակումները տարածվում էին քաղաքից դուրս՝ բաց դաշտում: Աշուն է, եղանակները վատացել են, ամեն օր տեղումներ են թափվում: Ցուրտը, խոնավությունը, սովը մասսայական համաճարակների բում են դարձել: Ամենուրեք թափված են անթաղ դիակներ: Անտանելի վիճակ է երկաթուղակայարանում, որտեղից օրեկան մեկ–երկու կիսատ-պռատ գնացք է ուղևորվում դեպի Ալեքսանդրապոլ, այն էլ՝ ի՞նչ է տեղի ունենում, աստված գիտի: Ուժեղներն ու ճարպիկները, ճզմելով հարյուրավոր թույլերի ու հիվանդների, մի կերպ խցկվում են վագոններ, իսկ մյուսներին տիրություն անողներ չկան: Ամեն ինչ անտարբերության է մատնված: Երբեմն-

երբեմն, կարգ ու կանոն հաստատելու պատրվակով, հրապարակ են գալիս մաուզերիստներ, խմբապետեր, որոնք իրենց հարցերը լուծելուց հետո ժողովրդին թողնում են նույն օրհասական վիճակում ու հեռանում: Երբեմն, նրանցից ոմանք, օգտվելով ծանր կացությունից, առանց խղճի խայթի զբաղվում են թանկարժեք զարդեր թոցնելով և գեղեցիկ հարս ու աղջիկ առևանգելով: Եթե որևէ մեկը սրանց անօրինական գործողությունների մասին դժգոհության նշաններ ցուցաբերի, անմիջապես մաուզերի բաժին կդարձնեն:

Հոկտեմբերի կեսերին ինձ կանչեցին գնդի շտաբ: Պետը հրամայեց ոչխարը հաշվել, հանձնել պրապորշիկ Ջանոյանին, հավաքել դասակը և երեկոյան ներկայանալ գնդի շտաբ: Ոչխարը հանձնելուց հետո նշված ժամին հավաքվեցինք շտաբի դուռը: Կարծում էինք, որ մեզ մեղադրանք կներկայացվի ոչխարների պակասորդի համար, բայց ժամանակն այնպիսին էր, որ գլուխները կորցրել էին, թշնամին սրընթաց առաջ էր շարժվում: Ստուգեցին մեր հագուստեղենը, կոշիկները, ում պետք էր՝ փոխեցին, լրիվ սպառազինեցին և պատրաստվեցինք մեկնելու: Մեզ միացան 120 նոր զորակոչվածներ, ուղղություն վերցրինք դեպի Սարիղամիշ, որտեղ գտնվում է մալականի մի գյուղ՝ Սելիմքյոյի անունով: Ճանապարհը մեզ համար բավական ծանր էր ու տանջալի: Մենք վաղուց է, ինչ երթի դուրս չէինք եկել, զբաղված էինք ուտել-խմելով, կարծես մոռացել էինք զինվորական կարգ ու կանոնը: Այժմ, նորեն մահվան ուրվականը կանգնեց գլխներիս վրա: Սովը, ցրտերը, տանջանքները, որ կարճ ժամանակում մոռացության էինք տվել, նորից պետք է վերսկսվեին: Աչքներիս առաջ պատկերացան ճակատում եղած մեր անցած օրերը, մեր սպանված ու վիրավոր, կորած ընկերները: Կարճ ասած, գնում

ենք առաջ՝ առանց հետդարձի հույս ունենալու: Ամբողջ գիշերը և հաջորդ օրը հնարավորության սահմաններում առաջանալով՝ հասանք մալականի Սելիմքյոյի գյուղը: Գյուղը բավական մեծ է, տեղացի ռուսները այն անվանում են Ստանիցա: Այս գյուղի հետ կապված մի դեպքի մասին ուզում եմ մի քիչ մանրամասն գրել:

1915 թ. այս գյուղի շնորհիվ է, որ թուրքական գերությունից կարողանում է փրկվել ռուսական թագավոր Նիկոլայ II–ը: 1915 թ. ռազմական գործողությունների շնորհիվ, ռուսական բանակի հաղթարշավով, ազատագրվում են Արևմտյան Հայաստանի մեծ մասը՝ Վանը, Էրզրումը, Մուշը, Երզնկան, Բիթլիսը, Խնուսը, Տրապիզոնը[19] և այլն, որոնցում հայ բնակչության թիվը անցնում էր երկու միլիոնից:

Այդ տարածքի կորուստը Թուրքիային հանգիստ չէր տալիս: Նրանք միջոցներ են ձեռնարկում կորցրածը հետ վերադարձնելու համար: Ռուսական բանակը, սրընթաց առաջանալով, թույլ էր տվել, ըստ իս, որոշակի սխալներ: Նախ ազատագրված տարածքները չէր մաքրել թշնամաբար տրամադրված թուրքերից, և հետո, այդ վայրերում թողել էր փոքրաթիվ կայազորներ: Թուրքերը, օգտվելով ռուսների այդ բարեհոգությունից, Էնվեր փաշայի գլխավորությամբ հավաքագրում են մոտ վաթսուն հազարանոց զորաբանակ և Օլթիի կողմից հարձակվում ռուսական բանակի թիկունքի վրա: Թուրքական բանակին գաղտնի, մեծ աջակցություն են ցուցաբերում և օգնում տեղացի թուրքերը, (շրջակայքում հայ բնակչության չէր մնացել եղեռնից հետո): Նպատակը մեկն էր՝

---

[19] Միայն Վանն է 1915 թ. ռուսների կողմից գրավվել: Մյուս բնակավայրերը ռուսներին անցել են 1916 թ.:

առաջավոր գիծը կտրել թիկունքից, թուլացնել և, ապա, շրջափակել ու կոտորել ռուսական զորքին: Թուրքերին հաջողվում է զգալի տարածություններ հետ վերցնելով՝ հասնել վերոհիշյալ Սելիմքյոյ գյուղի մոտերքին: Փաշան այստեղ իր զորքերին մի փոքր հանգիստ է տալիս և հետախույզներ ուղարկում՝ շրջակայքից տեղեկություններ ստանալու: Տեղացի թուրքերից հետախույզներին տանում են Սարիղամիշ, որտեղ այդ ժամանակ գտնվում էր ռուսական ցար Նիկոլայ II-ը և, որի պատվին, փոքրաթիվ կայազորը շքահանդես է կազմակերպելիս եղել: Լուրը, երբ փաշային է հասնում, նա անմիջապես միջոցառումներ է ձեռնարկում թագավորին գերելու նպատակով: Նախ, մի խումբ ասկյարների հրամայում է ձեռնամուխ լինել երկաթուղագիծը քանդելու, որպեսզի թագավորը փախչելու հնարավորություն չունենա, և հետո, բանակը նախապատրաստում է Սարիղամիշի վրա հարձակվելու: Թուրքական բանակի այս շարժումները վաղօրոք նկատում են Սելիմի գյուղացիները և պատվիրակներ են ուղարկում թե՛ Կարս և թե՛ Սարիղամիշ, թուրքերի շարժման մասին տեղեկություն հաղորդում: Լրաբերներից ստացված տեղեկությունների հիման վրա թագավորն անմիջապես դադարեցնում է զորահանդեսը, նստում իր գնացքը և վերադառնում Կարս: Ականատեսների վկայությամբ, թագավորի գնացքի հեռացումից մի ժամ չանցած, ասկյարները Սելիմի մոտ քանդում են երկաթգիծը, և թուրքերը զորքը շարժում են դեպի Սարիղամիշ, թագավորին ողջ-ողջ բռնելու, գերելու ակնկալիքով, հույս ունենալով ստիպելու, որ թագավորը փոխի պատերազմի ընթացքը թուրքերին ձեռնտու պայմանով: Թագավորը Կարս հասնելով՝ անմիջապես ոտքի է հանում տեղի փոքրաթիվ կայազորին (400 հոգուց բաղկացած

կազակներ) և մի զումարտակ տարիքավոր (45-50 տարեկան) զինվորների, որոնք տնտեսական կարիքների համար էին ծառայում, ուղարկում թուրքերին ընդառաջ, և ինքը մեկնում Ալեքսանդրապոլ-Թիֆլիս, որտեղից նոր զորամասեր է ուղարկում, ինչպես նաև առաջավոր գիծ տեղեկություն է ուղարկում՝ շտապ կարգով օժանդակ ուժեր ուղարկել թիկունք ու թուրքերին հնարավորություն չտալ իրենց մտադրությունն իրագործելու: Երբ թագավորը հեռացել էր արդեն Սարիղամիշից, Էնվեր փաշան, իր վաթսուն հազարանոց բանակով, շրջապատում է Սարիղամիշը և գոռոզաբար հայտարարում իր հաղթանակի մասին, որ իբր թագավորը գերված է և վաղը նախաճաշելու է Կարսում, մյուս օրը՝ Ալեքսանդրապոլում:

Սարիղամիշի փոքրաթիվ կայազորը կատաղի գոտեմարտ է տալիս ենիչերիներին ու թույլ չի տալիս քաղաք մտնելու: Հաջորդ օրը Կարսից, Ալեքսանդրապոլից, Թիֆլիսից օժանդակ զորամասեր են բերվում, որոնք ստիպում են թուրքերին՝ շրջանցելով Սարիղամիշը, լցվել շրջակայքի անտառները: Մինչ այդ, առաջավոր գծից արագությամբ օգնության է գալիս Եկատերինա թագուհու անվան գունդը, որտեղ ծառայում էր և մեր Տիգրանը: Զմեռային սառնամանիքները, որոնց սովոր չէր թուրքական բանակի զինվորների մեծ մասը (նրանք սիրիացիներ, լիբանանցիներ և այլ արաբական երկրներից հավաքագրվածներ էին, որոնք ձմեռ չէին էլ տեսել) մի կողմից, առաջավոր գծից եկած զինվորների հարվածները՝ մյուս կողմից, և Կարսից եկած զորամասը լիովին շրջափակում են ու կատարյալ պարտության մատնում թուրքական զորամասերին: Էնվեր փաշան հրաշքով ճողոպրում է, այն էլ տեղացի թուրքերի օժանդակությամբ: 60

հազարից ոչինչ չի մնում: Ռուսական զորքերը նորից վերադառնում են իրենց ամրացված վայրերը: Դիակները, ռազմական տեխնիկան ու ավարը հավաքելու, թաղելու համար Կարսի, Ալեքսանդրապոլի շրջակայքից մարդիկ են մոբիլիզացնում՝ այդ աշխատանքները կատարելու: Գնացողներից ոմանք, սարսափելով իրենց տեսած այլանդակված դիակներից, նույնիսկ, լեղաճաք եղան, ոմանք էլ վերադարձան բավական հարստացած: Դիակների վրայից հանել էին թանկարժեք զարդեր, զենքեր, ատրճանակ և այլն:

Սելիմքյոյի ողջ ճանապարհին անընդհատ շարժվում էին գաղթականների խմբերը, լսելի էին հրանոթների խուլ ձայներ: Այս ամենը նշանակում էր, որ մեր զորքերը նահանջում են, և նրանց հետապնդող թուրքական ասկյարներից փրկվելու համար տասնյակ հազարավոր խաղաղ բնակիչներ, թողնելով իրենց պապենական հողն ու ջուրը, հայրենի օջախը, դատարկուն եղած, զորքից առաջ մի կերպ ջանում են փախչել:

Լուսաբացին հրաման ստացվեց, որ մեր զորամասը դուրս գա հիշյալ գյուղից և առաջանա դեպի ճակատային գիծ:

Արևը բավական բարձրացել էր, երբ հասանք հայկական Խաչգյուղ անունով մի բնակավայրի: Բնակիչներ չկային, գյուղում տեղավորված էին գնդի տնտեսական մասերը, խոհանոցները, կային բավական վիրավորներ, որոնց նախապատրաստում էին դեպի Կարս ուղարկելու: Մի երկու ժամի չափ հանգստանալուց հետո մեզ հետ եկած զորակոչիկներին բաժանեցին վաշտերի, զինեցին, հագցրին և, մի սպայի ուղեկցությամբ, ուղարկեցին դեպի առաջավոր գիծ՝ մեր գնդին միանալու:

Կարծում էինք ճակատային գիծը բավական հեռու է, քանի որ Խաչգյուղը տափարակում էր, շրջափակված

բլուրներով, հեռուն տեսնել հնարավոր չէր: Մի քանի բլրակներ անցնելով՝ բարձրացանք մոտ կես կիլոմետր բարձրությամբ մի սարի վրա, որտեղից շրջակայքն, ինչպես բոիդ մեջ, պարզ երևում էր: Մեր զորքերը բլրակի տակ դիրքավորված էին, թշնամին հակառակ բարձրության վրա էր՝ մոտ 3 կմ վրա: Կրակում էին երկու կողմերի հրանոթները: Մինչև մեր սար բարձրանալը, գիշերով այստեղ էին բարձրացել մեր երկու վաշտերը, այժմ հրաման տրվեց թշնամուն ցուցադրաբար վայրէջք կատարել, նպատակը այն էր, որ թշնամին զգա մեր զորամասերի համալրման մասին:

Երեկոյան սկսեց փչել հյուսիսային քամին, ապա հորդ անձրև տեղաց, վերջում դարձավ ձյուն: Խրամատներում ջրափոսեր առաջացան, պատսպարվելու հնարավորություն չկար: Հրամանատարական կազմը թույլատրեց բարձրանալ լանջը և ով, ինչպես կարող էր, քարաժայռերի մեջ պատսպարվեց: Մի քանի րոպեում դիրքերը լրիվ դատարկվեցին: Ենթադրում էինք, որ նույնն է վիճակը և հակառակորդի մոտ:

Լուսաբացին դադարեց քամին, և նորից սկսվեց հորդ անձրևը: Դաշտամիջյան ճանապարհներով, ձորերով գետակներ սկսեցին հոսել, ամենուրեք ջրափոսեր են, հողը լրիվ փափկացել էր, ոտք դնել հնարավոր չէ, մինչև ծնկներս թաղվում ենք: Շուրջ չորս օր այս վիճակը շարունակվեց: Բացի հացից և քաղցր կաթից, այն էլ խիստ սահմանափակ, ոչինչ չենք ստանում, լռել են երկու կողմի բոլոր կրակոցները:

Շրջակայքն անտառազուրկ է, վառելիքի համար, նույնիսկ, ցախի կտոր չի ճարվում: Փոխարենը օգտագործում ենք թութունը, այն էլ թաց է: Վերջին օրը՝ մայրամուտից հետո, նոր համալրում ստացվեց: Բաժանվեցինք վաշտերի: Իմ

դասակը համալրվեց 14 զինվորներով: Պահանջվեց ներկայացնել եկողների ցուցակները: Երբ հերթով ցուցակագրում էի դասակիս եկած զինվորներին, պարզվեց, որ նրանցից մեկը մայմջուղցի է: Այդ գյուղի անունը լսելիս, կարծես, կաթվածահար եղա, մարմինս փշաքաղվեց, սարսռեցի, վայրկենապես աչքերիս առաջ պատկերվեց Ինտիզարը, որից ավելի քան երկու տարի լուր չունեի, ինչպես և նա ինձնից: Մի կերպ ցուցակագրումը ավարտեցի, սրտատրոփ սպասում էի, թե արժե, արդյոք, նորից իմանալ Ինտիզարի ուր և ինչ լինելու մասին: Իմ պատկերացմամբ, նա պետք է որ գտած լինի իր երջանկությունը, ամուսնացած իրեն արժանի մեկի հետ և ինձ մոռացած: Երկմտում եմ՝ արժե՞ վերքերս նորից քրքրել, թե՞ ընդմիշտ մոռացության տալ:

Մի կերպ սրտապնդվեցի, մոտեցա նորեկին ու սկսեցի հարց ու փորձի միջոցով իմանալ, թե ինչ վիճակում է Ինտիզարը: Ես նրան ասացի, որ իմ դասակում Աղյամանից մի զինվոր կար, որն ամուսնացել էր ձեր գյուղցի Առաքելանց Սարոյի աղջկա հետ: Խեղճ տղան զոհվեց Օլթիի ճակատամարտում, նրա կնոջից որևէ տեղեկություն ունե՞ս: Նա պատասխանեց, որ իր գյուղից դուրս եկած օրը Սարոյի աղջկան՝ Ինտիզարին, ամուսնացրին մեր գյուղցի Պողոսենց Կարոյի հետ: Խոսակցությունը շարունակել այլևս անկարող էի. լեզուս պապանձվեց, աչքերս մթնեցին, գլխացավ զգացի, անզգայացա, անշարժացա ու բավական ժամանակ այդ վիճակից չէի կարողանում դուրս գալ: Սթափվեցի այն ժամանակ, երբ զինվորներից մեկը բարձր ձայնով կանչեց վաշտի հրամանատարի մոտ: Խա՞նդը, պատի՞վը, թե՞ ինչ-որ բան կուրացրին ինձ, վերածվեցի կենդանի դիակի: Ինչպե՞ս կատարվեց այս փոփոխությունը, չէ՞ որ ես վաղուց հաշտվել էի

այդ մտքի հետ, չէ՞ որ առաջին օրերից զգում էի, որ ես անարժան եմ նրան, իսկ հորս մահից հետո, տուն ու տեղից զրկվելուց հետո, այլևս որևէ հույս չէր մնացել մեր ամուսնական կյանքի հետագա շարունակման համար, որի համար էլ միշտ մահ էի փնտրում:

Այժմ իմ մեջ առաջին պլան մղվեց պատվի զգացումը, եթե կենդանի վերադառնամ ու, երբ ծանոթներս ու ընկերներս ճաղրեն ինձ, աննամուս անվանեն, որ կինս իմ կենդանության ժամանակ մարդու է գնացել, արժե կենդանի մնալ: Այս մտորումների մեջ, ամենաուշը ես մոտեցա վաշտի հրամանատարին:

Կապիտան Օդաբաշյանը հայտնեց, որ լուսաբացին մեր գունդը հարձակման է անցնելու: Մեր վաշտը, մինչև ընդհանուր հարձակումը պետք է անցնի թշնամու բլրակի հակառակ կողմը, դիրքավորվի, այն հաշվով, որ մերոնց ընդհանուր հարձակման ժամանակ թույլ չտանք հակառակորդին հարձակման անցնելու, էլի ինչ-որ բաներ, բայց քանի որ ներքնաշխարհս խարխլվել էր՝ մոռացել եմ:

Կես գիշերից հետո վաշտն անաղմուկ առաջացավ մատնացույց արված տեղանքում դիրքեր գրավելու համար: Լուսաբացին արդեն բլրակի տակ էին, թշնամուց 7-8 հարյուր մետրի վրա: Գնդակների խոցելիության նպատակով՝ մի երկու հարյուր քայլ բարձրացանք լանջը, որը քարքարոտ էր և պատսպարվելուն հարմար: Մեր դիրքը վտանգավոր էր մեր գնդի կրակի դեպքում, այդ պատճառով՝ կապավոր ուղարկեցինք գնդի շտաբ՝ զգուշացնելու, որ մեր տեղը հայտնեն: Դեռ արևը չծագած մեր հրանոթները սկսեցին կրակը: Գնդի վաշտերը, շղթա կազմած, սկսեցին առաջանալ: Գործի դրվեցին հակառակորդի և՛ հրետենին, և՛ գնդացիրները: Ինչպես

մեր վաշտը, այնպես էլ մեր գրոհող հետևակը չէին կրակում։ Որոշ ժամանակ անց մեր գրոհողները սկսեցին հրացանների համազարկերը, որոնց գնդակները մեծ մասամբ մեր վաշտի գլխին էին թափվում։ Մենք հարկադրված տեղից տեղ էին փոխադրվում, իսկ յուրայինները, մեզ թշնամու տեղ դնելով, ավելի էին սաստկացնում կրակը։ Բոլոր միջոցները գործադրինք, բայց ոչինչ չստացվեց, մինչև գնդապետ Մուզմանյանի երևալը... ձիով, կարգադրեց գնդակոծություններն անմիջապես դադարեցնել։ Յուրայիններից ստացված կրակոցներից մեր վաշտից զոհվեց 9 մարդ, զգալի թվով վիրավորներ եղան։

Թշնամին, կռահելով մեր գնդի հարձակումը, այնպիսի հուժկու գնդակոծություն սկսեց, որ մերոնք իրար անցան, ամենքն աշխատում էին ոչ թե կրակել, այլ մի փոսի, մի քարաբեկորի, նույնիսկ, թփերի տակ պատսպարվել, գոնե մի քանի բոպեով փրկության ուղիներ որոնելու։ Թշնամին, զգալով մերոնց հանկարծակիի գալը, խուճապը և իր գերակշիռ ուժերը, հարձակման անցավ։ Մի ակնթարթ դադարեց կրակը, ասկյարները բարձրացան իրենց դիրքերից ու վայրի աղաղակներով բլրակից սկսեցին հորդել դեպի հարթավայրը։ Մեր վաշտը, որ ընկած էր միջանկյալ տարածքի վրա և առաջինն էր իր վրա վերցնելու թուրքերի հարվածը, զգաց մոտեցող առաջավոր ասկյարների շունչը, այդ վայրկյանին էլ հնչեցին մեր գնդի նվագախմբի ոգևորիչ «Մեր հայրենիք» պետական հիմնի հնչյունները;

Սև ձիու վրա նստած, լսվեց գնդապետ Մազմանյանի մարտական կոչը՝ հանուն հայրենիքի ուռա գոչելով հարձակման անցնելու մասին։ Վայրկյան անց թշնամական երկու բանակները մխրճվեցին իրար մեջ և սկսվեց մի

սարսափելի սվինամարտ: Գոռգոռոցը, ընկածների ճիչը, մեռնողների աղիողորմ լացը երկինք էր բարձրանում: Ինքնամոռաց գոտեմարտողներն այն աստիճան մոլեգնած էին, որ երբեմն չէին իմանում, թե ով ում է խոցոտում: Այս սահմռկեցուցիչ տեսարանը թե որքան տևեց, դժվար է ասել, սակայն, ի վերջո, թուրքերը տեղի տվեցին ու փախան: Ճիշտն ասած, ինքս այդ արյան բաղնիսը տեսնելով՝ քարացել և անէացել էի, գիտակցությունս, ինքնատիրապետումս գտա միայն թուրքերի փախուստից հետո: Մենք տվեցինք 150, իսկ թշնամին ավելի քան կրկնակի զոհեր: Թշնամու զոհերի շատության պատճառն, ըստ իս, նրանց շատությունն էր և համազգեստի միատեսակությունը, երբեմն իրար էին խոցոտում: Երկու կողմերն էլ կրում էին անգլիական համազգեստ ու զենքեր: Թշնամու նահանջից հետո մերոնք սխալ թույլ տվին. փոխանակ հետապնդելու, հնարավորության տվին նրանց վերադառնալ նախկին դիրքերը, որի արդյունքը եղավ այն, որ հաջորդ օրը թշնամին համալրեց իր ուժերը և էլ ավելի կատաղի հարձակման անցավ: Այս կատաղի հարձակման ժամանակ մեր գունդը միայն մի կես ժամ կարողացավ դիմադրել, որից հետո սկսվեց մեր խուճապային փախուստը: Թուրքերին հաջողվեց հետ վերցնել իրենց նախորդ օրվա դիրքերը, խրամատավորվել և հրանոթային կրակ բաց անել մեր վրա: Մենք, քանի որ գտնվում էինք հարթության վրա, արկերի բեկորներից ավելի շատ էինք տուժում: Փրկվելու միակ միջոցն արագ հեռանալն էր, սարերի ու չագիլների մեջ մի կերպ պատսպարվելը:

Հիշողությանս մեջ պահպանվել է իմ վերջին թաքստոց մտնելը, մի չագիլի տակ. որտեղ էր և մեր գնդի վեցերորդ վաշտի հրամանատար, մի ծերունի կապիտան՝ Տիգրանյան

ազգանունով, որից հետո այլևս ոչինչ չեմ հիշում։

Գիտակցության եկա Կարսի հիվանդանոցում։ Ի՞նչ էր եղել, ե՞րբ էր եղել, ո՞վ էր բերել, ո՞ր օրգանս էր վնասվել, չեմ պատկերացնում։ Ծանոթ դեմքեր եմ փնտրում, որ իսկությունն իմանամ՝ չի հաջողվում։ Դեմքերը խառնում եմ իրար, ուղիղ նայել չեմ կարողանում։ Վերջում միայն զգացի, որ գլուխս փաթաթված է և ուժեղ ցնցվում է։ Բավական ուշացումով միայն ինձ պարզ դարձավ, որ չագիլի մեջ պատսպարվածս ժամանակ թուրքական արկը ընկնում է ուղիղ չագիլի վրա, պայթել ու չագիլն ամբողջապես շուռ է եկել վրաս։ Բախտի բերմամբ կենդանի է մնում կապիտանը, որի կարգադրությամբ ինձ հանում են հողի տակից, հասցնում վաշտ և, Ավագի ուղեկցությամբ, վիրավորների հետ ուղարկում Կարս։ Հոսպիտալում ինձ հետ պառկած են մեր Սիմոնը, սերվանջուղցի Ալեք Թադևոսյանը, բայց նրանք ավելի թեթև են։ Հիվանդանոցում տազնապալի լուրեր են լսվում թշնամու առաջանալու, Կարսը ճակատային քաղաքի վերածվելու և այլնի մասին։ Երևի, այդ ի նկատի ունենալով, վիրավորներին սկսեցին փոխադրել Ալեքսանդրապոլ։ Հիվանդանոցում հիվանդներն ու վիրավորներն այնքան շատ են, որ տեղավորել հնարավոր չէ։ Շատերին առաջարկում են տուն գնալ։ Չէին բավարարում բժիշկները, դեղորայքը։ Ելնելով հիվանդանոցային ծանր կացությունից՝ սկսեցին ցուցակագրել թեթևներին՝ կամավոր դեպի ռազմաճակատ, իսկ ծանրներին՝ ուղարկել տուն։ Բացի մի քանի մահամերձներից, մնացածները մեկնեցին ռազմաճակատ կամ տուն։ Ես ևս, նկատի ունենալով իմ անտեր ու անտուն լինելը, իմ այս վիճակը, կամավորների մեջ ցուցակագրվեցի։ Ինձ համար միևնույնն էր, թե որտեղ եմ մեռնելու։ Հիվանդանոցից տուն գնացողների մեջ կային նաև

մայմջուղցիներ, որոնց հետ ես գիտակցաբար ծանոթություն չհաստատեցի, սակայն Սիմոնի միջոցով իմացել էին իմ ով լինելը և, գյուղ վերադառնալով, աներոջս պատմել են, որ ես Ալեքսանդրապոլի հոսպիտալում պառկած եմ:

Նրանց մեկնումից մի երկու օր անց աներս, հիվանդանոցի տարբեր դռներ թակելով, մոտեցավ՝ մեր պալատին՝ մի խուրջին ուտելիք շալակին: Սկզբում չտեսնելու տվեցի՝ կարծելով, թե ուրիշի համար եկած կլինի, իսկ երբ հարցրեց իմ մասին, թե որտեղ է պառկած, ինքնաբերաբար սչքերս արտասուքով լցվեցին, կոկորդս չորացավ, պապանձվեցի, միայն Սիմոնին միմիկայով հասկացրի, որ ներս հրավիրի: Բավական ժամանակ նստած էր մահճակալիս, ինձ չէր ճանաչում, դեմքս ամբողջապես վիրակապված էր և հարց ու փորձ էր անում իմ որտեղ և ինչպես լինելու մասին: Երբ Սիմոնը ներկայացրեց ինձ, պատմելով իմ վիճակի մասին, խեղճ ծերունին արտասվեց և պատմեց իմ՝ իրենց տանից հեռանալուց հետո կատարված իրադարձությունները, և այն, որ նա իր հույսը չի կտրել իմ վերադարձի և իր դստեր հետ նոր կյանք սկսելու, տուն ու տեղի տեր դառնալու վերաբերյալ: Իմացա նաև, որ իմ հեռանալուց հետո նրանք քրոջս՝ Արփենիկին, տարել են իրենց տուն և մինչև այժմ այնտեղ է:

Այսքանը լսելուց հետո համոզվեցի, որ մայմջուղցի զինվորի հաղորդածը հերյուրանք է եղել, որ այս սարի մարդը երբեք նման քայլի չէր կարող գնալ, նա իր անունը, իր պատիվն ու հեղինակությունը երբեք ոտնատակ չէր անի՝ ինչ-որ աղջկան նոր բախտի արժանացնելու նպատակով: Այս սուրբ մարդուն տեսնելով, նրա պայմանը լսելով, կարծես վերականգնվեց մարդկային արժանապատվությունս, փարատվեց հուսալքությունս, ապրելու, ողջ մնալու, նորեն տուն դառնալու

ցանկություններ առաջացավ: Միաժամանակ, կալեցի, կապվեցի, պապանձվեցի, որևէ խոսք ասել չկարողացա, աներոջս ձեռքը վերցրի, համբուրեցի, երկար ժամանակ բաց չէի թողնում ու լուռ արտասվում էի: Ինքը ևս հուզվեց, գրկեց ինձ, որդիաբար սեղմեց կրծքին, հուսադրեց, պատվիրելով, որ ապաքինվելուց հետո իսկույն տուն վերադառնամ:

Աներոջս բաժանվելուց հետո անցյալի մաղձը կարծես նորեն կրծոտեց հոգեկան աշխարհս, նորեն չար ոգիները կանգնեցին դեմս ու ոտպե առաջ գոչումս, գալիքի մասին եղած երազանքս հօդս ցնդեցին ու որոշեցի բռնել դարձյալ մահվան ճանապարհը: Հակառակ ընկերներիս, հատկապես, Սիմոնի թախանձանքին տուն վերադառնալու, որոշեցի կամավոր մեկնել ռազմաճակատ:

Վճիռս վերջնական համարելով, պատրաստվեցի առաջին իսկ խմբի հետ մեկնել առաջավոր գիծ:

Հաջորդ օրը, երեկոյան մեզ հիվանդանոցից դուրս գրեցին և, մի խումբ դասալիք ու գյուղերից հարկադրաբար հավաքած զորակոչվածների հետ, տեղավորեցին ապրանքատար գնացքում ու փոխադրին Կարսի կայարան:

Թուրքական բանակը քաղաքից 7-8 կմ վրա էր: Քաղաքի ժողովուրդը եռակի անգամ ավելացել էր, փողոցներով շարժվել չէր լինում, գաղթականները թափված էին ամենուր: Զորքերը լցված էին պատերի տակ: Եղանակները խիստ վատացել էին, ձյունախառն անձրևները թափվում էին օր ու գիշեր, գնացքները չէին աշխատում: Կայարանում կանգնած 6-7 էշելոններից, որոնք լցված էին գաղթականներով, օրեկան մեկ կամ երկուսը շարժվելու հնարավորություն չուներ՝ վառելիքի պակասության պատճառով: Հարկադրված քանդում էին կայարանամերձ տները, փայտը տեղափոխում շոգեքարշ ու դրանով, ինչ որ

չափով, վիճակից դուրս գալիս: Բայց թե դրանով անհնար էր գաղթականությանը փոխադրել Ալեքսանդրապոլ: Նրանց թիվն այնքան շատ էր, որ եթե ժամում բաց թողնվեր 5-6 էշելոն, նոյից չէր բավարարի բոլորին փոխադրել, մանավանդ, որ մոտակա բոլոր տները արդեն քանդվել էին և փայտի ձեռքբերումն ավելի էր դժվարացել:

Ներկայացա գնդի շտաբ, որտեղից իմացա մեր վաշտի տեղը, բավական դժվարությամբ գտա: Վաշտի պատկերը լրիվ փոխվել էր, մեծ մասը հիմնականում Կարսի և Կաղզվանի շրջակայքի քաղաքացիներ էին, որոնց հեռանալու նպատակը մոտեցող թշնամուց իրենց ընտանիքների բախտի տնօրինումն էր:

Վաշտ մտածս օրվա երեկոյան, մեր գունդն առաջադրանք ստացավ՝ կանգնեցնել հակառակորդի առաջացումը: Կեսգիշերին դուրս եկանք Կարսից հարավ արևելք: Դաշտով, սարի մոտ՝ քաղաքից մոտ 10 կմ, խրամատավորվեցինք:

Առավոտյան, ինչպես նաև օրվա ընթացքում, ոյնէ հրաձգություն տեղի չունեցավ: Ալեկոռծան կարգով ձյունախառն անձրև էր տեղում: Գիշերը ևս հանգիստ էր:

Առավոտյան՝ արևի ծագման հետ, թշնամին մի այնպիսի հսկայական բազմությամբ հարձակման անցավ, որ մենք անկարող եղանք դիմակայել: Թողեցինք դիրքերը և խուճապահար, ողջ գնդով, խելակորույս սկսեցինք փախչել: Գնդապետ Մազմանյանի և մի քանի սպաների հորդորները խուճապը կանգնեցնելու, մարտական դիրքերը գրավելու, ճակատամարտելու՝ բան դուրս չեկավ, փախչում էին ու փախչում: Մեր հետ ընկած զինվորներն արդեն թշնամու հեծյալների կողմից սրախողխող էին լինում: Մազմանյանը դիմեց մի վերջին հուսահատ միջոցի, որը կփրկեր մեզանից

շատերի կյանքը:

Հավաքելով գնդի հեծյալ վաշտի մնացորդներին, գոռուն-գոչյունով, ուռայով ընդառաջ գնաց թշնամու հեծելազորին: Այս տեսնելով՝ հետևակը ոգևորվեց, կանգնեցվեց փախուստը և կատաղի հակահարձակման անցան: Թշնամու առաջընթացը կասեցվեց: Շուրջ երկուժամյա կատաղի և արյունահեղ ճակատամարտից հետո, թշնամին նոր ուժեր նետեց մեր դեմ: Մենք, որ բավական կորուստներ էինք տվել և զգացվում էր զինամթերքի պակասություն, այլևս դիմանալ չկարողացանք: Մեր գնդացիրները, փամփուշտի պակասի պատճառով, արդեն չէին կրակում, թշնամին կատաղի վազքով մոտենում էր մեր դիրքերին: Վերջին միջոցը սվինամարտն էր, բայց, արդյո՞ք, մեր հյուծված, կիսաքաղց, հոգնած զինվորները կկարողանային դիմադրել թշնամու բազմաքանակ հորդաներին: Քայլ առ քայլ թշնամին մոտենում էր, խրամատներից դուրս գալ, փախչելու փորձ անել, անհնարին էր՝ իսկույն թշնամին ջարդ ու փշուր կաներ:

Թշնամու առաջամարտիկներն արդեն մտնում էին մեր դիրքերը, այդ վայրկյանին լսվեց գնդացիրների ճարճատյունը: Մենք կարծում էինք, որ այդ թշնամունն է, բայց մեկ, երկու րոպե անց զգացինք, որ թշնամին ընկրկեց, ևս մի քանի րոպե, և թշնամին խուճապահար փախուստի դիմեց: Պարզ դարձավ, որ գործում են մեր գնդացիրները՝ հնձելով փախուստի մատնված ասկյարներին: Վաշտի Մաքսիմ գնդացիրները, ռուս պարուչիկ Վիշնևսկու գլխավորությամբ, իրենց գործը տեսան, թշնամին հետ շպրտվեց իր ելման դիրքերը: Օգտվելով ընձեռնված հնարավորությունից՝ մենք լքեցինք ամեն ինչ և փախուստի դիմեցինք, փոխանակ հետապնդելու թշնամուն:

Ոչ հորդորանքները, ոչ բղավոցն ու սպառնալիքներն

այլևս փախուստը կանգնեցնելու որևէ ազդեցություն չունեցան: Յուրաքանչյուրը ուղղություն վերցրած դեպի Կարս, ամբողջ ուժով փախչում էր՝ պահանջելով ուտելիք և փամփուշտ:

Ինչպես նախկինում, քայլում եմ ամենավերջից, ուժերս չի ներում ընթացքս արագացնել:

Երբ գնդապետ Մազմանյանի ձեռնարկած բոլոր միջոցները փախուստը կանգնեցնել, որևէ արդյունք չտվեցին, երբ հասել էինք Կարսի մատույցներին, այդ լեգենդար հերոսը, որ բազում ճակատամարտեր էր շահել, անպատվաբեր համարեց պարտված ներկայանալ բարձր հրամանատարությանը և, մահը գերադասելով, իր իսկ ատրճանակով՝ մեր աչքի առաջ, ինքնասպանություն գործեց: Գնդակը խոցել էր ուղիղ նրա սիրտը և հակառակ կողմից մեծ բացվածք բաց արել:

Նրա կորուստը մեծ վիշտ պատճառեց ներկաներին, արտասվալից աչքերով նրա դին դրինք սայլերից մեկի վրա և շարժվեցինք Կարս, երեկոյան տեղ հասանք: Մի կերպ գիշերեցինք: Առավոտյան թուրքական հրանոթների արկերը գնդակոծում էին քաղաքը: Հազարավոր բնակիչներ քաղաքից խելակորույս փախչում էին դեպի Չախմախի ձորը, մի մասն էլ բռնել էր Մազրայի[20] ճանապարհը: Հարազատները, խուճապային այդ իրադրության մեջ կորցրել էին իրար, հայրը՝ զավակներին, զավակները՝ ծնողներին, եղբայրը՝ քրոջը և այլն: Լաց ու կոծը, գոռուն-գոչյունը, ողբն ու աղաղակն այնպիսի ժխոր էին առաջացրել, որ նրանցում խլանում էին նույնիսկ պայթյունի ձայները: Քաղաքում կուտակվել էին նաև մեծ թվով զորքեր, բոլորը խուճապի մեջ էին, ոչ ոք թշնամուն

---

[20] Մազրան Կարսի մարզի հայկական հայտնի գյուղերից էր: Միաժամանակ. երկաթուղային կայարան էր Կարս-Ալեքսանդրապոլ ճանապարհին:

դիմագրավելու վերաբերյալ որևէ փորձ չէր ձեռնարկում, և նա անարգել մոտենում էր քաղաքին:

Մազմանյանի դիակը տեղափոխեցին շոգեքարշին կից վագոնում: Կայարանում կանգնած էին բավական վագոններ, որոնք լեցուն էին փախստականներով և սպասում էին, թե երբ են շարժվելու գնացքները: Մի քանի շոգեքարշ էլ վառելիքի պատրաստություն էին տեսնում:

Կեսօրին կառամատույցին մոտեցավ զրահագնացքը, որը ինչ-որ նպատակով մոտ մեկ ժամ մնաց կանգնած: Այդ ընթացքում լուր տարածվեց, թե թուրքերը հարավ-արևմտյան կողմից մտան քաղաք: Իրարանցումն ավելի սաստկացավ, փախուստն ավելի խուճապային բնույթ կրեց: Շատերն իրենց աղքատիկ պաշարներն անգամ թողեցին, ոմանք կին, երեխա, ծերունի ծնողներ, և մազապուրծ փախան՝ փրկվելու ակնկալությամբ:

Ռազմական զորձի ղեկավարությունը ոչ մի միջոցառում չձեռնարկեց քաղաքը պաշտպանելու, թեև քաղաքում կային թե լավ պաշտպանական ամրություններ և մեծ թվով զորքեր՝ Հայկական առաջին, երրորդ, չորրորդ, հինգերորդ գնդերը, Սարիղամիշի կայազորը, Կարսի բերդապահ զորքը, առանձին գումարտակները, Ալեքսանդրապոլից եկած մի քանի հեծյալ վաշտեր, մաուզերիստների խմբեր և այլն: Այս քառսում ես ևս կորցրել էի ինձ, ինչ անելս չէի կարողանում որոշել: Խառնվել փախչողներին, հույս չունեի երկար շարունակել, հյուծվածությունս այդ հնարավորությունը չէր տալիս, մնալ տեղում և ընկնել թուրքերի ձեռքն՝ ավելի սարսափելի էր: Թեև անհույս մոտեցա վագոններին, որոնցում լեցուն էին գաղթականները, գնացքը չէր շարժվում՝ շոգեքարշի վառելիքի պատճառով: Մտամոլոր կանգնած եմ ու հանկարծ մեկը ինձ

գրկեց: Շուտ եկա, առաջին հայացքից չճանաչեցի: Երբ տիրապետեցի իեձ, իմացա, որ իմ սիրելի ընկերներից մեկն է, դարամամատցի Նիկոլ Ստեփանյանը: Վայրկենաբար ամեն ինչ մոռացա, ինձ թվաց, որ այս մարդը երկնքից իջավ, միայն ինձ փրկելու, այս անխուսափելի կործանումից ազատելու:

Երբ որոշ չափով մտքերս հավաքեցի, դուրս եկա անգգա վիճակից, սկսեցի հարց ու փորձ անել նրա որպիսության, որտեղ և ինչ անելու մասին, նա, թե՝ ժամանակ չունեմ երկար խոսելու, ծառայում եմ զրահազնացքում, առաջարկեց միասին բարձրանալ զրահազնացք, մանրամասնությունների մասին այնտեղ կիմանամ:

Զրահազնացքը բաղկացած էր վեց վագոնից, որոնց կենտրոնում շոգեքարշն էր: Վագոններից երեքում տեղադրված էին հրանոթներ, պահեստամասեր (ռելսեր), արկեր, իսկ մյուս երեքում տեղավորված էր մոտ 25 գնդացիր, որտեղ էր և նրանց սպասարկող կազմը: Բարձրանալով գնացք՝ նկատեցի բավականին վիրավոր զինվորներ, քանի որ իմ գլխի վիրակապը հանված չէր, ես էլ տեղավորվեցի վիրավորների խցիկում: Վագոն բարձրանալուց մի քանի րոպե անց, գնացքի սպասարկու կազմը մարտական պատրաստականության բերվեց, սկսվեց լարված ու սպասողական վիճակը:

Նախորդ օրվա գնդին հետապնդող թշնամու հեծելազորը, շրջանցելով քաղաքը, կայարանը, սիմաֆորից մեկ երկու կիլոմետրի վրա երկաթգիծը քանդեց և ճանապարհը դեպի Ալեքսանդրապոլ անհնարին դարձրեց, որից հետո նրանք սկսեցին բարձրանալ Ղարաթաղ կոչվող բերդի լանջը՝ նպատակ ունենալով կտրել նաև բերդի հակառակ կողմի՝ դեպի Ալեքսանդրապոլ տանող խճուղին:

Զրահազնացքը երկար ու ուժեղ սուլոցով ազդարարեց

երթի դուրս գալը դեպի սիմաֆոր, որտեղ հազարավոր ասկյարներ, գնացքի երկու կողմից, կատաղի հրացանաձգություն սկսեցին գնացքի վրա: Ողորմելիներին թվում էր՝ գնդակներով կամ սվիներով կարող են խոցել զրահագնացքը և գերել այն: Լսվեց զրահագնացքի հրամանատարի հրամանը, կրակ բացել թշնամու վրա: Սկսեցին ճարճատել մեր գնդացիրները: Ասկյարներն այնքան բազմաքանակ էին, խառնիխուռն և զրահագնացքի մասին անտեղյակ, որ մոլախոտերի նման հնձվեցին մեր կրակոցների հուժկու հարվածներից: Պատահում էր, որ մի գնդակից խոցվում էր թշնամու 3, նույնիսկ, չորս ասկյար: Գնացքը շրջապատել ցանկացողները բոպեների ընթացքում գետին տապալվեցին, ոտքի վրա բացառապես ոչ ոք չմնաց: Այժմ զրահագնացքը սկսեց գնդակոծել դեպի Ղարաթաղի լանջերին բարձրացած թուրքական հեծելազորին, որը, թողնելով լանջերը, արագությամբ հետ շրջվեց դեպի ելման դիրքերը: Երկաթգծի շրջակայքով անցնելիս նրանք ևս մեծ զոհեր տվեցին: Բացի գնացքում եղած գնդացիրներից, վիրավոր զինվորները հրացանային կրակոցներով ևս աջակցում էին գնդացրորդներին:

Թե որքան տևեց այդ ահավոր գոտեմարտը, հնարավոր չէ ասել, միայն կրակի դադարեցումից հետո մեր աչքի առջև, բացի մարդկային ու ձիերի դիակներից, ուրիշ ոչինչ չէր երևում:

Զրահագնացքը, առանց կրակոցների, վերադարձավ կառամատույց, որպեսզի օգնի, նաև ստիպի, որ կանգնած գնացքները շարժվեն դեպի Ալեքսանդրապոլ: Սակայն այն չհաջողվեց: Թուրքական նոր համալրումը սիմաֆորից վերև սկսեց ներխուժել քաղաք՝ միաժամանակ քանդելով երկաթուղագիծը: Զրահացնացքի վրա այժմ վտանգը կախվեց:

Գնացքը նորեն դանդաղ հետ դարձավ, ամբողջ հզորությամբ կրակի հեղեղը թափելով թշնամու գլխին: Նախորդ անգամվա նման հակառակորդը, մեծ կորուստներ տալով, նահանջեց, քանդված գիծը վերականգնվեց և շարժվեցինք դեպի Ալեքսանդրապոլ: Մազրա կայարանի մոտակայքում թուրքերը դարձյալ քանդել էին երկաթգծերը և ամբողջ մի բանակ լցրել երկաթգծի 2 կողմերը (շուրջ 10-հազարից ավելի) թուրքական զորքի մի մասը հեծելազոր էր ու մեծ ամբարտավանությամբ տոնում էին իրենց հաղթանակը, որ զրահագնացքին գերելը իբր իրականություն է:

Գնացքը շարժվեց մինչև քանդված եզերքը և առանց կրակոցի, կանգ առավ: Թուրքերը, իրենց հաղթանակը ապահոված համարելով, ենթադրելով, որ գնացքն արդեն անձնատուր է լինում, գոռուն-գոչյունով, ուրախանալով, թռչկոտելով շրջապատեցին գնացքը, փորձելով բարձրանալ ու մուտք գործել վագոնները: Գնացքում եղած մեր զինվորներին կարգադրված էր չկրակել, կազմ ու պատրաստ սպասել:

Երբ թուրքերի աղմուկն ու գոռգոռոցը հասավ իր գագաթնակետին, հրաման տրվեց գործի դնել զրահագնացքի զենքի բոլոր տեսակները, այդ թվում և նռնակները: Սկսվեց մի Սոդոմ-Գոմոր, թե ինչպիսի սարսափելի վայնասուն, աղմուկ-աղաղակ, լաց ու աղերսանք սկսվեց, դա միայն աստծուն է հայտնի: Խառնիճաղանջ խուժանը կոտորվում էր, ոչ միայն զրահագնացքի գնդակոծումից, այլև խուճապահար փախուստի ժամանակ իրար տրորելուց, ձիերի սմբակների տակ ընկնելուց, ամենուր լսվում էր անօրենների աղեկտուր կանչը՝ ալահ-ալահ: Հեշտ է ասելը՝ մի անգամից գործի դրվեց 24 գնդացիր, 12 թնդանոթ և հարյուրի հասնող հրացաններ, ատրճանակների ու նռնակների մասին՝ չասենք: Կարճ ասած, բացի մի քանի

հեծյալներից, որոնք մի կերպ ճողոպրեցին, մյուսները գլխովին ջախջախվեցին։

Հրամայվեց վագոնից վայր իջնել, գիծը վերանորոգողները զբաղվեն իրենց գործով, իսկ զինվորները շրջեն դիակների մեջ և ողջերին ու թաքնվողներին ուղարկեն գրողի ծոցը։ Ինձ էլ բաժին հասավ մեկին ուղարկել Մուհամեդի մոտ։

Գիծը վերականգնվեց, հրամայվեց հավաքել սպանված ասկյարների զենքերը և վերադառնալ վագոններ։ Ամեն մեկն իր հետ բերեց 10-ից ավելի հրացան, փամփուշտներ և այլ հանդերձանք։ Զրահազնացքի այս չտեսնված սխրանքը հնարավորություն տվեց հարյուր հազարավոր հայրենակիցների կյանք փրկել։

Թուրքական հրամանատարությունը, որը, ըստ երևույթին, վաղօրոք պլանավորել էր երկու ուղղությամբ էլ (երկաթգծի և խճուղու) ճանապարհը դեպի Ալեքսանդրապոլ փակել, գերել ու հաշվեհարդար տեսնել թե՛ բնակչության և թե՛ զորամիավորումների հետ, զրահազնացքի հերոսամարտերի շնորհիվ՝ ձախողվեց։ Մեկ-երկու օրով ձգձգվեց այդ ճանապարհների փակումը, և տասնյակ հազարավորներ հնարավորություն ստացան փախչելու և ազատվելու լիակատար կործանումից։

Մազրա կայարանում լրացրին գնացքի ջրի պաշարը, վառելիքը, առավոտյան կամաց սկսեցինք շարժվել դեպի Ալեքսանդրապոլ։ Հաջորդ լուսաբացին տեղ հասանք։ Իմ նմանները, այլևս անելիք չունենալով գնացքում, թողեցինք այն, ափսոսելով, թե ինչու՞ մի այդպիսի 3-4 չունենայինք, որ կարողանայինք Կարսը ձեռքից բաց չթողնել։

Քաղաքի փողոցներով քայլելիս հանդիպեցի մեր վաշտի մի քանի տղաների, միանալով նրանց, միասին գնացինք վաշտ,

որոնք գիշերը հասնելով Ալեքսանդրապոլ, տեղավորվել էին Կազաչի պոստի զորանոցներում:

Մի քանի օր անց թուրքական բանակը հասավ Արփաչայի գետաբերանին՝ քաղաքից 3 կմ-ի վրա:

Մեր ցաք ու ցրիվ գունդը նորից հավաքեցին, վերակազմավորեցին, մի ռուսախոս զնդապետի՝ Հարությունյանի հրամանատարության ներքո: 1920թ. նոյեմբերի կեսերին եղանակները սովորականից ավելի շուտ ցրտեցին, ձյունախառն անձրևները, ցեխը հնարավորություն չէին տալիս ճանապարհորդելու: Զինվորները, թեև հագուստի տեսակետից ապահովված էին, բայց չափազանց վատ էր սննդի գործը:

Մեր զնդին հրամայվեց թողնել Կազաչի պոստի զորանոցները, շարժվել դեպի Բայանդուր և Արփաչայի երկարությամբ դիրքավորվել: Ալեքսանդրապոլից դուրս եկանք երեկոյան, լուսադեմին տեղ հասանք, մինչև դիրքավորվեցինք, լույսը բացվեց: Բայանդուրի պաշտպանությունը կարճ տևեց, ընդամենը, երկու օր: Երրորդ օրվա լուսաբացին թուրքական բանակը սկսեց հարձակումը և մի քանի ժամում գրավեց Ալեքսանդրապոլ տանող նահանջի ճանապարհը: Մեր գունդը ևս, իր վերջին ամիսների սովորույթի համաձայն, բռնեց նահանջի ճանապարհը, առանց թուրք զինվորի երես տեսնելու: Բայանդուրը թողնելուց հետո մեր գունդը շարժվեց դեպի Արազածի լանջերը՝ հույսը դնելով նրա անառիկության վրա, թուրքերի հետապնդումից փրկվելու ակնկալությամբ:

Այժմ, երբ հետադարձ հայացքով վերհիշում եմ մեր ամոթալի նահանջը, փախուստը, հայրենիքը լքելու ամոթալի փաստը, զարմանում եմ, թե մեր ղեկավար այրերը, կառավարությունը ու՞մ էին ապավինում, ումի՞ց սպասելիքներ

ունեին, ովքե՞ր օգնության ձեռք կմեկնեին հայերին՝ Պարսկաստա՞նը, հայերի դարավոր թշնամին՝ Ադրբեջա՞նը, որը սերտ կապերի մեջ էր և՛ պարսիկների, և՛ թուրքերի հետ, որոնք հարմար առիթի էին սպասում հայերին բնաջնջելու և տարածքները զավթելու, նամանավանդ, այդ պահին, երբ ավելի էր սրվել ազգային թշնամանքը, Վրաստա՞նը, որոնց նախկին թագավորներն ու ներկայիս իշխանավորները միշտ կողմնակից են եղել թույլ, բաժանված, պետականությունը կորցրած Հայաստան տեսնելու, որպեսզի կարողանան մի պատառ էլ իրենք կորզեն, ինչպիսիք Ախալքալաքը, Ախալցխան, Արդահանը և այլն:

Այս պայմաններում դաշնակցական կառավարությունը փոխանակ ուղիներ որոնելու, խաղաղության եզրեր գտնելու կամ կազմակերպված պաշտպանություն կազմակերպելու, անկազմակերպ խուճապի, փախուստի էր մատնում բանակին ու, միաժամանակ, պատերազմական իրավիճակներ սկսում բոլոր հարևանների հետ (ծովից-ծով՝ առաջ քաշելով): Բայանդուրը թողած օրը, նահանջելով, երեկոյան հասանք Արմթլի՝[21] առանց թշնամի տեսնելու և կրակելու: Թողեցինք Ղափլի, Հոռոմ, Սոնգյուլա[22] գյուղերը, որոնց բնակչության մեծ մասը մնաց գյուղերում՝ դառնալով թուրքերի զոհը: Վաշտին, ինչպես իմ դասակին, մի կերպ տեղավորելուց հետո (գոմերում ու լքված տներում), ինձ հետ վերցրի իմ բարեկամ մայմջուղցի Ավագին ու սերվանջուղցի Դավոյին ու մեկնեցինք Մայմջուղ, որը Արմթլից 2 կմ–ի վրա էր՝ Ինտիզարին տեսնելու նպատակով:

---

[21] Արմթլին կամ Արմթլուն (Արմտլու) այժմ Շիրակի մարզի Տուֆաշեն գյուղն է:
[22] Ղափլին Շիրակի մարզի Գուսանագյուղն է, Հոռոմը համանուն գյուղն է, իսկ վերոնշյալ Սոնգյուլան՝ նախկին Սոնգյուլին, ներկայիս Հայրենյացն է:

Ուշ երեկոյան մոտեցանք աներոջս տանը, ներս մտանք գիշերելու, տեղ խնդրելու պատրվակով (այդպիսին էր մեր պայմանավորվածությունը), այդ ժամանակներում մեր նման հարյուրավոր զինվորներ, նույն խնդրանքով վխտում էին գրեթե ամենուր: Տան տերերը չճանաչեցին մեզ և մերժեցին մեր խնդիրքը՝ պատճառաբանելով, որ ընտանիքը ծանրաբեռնված է և գիշերելու հարմարություն չունեն: Երեսներս պնդելով համառեցինք՝ պահանջելով տանտիրոջը, այսինքն, աներոջս: Գլուխս դեռ կապված էր, այնպես որ ինձ ճանաչելը դժվար էր, բացի այդ, այս տանից վերջին անգամ հեռացել էի, երբ 15-տարեկան էի՝ վտիտ, թուլակազմ, այժմ չափավոր երիտասարդ եմ, մոտ 18 տարեկան, զինվորական համազգեստով, զինված, եթե նույնիսկ անթույլատրելի արարքներ էլ թույլ տայի անելու, անձս կմնար անհայտ:

Սպասողական վայրկյանները ժամեր են թվում, անհամբեր սպասում եմ այն պահին, թե երբ եմ հանդիպելու Ինտիզարին: Իմ անցած ժամանակի բազմիցս արված երդումները այլևս երբեք այս գյուղը, այս տունը չմտնելու մասին հօդս ցնդեցին, երդմնազանց եղա և անհամբեր, սպասողական վիճակում եմ: Ի վերջո, եկավ ինձ համար Սուրբ, ծնող, հովանավորող աներս, անմիջապես ճանաչեց, փաթաթվեց, համբուրեց (հիվանդանոցից արդեն իմ վիճակին ծանոթ էր), տանեցիները արդեն իմացան իմ ով լինելը: Մեծերը՝ Հարութը, Ենոքը ևս եկան, գրկախառնվեցին, մյուսները ևս բավական ջերմ ընդունեցին: Ինտիզարը, որը մեր մուտք գործելուց անմիջապես հետո, վատ բան գուշակելով, դուրս էր եկել տանից, աչքալույս էին տարել, վերադարձել ու դռան մոտ կուչ եկած կացնել էր (ժամանակի կարգերի համաձայն ամոթ էր ինձ մոտենալը): Տեսնելով իմ շարժվող գլուխը (ցնցումները),

նա խորապես հուզվում է, քաշվում մի անկյուն ու ողբում իմ դառը ճակատագիրը:

Ինտիզարի անհայտանալը ինձանից բացի ոչ ոք չնկատեց: Կռահելով ամեն ինչ, որոշեցի մի վերջին անգամ ստուգել, եթե նա ինձ հետ ապրելու համաձայնություն կտա, ապա ծունկ չոքել նրա առաջ, այտերի փոխարեն ոտքերը համբուրել, ներողություն խնդրել այսքան ժամանակ իրեն դառնություն պատճառելու համար ու երդվել, որ հետայսու կաշխատեմ մեր քերս քավել ու, եթե ողջ մնամ, իրեն կդարձնեմ իմ պաշտամունքը:

Պատրվակ գտնելով՝ դուրս եկա սենյակից և, աղջիկներից մեկի ուղեկցությամբ, Ինտիզարին գտա անասնագոմում՝ մթության մեջ դառնագին արտասվելիս: Մոտեցա, անվարան բռնեցի ձեռքը, չհամարձակվելով փարվել, համբուրել, տարիների բաժանումից հետո, դժվարությամբ, գրեթե կակազելով խնդրեցի հանգստանալ: Միաժամանակ խնդրելով, որ եթե չի ցանկանում ինձ տեսնել կամ հետագայում ինձ հետ ապրել, հենց այս վայրկյանին ընդմիշտ կհեռանամ, չեմ անհանգստացնի, չեմ մեղադրի և կհայտարարեմ, որ այս վիճակի համար ես եմ մեղավոր:

Բավական երկար ոչ մի պատասխան չտվեց, լուռ էի նաև ես. այս անելանելի վիճակից դուրս գալու համար թողեցի ձեռքը, ներողություն խնդրեցի անհանգստացնելու համար, խոստացա ընդմիշտ հեռանալ ու այսուհետև երբեք տհաճություն չպատճառել: Երբ փորձեցի շարժվել, նա փղձկաց, ձեռքս բռնեց, փարվեց ինձ՝ ասելով, որ այդ ամենն արդեն անցած է: Գոմից դուրս եկանք հաշտված, խաղաղված: Այդ ընթացքում Ինտիզարը մի քանի կարճ տեղեկություններ հայտնեց, որոնց թվում և մեկ տարի առաջ իր մոր վախճանը:

Երբ մտանք սենյակ, Դավոն պատրաստվում էր իրենց գյուղ գնալ, իսկ Ավագը՝ իրենց տուն:

Ինտիզարի հետ միասին անցկացրինք գիշերը, վերջնականապես փարատվեցին տարիների կասկածները, փոխադարձ անվստահությունն ու թշնամանքը, դրվեցին մեր կյանքի հետագա սիրո, հարգանքի, հավերժության հիմքերը:

Վաղ առավոտյան մեր գունդը մտավ Մայմջուղ ու շարժվեց դեպի Սերվանջուղ: Անեռոջս ու Հարութի հետ կարճատև խորհրդակցությունից հետո նպատակահարմար համարեցինք, որ իրենց ընտանիքն, անասունները և թանկարժեք ունեցվածքը վերցնեն ու նահանջող զորքի հետ մասին հեռանան գյուղից, հակառակ դեպքում, կգերվեն թուրքերի կողմից:

Աշնանային ցրտաշունչ մի առավոտ թողեցինք Մայմջուղը՝ մեզ հետ տանելով անեռանցս գերդաստանը: Ճանապարհին ես քայլում էի Ինտիզարի հետ կողք-կողքի, չկար նախկին ամոթխածությունը, խոսում էինք, կատակներ անում, ծիծաղում, հարց ու փորձ անում մեր իրարից բաժանված ժամանակահատվածում տեղի ունեցած անցուդարձի մասին ու, նույնիսկ, ապագայի ծրագրեր կազմում: Այսպես, խոսելով աննկատելի թվաց ճանապարհը, մեզ թվում էր, որ կարծես պատերազմն ավարտվել է, և մեր միակ հոգսը տուն ու տեղ դնելն է: Մինչդեռ, նույնիսկ, վաղվա օրվա մասին, ինչպես մենք, այնպես էլ ողջ ժողովուրդը, որևէ երաշխիք չուներ, մենք նահանջում էինք, մինչև ո՞ւր, որտե՞ղ և ինչպե՞ս, միայն աստծուն էր հայտնի: Առաջընթացը բավական դժվարությամբ էր կատարվում ձյան ու ցեխի պատճառով, բացի մեր երկուսից, մյուսները հոգնել էին ու բավական հետ մնացել: Միայն երեկոյան հասանք Ադիաման: Գյուղի

բնակչության մեծ մասը վաղօրոք լքել էր գյուղը: Դատարկ էին նաև մեր տները, որտեղ ժամանակավորապես բնակվելիս են եղել գաղթականներ, բայց այսօր նրանք էլ չկային, ու նրանց փոխարինել էին մեր գնդի զինվորները: Աներոջս ընտանիքի հետ միասին տեղավորվեցինք Հայրութ ամու տանը, որտեղ կային և ուրիշ փախստականներ:

Հարութ ամին երկու ոչխար մորթեց, թոնիրը վառեցին, սկսեցին խորովել, այդ ընթացքում Ինտիզարը, աղջիկների հետ դուրս գալիս նկատում է, որ զինվորները քանդում են մեր սենյակների դուռ ու լուսամուտը՝ վառելու համար: Իբրև տան տեր չարանում է զինվորների վրա, որ նրանք դուռ ու լուսամուտը չքանդեն, վառեն, մինչդեռ վայրենացած զինվորները հարձակվում են Ինտիզարի վրա: Երեխաներից մեկը, որը ներկա էր եղել այդ վեճին, վազելով հայտնեց, թե ինչ է կատարվում: Ատրճանակս վերցնելով դուրս թռա, ինձ տեսնելով, նրանք Ինտիզարին բաց թողին ու ներողություն խնդրելով մեղանչեցին:

Գիշերը խաղաղ անցակցրինք: Առավոտյան լուր ստացանք, որ թուրքերը առաջանալով գրավել են Մոլլագյոկչան, Բողասքյասանը ու շարժվում են դեպի Սոգյութի: Ադիամանում հանգրվանած զորամասերը, գաղթականներն ու գյուղացիները գյուղից դուրս եկան: Առջևից գնում էր զորքը, ազգաբնակչությունը նրանց հետևից, այդ արված էր նպատակային ձևով, որպեսզի մինչև թշնամին զբաղվի բնակչությանը թալանելով և այլ բռնարարքներով, զորքը կարողանա հեռանա և թշնամուն չգերվի: Ադիամանից հետո թողեցինք Ահակչին, Ղուլդարվեշը, Ղրմզլուն, Ղադալուն, Սխաչին, Մեհրաբանը, Իրինդլը, Ներքին և Վերին

Ղարաղոյմազները, Աղջաղալները[23]: Ներքին Աղջաղալայում հավաքվեցինք գիշերելու, այն էլ բացօթյա: Երկու օր անց հեռացանք, թողեցինք Աղջաղալուն, մեկնեցինք Կոշ, տեղավորվեցինք աներոջս ծանոթի մարագում:

Մեր գնդի բոլոր զորամասերը հիմնականում կենտրոնացել էին Կոշում: Ճանապարհներին պահակներ էին կարգված, մեծի մասամբ՝ դասալիք զինվորներին հավաքագրելու նպատակով:

Չնայած օրվա մեծ մասը մերոնց, Ինտիզարի մոտ էի լինում, բայց միաժամանակ մասնակցում էի վաշտի միջոցառումներին, իմ դասակը, ըստ ցուցակի, լրիվ էր, բացի Ավազից ու Դավոյից:

Կոշում մի քանի օր մնալուց հետո, բաժանվեցի յուրայիններից: Հակառակ անցյալի, այժմ մեծ դժվարությամբ բաժանվեցի Ինտիզարից՝ խոստանալով հարմար պահ լինելու դեպքում անպայման վերադառնալ: Քոչերը շարժվեցին դեպի Ղզլթամուր[24], իսկ մեր գնդերը՝ դեպի էջմիածին: Տեղավորվեցինք զորանոցներում:

Առավոտյան, երբ արթնացանք, նկատվեց, որ մեր զորանոցները շրջապատված են, հրաման տրվեց շտրք կանգնել առանց զենքերի, զենքերը հավաքեցին, զորանոցների դռները փակեցին, շրջափակեցին մեր շարքերը, որից հետո եկան կառավարության ղեկավարները՝ նախագահ

---

[23] Վերոհիշյալ գյուղերից Ահակչին Արագածոտնի մարզի Զովասար, Ղուլդարվեշը՝ Ոսկեթաս, Ղրմզլուն՝ Կարմրաշեն, Դաղալուն՝ Եղնիկ, Սխաչին՝ Շղարշիկ, Մեհրաբանը (նաև՝ Մեյրբան)՝ Կաթնաղբյուր, Իրինդը՝ նոյնանուն, Ներքին Ղարաղոյմազը՝ Ներքին Սասնաշեն, Վերին Ղարաղոյմազը՝ Վերին Սասնաշեն, Վերին Աղջաղալան (նաև՝ Աղջաղալու)՝ Վերին Բազմաբերդ, Ներքին Աղջաղալան՝ Ներքին Բազմաբերդ գյուղերն են:

[24] Ղզլթամուրը Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղն է:

Խստիյանը[25], Ռուբեն փաշան, ռազմական նախարար պարոն Դրոն, մաուզերիստների խմբապետը և այլոք: Սկսվեց երկար ու բարակ հարցաքննությունը, թե ինչու՞ մեր գունդը, առանց հակառակորդին դիմադրելու, փախուստի է մատնվում, ինչու՞ զնդապետ Մազմանյանը ինքնասպանություն գործեց... Շարքերը քարացել էին, ոչ մեկը ռիսկի դիմելու, խոսելու, բացատրություն տալու փորձ անգամ չարեց: Կառավարության ջոջերը, տեսնելով, որ իրենց բոլոր հարցադրումները մնացին անպատասխան, վճռեցին վիճակահանությամբ յուրաքանչյուր 10-րդ զինվորին զնդակահարել:

Այս սոսկալի վճռից հետո ողջ գունդը լրիվ զինաթափված, պահակների ուղեկցությամբ փոխադրեցին Խաթունարխ գյուղը[26], բաժանեցին խմբերի և տեղավորեցին թափուր շենքերում, մարագներում, գոմերում, որոնց վրա պահակներ կարգեցին, որպեսզի ոչ ոք դուրս չգա՝ մինչև վիճակահանության սկիզբը:

Ամբողջ գունդը վեր էր ածվել մահապարտների, ոչ ոք իրեն վերահաս մահից փրկելու հույս չուներ: Միակ փրկությունը մնացել էր այդ ծուղակից մի կերպ դուրս գալը, փսխչելը՝ թեկուզ դասալիք լինելու պայմանով:

Առաջին դասալիքները մեր վաշտի տղաները եղան: Դեռևս 1920 թ. նոյեմբերի երկրորդ կեսին մեր գյուղացի Խաչոյի Սրապը, Նազարի Մահակը, Սիմոնենց Սեթոն (վաշտի ավագը), Երանոսը, իր եղբոր տղա Հակոբը Էջմիածնում, մինչև մեզ զինաթափելը, արդեն անհայտացել էին: Մի քանի տղաներ՝ մեր

---

[25] 1920 թ. աշնանը կառավարության նախագահը ոչ թե Ա. Խատիսյանն էր, այլ Հ. Օհանջանյանը:

[26] Խաթունարխի տարածքն ընդգրկում է այժմյան Արմավիրի մարզի Գայ և Ակ՛ռաշեն գյուղերը:

հարևան գյուղերից, որոնց հետ և թվով 35 հոգի տեղավորված էինք մի մարագում: Գիշերը հարձակվեցինք պահակների վրա, զինաթափեցինք, զենքերը վերցրինք, ու, նրանց էլ մեզ հետ վերցրած, դուրս եկանք Խաթունարխից և ուղղվեցինք դեպի Թալիշ[27]: Ճանապարհին, ինչ-որ գյուղից, տղաները հինգ ոչխար գողացան, թաքնվեցինք ձորերում, ոչխարները մորթեցինք, մի կերպ վառելիք ճարինք, խորովեցինք, կերանք: Գիշերը, դուրս գալով թաքստոցներից, մոտեցանք Թալիշին, սակայն այստեղ լուր ստացանք, որ պարեկներ են շրջում և հավաքագրում դասալիքներին: Վտանգի չենթարկվելու համար թեքվեցինք դեպի Շամիրամ գյուղը, որը 3 կմ հեռու էր Թալիշից: Մի տանից լույս նշմարվեց, մեր տղաները հետախուզելու նպատակով մոտեցան այդ տանը: Ի՞նչ պարզվեց, այնտեղ էին հավաքվել մեր գնդի 9-րդ վաշտի տղաները, որոնք նույն եղանակով, ինչպես և մենք էինք կայտողացել ձերբազատվել, իրենց հետ բերելով պահանկների 5 հրացան, իսկ իրենք 22-հոգի էին: Դասալիքներիս խումբը բավական մեծացավ և մինչև լուսաբաց հասանք Ն. Աղջաղալա: Այս գյուղը, ինչպես նաև Վ. Աղջաղալան, Ազարակը, Եշիլը, Դիանը, Մաղդան, Ղարաջորանը, Վերին և Ներքին Ղարաղոյմազները, Այնալուն, Մեյրբանը, Իրինդը, Սխաչին, Արալղը, Ղուրդարվեշը, Ահակչին[28] և այլ գյուղեր մինչև 1918 թ. դաշնակցական կառավարության հաստատումը եղել են թուրքական: Հայոց եղեռնից մազապուրծ եղած գաղթականներին կառավարության հրամանով տեղավորեցին վերոհիշյալ գյուղերում թուրքերին

---

[27] Թալիշը Արագածոտնի Արուճ գյուղն է:

[28] Ազարակը ներկայիս Արագածոտնի համանուն գյուղն է, Եշիլը՝ Կաքավաձորը, Դիանը՝ համանուն բնակավայրն է, Մաղդան՝ Լեռնարոտը, Ղարաջորանը՝ Արագյուղը, Այնալուն՝ Դավթաշենը, Արալղը՝ Միջնաձորը:

դուրս քշելու պայմանով:

Հասնելով այս գյուղը՝ որևէ բնակչի չհանդիպեցինք, չկար նաև որևէ ծածկ, որտեղ հնարավոր լիներ պատսպարվել (լոկ ավերակներ էին մնացել), նույնն էր վիճակը նաև շրջապատի գյուղերում:

Առաջանալը վտանգավոր էր, չգիտեինք, թե որտեղ է թուրքական բանակը, հետդարձի ճանապարհ չունեինք, ստիպված՝ այդ քանդված տներում մի կերպ որոշ հարմարություն ստեղծեցինք, պահակներ նշանակեցինք ու մինչև լույս հանգստացանք: Առավոտյան նախաճաշից հետո սկսեցինք հետախուզել շրջակա բնակավայրերը և, հատկապես, սննդի պրոբլեմը լուծելու նպատակով՝ մեր ունեցածը (ոչխարները), մի երկու օրվա պաշար հազիվ լիներ: Մի քանի օր անց մեր հետախույզները դեպի Եշիլ գնացող ճանապարհին պատահաբար հանդիպել էին ոչխարի հոտի, մի քանի հրացանի համազարկ էին տվել, հովիվները կարծելով, որ հրացանաձգությունը թուրքերի կողմից է, թողել էին ոչխարի հոտը և փախել: Մեր տղաները հոտերից առանձնացրել էին մոտ 50-ի չափ ոչխարներ, որը մեզ բավական ժամանակ ապահովեց սննդով:

Աստիճանաբար այն ևս սպառվեց, այս վիճակով այլևս ապրելն անհնարին դարձավ, դժգոհողներն օր օրի ավելանում էին, տարբեր միջոցառումներ ձեռնարկելու առաջարկու–թյուններ էին արվում, վերջապես որոշվեց մեկնել Շիրակի կողմերը, ոմանք առաջարկում էին գնալ դեպի Երևան:

Ի վերջո, մի արևոտ օր թողեցինք մեր որջերը՝ ուղղություն վերցնելով դեպի մոտակա հայկական Դադալու, Ղրմզլու գյուղերը, նախ սննդի գործը ապահովելու և ապա որոշելու **հետագա անելիքը**: Ճանապարհին բաժանվեցինք երկու խմբի,

մի խումբը մեկնեց Դաղալու, իսկ մյուսը, որոնց հետ և ես՝ Ղրմզլու: Այստեղ տեղացիներից (հատկապես, ծերերը), երեխաները իրենց տները չէին լքել, պատսպարվել էին Շիրակից գաղթված բավական թվով մարդիկ:

Տեղացիներից իմացանք, որ այս գյուղը թուրքերի կողմից չի օկուպացվել, միայն մեկ-երկու անգամ թուրքական հեծյալ մի ջոկատ եկել է գյուղ՝ հետախուզական նպատակով, ու հեռացել: Ասացին նաև, որ մեր Ադիաման և Սոգյութլի գյուղերից թուրքերը հետ են քաշվել: Ցերեկը այստեղ որոշ չափով սննդի հարցը լուծվեց, հանգստացանք, իսկ գիշերը, մեր գյուղացիները և սոգյութլիցիները, վերցնելով երկու հրացան, ուղղություն վերցրեցինք դեպի մեր գյուղ, որը Ղրմզլուից հեռու էր մոտ 9 կմ-ով:

Ճանապարհը պատված էր ձյան հաստ շերտով ու դժվարությամբ տեղ հասանք: Մոտեցանք մեր տանը, զգացվեց, որ այնտեղ բնակվողներ կան: Մեր ազգակիցների փախուստից հետո այստեղ էին եկել Բաբրլուից[29] փախած փեսա Սիրեկը՝, իր սգզ ու տոհմի հետ միասին, ու բնակվել Հարութ ամու թոնրատանը, մեր գալուց մի 10-օր առաջ տուն էր վերադարձել նաև մեր Արշակը՝ նույնպես դասալիք: Գյուղում, թեև թուրքեր եղել են, բայց մշտապես չեն բնակվել, նրանց զորախումբը նստած էր եղել Սոգյութլիում, որոնց կողմից հսկողություն է իրականացվել մեր գյուղի վրա: Մեզ հետ եղած չորս սոգյութլեցի տղաները հաջորդ գիշեր մեկնեցին իրենց գյուղ:

Ապրում ենք թոնրատանը, բոլորս միասին, տները թալանված են, ոչ ոք անկողին չունի, բոլորը պատսպարվել էին ունեցած հագուստեղենով: Գյուղում բավական թվով դասալիքներ են եկել, գրեթե բոլորն էլ զինված, գիշերները.

---

[29] Բաբրլուն ներկայիս Արագածոտնի մարզի Բարձրաշեն գյուղն է:

պահակություն ենք անում, հատկապես, Սոգյութլիի ճանապարհի կողմը:

Աստիճանաբար վերադառնում են գյուղացի փախստականները: Ապրում ենք թոչնի կյանքով, ով ինչ կարողանում է ճարել: Բարեբախտաբար, փախուստից վերադարձողներից ոմանք վաղօրոք իրենց հացահատիկն ու թանկարժեք իրերը հորել էին: Այժմ բաց են անում հորերը և մի կերպ յոլա գնում: Գյուղում բնակվող գաղթականներից ոմանք անասուններ ունեն: Ճարպիկները երբեմն նրանց ոչխարներից թոչնում էին և աղքատներին քչից-շատից մաս հանում, մի կերպ գոյատևում էին՝ սպասելով գարնան գալուն:

Ձմեռվա երկար ու ձիգ օրերի ընթացքում մի հարկի տակ ապրող տարբեր ընտանիքների (գյուղացիների) միշև առաջացան նաև այլ՝ սիրային հարաբերություններ: Մեր Արշակը սիրահարվեց փեսա Սիրեկի եղբոր կնոջ՝ Հայաստանին, որի ամուսինը թուրքերի կողմից սպանվել էր Բաբրլու գյուղը նրանց կողմից գրավելու օրը՝ 1920 թ. աշնանը: Արշակը մի հաղթանդամ, բարետես երիտասարդ էր, Հայաստանն էլ ուներ համակրելի արտաքին ու ամուսնու հետ ապրել էր ընդամենը մի քանի ամիս: Ահա, այս երիտասարդ զույգերը, մի հարկի տակ ապրելով, սկզբում իրար համակրեցին, հետո էլ սիրահարվեցին:

Աստիճանաբար վերադարձան նաև մեր տոհմի մյուս անդամները՝ եղբայր Տիգրանն իր ընտանիքով, որոնց հետ և Ինոիզարը, քույրս՝ Արփենիկը, աներոջս ընտանիքը և այլն ... Այժմ նույն հարկի տակ ապրելն անհնարին դարձավ: Փեսա Սիրեկը, այս վիճակից դուրս գալու և, հատկապես, հարսին Արշակից հեռացնելու նպատակով (նրա համար անպատվաբեր էր, որ եղբոր մահից 2-3 ամիս անց նրա կինը ամուսնանա),

առաջինը դուրս եկավ նույն տանից: Զուր հույսեր... Հայաստանը նրանց չհետևեց և ամուսնացավ Արշակի հետ:

Թնակոխեցինք 1921 թ.: Երեք տարվա բաժանումից հետո Ինտիզարի վերադարձն ինձ սթափեցրեց: Զգացի, որ անցել է թոչնի կյանքով ապրելու ժամանակը, մանավանդ, որ թուրքերը հեռացել են ողջ Շիրակի գավառից, որ անհրաժեշտ է մտածել մեր վաղվա օրվա, գալիքի մասին: Շուտով իրենց գյուղ մեկնեց և աներոջս ընտանիքը: Մենք ապրում ենք Տիգրան եղբոր ընտանիքի հետ միասին:

Մեր սենյակներում բնակվում են Արևմտահայաստանից գաղթած Մորուք Կարապետն իր ընտանիքով: Նա բավական անվախ, հեղինակավոր ֆիդային էր, մոտ 60 տարեկան, կինը՝ Մարթան՝ 18-20 տարեկան, նրանք ունեցան իրենց առաջնեկին՝ Լուսածագին:

Գարնան մոտենալուն զուգընթաց զանազան լուրեր են լսվում Ղազախի, Զանգեզուրի հեղափոխական շարժումների մասին: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո խորհրդային բանակը ներխուժեց նաև Հայաստան:

Դաշնակցական կառավարությունը նոր զորահավաք կազմակերպեց՝ բոլշևիկների դեմ կռվելու: Մորուք Կարոն, մեր գյուղից և իր խմբից կազմված ջոկատներով, մեկնեց բոլշևիկների առաջն առնելու, նրանց հետ տարան նաև մեր Արշակին:

Չանցած 10 օր, Արշակը վերադարձավ գյուղ՝ իր հետ բերելով մի կով (որը և հետագայում՝ 1941-ին դարձավ նրա գլխակերը): Նա պատմեց, որ երբ իրենց դասալիքների ջոկատին ուղարկում են Երևանից վերև՝ կարմիրների դեմն առնելու, մինչև առաջավոր գծին հասնելը, կառավարական բանակը սկսել էր անկազմակերպ փախուստը, իրարանցումը,

ամենն աշխատում էր իր գլուխը մի կերպ փրկելու մասին: Ինքը՝ Արշակը, ևս շրջանցելով Երևանը, Աշտարակի վրայով վերադառնում է գյուղ, ճանապարհին պատահաբար մի անտեր կով տեսնելով, բերում է տուն:

Վերադարձան նաև գյուղից գնացած, թե տեղացիները և թե Սասունից գաղթվածները: Չվերադարձան Մորուք Կարոն ու իր մի քանի մտերիմները: Զինվորների վերադարձից մի քանի օր անց, բոլշևիկները գրավեցին Երևանը և ուղևորվեցին դեպի Ալեքսանդրապոլ:

Նրանց զորամասերից մեկն անցավ մեր գյուղերով, լուրեր էին տարածվել, թե բոլշևիկները հանդիպած մարդկանց կացնով գլխատում են, այդ պատճառով էլ նրանց անցման պահին գյուղացիների մեծ մասը թաքնվել էր: Ես կորցնելու ոչինչ չունենալով, չթաքնվեցի: Երբ նրանք անցան մոտիցս, ոչ մի անցանկալի արարք տեղի չունեցավ, մի զինվոր մոտեցավ ինձ և հարցրեց, այս գյուղում բնակիչներ կա՞ն, թե ոչ:

Բավական ծանր կացության առջև կազնեցի, ի՞նչ ասել, և այոն և ոչը կարող էր վտանգավոր լինել: Զինվորականը զգալով իմ երկմտանքը, ձիուց վայր իջավ մի զինվորի հետ, իսկ մյուսներին կարգադրեց գյուղից դուրս իրեն սպասել: Պարզվեց, որ նա հրամանատարն էր, նրա խոսելու տոնից զգացվեց, որ վնասակար որևէ միջոցի չեն դիմելու, այնժամ ես վախվխելով ասացի, որ գյուղացիք ահաբեկված են և պահվել են թաքստոցներում: Առաջարկեց գնալ մի քանիսին տեսնել, հանդիպել, ես վախից քարացա, ու՞մ տուն կարող էի տանել, որոշեցի տանել մերոնց տուն: Տիգրան եղբայրը, թեև խոժոռված, բայց արտաքուստ սիրալիր ընդունեց: Կնոջը՝ Ալդուզին առաջարկեց ուտելիք պատրաստել հյուրասիրելու համար: **Մենք գրեթե ուտելիք** չունեինք, բացի մի կտոր գարի հացից,

Ալդուզը դիմեց Մորուքի կնոջը՝ Մարթային, որոնց ապրելակերպը բավական լավ էր: Մարթան էլ չմերժեց, բավական առատաձեռն հյուրասիրեց ու մի բան էլ հետները դրեց: Մինչ բանակայինները մեր տանն էին, գյուղացիներից ոմանք, զգալով նրանց անվտանգությունը, թաքստոցներից դուրս եկան: Սրանց ճանապարհեցինք: Երեկոյան դարձյալ զորամասեր անցան, բայց այս անգամ չհամարձակվեցի մոտենալ նրանց: Փոխարենը, գյուղացիներից ոմանք, առավոտյան անցնող զինվորների խաղաղասիրական վարքագծից խրախուսված, թաքստոցներից դուրս եկան ու իրենց աղքատիկ օրաբաժնից նրանց հյուրասիրեցին:

Նույն օրվա երեկոյան գյուղում ձևավորվեց տեղական իշխանության Հեղկոմը, որի նախագահը դարձավ Ապերի Մացոյի Գարեգինը, իսկ քարտուղար՝ Եղսոյենց Երանոսը՝ իմ վաշտի նախկին ավագը:

Այսպիսով, շուրջ երեք տարվա թափառումներից, փախուստներից, սովից, մեծաթիվ կորուստներից, անասելի դժվարություններից հետո, ի վերջո, խաղաղություն հաստատվեց: Եվ այն շնորհիվ Խորհրդային Ռուսաստանի օգնության, թեև անցյալի ու ներկայի քաղաքական որոշ գործիչները թույն են թափում խորհրդային կառավարության հասցեին, սակայն, կամ նրանք քաղաքական կուրություն են հանդես բերում, կամ բացարձակ թշնամություն: Մի՞թե նրանք չեն հասկանում, որ Հայաստանի Հանրապետության հռչակումը նույնպես հոկտեմբերյան հեղափոխության արդյունքն է, չլիներ այդ հեղափոխությունը, Հայաստանը անկախանալու հնարավորություն չէր ունենա: Չհաստատվեր Հայաստանում խորհրդային իշխանություն, թուրքերը ամբողջապես կգրավեին նաև Արևելյան Հայաստանը, որին աջակցում էին Ադրբեջանը,

Վրաստանը և Պարսկաստանը, կիսայաթափեին Արևմտյան Հայաստանը։

Նստակյաց ու խաղաղ կյանքի անցնելուց հետո նոր խնդիրներ ու հոգսեր ծառացան մեր առջև։

Գարնանացանն արդեն սկսվել էր, իսկ մենք ոչ լծկան և ոչ էլ սերմնացու ունեինք ցանելու համար։ Դեռևս շարունակում էինք ապրել Տիգրան և Արշակ եղբայրների հետ համատեղ։ Լավ էր, որ այդ օրերին ջրաղացն սկսել էր աշխատել, որի արդյունքից և սնվում էինք, և որոշ խնայողություն անում ցանքսի համար։ Համատեղ ցանեցինք Դոլզայի, Մարգարաղի, Փոշտի, Սոգյութլիի ճամփի արտերի որոշ մասերը։ Հողերի մի մասն էլ կիսով ցանեց Մորուքի կին Մարթան։

Մերոնց հետ միասին ապրելուձևն ինչ-որ չափով զրկում էր ինձ ինքնուրույնությունից՝ դարձնելով սոսկ կամակատար, էլ չեմ ասում այն նեղվածքի ու անհարմարության մասին, մի հարկի տակ ապրող մի քանի ընտանիքների համար։

Ելնելով վերոհիշյալից՝ հաճախ էի Ինտիզարին առաջարկում փոխադրվել մեր բնակարանը, մանավանդ, որ այդ օրերին Մորուքի ընտանիքն ազատել էր այն՝ փոխադրվելով Ահակչի։ Սակայն, ամեն անգամ Ինտիզարը ընդդիմանում էր, ըստ երևույթին, չվստահելով իմ ընդունակություններին, վախենալով, որ ես անկարող կլինեմ ապրուստ հայթայթել, ու վիճակներս ավելի կվատթարանա։ Ի վերջո, համբերությունս հատեց ու, երբ Դոլզի արտի զարին հնձեցինք (իմ հողամասն էր, և սպասվում էր 135 փութ), երեկոյան տեղաշորս վերցրի ու փոխադրվեցի մեր սենյակը։ Ինտիզարը և Արփենիկը այդ օրը հրաժարվեցին ինձ հետ գալ, ողջ գիշեր անց էին կացրել լաց ու կոծով։

Հաջորդ օրը Տիգրանն անվստահություն ցուցաբերեց իմ

հանդեպ՝ կռահելով մտադրությունս՝ Դոլգի գարին փոխադրեց և իմ սպասածից տասն անգամ պակաս տվեց մեզ, մյուս հողամասերից ստացված բերքից ոչինչ չտվին մեզ: Սոգյութլի ճամփի հողամասը, որ ցանել էինք Մարթայի հետ, մեզ բաժին հասավ քսան փութ: Մեր երեք հոգուց բաղկացած ընտանիքն ունեցավ ընդամենը 32 փութ հացահատիկ, որից պետք է առանձնացնեինք գալիք տարվա սերմացուն. 6 փութ գարի՝, 8 փութ ցորեն և մնացած 18 փթով մեկ տարի գոյատևեինք: Ունեինք նաև 6 փութ կարտոֆիլ, որը պահեցինք գալիք տարվա սերմացուի համար:

Անցկացրինք 1921 թ. ձմեռը: Պատրաստվում ենք 1922 թ. գարնանացանին: Լծկան ունեցողներն արդեն սկսել են վար ու ցանքսը, իսկ մեր նմանները սպասում են ցածրադիր վայրերից լծկան ունեցողներին, որոնք իրենց ցանքսն ավելի շուտ են ավարտում ու փոխադրվում լեռնային գյուղերը՝ վարձով ցանքս կատարելու: Այդ ժամանակ գյուղում հազիվ 20 զույգ լծկան լիներ: Փիրմալաք գյուղից եկած մի լծկան վարձեցի՝ մեր ցանքսը կատարելու: Այսպիսի պայմանով՝ 4-ից մեկը, որպես վարձ, պետք է վճարել իրեն: Մեր երկու արտը ցանվեց 5 փութ ցորեն ու այդքան էլ գարի: Ցանեցինք նաև կարտոֆիլը: Վարձը տալուց հետո այլևս ոչ մի տեսակի ուտելիք չմնաց:

Ինչպես գյուղացիների մեծ մասի, այնպես էլ մեր ապրելու միակ միջոցը կանաչին էր, որն այդ գարնանը բավական փարթամ էր:

1922 թ. մայիսի 25-ը դարձավ մեր ընտանիքի ամրապնդման, հետագա ծաղկման ու զարգացման, ապագայի հանդեպ հույս ու հավատ ունենալու հիմք: Այդ օրը ծնվեց մեր անդրանիկ որդին, որին, պապիս հիշատակի հավերժացման համար, կոչեցինք Հակոբ: Երեխայի ծնունդը

բարոյահոգեբանական մեծ փոփոխություն առաջացրեց իմ մեջ: Ես արդեն անցած համարեցի նախորդ տարիների անհոգ թռչունի կյանքով ապրող իմ ժամանակաշրջանը: Երեխայի, տան, ընտանիքի հանդեպ խստորեն բարձրացավ պատասխանատվությունը: Սակայն, անցած տարիների, պատերազմի, թալանի, փախուստի, սովի հետևանքները դեռ հաղթահարված չէին: Մինչ երեխայի ծնունդը մենք ուտելու ոչինչ չունեինք, բացառապես ապրում էինք կանաչեղենով, այն էլ առանց յուղի, առանց աղի: Երեխայի ծննդի հաջորդ օրը իմացանք, որ հարևան Ահակչի գյուղում, անասունների ժանտախտ հիվանդության պատճառով, մի քանի անասուն են սատկել, որոնց գյուղից դուրս մեծ փոս են փորել, նավթը լցրել, այրել ու փոսը ծածկել: Այդ արարողությանը պատահաբար ներկա է լինում Տիգրանի եղբոր՝ Արամի կինը՝ Հայկոն, որը վերադառնալով տուն, պատմում է իր տեսածի մասին: Գիշերը մենք՝ ես, Հայկոն և Մարանը (Վարդգեսի, Շողանի մայրը), վերցնելով մեզ հետ բահ, դանակ, մեշոկ, մեկնեցինք սատկած անասունների գերեզմանոց՝ մսի գողության: Երբ տեղ հասանք, պարզվեց, որ ուրիշ գողեր էլ կան, որոնք արդեն բացել են հորերը և անասուններին քերթում են: Սկզբում վախեցանք մոտենալ, բայց երբ պարզեցինք, որ նրանք ահակչեցիներ են, և նրանց միայն մորթին է անհրաժեշտ, մոտեցանք (նրանց սննդի գործը ավելի բարվոք էր, քան մեր գյուղացիներինը), մեզ թույլ տվին մսից որքան կարող ենք կտրել, տանել: Մենք էլ մեր ուժի չափ կտրեցինք երկու եզան բդեր, տեղավորեցինք մեշոկների մեջ, շնորհակալություն հայտնեցինք ու վերադարձանք տուն: Տուն հասնելուն պես կտրեցինք, ջարդեցինք, դրինք կճուճների մեջ, թոնիրը վառինք և սկսեցինք եփել: Մեկ-երկու շաբաթ միսը բանջարով խառնած, օրական երկու անգամ կուշտ և որակով

ճաշեր կերանք։ Դեռ չէր վերջացել մեր գողացած մսի վերջին պատառը, աստված մի լույս ևս ճառագեց. աներս՝ իմանալով Ինտիզարի ազատվելը, երեք փութ զարի բերեց, որը տվյալ պահին կատարյալ փրկություն էր։ Աներս, միաժամանակ, թոռնիկին խոստացավ նվիրել մի հղի երինջ, որը կծնի աշնան մոտերքը։ Ժողովրդական առակն ասում է. քյասիբի կովը թող հղի լինի, երբ կծնի, թող ծնի։ Այսօրվա արժեքով 3 փութ զարին, մի բան է, բայց այն օրերին այն արժեր երկու ոսկյա մատանի կամ երկու ոչխար։

Մինչև օգոստոս ամիսը բավական ժամանակ կար, որպեսզի արտերը հնձեինք, պետք էր լրացուցիչ մի բան ևս ճարել, որպեսզի յոլա գնայինք։ Այդ պատճառով, որոշեցի մեկնել Եղվարդ, մեր ազգականներից մի փոքր օգնություն ակնկալելու հույսով, սակայն դատարկաձեռն վերադարձա։ Ճանապարհին մտա Ղորագորան, որտեղ ամուսնացել էր Նվարդ մայրիկը։ Նրանք բավական հարուստ տնտեսություն ունեին, բայց որևէ բանով ձեռք մեկնել չկամեցան։ Ինչպես ասում են՝ փորուփոշման վերադարձա տուն։

Մեր ունեցած զարին արդեն վերջացել էր, նորից սովը չոքել է դռանը։ Նորից ապրում ենք կանաչի հույսով։ Բայց սննդազուրկ Ինտիզարը երեխային կրծքով կերակրել չէր կարող, երեխան սովածությունից գիշեր-ցերեկ լաց էր լինում, ճանապարհի անցորդները, չիմանալով երեխայի լացի պատճառը, դիտողություն էին անում Ինտիզարին երեխային լավ չխնամելու համար։ Երեխայի կյանքի համար անհանգստացած՝ Ինտիզարը հաճախ էր Արփենիկի միջոցով ուղարկում գյուղի ծծկեր երեխա ունեցող ուսնորների տուն՝ երեխային գոնե օրը մի անգամ կերակրելու։

Օգոստոսի կեսերին մի վերջին միջոցի ևս դիմեցի,

մեկնեցի Թալին, բաջանաղիցս՝ Կարոյից, մի քանի փութ գարի խնդրելու, չմերժեց: Չորս փութ գարի բերեցինք, աղացինք և հաց թխեցինք, որը բավարարեց մինչև սեպտեմբերի սկզբները, մեր արտերը հնձեցինք, կալսեցինք: Ցորենի, գարու և կարտոֆիլի բերքը բավական հաջող էր և, գրեթե, մինչև հաջորդ տարվա բերքահավաք մեզ կբավարարեր:

Աշնանը աներս իր խոստումը կատարեց՝ կովը բերեց, որը բավական հաջող դուրս եկավ և որի սերունդները մինչև 1960 թ. գոյատևեցին մեր տանը:

1923 թ. տնտեսական տարում այլևս այն անհանգստությունը չունեինք ինչ նախորդ տարում, թե սերմացուի և թե ուտելիքի հարցը հիմնականում լուծված էր: Այժմ ինձ խիստ անհանգստություն էր պատճառում մեղու ձեռք բերելու հարցը: Նստում եմ, թե վեր կենում, քնում եմ, թե արթնանում, մեղուներն աչքիս առջևից չեն հեռանում: Ում ասես, որ չեմ դիմում, օգնություն խնդրում՝ մեղու գնելու համար, բայց ամենքն էլ մերժում են:

Գարնանացանն ավարտեցինք: Ինչ-որ գործով եղա Մայմջուղում, աներոջս և Հարութին նույնպես խնդրեցի օգնել մեղու ձեռք բերելու գործին: Նրանք խոստացան օգնել, բայց կասկածելով, թե կարո՞ղ եմ, արդյոք , մեղվից գլուխ հանել:

Մոտ հունիսի կեսերին աներս ինձ կանչեց Մայմջուղ, իր ձին տվեց ինձ ու Հարութին, որպեսզի այն փոխանակենք մեղվով: Հաջորդ օրը ձին վերցրած, Հարութի հետ շրջեցինք մի քանի գյուղեր (Քյավթարլի, Պարնի գյուղ, Արթիկ և այլն), որտեղ ձիու փոխարեն երկու մեղվաընտանիքից ավելին չտվին, իսկ մենք չորսն էինք ուզում: Երկու օր շրջելուց հետո՝ չստացվեց: Մեկնեցինք Փամբակի Ղարաքիլիսա (Կիրովական, Սպիտակի կողմերը), մի քանի օրվա շրջագայելուց հետո, ի վերջո,

Հաջիղալա գյուղում ձին ծախեցինք, նույն արժեքով գնեցինք երեք ուժեղ մեղվաընտանիք և երկու դատարկ փեթակ՝ չեչ շրջանակներով: Նույն օրը մեղուները կիսեցի, դարձրի հինգ հատ, երեկոյան վարձեցինք մի երկանիվավոր սայլ ու բռնեցինք տունդարձի ճամփան (մինչև Ադիաման պետք է վճարեինք 6 փութ գարի): Առավոտյան արևածագին Մայմջուղ գյուղի մոտ փեթակները իջեցրինք սայլից, արկանոցները բացեցինք: Բավական շրջանակներ ջարդվել էին, մեղուները խեղդվել: Մաքրեցի երեկոյան, նորից բարձեցինք ու շարունակեցինք ճանապարհը: Չնայած ճանապարհը շատ անբարեկարգ էր, բայց մինչև Մայմջուղ հասնելը, նոր ջարդեր չեղան: Առավոտյան հասանք Մայմջուղ և իջեցրինք, փչացել էր միայն մեղուներից մեկի մայրը:

Սայլապանի վարձը տալով, ճանապարհեցինք: Ես էլ երեկոյան կողմ տուն վերադարձա այն ակնկալությամբ, որ Հարութը մի երկու-երեք օրից մեղուները կբերի մեր գյուղ: Զուր հույսեր: Մեղուները չուղարկեցին: Ես ստիպված շաբաթը մեկ-երկու անգամ գնում էի: Կարգավորեցի, ձագեր վերցրի, մեղուների քանակը հասցրեցի 10-ի, մոտ տասը փութ մեղր քամեց և հուսահատված վերադարձա: Համոզվեցի, որ մեղուները Ադիաման չեն գա: Հետո պարզ դարձավ, որ մեղուներին Ադիաման ուղարկելուն դեմ է եղել Հարութի կինը Եստերը (մեր գյուղացի Սերոբի աղջիկը):

Նորից սկսվեցին իմ մտորումներն ու պրպտումները մեղու ձեռք բերելու նպատակով: Մտքովս անցավ վաճառել նույնիսկ Հակոբին նվիրված աներոջս կովը, սակայն դրանից ևս բան դուրս չեկավ: Մի կովին առաջարկում էին երկու մեղվաընտանիք կամ 25 ռուբլի, որին ես համաձայնել չէի կարող: Այնուամենայնիվ, հույսս չէի կտրում: Անընդհատ

որոնումների մեջ էի, դիմում էի այս կամ այն ծանոթին, բարեկամին, օգնություն խնդրում ու, երբ դարձյալ չէր ստացվում, մտածում էի մեղուների հարցը լուծել գալիք տարի:

Համեմատաբար բարվոք անցկացրինք 1923 թ. ձմեռը, թևակոխինք 24 թիվը: Նախապատրաստվեցինք և հաջողությամբ ավարտեցինք գարնանացանը: Մեղվի եկամտաբերության մասին աշխատանքի գնալիս պատմեցի մեր հարևան Մուքեի Սիսակին: Նա սկզբում թերահավատորեն ընդունեց, երբ ես օրինակներով ապացուցեցի, նա լրջացավ ու խոստացավ այդ հարցով զբաղվել: Նա այդ տարիներին աշխատում էր Բուդդաշեն-Աղիաման ջրատարի վրա որպես հսկիչ:

Սիսակին, թեև համոզեցի մեղվի օգտակարության, բերքատվության մասին, բայց և այնպես, թերահավատ էր իմ ունակությունների հանդեպ: Ստիպված բավական ջանքեր թափեցի, որ ես դեռ հանգուցյալ հորս հետ մեղուների հետ աշխատելիս մեծ փորձ եմ ձեռք բերել, որ մեղուներից շատ լավ հասկանում եմ ու բոլոր մանրամասնությունները պատկերացնում եմ: Սիսակը լուռ լսեց, «դե լավ» ասելով, շուտ եկավ ու գնաց:

Որոշ հույսեր արթնացան իմ մեջ, բայց քանի որ Սիսակն էլ մեզանից վատթար պայմաններում էր ապրում, ի՞նչ միջոցներով կարող էր մեղու ձեռք բերել: Դրա համար էլ ինձ անհավատալի էր թվում: Անցավ մեկ-երկու շաբաթ, երեկոյան կողմ, երբ Ինտիզարը կովն էր կթում, իսկ նա դրսում մի քարի վրա նստած երեխայի հետ էր խաղում, հանկարծակի մեզ մոտեցավ Սիսակը: Սիրտս սկսեց արագ բաբախել, առանց բարևի հարցրի, թե որևէ բարի լուր ունի հաղորդելու, նա թե. «ես իմն արել եմ տածուիս գերեզմանի (տածու ասում էր

հանգուցյալ հորս, որը և իր ուսուցիչն էր եղել) խաթեր, հիմա մնացածը դու գիտես»: Նա Զիթիանքովից գնել էր չորս մեղվաընտանիք և նույնքան էլ դատարկ փեթակ, այն էլ ապառիկով: Աշնանը պետք է վճարեինք 60 ռուբլի: Հաջորդ օրը վերցրինք 4 էշ, Սիսակի տղա Հայկազի հետ մեկնեցինք Զիթհանքով: Չորսը մեղվաընտանիքը բաժանեցի, դարձրի 8-ընտանիք ու մայրամուտից հետո բարձեցինք էշերին և ուղևորվեցինք գյուղ: Առավոտյան տեղ հասանք: Ստուգումից պարզվեց, որ մեղուները հաջող տեղ են հասել: Օրեցօր մեղուների վիճակը լավանում էր. կիսած ձագերի մայրերը դուրս են եկել և ձվում են, նոր փեթակներ առանք, մեղվաընտանիքների թիվը հասցրինք 14-ի, մոտ 16- փութ մեղր քամինք: Բացի մեր ուտելու պաշարից, վաճառեցինք մեղրը, փակեցինք մեղուների զնման պարտքը, մոմաթերթեր գնեցինք և մեկ մեղրաքամ մեքենա: Օրական 8-9 կգ բերք կար: Սիսակի հետ համաձայնվեցինք, որ այսուհետև մեղուների վրա կատարված ծախսերը և ստացված եկամուտը պետք է հավասարապես բաժանենք երկուսիս վրա:

Այս տարի լավ բերք ստացանք նաև ցանքսերից, խոտհարքներից, վիճակները աստիճանաբար նորմալանում է: Ուտելիքով ու սերմացուով լրիվ ապահովված ենք, մնում է հագուստեղենի և կահ-կարասիների հարցը լուծել: Նորանոր ծրագրեր ենք կազմում գալիքի համար՝ բնակարանի վերանորոգում, անասունների քանակի ավելացում, լավ ձի գնել, երեխաներին լավագույն պայմաններ ստեղծել:

1924 թ. հուլիսի 20-ին (նոր տոմարով օգոստոսի 2-ին), երբ զբաղված էինք մեղրաքամով, Ինտիզարը ազատվեց, ունեցանք երկրորդ երեխան, որին անվանեցինք Ամալյա: Ամալյայի ծնունդը մեղրաքամի օրը տատմերը հաջողության նշան

համարելով, ասում էր, որ երեխայի ծնունդի հետ աստված ապրուստն էլ հետն է տալիս: Իրոք, այս 24 թ. անհամեմատ ամեն ինչ ավելի առատ էր (կարտոֆիլը, հացահատիկը, յուղը, ձեթը և այլն), քան նախորդ տարի:

1925 թ. գարնանը մեղուներին դուրս բերեցինք ձմեռանոցից, բավական հաջող ձմեռ էր և, դրա համար, որոշեցինք այս տարի մեղուների թիվը հասցնել 20-ի: Ունեինք երկու կով, որից մեկը ծնել էր. այնպես որ կանխագուշակում ենք լավ տարի, լավ բերք, որի արդյունքում կկարողանայինք մեր մյուս պակաս-պռատի (հագուստեղեն, կահկարասի) հարցերը լուծել: Դժբախտաբար, մեր հույսերը չարդարացան, տարին չորային դուրս եկավ ու սակավ բերք ստացվեց թե մեղվից՝ ընդամենը 25 փութ, և թե ցանքսերից: Մեղուների ծախսերը ծածկելուց հետո մեղրի վաճառքից մեզ մնաց 260 ռուբլի դրամ, որը կիսեցինք Սիսակի հետ: Մեր հասանելիք գումարը, նույնիսկ, չծածկեց մեր անկողնային և հագուստեղենի, անգամ, նվազագույն պահանջարկը: Ոչինչ, մտածեցինք, պակասը կլրացնենք գալիք տարվա բերքից:

Սկսվեց աշնանային զորակոչը, զորակոչի ենթակա էին մինչև 1903 թ. ծնվածները, որոնց թվում նաև ես: Ներկայացա Լենինականի զորակոչային հանձնաժողովին այն հաստատ հույսով, որ ես շուրջ 3 տարի ծառայել եմ, բացի այդ, ունեմ երկու անչափահաս երեխաներ, ուստի, ինձ նորեն բանակ չեն զորակոչի: Բայց իմ անձնական գործում իմ ընտանեկան կազմի մասին որևէ փաստաթուղթ չկար, որի վերաբերյալ դեռ ամիսներ առաջ պետք է ներկայացրած լիներ գյուղ. խորհրդի նախագահ Հովակիմ Մնացականյանը: Դեռ լիարժեք ընտանիք չձևավորած, պակաս-պռատը չհոգած, կուշտ չկերած-չխմած, պետք է հեռանայի ընտանիքից: Այստեղ է, որ ասում են. «մուկը

ծակը չի մտնում, ցախավելը պոչին են կապում, կամ տկլոր ջանին կատու շալակել...»:

Մինչև բանակ մեկնելս մեր տոհմի մեծերի՝ Տիգրան, Երվանդ եղբայրների, ինչպես նաև հարևաններից մի քանիսի ստիպմամբ ու միջնորդությամբ, քրոջս՝ Արփենիկին, նշանեցինք Գաբոյի Համբոյի տղա Ռուբենի հետ:

Ի՞նչ ասել այդ ամուսնության վերաբերյալ: Ե՞րբ է որբը խնդացել, որ ամուսնությունից հետո խնդա նա: Մեծական խոսք կա, որ որբը իր ողջ կյանքում դժբախտ է: Այդպես էլ եղավ իմ խեղճ քրոջ հետ: 13-ամյա հասակում առանց խերն ու շառն հասկանալու, առանց նրա կարծիքն իմանալու, նշանեցինք հիշյալ Համբոյի տղայի հետ: Մի ընտանիք, որ գյուղի ամենաաղքատներից մեկն էր, ոչ անասուն ունեին, ոչ լծկան, տղան էլ որևէ արհեստ կամ ուսում, մասնագիտություն չուներ, ընդամենը 3 տարով մեծ էր քրոջից: Ես երկար ժամանակ չէի հասկանում այդ հապճեպ և անպատրաստ վիճակում գտնվող մարդկանց կողմից կատարվող քայլի իմաստը: Բավական ուշացումով գլխի ընկա, որ այդ տարի հողաբաժանում է լինելու, որը բաժանելու են ըստ շնչերի, և մեկ հեկտար հող ավելին ստանալու համար քրոջս հարս տարան և ամբողջ կյանքի ընթացքում նրան կրակը զցեցին: Իմ պատճառաբանությունը՝ բանակում 3 տարի ծառայած լինելու, ընտանեկան ծանրաբեռնվածությունը, երկու երեխայի հայր և այլն, չընդունվեց, ինձ կրկին վերցրին բանակ 1925 թ. դեկտեմբերին, որպես հրետանավոր: Ինձ համար, ավելի ճիշտ, մեր ընտանիքի, առանձնապես, Ինտիզարի համար, սկսվեց չափազանց դժվար ու անտանելի կացություն, եթե 1918-20-21 թ. իմ ծառայության ժամանակ ես ինձ միայնակ էի զգում, այժմ՝ երկու երեխան (երրորդը սպասվում էր) մնացին խեղճ

Ինտիզարի ուսերին, ինչպես կկարողանա գլուխ հանել դրա հետ և տնտեսությունը կառավարել:

Զորամասում առաջին քսան օրն անցնելուց հետո, գրագետ ու ռուսերեն իմացող զինվորներին, որոնց թվում և ինձ, հավաքելով մոտ 40 հոգի, կազմակերպեցին երկամյա անասնաբուժական դպրոց, որը ավարտելուց հետո ստանալու էինք անասնաբուժակի մասնագիտություն: Դպրոցի ավագ նշանակվեցի ես: Սկսվեցին պարապմունքները, մեր կուրսանտները գրեթե չէին մասնակցում զինավարժություններին: Մեր խումբը լրիվ ինքնուրույն էր և ուներ իր ներքին կարգ ու կանոնը:

Համարյա ամեն շաբաթ Ինտիզարից նամակ եմ ստանում: Գրում է, որ շատ հուսահատված է, խիստ դժգոհ է իրավիճակից ու անհամբեր սպասում է, թե երբ կվերադառնամ տուն:

1926 թ.

Տան, երեխաների վիճակի, Ինտիզարի մասին լուրեր ստանում եմ միայն նամակներից: Դպրոցի պարապմունքները ծրագրված շարունակվում են, եթե սկզբնական շրջանում թերահավատորեն էինք վերաբերվում պարապմունքներին, օրըստօրե պատկերը փոխվում է: Բոլորս էլ մեծ եռանդով ենք գործի կպել ու հնարավոր ամեն ինչ անում ենք լավ սովորելու, քանի որ այն լավ ապագա է խոստանում:

Մարտի վերջին ստացա մի նամակ, որով իմացա, որ Ինտիզարը ազատվել է և տղա ենք ունեցել: Խնդրում է շտապ հայտնել, թե ինչ անուն տանք երեխային: Ես անչափ ուրախացա երկրորդ տղան ունենալու համար: Հիշեցի իմ դառը անցյալը և հուսադրվեցի նրանով, որ տղաներս, մեծանալով, իրար սատար կլինեն ու ինձ նման որբ ու անտեր չեն մնա, քանի որ ոչ հայր, ոչ եղբայր և ոչ էլ հորեղբայր ունեի: Նամակի

պատասխանը իսկույն գրեցի և խնդրեցի, որ տղային անվանակոչեն Վազգեն՝ մեռած եղբորս անունով:

1926 թ. մայիսի 26-ին մեր հրետանային գունդը Քանաքեռից մեկնեց լագեր, որոնց հետ և մեր դպրոցը: Խնդրեցի և մի 5 օրով ինձ արձակուրդ տվեցին: Հունիսի 9-ին եղա տանը, տանեցիք, հատկապես, երեխաները՝ Հակոբը, Ամալյան, Վազգենը, բավական լավ էին: Ժամկետս լրանալուց հետո վերադարձա լագեր, որ գտնվում էր Վրաստանում, Կախեթի մոտերքում: Լագերում մեր կուրսանտներին ևս սկսեցին ուսուցանել հրետանային գործ՝ օրական 4 ժամ: Այնպես տիրապետեցի, որ մինչև վերադարձը ստացա առաջին կարգի նշանառուի որակավորում:

Աշնանը վերադարձանք մեր զորակայանը, նորից ամեն ինչ հին ձևով հունի մեջ մտավ: Միայն տանից Ինտիզարի նամակը Վազգենի մահվան մասին ինձ խիստ մտահոգություն պատճառեց:

1926 թ. հոկտեմբեր ամսում Շիրակում, մասնավորապես, Լենինականում տեղի ունեցած հուժկու երկրաշարժի ալիքները հասել էին նաև մեր գյուղերը, զգալի ավերածություններ էին պատճառել, և հազարավոր մարդիկ մնացել էին անօթևան: Հատկապես, շատ էին տուժել Ախուրյանի և Մոլլագյոկչայի շրջանները:

Անցավ 1926-27 թթ. ձմեռը, գարնանը գունդը նորեն մեկնեց լագեր: Այս անգամ մեր կուրսանտներին պահեցին Թիֆլիսի բանակին կից շտաբում, որտեղ բերվեցին վրացական, ադրբեջանական և ռուսական գնդերից եկած համապատասխան կուրսանտները, ավելի քան 100 հոգի, մի քանի շաբաթ պարապմունքներն անցնում էին համատեղ: Ապա սկսվեցին ավարտական քննությունները: Օգոստոսի

սկզբներին կոչումներ ստանալով՝ ավագ անասնաբուժակ, վերադարձանք գունդ: Գնդում ինձ առաջարկեցին մնալ և աշխատել գնդում, չհամաձայնեցի, զորացրվեցի և տուն վերադարձա:

Մոլլագյոկչայի շրջկենտրոնում ինձ աշխատանք առաջարկեցին, դարձյալ չհամաձայնեցի, սակայն հետագայում զգացի, որ ճիշտ չեմ վարվել, բավական փոշմանեցի նախ գնդում չմնալուս, հետո էլ Մոլլագյոկչայում աշխատանքից հրաժարվելուս համար: Ձեռքիցս բաց թողի լավագույն հնարավորություններ, որ հետագայի համար մեծ հեռանկարներ կարող էր բացել...

Տանը՝ Ինտիզարն իր երկու երեխաների հետ, ուներ երկու կով, երեք մանր անասուն, 12 մեղվաընտանիք: Հացի հարցը լուծված էր, միայն պակասությունը հագուստեղենի, կոշկեղենի և կահ կարասին են: Տուն վերադարձիս երկրորդ թե երրորդ շաբաթում ընտրվեցի գյուղխորհրդի անդամ, նրա քարտուղարը, իսկ նախագահը Ղամբարենց Հակոբն էր, որը մեկ տարի առաջ էր զորացրվել բանակից:

1928 թ. բանակից վերադառնալուս տարին լրացավ: Վերջնականապես հրաժարվեցի անասնաբուժակ աշխատելու մտադրությունից և գերադասեցի հասարակական-քաղաքական աշխատանքը: Աշնանը գյուղ խորհրդի նախագահական ընտրություններում ընտրվեցի գյուղ խորհրդի նախագահ, ամսական 18 ռուբլի աշխատավարձով, այնինչ, զորամասում ինձ առաջարկում էին 50 ռուբլի աշխատավարձ: Եթե սրան էլ ավելացնենք գյուղացիների՝ հետ տարվող չարաչար աշխատանքները, վեճերը, կռվշտոցը, ապա պարզ կինի, թե ես ինչ ճակատագրական սխալ թույլ տվեցի՝ գյուղ գալով:

Խժդժությունները գյուղում օր-օրի մեծ չափերի էին հասնում ձայնազուրկների դիմումների քննարկումների ժամանակ:

Ձայնազրկությունը սկսվել էր 1926 թ. աշնանից, որի հանձնաժողովի նախագահը Մնոյան Կարապետն էր: Ձայնազրկվածներից էին Տերտերանց Անտոնը, Գեղամը, Կարոն, Աբգարը, Կյուրեղենց Արշակը, Ավեցենց Գաբրիելը, Մանուկենց Արամը, Գևորանց Կնյազը, Թարփոշենց Սեյռոբը՝ իրենց ընտանիքներով: Գյուղացիների որոշ մասն էլ ցուցակագրված է որպես կուլակներին հարող ուռճացած տնտեսություն (Խալաթենց Հարութը, ապերի Գրիշը, Մնացականի Վաղոն, Հովհաննեսը, Ավետիկը), մի խոսքով, մեկ գույգ եզ, մի երկու կով ու մի քանի ոչխար ունեցողները կամ կուլակային, կամ էլ ուռճացած տնտեսություն էին համարվում:

Բանակից զորացրվածս տարին՝ 1927 թ., գյուղում առաջինը ես մեր ջրաղացը հանձնեցի ՓՕԿ-ին (փոխօգնության կոմիտե): Դրանով վաստակեցի մնացած ջրաղացպանների (գյուղում կար 16 ջրաղաց) ատելությունն ու թշնամանքը:

Ապրիլի վերջերին ծնվեց մեր չորրորդ երեխան, որին անվանակոչեցինք Օլյա, այժմ՝ Ռոզա:

Այդ տարի՝ 1928 թ., բավական անբարենպաստ տարի դուրս եկավ, խիստ չորային էր, ցանքսատարածքներից, խոտհարքերից ցածր բերք ստացվեց, անարդյունավետ էր նաև մեղրաբերքը: Մի կերպ (անասունների վաճառքից ստացված արդյունքից) ապահովեցինք գոյություններս:

1929 թ.

Տարեսկզբից գործերս բավական հաջող են ընթանում: Աշխատանքային փորձս հնարավորություն է տալիս գյուղացիների հետ ավելի ճկուն, արդյունավետ,

համագործակցված աշխատել, հաշվի նստել տարիների փորձով իմաստնացած անձանց հետ, որի համար էլ գնալով հեղինակությունս ավելի մեծանում է, հարգանքով են մոտենում ինձ, այս կողմից: Մի ներքին ձգտում, կարծես, ինձ առաջ է մղում դեպի նոր բարձունքներ:

Հակառակ անցյալ տարվա, այս տարի բավական հաջող դուրս եկավ: Նպաստավոր եղանակների շնորհիվ լավ բերք ստացվեց: Պետական հացամթերումների պլանը, որ դրված էր գյուղի վրա, գերակատարվեց, 24 տոննա ցորենի դիմաց հանձնեցինք 50 տոննա: Լավ բերք ստացվեց մեղուներից: Մեղուների քանակը հասցրեցի 30 ընտանիքի: Ունեցանք երեք ծնած կով և մի քանի ջահել անասուններ:

Մոտենում էր աշունը, լուրեր էին պտտվում, որ շատ տեղերում կոլեկտիվ տնտեսություններ են կազմակերպում հակակոլխոզային, հակակառավարական շարժումներով հանդերձ: Կառավարական բրիգադաներ են մեկնում գյուղեր, կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպում: Մեզ մոտ, առայժմ, նման բաներ չկային, բայց տարածված լուրերը բուռն բանավեճերի առիթ էին տալիս: Բնակչության մեծ մասն, այդ լուրերից ահաբեկված, կոլխոզի անունը լսել անգամ չի ուզում: Ոմանք՝ ավելի խռհեմները, լսում են, բայց ոչնչ կարծիք չեն հայտնում: Միայն մի 15-20 տնտեսություն, որոնք կորցնելու ոչինչ չունեն, բացարձակ բատրակներն են և իրենց կենսամակարդակի բարելավումը կապում են կոլխոզի մեջ ներգրավվելու հետ:

1930 թ.

Հակառակ մեր կլիմայական պայմանների, երբ աշնան կեսից ձյուն է գալիս, այս տարի, նույնիսկ, ձմեռային ամիսներին ձյուն չկա, հունվարին, նույնիսկ, մեր սարերում

ձյուն չկա։ Գյուղի տարիքավոր մարդիկ այսպիսի ձմեռ ոչ տեսել են, ոչ էլ լսել։

Կոլխոզ կազմակերպող բրիգադաները հասել են Հոռոմ, Մոլլագյոկչա, Արթիկ և այլ մեծ բնակավայրեր։ Լուրեր կան, որ մեր հարևան Սոգյութլի գյուղի նախագահ Ճաղոյ Հովհաննեսը դիմել է շրջանի ղեկավարությանը՝ իրենց գյուղում կոլխոզ կազմակերպելու խնդրանքով։

Փետրվար ամսի կեսերին մեր գյուղ եկավ կենտրոնական գործկոմի անդամ Օհանյանը (բանտարկվեց 1937-ին), մի երկու օր գյուղում մնալուց հետո ինձանից պահանջեց հրավիրել հասարակության ընդհանուր ժողով։ Կարծելով, որ այդ պաշտոնյան երևի ուզում է կոլխոզ կազմակերպելու հարցերի մասին խոսել, ժողովը հրավիրեցի։ Սակայն, ինչ պարզվեց, ընդհանուր ժողովում այդ պաշտոնյան առանց որևէ նախաբանի առաջարկեց ինձ հեռացնել գյուղխորհրդի նախագահի պարտականությունից՝ իբրև դաշնակցականի, ուրիշին շահագործողի, կապալառու առևտրականի որդու։ Ժողովում մի քանիսը փորձեցին ինձ պաշտպանել, սակայն կառավարության անդամը անդրդվելի մնաց, թույլ չտվեց ելույթներն ավարտելու, սպառնաց և անցավ քվեարկելու։ Ներկաներից միայն 20 ձեռք բարձրացվեց, մյուսները վախից քարացել էին։ Քվեարկությունն ավարտած համարելով, նախագահի նոր թեկնածու առաջադրեց ու ընտրեց Խաչոյի Սրապին։ Կառավարության պաշտոնյան գյուղում եղած երկու օրը հյուրընկալվել էր Մնացականի Վաղոյի տանը, որտեղ, ըստ երևույթին, իմ հասցեին չարախոսել էին, և, որն էլ հիմք ընդունելով, կառավարության անդամը ինձ հեռացրեց իմ պաշտոնից։

Գյուղխորհրդի գործերը նոր նախագահին հանձնելով,

հաջորդ օրը եղա շրջկենտրոնում: Տեսակցություն ունեցա շրջգործկոմի նախագահ Արամ Աբգարյանի հետ, որը լսելով ինձ ազատելու մասին, խիստ զայրացավ, հանդիմանական խոսքեր ասաց Օհանյանի հասցեին, որ առանց իրենց հետ խորհրդակցելու նման անօրինական քայլի է դիմել: Հաջորդ օրը նորից եղա գործկոմի նախագահի մոտ: Այնտեղ էր նաև կառավարության անդամ Օհանյանը: Մինչև իմ մտնելը նրա առանձնասենյակ, Աբգարյանը, ինչպես պետք էր, նրան մշակել էր, և վերջինիս մոտ Օհանյանը ներողություն էր խնդրել, որ իրեն թյուրիմացության մեջ են գցել, որ բացի տանտիրոջից նրան են մոտեցել մի քանի բանսարկուներ՝ Ղազարյան Խաչատուրը, Կուզիկ Հմոն, Եզորը և, նրանց կեղծ փաստարկների հիման վրա, կարծիք է կազմել ու հեռացրել ինձ:

Հիմա, գործկոմի նախագահի ներկայությամբ, զղջում է, և երկուսով առաջարկում են վերադառնալ գյուղ ու շարունակել գլխավորել գյուղխորհրդի աշխատանքը: Հրաժարվեցի գյուղ վերադառնալուց և խնդրեցի մի ուրիշ աշխատանքով ապահովելու մասին:

Մի քանի օր անց՝ մարտի սկզբներին, աշխատանքի անցա շրջկոոպի գրասենյակում, իբրև փայասեղանի վարիչ, ամսական 60 ռ. աշխատավարձով: Շրջանում կար 45 գյուղ, որոնցից միայն վեցում էին ստեղծվել կոոպերատիվ խանութներ: Պետք էր բոլոր գյուղերում էլ ստեղծել նման խանութներ, յուրաքանչյուրից 20 ռ. անդամավճար մուծելու պայմանով: Գործս բավական ծանր էր, ոտքով շրջագայում եմ գյուղից–գյուղ, հավաքում անդամավճարներ, բացում կոոպերատիվներ և միայն կիրակի օրերին է, որ կարողանում եմ տուն գնալ:

Շրջագայությանս ընթացքում հանդիպում եմ կոլխոզ

կազմակերպող բրիգադաների, որոնք կառավարության ուժը ներկայացնելով, համատարած են հայտարարում, որոշ տեղերում էլ սև ցուցակներ կազմում կասկածելիների համար, որոնք պետք է ստուգման անցնեն պետ.անվտանգության մարմինների կողմից: Մասսայական հարձակում է սկսվել կուլակային, ունևոր և, մասամբ էլ, միջակ տնտեսատերերի դեմ: Բարձր հարկերով հարկադրում են այդ տնտեսություններին, հաճախ բռնագրավում են ունեցվածքը, անասունները, տնային կահ-կարասին, հացահատիկը, բնակելի շենքերը, անասնագոմերը և այլն: Բռնագրավածից որոշ մասը տրամադրված կոլխոզին, եթե այդպիսին կա, իսկ եթե չկա, բռնագրավվում է պետության կողմից:

Ելնելով վերոհիշյալից, շատ գյուղերում հարկադրված հակակառավարական խմբակներ են կազմակերպվում, այդպիսի մի խմբակ էլ ստեղծվեց մեր գյուղում: Ապրիլի կեսերին եղա գյուղում, հենց նույն գիշերն էլ կազմակերպվեց մեր գյուղի հակահեղափոխական կազմակերպությունը: Մնոյենց Ոսկանի գոմում հավաքված էր մոտ 15-20 մարդ, ժողովի կազմակերպիչները եղել են Մնոյան Պետրոսը, Մանուկյան Արամը, Ավետիկ Մնացականյանը և այլն: Ժողովում պատահաբար մասնակից եղա նաև ես: Գոմում հավաքվածներից երկուսը Արմտլի գյուղից էին՝ Մելքոնը և Բատրիկը, որպես գավառային կոմիտեի կողմից գործուղված կազմակերպիչներ: Ժողովը նախագահում էր Եղսոյենց Պարույրը: Առաջինը ելույթ ունեցավ Բարտիկը, ասելով, որ բոլոր գյուղերում արդեն կազմակերպված են ազատագրական, հակակոլխոզային կազմակերպություններ, շուտով **կսկսվի** զինված ապստամբությունը, ուստի, կազմակերպության բոլոր անդամները պարտավոր են զենք ձեռք բերել և բոլոր

միջոցներով պայքարել ու թույլ չտալ կոլխոզներ կազմակերպելու, իսկ որտեղ ստեղծված են այդպիսիք, նրանց մոտ ամեն ինչ համայնական է. չկա ընտանիք, քնում են 40 մ . վերմակի տակ, ապրում են անասնական կյանքով, գեղեցիկ կանույք բոլորի սեփականությունն են և այլն... Հիմնական զեկուցողից հետո ելույթ ունեցան Մելքոնը, Պետրոսը, Գալուստը, Ավետիկը, Խոյեմը: Որից հետո ընտրվեց կազմակերպությունը ղեկավարող բյուրո, որի մեջ մտան Եղսոյենց Պարույրը, Պետրոսը, Խոյեմը, Գալոն և ես, բյուրոյի քարտուղար ընտրվեց Եղսոյենց Պարույրը: Վերջում ընթերցվեց երդումի մոտավորապես այս տեքստը, որը պետք է ստորագրեին բյուրոյի անդամներն ու մասնակիցները «ես ..., մտնելով կազմակերպության մեջ, պարտավորվում եմ լինել զաղտնապահ, ենթարկվել կազմակերպության կարգ ու կանոնին, կատարել նրա որոշումները, ընկերներին և հարազատներին ներգրավել կազմակերպության մեջ: Ամեն գնով ձեռք բերել զենք ու զինամթերք, պատրաստ լինել կատարելու վերադաս օրգանների կարգադրությունները: Եթե ես այս իմ խոստումը դրժեմ, թող արժանանամ ընկերներիս արդարացի պատժին...»: Վերջում, անհատապես, իրենց ստորագրությունը դրին արձանագրության տակ բոլոր մասնակիցները: Արձանագրությունը ի պահ տրվեց քարտուղարին՝ Եղսոյենց Պարույրին:

Հաջորդ առավոտյան շատ վաղ թողեցի գյուղը՝ բավական ծանր մտորումներով: Ինձ հանգիստ չէր տալիս իմ անհեռատես վարվելակերպը, թե ինչու՞ բոլորովին պատահական հայտնվեցի այդ ժողովին ու լրելյայն համաձայնեցի կատարվածի հետ: Ներսումս հակասական մտքեր են առաջանում, վախենում եմ, որ սրա վերջը վատ է լինելու,

երբեմն մտածում եմ գնալ չեկա, անկեղծորեն պատմել եղածի մասին, որով թե ինձ և թե ուրիշների փրկած կլինեմ, բայց վախենում եմ և հակառակ արդյունքից:

Ժողովից հետո երկար ժամանակ չեմ համարձակվում գյուղ մեկնել, ներքուստ զգում եմ, որ գնալիս մի նոր փորձության եմ ենթարկվելու: Այնուամենայնիվ, Ինտիզարի կանչով, թե երեխաները հիվանդ են, ստիպված մեկնեցի գյուղ: Նույն երեկոյան, որտեղից-որտեղ իմ գալուստի մասին իմանալով, ինձ մոտ եկան Պարույրը և Պետրոսը՝ հայտնելով կովանոցում հրավիրված ժողովի մասին ու, ինձ էլ հետները վերցնելով, տարան հիշյալ վայրը: Տեղ հասնելով ինչ տեսա՝ գյուղի չափահաս մարդկանց 90 %-ը այստեղ էր: Կային նաև հարևան գյուղերից՝ Ահակչի, Գյոզլի և այլ վայրերից եկած ներկայացուցիչներ: Թե մինչ մեր գնալը ինչ հարցեր էին քննարկվել, չիմացա: Մեր գնալուց հետո, երբ իմացան մեր ով լինելը, տերտերանց Սամսոնը պահանջեց ինձ և Պետրոսին հեռացնել ժողովից՝ իբրև դավաճանների, չեկայի շպիոնի և մեր հասցեին այլ վարկաբեկիչ բառեր: Ինձ առիթ էր հարկավոր, որ ազատվեի այդ խառնաժողովից, ուստի և, անմիջապես այնտեղից վերադարձա տուն:

Ինտիզարը միայնակ նստած լաց էր լինում, մի կողմից՝ երեխաների հիվանդության, մյուս կողմից՝ իմ անհետաքրքիր քայլերից, որը կարող էր ողբերգական հետևանք ունենալ, աղաչում-պաղատում էր հեռու մնալ այդ խառնաժողովներից: Գիշերվա մյուս մասը քնել, հանգստանալ չկարողացա, հաճար ու մի մտքեր, գուշակություններ էին անցնում մտքովս, ինչպիսի՞ն կլինի վիճակս, եթե այս կազմակերպության մասին տեղեկանա չեկան, ի՞նչ անել, ի՞նչ միջոցի դիմել, որ թե ես և թե կազմակերպության անդամները փրկվեն:

Առավոտյան ինձ մոտ կանչեցի Եղսոյենց Պարույրին, առաջարկեցի ոչնչացնել արձանագրությունները ու ստորագրությունները, և նա համաձայնեց, մենք այն արեցինք: Հաջորդ առավոտյան, երկուշաբթի, վաղ առավոտյան տանից ուղղվեցի շրջկենտրոն, աշխատանքի: Տեղ հասա ժամը 9-ին: Հեռվից նկատեցի Մնոյան Պետրոսին՝ գործկոմի շենքի պատի տակ կանգնած: Ես հասկացա, որ նա իր գործը տեսել է, գյուղի անց ու դարձի մասին հայտնել է չեկային: Երբ ես նրան այդ մասին հարց ու փորձ արեցի, սկզբում չեմ ու չում արեց, իսկ հետո ամենայն մանրամասնությամբ հայտնեց, որ այս բոլոր իրադարձությունների մասին ինքը տեղյակ է պահել չեկային: Հայտնեց նաև, որ չեկայի ագենտներ են նաև Ղազարյան Խաչատուրը, Եզոռի Հարութը, Սիմոյենց Հայկազը, Մարգարենց Անդրանիկը և այլն: Այսքանից հետո ինձ ոչինչ չէր մնում անելու, քան ներկայանալու չեկա և ասելու այն, ինչ արդեն նրանց հայտնի էր, գոնե դրանով ապահովագրեցի թե ինձ և թե փրկեցի գերդաստանիս ...

Ներքին մարմինների կողմից 30-ական թթ. կեսերից հայտնաբերվեցին գյուղերում ստեղծված գրեթե բոլոր գաղտնի կազմակերպությունները և ջախջախվեցին, կազմակերպիչները ձերբակալվեցին, կազմակերպությունները վերացվեցին: Նոր թափով սկսվեց կոլխոզային շինարարությունը: Գրեթե բոլոր մեծ գյուղերում արդեն ստեղծվել էին կոլխոզներ: Մեր գյուղում ևս ստեղծվեց, սակայն մի շաբաթից հետո այն ցրվեց:

1930 թ. դեկտեմբերի 25-ին, կուսշրջկոմի պահանջով, ինձ աշխատանքից ազատեցին և կոլխոզ կազմակերպելու նպատակով գործուղեցին գյուղ: 1931 թ. հունվարի տասին գյուղում կազմակերպվեց կոլխոզ՝ 17 տնտեսությունով: Նախագահ ընտրվեց Պապոյ Հովակիմը, հաշվապահ

նշանակեցին ինձ, Գոռնեի Ենոքին՝ պահեստապետ։ Համաձայն օրենքի, կոլխոզ մտնողները պետք է իրենց ինվենտարը՝ անասունները, սերմացուն և այլն հանձնեին կոլխոզին։ Ես հանձնեցի 3 կով, 2 երինջ, երկու աչառ, երեք հորթ, 35 մեղվաընտանիք, մի մեղրսրքամ մեքենա, բավական սերմացու՝ ցորեն, գարի, կարտոֆիլ։ Մինչև գարնանացանի սկսվելը տնտեսությունների թիվը հասավ 40-ի։

Բացի կոլխոզ մտած անդամների հանձնած գույքից և անասուններից, կոլխոզին հանձնվեց կուլակային տնտեսություններից բռնագրավված անասուններ, սերմացու, գյուղ գործիքներ, մեղուներ և այլն։

Մեղուների թիվը հասավ մոտ 70-ի, որոնց խնամքը ինձ վրա դրվեց, օգնականս դարձավ Մարգարենց Թաթևոսը։

1931 թ., մարտ ամսից մեր գյուղը Մոլլագյոկչայի շրջանից, կենտգործկոմի որոշմամբ, փոխադրվեց Թալինի ենթակայությանը։ Նոր շրջանի ղեկավարությունն ինձ վրա դրեց Ահակչի, Մազարջյուղ, Վ. Փիրթիքան, Ոսկեթաս գյուղերի հաշվապահ-հրահանգիչի պարտականությունները։ Այդ ժամանակ վերոհիշյալ գյուղերում գրագետ հաշվապահներ չկային, համարյա ամբողջ ծանրությունն ընկած էր ինձ վրա, թեև անունով հաշվապահներ էին, բայց թվարկած գյուղերի բալանսը ես էի փակում։

Ցերեկները մեղվանոցում էի աշխատում, երեկոներն ու գիշերները՝ գրասենյակներում։ Ծանրաբեռնվածությունս այն աստիճան մեծ էր, որ հաց ուտելու ժամանակ անգամ չէի ունենում, տանից, երեխաներից, տնտեսությունից գրեթե կտրվել էի և ամեն ինչ թողել Ինտիզարի հույսին։ Երեխաներից Հակոբը և Ամալյան դպրոց են հաճախում, բայց նրանցով զբաղվելու ժամանակ չունեմ։

Ամբողջ կյանքով, էներգիայով նվիրված եմ հասարակական գործունեությանը: Ամեն գնով ձգտում եմ բարձրացնել կոլխոզների եկամուտները, բարիքները, վճռական պայքար եմ մղում անօրինականությունների, շռայլումների, վատնում-յուրացումների դեմ: Ինքս ինձ անգամ զրկել եմ որևէ բարիքից օգտվելու, եթե օրենքով չի սահմանված: Կոլխոզային, ժողովրդի ունեցվածքը ինձ համար դարձել էր սրբություն, անձեռնմխելի, որպիսին այն մնաց և իմ ամբողջ կյանքում:

Աշնանը բավական առատ բերքի բաշխում կատարեցինք, բացի հացահատիկից, անասնամթերքից, բաշխեցինք, ըստ աշխօրի, նաև մեղրի բերքը: Կոլտնտեսականներից չեղավ ընտանիք, որ երկու փթից պակաս մեղր ստանար, իսկ Պապոյ Համբոն, որը բազմանդամ էր և շատ աշխօր էին վաստակել, միանգամից 6 փութ մեղր ստացավ:

Այս ամենը բարերար ազդեցություն ունեցավ ոչկոլտնտեսականների վրա և բերքի բաշխման հաջորդ օրը կոլխոզ մտնող ցանկացողներից 30 դիմում ներկայացվեց: Դժբախտաբար, մեղրի քաղցրությունը վայելելու ցանկություն ունեցող կոլխոզնիկների հետագա ցանկությունները չիրականացան: Աշնանը ընդունվեցի կոմկուսի շարքերը և մի երկու ամիս անց ինձ փոխադրեցին շրջկենտրոն՝ հողբաժնի կոլխոզ սեկտորում աշխատելու: Հանձնեցի և հաշվապահությունը և մեղուները: Մեղուները ընկան այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք նրանցից գաղափար չունեին: Մեղուների քանակն ավելացնելու փոխարեն, մոտ 30 տարի անց, կիսով չափ կրճատվեցին և եղածն էլ մի բանի նման չէր: Փոխվեց նաև մարդկանց վերաբերմունքը հասարակական ունեցվածքի հանդեպ և շատ թե քիչ եղած բերք ու բարիքն էլ գոփվում ու գողացվում էր, թե աշխատողների և թե

ղեկավարության կողմից:

Աշխատում ու ապրում էի Թալինում՝ դարձյալ բավական ծանրաբեռնված: Այն ժամանակվա պայմաններում փոխադրամիջոցների բացակայությունը՝ մի կողմից, մյուս կողմից՝ խիստ զբաղված լինելու պատճառով, ամիսը մեկ կամ երկու անգամ հազիվ տունն էի լինում, այն էլ մեծի մասամբ գիշերներով: Տան ողջ հոգսը, երեխաների խնամքն ու դաստիարակությունը, անասունները, տնտեսություն վարելու ամբողջ ծանրությունը ընկած էր խեղճ Ինտիզարի վրա: Խեղճ կինը, ինչպես մեր ամուսնական կյանքի առաջին 4-5 տարիներին, այնպես էլ հետագայում, մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջը, միայնակ է եղել, տարել բոլոր դժվարությունները, զոհաբերել իր երիտասարդությունը հանուն իր երեխաների, հանուն ինձ, որպեսզի ես անհոգ լինեմ տնտեսական ընտանեկան հարցերից, որպեսզի իմ պաշտոնավարության ընթացքում որևէ թերություն, ՉՊ չլինի, ու դրանով էլ ինքն իրեն մխիթարված էր զգում ու երբեք էլ իմ ուշացումների, տանը քիչ լինելու, երեխաների հոգսը իր վրա թողելու հարցում չդժգոհեց, չնեղվեց:

Շրջանի գրեթե բոլոր գյուղերում կոլխոզներ են կազմակերպվել, միաժամանակ, սրվել են հակասությունները տարբեր խմբավորումների միջև: Այդ պատճառով, օրերով լինում եմ իմ ենթաշրջանի (Դադալու, Սխաչի, Իրինդ, Մեհրբան, Վերին, Ներքին Ղարաղոյմազներ, Վերին, Ներքին Աղջաղալաներ, Այնալու, Եշիլ, Բաղչաջուղ, Ազարակ և Թալիշ) գյուղերում, որոնցից, բացի Թալիշից ու Դադալուից, որոնց բնակիչները բնիկ տեղացիներ են, մյուսներում՝ 1918-1920 թթ. Արևմտահայաստանից գաղթված փախստականներ են տեղավորել:

Քանի որ վերոհիշյալ գյուղերում բնակվողները տարբեր տեղերից եկած փախստական-գաղթականներ էին, ուստի, հաճախ էր կոնֆլիկտներ ծագում նրանց միջև: Այդ ոչ միատարրության, ինչպես նաև պարտադիր կոլեկտիվացման հետևանքով առաջացած կոնֆլիկտները վեր էին ածվում հակակոլխոզային շարժումների: Ավելի ակտիվները, չդիմանալով այդ խառնավիճակներին, լքում էին գյուղը, և դառնում բանդիտ: Այդպիսիներից մի քանի անուն մնացել է հիշողությանս մեջ՝ Ատամը (ահակչեցի), Ղազարը (Մեհրբանից), Վարդանը (Վ. Ղարաղոյմազից) և այլն, որոնց անունները հիշել հնարավոր չէ: Բանդիտ կոչված այդ աքսորյալները բնակվում էին իրենց կամ հարևան գյուղերի տարածքներում, հարմարավետ քարաժայռերի այրերում, ձորերում, լքված դաշտային հովիտներում և այլն:

Այս ամենը կոլխոզային շինարարության ընթացքում թույլ տված սխալների ու թերությունների արդյունքներն էին, որի համար էլ կոլխոզնիկների II համագումարում ժողկոմխորհդի նախագահ Մոլոտովը քննադատության ենթարկեց կոլխոզային շարժման ընթացքում թույլ տված սխալները, պահանջեցին վերանայել և, այսուհետ, կոլտնտեսության մեջ ընդգրկել բացառապես կամավորական սկզբունքով: Բացի այդ, եթե մինչ այդ կոլխոզ մտնողը պարտավոր էր իր ողջ ունեցվածքը հանձնել կոլտնտեսությանը, ապա այժմ նոր օրենք հրատարակվեց, ըստ որի, կոլխոզ մտնող անդամին թույլատրվում էր ունենալ անասուն, թռչուն, օժանդակ տնտեսություն, իսկ նախկին անդամներին, ինչպես և ինձ, վերադարձրին մեկ կով, մեղուներ, 5 ոչխար և այլն: Այս որոշումը զգալի նշանակություն ունեցավ կոլխոզների ամրապնդման, հակակոլխոզային տրամադրությունների

վերացման, կոլխոզները ընդլայնելու և բարելավելու գործում:

1932 թ. ապրիլի կեսերին ծնվեց մեր չորրորդ աղջիկը՝ ժենիկը: Այդ օրերում, երբ Ինտիզարը ծննդաբերությունից հետո դեռևս չէր ապաքինվել, տեղի ունեցավ Վարդգեսի հարսանյաց արարողությունը: Հարսանիքի ավարտից մի քանի օր անց մահացավ Տիգրան եղբայրի կինը՝ Ալդուզը, որը բավական երկար տառապում էր թոքախտ հիվանդությամբ:

Այս տարին չափազանց անհաջող էր գյուղատնտեսության համար: Խիստ չորային կլիման բացասական ներգործություն ունեցավ ոչ միայն մեր շրջանի, այլև հանրապետության վրա: Անբերրիության հետևանքներն իրենց զգալ տվեցին ձմռանը և, հատկապես, հաջորդ տարվա ընթացքում:

Մի կողմից անբերրիությունը, մյուս կողմից՝ մասսայական կուլակաթափությունը, նրանց հանդեպ եղած հալածանքն ու հետապնդումները (որոնք ապրանքային հացի հիմնական արտադրողներն էին), կոլխոզային կարգերի թուլությունը, հասցրին նրան, որ 1932 թ. վերջին և 1933 թ. ընթացքում մասսայական սով սկսվեց երկրով մեկ, այդ թվում, նաև Ռուսաստանում: Միայն Վրաստանն էր, որ սովի ճիրաններից հեռու մնաց: Հայ ժողովրդի այն հատվածը, որ շատ թե քիչ զարդեղեն ուներ, չափազանց չնչին գնով վաճառում էր վրացիներին՝ գոնե մի քանի օրվա ուտելու պաշար (եգիպտացորեն) ձեռք բերելու համար: Այն էլ բավական դժվարությամբ էր նրանց հաջողվում, քանի որ վրացական հսկիչները գնացքները ստուգում էին, հացահատիկը բռնագրավում կամ մեծ տուգանքներ գանձում: Այն ժամանակ, թեև չիրապարակվեցին, սակայն տասնյակ հազարների հասավ սովամահ եղածների թիվը:

Բարեբախտաբար, 1933 թ. կլիմայական պայմանները

բավական հաջող եղան, լավ բերք աճեցվեց: Շրջանի հովտային մասերում բերքահավաքը սկսվել էր և հաջողությամբ շարունակվում էր: Օգոստոսի սկզբներին Ադիամանի, Ահակչիի և Մազարջուդի վրա մի այնպիսի կարկուտ տեղաց, որ ոչ մի հասկ, ոչ մի բույս կանգնած չմնաց, տապալվեցին հողի հետ: Այս գյուղերում ոչ մի ծղոտ չմտավ: Միայն պետության վարկի միջոցով այս գյուղերում լուծվեցին թե՛ հացահատիկի և թե՛ անասնակերերի հարցերը: Բացի այս երեք գյուղերից, մյուսների վիճակը բավական կարգավորվեց: Աշխօրին ստացան 5–8 կգ բերք:

Հունիս ամսի վերջերին շրջանի միլ. բաժանմունքի և կուսակցական ակտիվի կողմից շուրջկալ կազմակերպվեց: Չատին ձոր կոչվող վայրի քարայրներում թաքնվել էին մոտ 10-12 բանդիտներ: Բոլոր ուղիները փակելով՝ օղակը սեղմվեց և սկսվեց անհավասար գոտեմարտը: Առաջինը ծանր վիրավորվեց Թալինից մի Լևոն անունով միլիցիոներ, օրվա ընթացքում պայքարը շարունակվեց մինչև վերջին թաքստոցի բնաջնջումը: Միայն մեկին՝ ահակչեցի Արամին, վիրավոր գերեցին: Նույն օրը համանման մի հարձակում էր տեղի ունեցել նաև էջմիածնի զորամասի կողմից, Եղիչի-Դիան ձորերում թաքնված ևս 15 բանդիտների դեմ և բոլորին ոչնչացրել էին ու դրանով վերջակետ դրել այդ շարժման վրա:

Որոշ չափով բարձրացավ ծառայողների աշխատավարձը, ես ստանում էի ամսական 60 ռուբլի դրամ և 5 փութ ցորեն: Տանը ունեինք կով, փեթակներ 4 հատ, թոչուններ և այլն:

1934 թ. տնտեսական տարին սկսվեց սովորականի պես, սակայն իմ կյանքում և ընտանիքում եղան լուրջ փոփոխություններ և իրադարձություններ:

Հունվարի 24-ին թալինցիները Ադիամանից հարս

բերելիս, որտեղ լինում է և մեր բաժնի ցրիչ Արիստակը, հանդիպում է կոլխոզի նախագահ Պապոյ Հովակին, որը Արիստակին հանձնարարում է, որ Թալին հասնելուն պես Պարույրին անպայման գտնի ու հայտնի, որ կինը մահացել է, շտապ տուն գա: Նույն օրը արևի մայրամուտից հետո Արիստակը մոտեցավ ինձ, ցավակցեց և հայտնեց այն, ինչ լսել էր Հովակիմից:

Բավական երկար ժամանակ տանը չէի եղել, խիստ զբաղված էի տարեվերջյան բալանսների փակման հարցերով: Այդ ահավոր լուրը լսելիս հիշեցի, որ Ինտիզարի ազատման օրերն են, ենթադրեցի, որ դժբախտությունը անպատճառ կապված կլինի ծննդաբերության հետ: Առանց երկար ու բարակ մտածելու, խելագարի նման վազեցի դեպի ախոռը, որտեղ գտնվում էր ինձ ամրացված ձին, նստեցի և գիշերով ուղղություն վերցրի դեպի Ադիաման՝ հետս վերցնելով իմ որսորդական հրացանը (ատրճանակ ևս ունեի): Ձյունը ճեղքելն ու առաջանալը բավական դժվար էր: Ճանապարհը լրիվ փակ էր ու ձին էր, որը իր հոտառությամբ կարողանում էր կողմնորոշվել և ճանապարհից չշեղվել: Չհասած Ղրմզլու գյուղին ձին կանգ առավ, ինչ անում եմ, առաջ չի գնում, զգում եմ, ինչ-որ բանից ձին ահաբեկված է, բայց մթության մեջ և փոթորիկի առկայության պայմաններում, որ կողմը նայում եմ, ոչինչ չի երևում: Ի վերջո, ստիպված երկու կրակոց արձակեցի, մեկ-երկու րոպե հետո ձին շարժվեց: Հաջորդ առավոտյան գյուղացիք ջրաղացի մոտ տեսել էին մի սպանված գայլի դիակ, ըստ երևույթին, իմ անհասցե կրակոցի արդյունքն էր:

Լուսաբացին մի կերպ գյուղ հասա, մոտենալով տանը, չէի համարձակվում մոտենալ դռանը, մտածելով. ո՞վ կլինի տանը: Ի՞նչ վիճակ է ստեղծվել Ինտիզարի մահից հետո երեխաների

մոտ, աչքիս առաջ պատկերացավ մորս մահվան տեսարանը: Ես էլ այն հասակին էի, ինչ հիմա Հակոբը: Ի վերջո, դողդողալով մոտեցա և ծեծեցի դուռը: Առաջին արձագանքը, որ լսեցի, ներսից Ինտիզարի ձայնն էր, ապշեցի, զարմացա, գրեթե զժության նոպայի մեջ էի, երբ դուռը բացեց քույրս՝ Արփենիկը, և ուրախությամբ փարվելով, ինձ աչքալուսանք տվեց, որ նոր երեխա ենք ունեցել, որին հետո անվանեցինք Իզաբելա, ես զգաստացա և հավատացի, որ առաջին արձագանքն իրոք Ինտիզարինն էր, և որ նա կենդանի է: Ինչն էր Պապոյ Հովակի խաբեության պատճառը, այն, որ ես անմիջապես գյուղ վերադառնամ և կեր ու խումի սեղան բաց անեմ իր և ընկերների համար: Այդպես էլ վարվեցի, որոշ հանդիմանությունից հետո, ոչխարը մորթեցինք և մի երկու ժամից սեղանի շուրջ հավաքվեցին գյուղի ջոջերը՝ Հովակը, Ճուռիկ Վաղոն, Ենոքը, Պլստի Նիկոլը, Չոքչոքի Խաչոն և այլն: Կեր ու խումից հետո առողջություն մաղթելով մանկիկին՝ հեռացան:

Մի երկու օրից հետո վերադարձա շրջկենտրոն: Բացատրեցի իմ տնտեսական վիճակի մասին և խնդրեցի ինձ արձակուրդ տալ: Համաձայնվեցին, բայց արձակուրդս դեռ չլրացած, մարտի 10-ին շտապ կարգով ինձ կանչեցին շրջկենտրոն: Կուսշրջկոմի առաջին քարտուղար Համո Իսրահիլյանի առաջարկով պետք է մեկնեի Ոսկեթաս և ընդունեի կոլխոզի նախագահի պարտականությունները: Իմ առարկությունները, խնդրանքս հաշվի չառնվեց, քանի որ Ոսկեթասի ընդհանուր ժողովի որոշմանը կուսշրջկոմի բյուրոն ընդառաջել էր: Ինձ ոչինչ չէր մնում անել, պետք է ենթարկվեի: Վերադարձա տուն, իսկ հաջորդ առավոտյան մեկնեցի Ոսկեթաս: Թե՛ ես գյուղին, և թե՛ գյուղացիներն ինձ գիտեին:

Ընդունեցի կոլխոզի գործերը, որը միայն անունով էր, փաստացի՝ դատարկություն էր: Կոլխոզը բաղկացած էր ընդամենը 13 ընտանիքից: Ունեին երկու զույգ եզ, երկու սայլ, երկու արոր, ուրիշ ոչինչ: Նույնիսկ սերմացու չունեին ցանելու համար: Գյուղի միջակ տնտեսատերերին ահաբեկել էին որպես թշնամաբար տրամադրված տարրերի: Մի մասն էլ չէր կարողանում կողմնորոշվել՝ թե որ կողմը թեքվի:

Մինչև իմ ընդունելը կոլխոզը ղեկավարում էին երկու երիտասարդ տղաներ՝ Արամ Ղազարյանը՝ կուսթեկնածու-նախագահ, Ֆուրման Գալստյանը՝ կոմսոմոլ-բրիգադիր, սակայն նրանք կատարել էին իրենց մեծերի թելադրանքը, զուրկ էին ինքնուրույնությունից:

Ընդունելով նախագահի պարտականությունները՝ բավական շատացան հոգսերը: Սկսվել էր գարնանացանը, իսկ կոլխոզը ոչինչ չուներ ցանելու, սակավ էր կոլխոզնիկների թիվը, գյուղգործիքները, լծկանը և այլն: Ամեն ինչ պետք է նորից սկսել, բացատրական աշխատանքներ տանել՝ կոլխոզնիկների թիվն ավելացնելու, դրա համար գիշեր-ցերեկ շրջում էի մենատնտեսների տները, երբեմն, մի տանը լինում էի երկու-երեք անգամ, փարատում նրանց տարակուսանքը, վախը: Մի կողմից իմ բացատրական քարոզարշավը, մյուս կողմից՝ իմ հեղինակությունը, որ ձեռք էի բերել մինչև գյուղ գալս, օգտագործելով գյուղի հեղինակավոր ավագանուն, օր-օրի կոլխոզ անդամագրվողների թիվն ավելացնելով: Նոր անդամագրվողներից շատերը, մոտ 20 տնտեսություն, միջակներ էին, որոնք զգալի չափով ամրապնդեցին կոլխոզի ունեցվածքը: Բավարար չափով սերմացու ունեցանք, լծկան, գյուղգործիքներ և կարողացանք հաջողությամբ ավարտել գարնանացանը: Գյուղում կային մի քանի տնտեսություններ՝

խմբապետ Չոլոն, Ռուբենի Սարգիսը, Վարթոն (վերջինս Անդրերիտկոմի անդամ է եղել), որոնց քաղաքական նկատառումներով, վերևից կարգադրված էր կոլխոզ չընդունել: Սակայն, 1934 թ. հունիսին Աղասի Խանջյանը Չարենցի հետ միասին այցելեցին մեր կոլխոզը: Ես համառոտակի ներկայացրի կոլխոզի ընդհանուր վիճակը, վերոհիշյալ անձանց խնդրանքը կոլխոզ ընդունվելու վերաբերյալ, ինչպես նաև. խնդրեցի այս լեռնային թույլ կոլխոզին, բացառության կարգով, որոշ օգնություն կազմակերպել, շինարարության, հատկապես, անասնագոմեր կառուցելու խնդրում: Ա. Խանջյանը բավարարեց իմ խնդրանքը: Չոլոյին, Ռուբենի Սարգսին և Վարթոյին ընդունեցինք կոլխոզ և, միաժամանակ, կարգադրեց 10 վագոն շինափայտ, ցեմենտ տրամադրել շինարարություն սկսելու համար: Անմիջապես գործի անցա: Ողջ ուժերը մոբիլիզացրի Ղարաբուռունից շինանյութը տեղափոխելու և մինչև բերքահավաքի վերջն անասնագոմերն ու մարագներն արդեն պատրաստ էին: Բացի մի քանի մենատնտես գյուղացիներից, մյուսները մասսայաբար դիմեցին կոլխոզ ընդունվելու: Գյուղը դարձավ համատարած: Բերքը բավական առատ եղավ: 5 կգ հացահատիկ տվեցինք աշխօրին, ապահովեցինք սերմացուն: Ութ փութ ցորեն տվեցի, մեկ մայր ձի առա: Ինձ այնքան աշխօր հասավ, որքան վաստակել էր միջին բարեխիղճ կոլխոզնիկը:

1935 թ. տարեսկզբին շրջ. ներքին անվտանգության օրգաններն իմ վրա խիստ ծանր ու պատասխանատու պարտականություն դրին: Մի քանի օր անընդհատ առավոտ վաղ մեկնում էի շրջկենտրոն, ուշ երեկոյան վերադառնում: Վերջին օրը ինձ մի ցուցակ հանձնեցին, որում ցուցակագրված էին գրեթե ողջ գյուղացիները՝ պահանջելով մեկամսյա

ընթացքում հավաքել երկու հարյուր քսան հրացան (ռուսական, թուրքական-ֆրանսիական), 40 մաուզեր, 15 նագան-ատրճանակ, մեկ հատ էլ Մաքսիմ-գնդացիր, մեծ քանակությամբ փամփուշտ, որոնց մասին ասելը, գրելը, կարգադրելը շատ հեշտ է, իսկ հավաքե՞լը:

Ավելի քան տասնհինգ տարի այդ զենքն ու զինամթերքը թաքնված է եղել, այժմ, երբ օրենքի խստության պատճառով, նույնիսկ, դանակ պահելը վտանգավոր էր, մի՞թե այդքան հեշտությամբ հնարավոր էր հավաքել տասնյակ տարիներով պահված զենքն ու զինամթերքը, այն էլ այն դեպքում, երբ զենք ունեցողին քաղաքական պիտակ էին կպցնում: Ցուցակը հանձնելիս տվեցին այն մարդկանց անունները, ովքեր եղել էին ցուցակը կազմողների հեղինակները՝ Սուրեն Պետրոսյանը, Վարթոն, հողաչափ Մահակը, Սողոն, և խորհուրդ տվեցին դժվարանալիս դիմել սրանց օգնությանը:

Ցուցակում եղած բոլոր գյուղացիներին առանձին-առանձին տեսակցեցի, խոսեցի, առաջարկեցի, որ կամավոր ձևով զենքը բերեն և հանձնեն, սակայն, բացի խմբապետ Չոլոյից, որն ազնվաբարո կատարեց այդ պահանջը՝ հանձնելով մեկ հրացան և մեկ մաուզեր, բավական թվով փամփուշտներ, մյուսները՝ հրաժարվեցին: Ելնելով վիճակից, որ գյուղացիները վախենում են անձամբ հանձնել զենքերը, որոշեցի հրավիրել ցուցակում նշված բոլորին, հայտարարեցի, որ գիշերը գրասենյակի դուռը բաց կթողնեմ, մթությունից օգտվելով, առանց ձեր անձը իմանալու, բերեք և զենքը գցեք ներս: Այս միջոցառումը բավական նշանակություն ունեցավ՝ առաջին օրը հանձնեցին 50 հրացան և 3 նագան ատրճանակ: Այս բանն ի ցույց դրվեց մյուսներին և հաջորդ երկու-երեք օրերում այս ձևով հավաքվեց 175 հրացան, 23 մաուզեր, 14 կոլտ, 9 նագան և

մեծ քանակությամբ փամփուշտ, որը գիշերը սայլերի վրա դրած տարա հանձնեցի չեկային: Մնացած 45 հրացանի, 17 մաուզերի, 6 նագանի և զնդացրի հայտնաբերման որևէ հույս չկար: Ստիպված կանչեցի տեղեկատուներին, սրանք ևս հրաժարվեցին: Միայն Սողո Հակոբյանը հայտնեց զնդացրի մոտավոր տեղը, որը հայտնվեց Ռուբեի Սարգսի հողամասի չակիլում, այն ևս հանձնեցինք, իսկ մնացածն այդպես էլ չկարողացա գտնել, չիմացվեց նաև, թե ովքե՛ր հանձնեցին և ում մոտ գենք մնաց:

Զմռանը նախապատրաստական մեծ աշխատանք տարանք գարնանացանի համար ու բարեհաջող ավարտեցինք գարնանացանը: Եղանակները բավական լավ էին, անձրևները առատ: Գյուղամերձ լավ հողերում բանջարանոց դրեցինք, ծառեր տնկեցինք, բանջարաբույծ նշանակեցի Չոլոյին, որը բարձր բերք աճեցրեց: Այս գյուղի պատմության մեջ մինչ այդ գազար, շաղգամ, կանաչի տարբեր տեսակներ չէին աճեցրել, լավ բերք ստացվեց և կարտոֆիլից:

Աշխօրների դիմաց կոլխոզնիկները սայլերով բանջարեղեն էին ստանում, չհաշված հացահատիկը, որ աշխօրին տրվում էր 6 կգ:

Դեկտեմբերի երկրորդ կեսին, շրջկոմի բյուրոյի որոշմամբ, ազատվեցի աշխատանքից և նշանակվեցի գյուղբաժնի կազմ-հրահանգչական բաժնի վարիչ, որը մինչև իմ գնալը տանում էր աշնակցի Մելիքը:

Մինչ նոր աշխատանքի անցնելը, խնդրեցի մի քանի օրով ինձ արձակուրդ տալ, տվեցին, և դեկտեմբերի վերջին գնացի տուն:

1936 թ. Ամանորը բավական բարձր տրամադրությամբ նշեցինք: Ամեն ինչով ապահովված ենք, երեխաները առողջ են,

ազգ ու տոհմի ավագները ևս լավ են զգում, անհանգստության որևէ հարց չկա: Բացի այդ Ինտիզարը նոր երեխա է սպասում, աստված է կանչում, որ գոնե տղա լինի, տղաներս զույգվեն, ես թե՛ն նրան հանգստացնում եմ, որ թող բարեհաջող ծնունդ լինի, ի՛նչ լինում է, թող լինի, սակայն ներքուստ ես էլ ցանկանում էի որ տղա ծնվի, քանի որ աղջիկների թիվը հինգ էր, իսկ տղա՝ ընդամենը մեկը:

Հունվարի 10-ի լույս 11-ի գիշերն Ինտիզարը համարյա մի մեշոկ ալյուրից հաց թխեց, միայնակ, առանց որևէ օգնության: Հացթուխն ավարտեց մոտ ժամը 3-ին և կես ժամ հետո ազատվեց, ունեցավ մեր վաղուց սպասված տղային՝ Վիուլենին[30]: Քանի որ իրականացավ մեր վաղուց սպասված երազանքը, մեծ աչքալուսանք էր բոլորիս համար, ուստի, անհրաժեշտ էր մեծ շուքով նշել: Անմիջապես մորթեցինք մեկ առչառ ու երկու ոչխար, խմիչքն ու մրգերը, զակուսկին այնքան շատ էին, որ մի շաբաթից ավելի ուտել-խմելը, քեֆ-ուրախությունը չէր պակասում, այն ընդհատվեց, երբ հունվարի 17-ին շրջկոմի քարտուղար Իսրայելյանը շտապ կարգով ինձ կանչեց շրջկոմ: Երբ ներկայացա, քարտուղարն ինձ ցույց տվեց շրջկոմի բյուրոյի որոշումը, որով ինձ նշանակել են Վ. Ղարաղոյմազի կոլխոզի նախագահ, նա ասաց, որ ողջ գյուղը մեղադրում է իրենց նախագահին աշխատանքները չգլխավորելու և բարոյական նորմերը ոտնատակ անելու համար ու պահանջում են, որ ես գլխավորեմ իրենց կոլխոզը: Հաջորդ առավոտյան շրջկոմի որոշմամբ մեկնեցի Վ. Ղարաղոյմազ՝ կոլխոզն ընդունելու: Անունով գյուղը գրեթե

---

[30] Տվյալ դեպքում խոսքը ապագա ակադեմիկոս, Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի երկարամյա ռեկտոր Վիլեն Պարույրի Հակոբյանի ծնողի մասին է:

համատարած է (95%), սակայն կոլխոզի տնտեսությունը բացարձակապես քայքայված է: Չի բավականացնում լծկանը, չունեն սերմացու, գյուղ գործիքներ, չկան երիտասարդ աշխատող ձեռքեր, մեծ մասամբ տարիքավոր մարդիկ են, որոնք փախել են Մուշից, Խութից, Բասենից, Բալանաղից* և այլ տեղերից: Բացի այդ, սրվել էին ներքին թայֆաբազությունները: Վիճակն այնպիսին էր, որ ամեն րոպե վտանգ կար ընդհարումների: Այս երևույթը, հատկապես, սկսվել էր կոլտնտեսության նախագահ Պետրոսի պատճառով, որն իր կնոջը բաց էր թողել և տիրացել կոլխոզնիկներից մեկի՝ Սաղոյի կնոջը՝ Շուշիկին, որը թողնելով իր չորս անչափահաս երախաներին, փոխադրվել էր Պետրոսի մոտ: Բնակարանի խնդիրը լուծելը բավական դժվար էր. ուստի, ստիպված համաձայնեցի Պետրոսի առաջարկին՝ բնակվել իր սենյակում, իսկ ինքը նոր կնոջ հետ փոխադրվեց հացատուն: Գյուղի հասակավոր բնակիչների հետ խորհրդակցելուց հետո եկա այն եզրակացության, որ գարնանացանը պետք է սկսել շատ վաղ: Գյուղից մոտ 10 կմ հեռավորության վրա՝ դեպի Հոկտեմբերյանի Լուկաշինի անվան սովխոզը, սրանք ունեին մի գոգավոր հողակտոր, որը մոտ մի ամսից ավելի վաղ էր բացվում: Այդտեղից էլ սկսեցինք գարնանացանը: Մինչև հարևան գյուղերն ու մեր վերին հանդերը բացվեցին, ներքևի մասում ցորենն արդեն կանաչին էր տալիս: Գարնանային ձնհալքի և անձրևաջրերով ներքին հանդամասերը մեկ–երկու անգամ ջրվեցին: Հետևանքը եղավ չափազանց բարձր բերքատվությունը, որով զարմացած էին ոչ միայն տեղացիները, այլև շրջանի ղեկավարությունը: Գիշեր ու ցերեկ աշխատանքով տարված, գրեթե անտեղյակ էինք երկրում և

* Պետք է լինի Բուլանըղ կամ Բուլանուխ:

աշխարհում կատարված իրադարձություններին, թերթ ընթերցում էինք դեպքից-դեպք, չկար ռադիո և հեռուստատեսային կապ: Երբեմն-երբեմն այս կամ այն դեպքի մասին լսում էինք բավական ուշացումով, այն էլ, եթե որևէ մեկը քաղաքից կամ շրջկենտրոնից այցելում էր գյուղ:

1936 թ. հուլիսի 10-ին լուր տարածվեց, որ Խանջյանը ինքնասպանություն է կատարել, այն էլ Թիֆլիսում: Ոչ ոք չէր համարձակվում բարձրաձայն որևէ միտք արտահայտել այդ սպանության վերաբերյալ, ամենքն ինքնամփոփ, ինքն-իր մտքի հետ, քննության էր առնում այն ու ենթադրության հանգում: Սպանությունից չորս օր անց շրջանում զումարվեց կուսակցական ակտիվի խորհրդակցություն, որտեղ քննության առնվեցին Ա. Խանջյանի ինքնասպանության պատճառները: Ընթերցվեց Խանջյանի նամակը, որ իբր նա գրել է սպանությունից մի քանի րոպե առաջ: Մոտավորապես, այսպիսի բովանդակությամբ.,

«Հարգելի հայրենակիցներ, ես այնքան եմ խճճվել իմ գործունեության ընթացքում, գլորվել հակակուսակցական, հակաժողովրդական անդունդը, որ այլևս վերադարձ չկա, ուստի, որոշել եմ վերջ տալ կյանքիս, հաջողություն մաղթելով ազգիս, հայրենիքիս, մեր սիրելի առաջնորդ Ստալինի ղեկավարությամբ»: Նույն նիստում ելույթ ունեցավ չեկայի պետ Մկրտումյանը և նախազգուշացրեց, որ տեղերում թույլ չտալ ավելորդ խոսակցություններ: Ուշադիր եղեք ավելորդ խոսակցությունների հեղինակների հանդեպ և նրանց մասին տեղյակ պահեք չեկային...

Ինչպես վերևում նշվեց, կոլխոզնիկների մեծ մասը տարիքավոր մարդիկ էին, նրանց հույսով այդ առատ բերքը հնձել, հավաքել, կալսել հնարավոր չէր, ստիպված՝ շրջկոմի

համաձայնությամբ, պայմանագրային կարգով, աշխատավորներ հրավիրեցի լեռնային գյուղերից մինչև իրենց բերքահավաքի սկիզբը: Պայմանն այսպիսին էր՝ վարձատրությունը կատարել ըստ տեղական նորմատիվների, իսկ սնունդը տալ ձրի՝ կոլխոզի հաշվին: Ութսունից ավելի հնձվորներ եկան իրենց գործիքներով, հիմնականում տղամարդիկ, որոնց բաժանեցինք երեք բրիգադաների: Աշխատանքներն սկսեցին Թայչարոխ կոչվող հանդամասից: Հնձվորները, որպեսզի ավելորդ ժամանակ չկորցնեին, գիշերում էին հենց այդ հանդամասերում: Բարեհաջող ավարտվեց 200 հեկտարի հունձը: Հեկտարից ստացվում էր 8-10 սայլաբեռ քոիկ ցորեն: Այդքանը փոխադրել գյուղ կալսելու, մեծ ջանքերի ու ծախսերի հետ էր կապված, որոշեցի կալսումը կատարել հենց տեղում, այն էլ եզների կամերով:

Գյուղի վերին հանդամասերում հունձը դեռ չավարտած, ինձ նորեն կանչեցին կուսշրջկոմ, այս անգամ առաջարկեցին ընդունել Իրինդի կոլտնտեսությունը: Իրինդի կոլխոզին ես վաղուց ծանոթ էի, գյուղացիների զգալի մասին անձամբ ճանաչում էի: Մի քանիսի քաղաքական հայացքների մասին նույնպես տեղեկացված էի: Գյուղը միատարր չէր՝ բաժանված էին թայֆաների (մշեցիների, խնուսցիների , սեմուղցիների և այլն), ամեն խումբ ուզում էր իր մարդուն տալ նախագահ, բրիգադիր, ֆերմայի վարիչ և այլն: Այդ քաշքշուքների հետևանքով, այս անասնապահական խոշոր տնտեսությունը, որն ուներ 200 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 3000-ից ավելի ոչխար, գտնվում էր ֆինանսական ծանր կացության մեջ: Մեծ թիվ էին կազմում անկումները, ոչ ոք չէր ցանկանում անասնապահության բնագավառում աշխատել: Կոլխոզի ղեկավարները հիմնականում մերձավորներ էին (Մաթևոսը

կոլտնտեսության նախագահն էր, բրիգադիրը և ֆերմայի վարիչը սրա եղբայրներն էին և այլն):

Երբ ընդունեցի նախագահի պարտականությունները, պարզվեց, որ դեռևս բերքահավաքը չի ավարտված, իսկ անասնապահների և հովիվների մեծ մասն ինքնակամ լքել են աշխատանքը: Նախորդ երկու կոլխոզներում այսպես ծանր ու դժվար չի եղել, ինչպես այստեղ: Ղեկավարությունն այն աստիճանի է սրել կոլխոզնիկների հարաբերությունները, խճճել, որ ոչ մեկը վստահություն չունի մյուսի և, առավելապես, ղեկավարության հանդեպ: Կորցրել են հավատը վաղվա օրվա հանդեպ ու կարծում են գյուղի, կոլխոզի վիճակը օրեցօր ոչ թե կլավանա, այլ ավելի կվատթարանա:

Գյուղում նախ պետք էր բնակվելու անկյուն ճարել: Սկզբում տեղավորվեցի Մուշոյի սենյակում, մի երկու ամիս անց այն հանձնեցի նոր նշանակված անասնաբույժին, որ ընտանիքով էր, ու ես փոխադրվեցի Մեծ Մուշոյի (կնոջ անունը Իլիկ) փոքրիկ բնակարանը:

Գյուղի երիտասարդությունից նոր ակտիվ կազմակերպեցի. Քամալի Խաչիկը, Ասլանը, Լևոնը, Մեծ Միհրանը, հաշվապահ Խմոն և ուրիշներ, որոնց օգնությամբ աստիճանաբար կոլխոզի աշխատանքները կամաց-կամաց վերականգնվեցին, դրությունը մտավ նորմալ հունի մեջ: Տարեվերջում, ինչպես այս Իրինդի, այնպես էլ Վ. Ղարաղոյմազի բերքի բաշխումը ինքս կատարեցի: Ղարաղոյմազում աշխօրին 8 կգ ցորեն, 3 կգ գարի բաշխելուց հետո (երբ յուրաքանչյուր տնտեսություն ստացավ 3-ից մինչև 12 տոննա) վեց հազար փութ ցորեն էլ առանձնացրինք՝, անասուններ գնելու, անասնագոմեր, գրասենյակ, թռչնոց և այլն պատրաստելու համար: Բացի այդ, լրիվ ապահովվեցինք

գալիքի սերմացուով: Իսկ Իրինդում աշխօրին հասավ 3 կգ ցորեն, 1 կգ գարի, պանիր, յուղ: Այստեղ ևս ապահովեցի գալիք տարվա սերմացուով: Իսկ անասնամթերքի մի մասը, որը բաշխման ենթակա չէր, վաճառեցինք Ղառաբուռունի տափաստանում ոչխարանոցներ (գոմեր) կառուցելու նպատակով:

1937 թ. աշնանը գյուղի ողջ աշխատավոր ձեռքը փոխադրեցինք Ղառաբուռուն՝ անասնագոմերի կառուցման աշխատանքները կազմակերպելու նպատակով: Համառ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ, կարողացանք ավարտել երկու ոչխարանոցների, յուրաքանչյուրում մոտ 2000 գլխի համար, գոմերի կառուցումը, բացի այդ, կառուցեցինք մի պահեստ կաթնամթերքի համար, կաթնամշակման մի շենք և 20 սենյակից բաղկացած մի տուն՝ հովիվների և կթվորուհիների բնակվելու համար:

Ոչխարի ծինը սկսվեց մարտի կեսերին: Թե իրականում քանի ոչխար եղավ, չկարողացա իմանալ, միայն գրանցվեց 3200 գառ:

Արթիկի շրջանի Պեմզաշեն գյուղից վարձեցի մի պանրագործ, որը լավ մասնագետ էր (Խաչո անունով), օրական երկու սայլաբեռ պանիր էր արտադրում: Օրվա արտադրանքը փոխադրում էր գյուղ և, համաձայն իր լավ հանբավի, արագ վաճառվում էր: Կոլխոզի վարչության որոշմամբ, պանրի կգ-ն արժեր 3 ռուբլի, իսկ կարագինը՝ 5 ռուբլի:

Տարին բարեհաջող էր՝ ժամանակին ու որակով ավարտեցինք գարնանացանը: Լավ բերք աճեց, առատ էին և խոտհարքները: Ղարաբուռունի ղոերից բավական խոտ հավաքեցի, խոտհունձն ավարտեցինք նաև գյուղում:

Նախապատրաստվեցինք բերքահավաքի, բայց քանի որ

փոխադրամիջոցի պակասություն ունեինք, ստիպված դիմեցի շրջանային ղեկավարության օգնությանը: Կուսշրջկոմի քարտուղար Իսրայելյանին այդ ժամանակ բանտարկել էին. նրան փոխարինել էր ինչ-որ մեկը Երևանից՝ Սոխուկյան ազգանունով: Երբ եղա նրա մոտ, նա մինչև վերջ ինձ չլսեց՝ պատճառաբանելով, որ ինքը դեռևս շրջանին ծանոթ չէ, ուղարկեց գործկոմի նախագահ Ա. Հովհաննիսյանի մոտ, որը սիրով ընդունեց, խոստացավ ընդառաջել: Իսկ, երբ հայցը լուծված համարելով, ուզեցի շնորհակալություն հայտնել ու դուրս գալ,՝ նա պահանջեց 200 կգ պանիր և այդքան էլ կարագ ուղարկեմ, իհարկե, ոչ թե կոլխոզի վարչության որոշած գներով, այլ դրա 50%-ով: Երբ ես պատճառաբանեցի, որ վարչության որոշումը ես փոխել չեմ կարող, ասաց՝ գնա, ինչպես կուզես, այնպես էլ արա: Օգոստոսի 17-ին, այսինքն, իմ գործկոմի նախագահի մոտ լինելուց մեկ շաբաթ անց, հացահատիկի հնձի եռուն օրերին գյուղ եկան շրջկոմի հրահանգիչ աշնակցի Մաթևոսը և անսանաբույժ Արտաշեսը, որոնք բարևելուց, մի քանի վերացական խոսքերից հետո, պահանջեցին երեկոյան հրավիրել ընդհանուր ժողով՝ բերքահավաքի ընթացքը քննարկելու համար:

Երեկոյան գումարվեց ընդհանուր ժողով, բերքահավաքի ընթացքի մասին թեթևակի զեկույց տվեցին: Շրջանի ներկայացուցիչները հրահրում էին կոլխոզնիկներին, որ խոսեն միայն թերությունների մասին: Չնայած բազմիցս պահանջեցին ելույթ ունեցողներից խոսել բացերի ու թերությունների մասին, բայցևայնպես, ոչինչ չստացվեց, ոչ մի ելույթ ունեցող իմ «թերությունների» մասին ոչինչ չասեց: Երբ տեսան, որ իրենց նպատակին հասնել չեն կարող, վերջում հայտարարեցին, թե շրջկոմի բյուրոն ինձ նախագահությունից ազատել է՝ այլ

աշխատանքի անցնելու կապակցությամբ: Ուստի, ժողովը պետք է քվեարկի այդ խնդիրը: Քվեարկության դրվեց: Բացի մի տասը հոգուց, որոնց մարդն էր նշանակվում նախագահ, կոլխոզնիկներից ուրիշ ոչ ոք ինձ ազատելու քվե չտվեց: Երբ օրինական ճանապարհով իրենց նպատակին չհասան, առավոտյան ինձ հանձնեցին Մաթևոսի նամակը, որում պահանջվում էր կոլխոզը հանձնել նոր նախագահին, փակել հաշիվներս և ներկայանալ շրջկոմի քարտուղարին: Ես նոր միայն կռահեցի, որ այս ամենը ոչ այլ ինչ է, եթե ոչ գործկոմի նախագահ Հովհաննիսյանի կազմակերպած ստորությունը, նրա սրիկայությունը:

Նույն առավոտյան ամեն ինչ վերջացրի և մեկնեցի Թալին, եղա կուսշրջկոմի քարտուղարի մոտ՝ իմանալու այդ ողբերգության պատճառը: Շրջկոմի քարտուղարի մոտ էին գործկոմի նախագահ Հովհաննիսյանը, չեկայի պետը՝ Մկրտումյանը, երկրորդ քարտուղար Մանուկյանը:

Առաջին խոսքը, որ շրջկոմի քարտուղարը դիմեց ինձ, այն էր, թե մինչև ե՞րբ եմ անդամավճար մուծել, պահանջեց տոմսս ստուգել: Երբ տոմսը հանձնեցի իրեն, առանց բաց անելու, նայելու, բաց արեց սեղանի դարակը և գցեց այնտեղ, ասելով, որ «դու թշնամու տղա ես, այժմ էլ թշնամի ես» և կուսակցությունից հեռացված ես: Շրջգործկոմի նախագահ Հովհաննիսյանը, որն ինձ շատ վաղուց էր ճանաչում, իմ մասին շատ բան է իմացել, կուսակցությունից հեռացումը համարում է օրինավոր: Պահանջեցի հետ վերադարձնել տոմսս և իմ հարցը քննարկել կուսշրջկոմի բյուրոյում: Քարտուղարն ինձ ցույց տվեց երեք դիմում - մատերիալ, գրված Ճուռիկ Վաղոյի, Հայկի Հարութի, իսկ երրորդի իսկությունը չիմացա: Դիմումները գրված էին չորս օր առաջ, որոնցում մեղադրվում էի ես՝ իբրև

դաշնակցականի, նախկին առնտրականի, կոզակային տնտեսատիրոջ տղայի: Միաժամանակ, հիմա էլ դաշնակցական եմ և մասնակցել եմ 1930-ական թթ. հակակոլխոզային շարժումներին: Այսպիսով, ոչ մի խոսք թույլ չտվին ասելու, և որևէ քննարկում հեռացման վերաբերյալ տեղի չունեցավ:

Այս անողոք վերաբերմունքից, թալան - զինաթափումից հետո նոր միայն զգացի, թե ինչ է տեղի ունենում մեր երկրում, մեր հանրապետությունում ու մեր շրջանում, գյուղերում և ավաններում:

Երեկոյան կողմ, անցած յոթ տարիների ընթացքում առաջին անգամ, ոտքով ճանապարհվեցի դեպի տուն՝ աշխատելով ամեն կերպ խուսափել ծանոթ դեմքերից:

Կյանքիցս առավել այդ տոմսից գրկվելը, լուրջ մտորումների տեղիք տվեց, ոչ մի կերպ այդ մտքի հետ չէի կարողանում հաշտվել: Ինձ թվում էր, որ գլուխս կտրված է ու մարմինս արևի տակ նետված: Կանխազգում էի, որ գլխիս հազար ու մի տեսակ չարագուշակ ամպեր են կուտակվում, որ հեռու չէ այն օրը, երբ կհայտնվեմ չեկայի զնդաններում, ինչպես այդ ժամանակ վարվում էին շատերի հետ: Տականքների և անուղեղ սրիկաների ծաղր ու ծանակի առարկան պետք է դառնայի:

Բացի այդ, անլուծելի էր աշխատանքիս հարցը: Ինչո՞վ զբաղվեմ, որ կարողանամ իմ ծանրաբեռնված ընտանիքը պահել: Այս մտորումներով գիշերվա կեսին հազիվ տուն հասա: Իմիջիայլոց, տոմսս վերցնելուց հետո ատրճանակս չվերցրին, ճանապարհին քանիցս մտքովս անցավ՝ այս խայտառակությունից հետո լավ չէ՞ ինքնասպան լինել, քան այսուհետ սարսափահար վիճակով շարունակել գոյատևել:

Խնայելով Ինտիզարին ու երեխաներիս՝ այդ քայլին չդիմեցի, գուցեն ոչիսկ չբավարարեց:

Ընկճված, հուսահատված, մի կերպ տուն հասա: Շաբաթներ շարունակ մեր տունը, կարծես, վեր էր ածվել սգո տան: Ինտիզարի աչքերից անընդմեջ արտասուքը չէր դադարում, մանավանդ, այդ օրերին Հակոբին ուզում էի տանել Լենինական՝ ուսումը շարունակելու: Թումանյանի նկարագրած «Գյուղացի Համբոյի տան կոիվը» բացառապես տեղափոխվել էր մեր տուն: Ինտիզարը գերադասում էր Հակոբին տավարած, հովիվ կամ հողագործ տեսնել, միայն իր կողքին լիներ, քան քաղաքում որևէ մասնագիտական ուսումնարանում սովորել: Հոգեկան ահավոր ծանր վիճակում էի ես. մի կողմից սպասում եմ, որ այսօր կամ վաղը ձերբակալվելու եմ, քանի որ այդ ժամանակ չկար մեկը, որ կուսակցությունից հեռացվեր ու չբանտարկվեր, մյուս կողմից էլ՝ մեր տանը ստեղծված իրավիճակը, ապագայի մշուշապատ պատկերը լուրջ մտորումների տեղիք էին տալիս: Այնուամենայնիվ, Հակոբի հարցը, հակառակ Ինտիզարի լաց ու կոծին՝, վճռեցի: Նրան տեղափոխեցի Լենինական, որտեղ յոթամյակի վկայագրով հաջողությամբ հանձնեց քննությունները և ընդունվեց մանկավարժական տեխնիկում: Վաղօրոք պատրաստեցի իմ անհրաժեշտ հագուստեղենը՝ հնարավոր ձերբակալման պահին հետս վերցնելու: Միաժամանակ, մեկնեցի աշխատանքիս վերջին վայրերը՝ ինձ հասանելիք հացահատիկն ու մթերքները բերելու, երեխաներին գոնե մեկ տարվա պաշարով ապահովելու նպատակով: Ապահովեցի նաև 1937-1938 տարվա անասունների ձմեռային կերը:

1938 թ. հունվարի 10-ին ՀամԿ(բ)Կ կենտկոմի պլենումում ելույթ ունենալով, Ստալինը սուր քննադատության ենթարկեց և

դատապարտեց կուսակցության ներքին օղակներին թույլ տված սխալների, թերությունների, առանց լուրջ պատճառների կուսակցության անդամներին հեռացնելու և այլ իրավախախտումների վերաբերյալ: Պահանջեց ստեղծել հանձնաժողովներ և հեռացվածների հարցը անհատապես վերանայել: Նման հանձնաժողովներ ստեղծվեցին և Հայաստանում: Լենինականի գավառում ստեղծված հանձնաժողովը գլխավորում էր Առուշանյանը, որի ձեռքով հազարավոր մարդիկ հեռացվել էին կուսակցությունից ու կալանավորվել:

Ինձ ևս կանչեցին Լենինական՝ ներկայանալու այդ հանձնաժողովին: Երբ հարցն ուղղեցին ինձ, թե ինչո՞ւ ես իմ անօրինական հեռացման մասին որևէ տեղ չեմ բողոքել, ես պատասխանեցի, որ ինձ չեն հեռացրել, այլ շրջկոմի առաջին քարտուղարը խաբեությամբ տոմսս փախցրել է, և նա այժմ կալանավորված է: Ասածս հաստատեց այն ժամանակվա Թալինի շրջկոմի երկրորդ քարտուղարը՝ Մանուկյանը, որն այժմ դարձել էր առաջին քարտուղար ու նիստին ներկա էր: Այնուամենայնիվ, ասեց Առուշանյանը. այս հարցը պետք է պարզել կենտկոմում: Մի դիմում կգրեք, այնտեղ ձեր հարցը կլուծեն: Խոստացա գրել, դուրս եկա և այն աստիճան հիասթափվեցի, որ այսուհետև գերադասեցի մնալ անկուսակցական, երբ իմ այդքան նվիրված, անձնազոհ աշխատանքը չգնահատվեց և ջուրը լցվեց, արժե՞ երկրորդ փորձը անել, թեև հոգեպես ես ավելի շատ էի ցավում պետության և ժողովրդի համար:

Հանձնաժողովի նիստից հետո հանդիպեցի Մանուկյանին և խնդրեցի գոնե ինձ մի հարցում օգնություն ցուցաբերել՝ կարգադրելով գյուղի ղեկավարությանը, որ ինձ մի տեղեկանք

տան (առանց որի այն ժամանակներում հնարավոր չէր տեղից բացակայել) գյուղից դուրս գալու, որպեսզի դրա հիման վրա կարողանամ աշխատանքի հարցը լուծել։ Նա խոստացավ այդ հարցում օգնել, բայց մինչ այդ 1938 թ. գարնան և ամռան ամիսներին, պետք է մնայի և աշխատեի գյուղի կոլխոզում։

Ինձ ամբացրին Սիսակի տղա Սաքոյի բրիգադին։ Սկսեցի աշխատել այնպիսի լարվածությամբ, ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ, որ կյանքում նման ծանրության ու դժվարության չէի հանդիպել. աղբ տեղափոխել դաշտ, բրիգադայի ամբողջ ցանքսը կատարել, գութանով իբրև մաճկալ հերկել հարոսները։ Խոտհնձի և հացքաղի ժամանակ աշխատեցի իբրև հնձվոր, մոտ 30 հա հնձեցի, մասնակցեցի փոխադրմանը, կապմանը և այլն ...

Մի ամբողջ տարի անցնելուց հետո, 1938 թ. հոկտեմբերի կեսերին, ինձ կանչեցին շրջան։ Եղա չեկայի պետի մոտ, հանձնեցի ատրճանակս, հետո մտա շրջկոմի քարտուղար Մանուկյանի մոտ և հիշեցրի իր խոստումը։ Նա մի երկտող գրեց կոլվարչության նախագահ Հովակիմյանին և Գ. Խ. նախագահ Վաղոյին, որ ինձ տեղեկանք տան գյուղից դուրս գալու մասին։

Երբ վերադարձա, գյուղում տարածել էին, թե իբր ինձ ձերբակալել են և Ինտիզարին գտա կիսամեռ վիճակում։

Հաջորդ օրը ստացա ինձ այդքան անհրաժեշտ տեղեկանքը և մի քանի օր անց վերջնականապես ու անվերադարձ թողեցի գյուղը։ Մեկնեցի Երևան աշխատանք փնտրելու ակնկալիքով (իհարկե, գրասենյակային՝ հաշվապահ, գանձապահ և...), չստացվեց։ Այնտեղից գնացի Հոկտեմբերյան N 4 Վորոշիլովի անվան սովխոզ, որտեղ բնակվում էր հորաքույր Սոֆոն՝ իր որդի Սաքոյի հետ միասին։

Եղա սովխոզի դիրեկտոր Զ. Խաչատրյանի մոտ՝ աշխատանքի խնդիրով: Նա պատասխանեց, որ գրասենյակում տեղ չունենք, բայց մեղվանոցի վարիչի հաստիք ունեն: Բայց հրամանը կարող է տալ միայն 1939 թ. փետրվարին: Ես համաձայնվեցի: Սովխոզում մի քանի օր մնալուց հետո, երբ պատրաստվում էի վերադառնալ Երևան, ծանոթացա նաև գլխավոր հաշվապահ Սուրեն Զաքարյանի հետ: Վերջինս, երբ իմացավ մտադրությունս, խորհուրդ տվեց Երևանում հաճախել Կիրակոսյանի կամ Լաշխոյանի կողմից բացված հաշվապահական կարճատև դասընթացներին, որտեղ մի քանի տարի առաջ սովորել էր և ինքը: Այնտեղից տեղեկանք բերելուց հետո նա ինձ իր մոտ աշխատանքի կընդուներ: Այդպես էլ վարվեցի: Երևանում սկզբում փորձեցի ընդունվել Կիրակոսյանի խմբում, բայց վերջինս ավելի երկարատև էր, ուստի, գնացի Լաշխոյանի մոտ, մուծեցի I և II խմբերի վարձավճարը՝ 303–ական ռուբլի և նստեցի III խմբում. որը հաջողությամբ ավարտեցի, վերցրեցի վկայագիրս և որոշեցի մեկնել Հոկտեմբերյան:

Երևանում եղած ամիսներին բնակվում էի խնամի Գրիգորի բնակարանում և, նրա միջնորդությամբ, որպես ապակեզործ աշխատանքի անցա ծխախոտի գործարանում: Ցերեկները աշխատում էի, իսկ երեկոյան հաճախում հաշվապահական կուրսերի: Թե աշխատանքս (ամսեկան 4300 ռ.) և թե պարապմունքներս բավական հաջող առաջ էին գնում:

Գալիքը թեև մշուշոտ, աղոտ, բայց որոշակի հույս էր ներշնչում: Երեխաներիս թիվը ութի էր հասել, մայիսի մեկին ունեցանք մեր երրորդ տղան՝ Ռոբերտը: Նրանց բախտից էր երևի, որ գործերս դեպի լավի էին գնում:

1939 թ. հունվարի վերջին ավարտվեցին

պարապմունքներս: Լաշինյանից վերցրի վկայագիրս, ըստ որի հաշվապահի որակավորում ստացա: Ծխախոտի գործարանում աշխատեցի մինչև փետրվարի վերջը, հաշիվներս փակեցի, ստացա ինձ հասանելիք 3000 ռուբլին և, համաձայն պայմանի՝ ուղևորվեցի Հոկտեմբերյանի N 4 սովխոզում աշխատելու նպատակով: Ի դժբախտություն ինձ, Հոկտեմբերյանի երկաթուղային կայարանում ողջ փաստաթղթերս, այդ թվում և անձնագիրս, գրպանիցս գողացան: Հարկադրված կատարված դեպքի առթիվ դիմեցի Հոկտեմբերյանի շրջմիլպետին: Վերջինս փոխանակ ինձ որևէ օգնություն կամ աջակցություն ցուցաբերեր, կարգադրեց ձերբակալել ինձ և, միլիցիայի ուղեկցությամբ, ուղարկեց Թալին, մի վայր, որից հազիվ մազապուրծ փախել եմ ու մահն ավելի եմ գերադասում, քան այդ միջավայրում ապրելը: Թալինից հետո մեկնեցի գյուղ: Նորից սկսվեց այն մղձավանջային, հոգեմաշ վիճակը, որում ապրել եմ վերջին մեկ ու կես, երկու տարում: Մինչ այդ ինձ հասարակ տեղեկանք չէին տալիս, իսկ այժմ պետք է լուծվեր անձնագրիս հարցը, էլ չեմ ասում մյուս փաստաթղթերի մասին:

Այսպես անցան ամիսներ, երբ հանկարծ, մայիսի 10-ին շրջ.միլ.բաժանմունքի պետից նամակ ստացա, որով ինձ կանչել էին բաժանմունք: Երբ ներկայացա, միլ.պետը հանեց մի ծրար և հանձնեց ինձ, որտեղ դրված էին իմ անձնագիրը, փաստաթղթերս և մի երկտող՝ անպատիվ բառերով, ըստ որի, գրպանահատներն այս անպետք թղթի կտորները փողի տեղ դնելով, կատարել էին այդ օպերացիան, որից որևէ օգուտ չստացան:

Միլ. պետին ջերմ շնորհակալություն հայտնելով՝ մի երկտող գրեցի Ինտիզարին և, առանց տունդարձի, մեկնեցի Հոկտեմբերյան: Ներկայացա սովխոզի գլխավոր հաշվապահ Ս.

Զաքարյանին և նույն օրն էլ հրամանագրվեցի իբրև նյութական բաժնի ավագ հաշվապահ ամսական 300 ռուբլի աշխատավարձով:

Աստիճանաբար ընտելացա աշխատանքիս, ամեն ինչ լավ էր ընթանում, սակայն ամառային տոթերին դիմանալ չէի կարողանում, հատկապես, ճաշվա ժամերին: Տեղացիները, որոնք ընտելացել էին կլիմայական պայմաններին, բոլորովին չէին անհանգստանում և հուսադրում էին, որ ես էլ կընտելանամ և լավ կլինի: Ամառվա ընթացքում մի երկու անգամ մեկնեցի գյուղ բավական մրգեր հետս տանելով: Աշնանը բոլոր հարմարությունները ստեղծեցի ընտանիքը փոխադրելու սովխոզ, սակայն Ինտիզարը չհամաձայնվեց, ստիպված համաձայնվեցի ու այդ տարի մնացինք իրարից հեռացված: Թեև ապրում էի միայնակ ու հոգեպես անհանգիստ էի երեխաների համար, բայց, այնուամենայնիվ, հարմարվեցի տեղական պայմաններին, դժվարությունները հաղթահարվեցին: Սնվում էի սովխոզի բանվորական ճաշարանում և լուրջ հոգսեր ու անհանգստություն չունեի:

1940 թ. սկզբից գլխավոր հաշվապահի տեղակալ Մովսես Սարգսյանին աշխատանքից ազատեցին և ինձ նշանակեցին նրա փոխարեն: Աշխատավարձս նույնպես բարձրացավ, նյութական հնարավորություններս այժմ հնարավորություն էին տալիս ընտանիքս տեղափոխել սովխոզ:

1940 թ. փետրվարի 25-ին մեկնեցի գյուղ, մի քանի օր մնալուց հետո, ամսի վերջին վերադարձա սովխոզ: Իմ վերադարձից հետո 3 օր անց հեռագիր ստացվեց, թե շտապ արի, Ռոբերտը մահացել է: Օրը ուշ էր, փոխադրամիջոց չկար, և մարտի 4-ի վաղ առավոտյան գնացքով մեկնեցի Ղարաբուռուն, որտեղից պետք է մի կերպ մեկնեի Թալին, իսկ

այնտեղից ոտքով հասնեի գյուղ: Ղարաբուռունում բավական սպասելուց հետո վերջապես եկավ շրջանի միակ անսարք «Գազ» կոչվող մեքենան, որի թափքում մի կերպ խցկվեցի, այնտեղ խցկվել էին շուրջ 30 մարդ: Ճանապարհին, թե քանի տեղ կանգնեց, աստված գիտի, երբ Թալին հասանք, արդեն մայրամուտ էր: Այնուհետև գիշերով շարունակեցի ճանապարհը դեպի գյուղ: Ահ ու սարսափը, հոգեկան ծանր վիշտը, ճանապարհի դժվարությունները, ձյուն, սառցակալած ջրափոսեր և այլն, հաղթահարումը ինձանից չափազանց մեծ էներգիա, ճիգ ու ջանք էր պահանջում: Մի կերպ, անգիտակից վիճակում գյուղ հասա լուսաբացին:

Շուրջ 40 օր անգիտակից վիճակով՝ 40° ջերմությամբ զամված եմ անկողնին՝ անընդհատ զառանցելով: Գիտակցությունս վերականգնվելուց հետո միայն հարցրի երեխայի մասին, այդ ժամանակ նոր միայն իմացա, որ երեխային թաղել են 40 օր առաջ: Հիվանդությունս տևեց երեք ամիս, հունիսի սկզբերին՝ մի կերպ ոտքի կանգնեցի և վերադարձա սովխոզ:

Ելնելով վերոհիշյալից՝ ձեռնարկեցի բոլոր միջոցները ընտանիքս անհապաղ փոխադրելու, քանի դեռ նոր անակնկալներ տեղի չէին ունեցել: Ամեն ինչ կարգավորեցի, նոր բնակարան փոխադրվեցի, անասնագոմ պատրաստեցի: Այս տարվա մեր արտից բավական հացահատիկ ստացանք, բավարար չափով խոտ հնձեցի անասունների համար:

Այս ամառ Հակոբը ավարտել էր Լենինականի մանկավարժական տեխնիկումը և աշխատանքի նշանակում ստացել մեր սովխոզում: Այս ամենից հետո, սեպտեմբերի սկզբերին, երկու ձիաֆուրգոն ուղարկեցի գյուղ՝ ընտանիքը փոխադրելու:

Վերջապես, երկարատև բաժանումից հետո, 1940 թ. ամռանը մեր ընտանիքը ամբողջապես միավորվեց մի հարկի տակ: Հակոբն արդեն աշխատում էր, Ամալյան սովորում էր Հոկտեմբեր գյուղի դպրոցում, իսկ մյուսները՝ սովխոզի յոթամյա դպրոցում (բացի Վիլենից ու Զաբելայից):

Ընտանիքն ի մի հավաքվելով՝ բավական հեշտացավ մեր ապրելակերպը, աստիճանաբար մոռացության էինք տալիս անցած տարիների մեր հոգեկան տառապանքը և գալիք նոր ծրագրեր էինք կազմում, որոնցից առաջինը Հակոբին ամուսնացնելն էր:

Պարույր Հակոբյանը կնոջ Ինտիզարի հետ
1918 (1919)թթ.

Ընտանեկան լուսանկար, 1940թ.



Սևաստոպոլ, 1942թ. նոյեմբեր

Իրինդի (Թալինի շրջան) կոլտնտեսականների հետ, 1936թ.

Իրինդի (Թալինի շրջան) կոլտնտասականների հետ, 1936թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՀԱՌ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵԶԱԿԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ (Աշոտ Մելքոնյան) 3
ԱՌԱՋԱԲԱՆ (Հակոբ Հակոբյան) 14
Համառոտ տեղեկություններ մեր տոհմի մասին (Դավթյանների մասին) 19
Մանկություն և պատանեկություն 28
Համաշխարհային առաջին աշխարհամարտը և նրա հետևանքները 36
Ամուսնական տառապանք 51
Պատերազմի ընթացքը 1918–1920 թթ. 76
Ժողովրդի ծանր վիճակը 76
1919 թ. գարուն 113

ՊԱՐՈՒՅՐ ՍԻՐԵԿԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐՈՎ ԼԵՑՈՒՆ ԿՅԱՆՔԻՍ ՄԱՍԻՆ

Հ Ո Ւ Շ Ե Ր

Ի ՄԱՍ

Սրբագիր՝ Դ. Սարգսյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0677676

П
109059